



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

No 08-2

«30 ապրիլ» 2021

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ  
«ՄԱՅՐԵՆԻ», «ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ  
(1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝  
**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների փորձնական չափորոշիչը և ծրագրերը (1-12-րդ դասարաններ)՝ համաձայն հավելվածի:

**Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ**

/պաշտոնակատար/

30.04.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211



Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի  
2021 թվականի ապրիլի -ի N հրամանի

«ՄԱՅՐԵՆԻ», «ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

ԵՎ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի ձևավորելու որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի, որը պատրաստ է դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, մշակելու քայլեր, առաջարկելու փոփոխություններ, գործելու հանուն հանրության, հանուն իր երկրի բարօրության, պետականության ամրապնդման և բարգավաճման:

Հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մայրենի լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որը անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Սովորողը հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝ որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման, որպես հաղորդակցման և համագործակցության, որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու, օտար լեզու սովորելու անփոխարինելի միջոց: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները: Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:

### 1. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ

#### ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**1.1.** Լեզուն **մտածողության** միջոց է (Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, էջ 16-17). հայոց (մայրենի) լեզու ուսումնասիրելու ընթացքում զարգանում են սովորողի քննադատաբար մտածելու, երևակայություն դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր

խոսքով իր մտածումները, հույզերը ձևակերպելու և վերարտադրելու կարողությունները: Հայոց լեզվի ուսումնասիրության արդյունքում ձևավորվում է **հայեցի լեզվամտածողություն, որն արտահայտվում է հայերենով բանավոր և գրավոր գրագեղ խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու կարողությունների դրսևորմամբ:**

1. 2. Լեզուն **հաղորդակցման** միջոց է (Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, էջ 9). հայոց (մայրենի) լեզվի ուսումնասիրության գործընթացում զարգանում են սովորողի՝ մարդկանց հետ տարբեր միջոցներով և եղանակներով (ժեստերի լեզու, ցուցադրում, ունկնդրում) հաղորդակցվելու, համագործակցելու, ցանկացած միջավայրում իրեն լիարժեքորեն դրսևորելու, բանակցելու, լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունները: Հետևաբար հայոց (մայրենի) լեզվի դասավանդման հաջորդ **հիմնական նպատակը** սովորողների **հաղորդակցական կարողությունների զարգացումն է:**

1. 3. Հայոց (մայրենի) լեզուն ուսումնական բոլոր ոլորտներից **գիտելիք ձեռք բերելու միջոց է.** հայոց լեզվի ուսումնասիրությունը հիմք է ստեղծում **այլ առարկաներից գիտելիք ձեռք բերելու,** վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով նաև ժեստերի լեզվով հաղորդելու համար: Մայրենի լեզվի իմացությունը հնարավորություն է տալիս նաև սովորելու և հաղորդակցվելու **օտար լեզուներով: Հայոց լեզվի ուսումնասիրության նպատակներից են ուսումնական այլ բնագավառներում տարբեր թեմաներով կապակցված խոսք կազմելու կարողության ձևավորումը և զարգացումը:**

1. 4. Գրականությունը **խոսքի արվեստ** է (Գրականության տեսության արդի հիմնահարցեր, էջ 15). գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու և վերլուծելու տեքստի ենթմաստը, հեղինակի ասելը, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները, պատկերավոր խոսքի գեղագիտությունը: Գրական տեքստի համակողմանի ուսումնասիրության ընթացքում զարգանում են սովորողի քննական-դատողական և պատկերավոր մտածողությունը, վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ անելու կարողությունը: Գրականության ուսումնասիրության նպատակը **սովորողին հայերեն խոսքի գեղագիտությանը, խոսքի արվեստին հաղորդակից դարձնելն է:**

1. 5. Հայ գրականության երկերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հարստացնելու սովորողի բառապաշարը, պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, ձևավորել գրական ճաշակ և ընթերցասիրություն:



Գրական և ոչ գրական, արձակ և չափաժող տեքստերի ընթերցումը, քերականական-ոճաբանական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, գնահատել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ:

1.6. Գրականության ուսումնասիրումը մարդու **հոգեբանությունը բացահայտելու միջոց է (Ավետիսյան Ջ., Գրական ստեղծագործության հոգեբանություն)**. գրական կերպարների արարքների դրդապատճառների, բնավորության վերլուծությունը, նրանց հոգեբանության մեջ թափանցելու ունակությունը սովորողին հնարավորություն են տալիս հասկանալու, ճանաչելու ոչ միայն իր շուրջը գտնվող մարդկանց, այլ նաև ինքն իրեն: Գրական երկից քաղած դասերի շնորհիվ սովորողը կարողանում է կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ, համատեղ աշխատել, ստեղծել նյութական և հոգևոր արժեքներ հանուն հայրենի պետության, հանրության բարօրության:

1.7. Հայոց (մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) ուսումնառության ընթացքում ձևավորվում, զարգանում և կատարելագործվում են **սովորողի անձնային նկարագիրը, վերաբերմունքը կամ դիրքորոշումը իր երկրի, պետության, ազգային արժեհամակարգի, սեփական անձի և կյանքի հանդեպ (ՀՊՉ):**

## 2. ԱՌԱՐԿԱՅԻ (ԴԱՍԸՆԹԱՅԻ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հանրակրթական դպրոցի 1-12-րդ դասարաններում Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հայոց լեզու, գրականություն առարկայական բնագավառը ներկայանում է՝

2.1 *Մայրենի լեզու* (իբրև միասնացած առարկա) – 1-6-րդ դասարաններ. ներառում է ընդհանրական, վերառարկայական և միջառարկայական թեմաների, գրական և ոչ գրական տեքստերի, դրանց տրամաբանության, լեզվական, գեղագիտական կառուցվածքի, պատկերավորման միջոցների ուսումնասիրում:

2.2. *Հայոց լեզու* (իբրև մեկ առարկա) 7-12-րդ դասարաններ. ներառում է հայոց լեզվի լեզվաքերականական, ոճաբանական համակարգի գործնական նշանակություն ունեցող այնպիսի

թեմաների ուսումնասիրում, որոնց շնորհիվ ձևավորվում և զարգանում են աշակերտի լեզվամտածողությունը, հաղորդակցական կարողությունները:

2.3. *Գրականություն (7-9-րդ դասարաններ) և հայ գրականություն (10-12-րդ դասարաններ)*. ներառում են հայ դասական, ժամանակակից և արտասահմանյան գրականության լավագույն երկերի ուսումնասիրություն, գրական տեքստի կառուցվածքի, տրամաբանության, գեղագիտության, հեղինակի ոճի վերլուծություն:

2.4. Կրթարաններն իրենց ընտրությամբ կարող են նաև հատուկ դասաժամեր առանձնացնել *խոսքի մշակույթից, հռետորական արվեստից (ճարտասանությունից), հին հայերենից (գրաբարից), դրամատուրգիայից* և այլն:

### 3. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայոց լեզվի (մայրենի) և գրականության, հայ գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշի դրույթների, պահանջների, դպրոցի յուրաքանչյուր աստիճանի կամ ծրագրի համար մշակված վերջնարդյունքների հիման վրա ձևավորվել են **հիմնական հասկացություններ և ենթահասկացություններ**, որոնց համապատասխան՝ սահմանված են չափորոշչային հստակ պահանջներ կամ չափանիշներ: Ամեն հասկացությանը համապատասխան մշակված չափանիշները նշում են սովորողի գիտելիքի, կարողության ձեռքբերման, վերաբերմունքի և արժեքային համակարգի, այսինքն՝ կարողունակության ձևավորման աստիճանը: Միևնույն ժամանակ դրանց հիման վրա իրականացվում է սովորողի գնահատումը: Ուսուցիչը ձևավորող և միավորային գնահատման սանդղակները կազմում է՝ առաջնորդվելով ինչպես ամեն դասարանի համար սահմանված ընդհանրական, այնպես էլ ամեն թեմայի համար մշակված վերջնարդյունքներով:

Առաջնորդվելով Հանրակրթության պետական չափորոշի պահանջներով և հայոց լեզվի, գրականության բնագավառի նպատակներով՝ 1-12-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության բնագավառի առարկաների ուսուցման և ուսումնառության համար ընտրվել են հետևյալ **հիմնական հասկացությունները՝**

**Հաղորդակցում**

**Ընթերցանություն/գեղարվեստական ստեղծագործություն**

**Լեզվական համակարգ**

**Ստեղծարարություն**

## Ինքնություն

Ամեն հիմնական հասկացություն ունի իր ենթահասկացությունները, որոնք տարբերվում են՝ պայմանավորված առարկայի յուրահատկություններով և ուսումնասիրության պահանջներով, ինչպես նաև սովորողների տարիքային առանձնահատկություններով: Վերջնարդյունքները ներկայացված են աղյուսակով, տարիքային բոլոր խմբերի (բոլոր դասարանների) համար հստակ են և չափելի: Ուսուցիչը, օգտվելով դրանցից, կազմում է գնահատման սանդղակներ՝ սովորողների՝ վերջնարդյունքներին համապատասխան ձեռքբերումները գնահատելու համար: Հիմնական հասկացություններից **ինքնությունը՝ վերաբերմունք և արժևորում** ենթահասկացություններով, միավորային գնահատում կարող է չենթադրել:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԻՆ ՀԱՅՈՑ (ՄԱՅՐԵՆԻ) ԼԵԶՎԻ,  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՑ ՍՈՎՈՐՈՂԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### Հանրակրթության տարրական ծրագրի (1-4-րդ դասարաններ) ավարտին մայրենի լեզվից սովորողը

*պետք է իմանա՝*

- հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները.
- հայերենի տառերը՝ տպագիր և ձեռագիր, մեծատառ և փոքրատառ.
- բառերի տեսակներն ըստ իմաստի. հոմանիշ և հականիշ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ. դարձվածք.
- բառերի տեսակներն ըստ կազմության. պարզ, բարդ, ածանցավոր բառեր.
- ինչ է նախադասությունը. տարբեր հնչերանգի նախադասություններ.
- ինչ է տեքստը. գրական և ոչ գրական տեքստեր, տեքստի հիմնական մասերը:

*պետք է կարողանա՝*

- լսել, հասկանալ իրեն ուղղված խոսքը, համապատասխան արձագանք տալ լսածին՝ արտահայտելով իր կարծիքը կամ վերաբերմունքը.
- հասկանալով և արտահայտիչ ընթերցել արձակ և չափաժող գրական տեքստեր, արտահայտել մտքեր ենթատեքստի, հերոսների, նրանց մտքերի, խոսքի, արարքների վերաբերյալ՝ կիրառելով տեքստի բառերն ու արտահայտությունները.
- ձևակերպել հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ, պատասխանել իրեն ուղղված հարցերին.
- տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրել լսածը, ընթերցածը, դիտածը, նկարագրել տարաբնույթ երևույթներ, ցույց տալ դրանց փոխկապակցվածությունը.
- արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը, զգացումները, ցանկությունները, մասնակցել զրույցի և քննարկման, հանդես գալ փաստարկված խոսքով.
- արտահայտիչ արտասանել (կամ կարդալ) բանաստեղծություններ, արձակ հատվածներ, պատմել պատմություններ, հեքիաթներ, առակներ՝ շեշտադրելով հիմնական գաղափարը կամ ուղերձը և բացատրել՝ ինչպես է այն փոխանցվում տեքստի միջոցով.

- մի քանի նախադասությամբ գրել իր տպավորությունները և վերաբերմունքը ընթերցած ստեղծագործության, նկարի, երաժշտության, ներկայացման, կինոնկարի մասին, կազմել գովազդային հոլովակի պարզ տեքստ, հայտարարություն, հրավիրատոմս, բացիկ.
- իր հույզերն ու մտքերը արտահայտել ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, հասկանալ մարդուն, նրա հույզերը՝ հետևելով նրա շարժումներին, դեմքի արտահայտությանը, մարմնի դիրքին, դրսևորել համապատասխան վարքագիծ.
- ձևակերպել հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ, ուսումնասիրել տպագիր և էլեկտրոնային պաշարներ՝ հարցերի պատասխանները գտնելու նպատակով.
- հորինել պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (նկարապատում, ծաղրանկար և այլն), մասնակցել խմբային խոսք հորինելու գործընթացին.
- ըստ տեքստի ստեղծել պաստառ, գրքույկ, սահիկաշար և այլն:

### **Հանրակրթության հիմնական (5-9-րդ դասարաններ) ծրագրի ավարտին հայոց լեզվի դասընթացից սովորողը պետք է իմանա՝**

- հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, երկհնչյունները, շեշտի տեղափոխությամբ պայմանավորված հնչյունափոխությունը.
- հայերենի ուղղախոսական և ուղղագրական կանոնները.
- բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության.
- խոսքի մասերը, դրանց քերականական հատկանիշները.
- բառակապակցության տեսակները.
- պարզ նախադասությունը, տեսակները, նախադասության անդամների կապակցման եղանակները.
- լիակազմ և միակազմ նախադասությունները, դրանց կիրառության շրջանակը,
- նախադասության գլխավոր և երկրորդական անդամները.
- բարդ նախադասության տեսակները, դրանց բաղադրիչ նախադասությունները և անդամները, կետադրությունը.
- մեջբերվող խոսքի տեսակները, կետադրությունը:

### **պետք է կարողանա՝**

- ճիշտ գրել արտասանությամբ և գրությամբ տարբերվող բառերը՝ կիրառելով հայերենի ուղղախոսական և ուղղագրական կանոնները.
- հայերենի բառակազմական օրինաչափություններին հետևելով՝ կազմել բառեր, ցույց տալ հնչյունափոխությունը, վերլուծել և ցույց տալ բառի կազմությունը.
- տարբերել մենիմաստ, բազմիմաստ հոմանիշ, հականիշ բառերը, դարձվածքները, դրանք տեղին կիրառել բանավոր և գրավոր խոսքում.
- տարբերակել խոսքի մասերը, նշել դրանց քերականական հատկանիշները, խոսքի մեջ կիրառել ճիշտ ձևափոխություններով.
- կազմել տարբեր տեսակի բառակապակցություններ և տեղին կիրառել բանավոր և գրավոր խոսքում.
- կիրառել լիակազմ և միակազմ նախադասություններ և կիրառել համապատասխան ոճի խոսքում.
- տարբերակել գոյականական և բայական անդամները, դրանց լրացումները, դրանք ճիշտ կիրառել բանավոր և գրավոր խոսքի մեջ.
- նախադասությունները վերլուծել ձևաբանորեն և շարահյուսորեն.
- խոսքի մեջ ճիշտ կիրառել նախադասության անդամների կապակցման եղանակները՝ համաձայնություն, խնդրառություն շարադասություն.

- կետադրել պարզ և բարդ նախադասությունները.
- ուրիշի խոսքը փոխակերպել անուղղակիի և հակառակը, ճիշտ կետադրել.
- կազմել կապակցված խոսք. գրել ստեղծագործական փոխադրություն, երկխոսություն, մենախոսություն, տարաբնույթ շարադրանքներ.
- ելույթ ունենալ լսարանի առջև, համոզիչ և փաստարկված խոսքով հաղորդել մտքերը, գաղափարները.
- դրսևորել քննադատական և ստեղծագործական մտածողություն.
- արտահայտել հստակ դիրքորոշում, վերաբերմունք որևէ հարցի շուրջ, փաստերով հիմնավորել կարծիքը, մարդկանց հետ հաղորդակցվել հայերեն գրագետ խոսքով:

**Հանրակրթության հիմնական ծրագրի (5-9-րդ դասարաններ) ավարտին գրականություն դասընթացից սովորողը պետք է իմանա՝**

- կենսագրական տեղեկություններ պարտադիր ուսումնասիրության ցանկում ընդգրկված գրողների մասին.
- ուսումնասիրվող գրական երկերի դիպաշարը, բաղադրատարրերը, բովանդակությունը.
- գրական տեքստի կառուցվածքը, արձակ և չափածո ստեղծագործություններին բնորոշ առանձնահատկությունները.
- գրական սեռերը, ժանրերը, դրանց բնորոշ առանձնահատկությունները.

*պետք է կարողանա՝*

- ստեղծել գրողի գրական դիմանկարը.
- գրական երկում ցույց տալ դիպաշարը, դրա բաղադրատարրերը.
- տարբերել արձակ և չափածո ստեղծագործությունները, մատնանշել դրանց կառուցվածքային առանձնահատկությունները.
- տարբերել գրական սեռերը, ժանրերը.
- համեմատել տարբեր ժանրերի գրական ստեղծագործություններ, օրինակներով հիմնավորել դրանց բնորոշ առանձնահատկությունները.
- ուսումնասիրել գրական երկի տեքստը, ցույց տալ կառուցվածքը, մասերը, վերնագրի և բովանդակության կապը.
- բնութագրել գրական հերոսին կամ հերոսներին տեքստից ընտրված փաստերի հիման վրա.
- համեմատել նույն կամ տարբեր գրական երկերի հերոսներին, ցույց տալ նրանց նմանությունները և տարբերությունները, ձևակերպել եզրակացություն.
- գրական տեքստում ցույց տալ պատկերավորման միջոցները, ոճական առանձնահատկությունները.
- բանավոր և գրավոր վերաշարադրել լսած, կարդացած տեքստի բովանդակությունը տարբեր տեսանկյուններից.
- գրել ստեղծագործական, համեմատական, բնութագրական, վերլուծական շարադրանքներ, կարծիք, մենախոսություն, երկխոսություն, բեմագիր, գովազդի տեքստ.
- ելույթ ունենալ լսարանի առջև, ներկայացնել գրողի կենսագրությունը, ցույց տալ նրա կենսագրության և հեղինակած գրական երկի միջև առնչությունները.
- ստեղծել սահիկաշար գրողի կամ որևէ ստեղծագործության շուրջ և կիրառել բանավոր ելույթի ընթացքում.
- ստեղծել ձայնաշար սիրած հեղինակի կամ գրական որևէ ստեղծագործության շուրջ.

- գրական երկի համար ընտրել համապատասխան մեղեդի, նկարազարդումներ անել, ձևավորել գրքույկ, վահանակ, պաստառ և այլն:
- գրական երկը համեմատել դրա հիման վրա նկարահանված կինոնկարի, մուլտիպլիկացիոն ֆիլմի հետ, ցույց տալ ընդհանրությունները և տարբերությունները, հանդես գալ համապատասխան եզրակացությամբ և ընդհանրացնող խոսքով:

**Հանրակրթության միջնակարգ (10-12-րդ դասարաններ) ծրագրի ավարտին հայոց լեզվի դասընթացից սովորողը**

*պետք է իմանա՝*

- լեզուների ցեղակցության մասին, հայոց լեզվի զարգացման փուլերը.
- բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի հարաբերության, հայերենի բառապաշարի շերտերը, բառակազմության եղանակները.
- տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները, գործնական գրությունների տեսակները, գիտական շարադրանք գրելու սկզբունքները.
- շարահյուսական հոմանիշները.
- հայերենի կետադրության կանոնները, առանձնահատկությունները.
- ոճերի տեսակները, առանձնահատկությունները, գործառական ոճերի տեսակները.
- խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցները.
- ոչ բառային հաղորդակցման եղանակները.
- նախագծի էությունը, հետազոտություն կատարելու քայլերը:

*պետք է կարողանա՝*

- կարդալ և հասկանալ գրաբարյան, միջինհայերենյան, արևմտահայերեն, բարբառային հայտնի տեքստերից հատվածներ, կատարել փոխադրումներ արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը.
- գրել և խոսել գրագետ՝ կիրառելով հայերենի ուղղախոսական և ուղղագրական կանոնները, սրբագրել և խմբագրել տարաբնույթ տեքստեր.
- խոսքում կիրառել մենիմաստ և բազմիմաստ, ուղիղ և փոխաբերական իմաստներով բառեր, բառերի տեսակներ ըստ իմաստի և ձևի հարաբերության.
- կիրառել դարձվածքները համապատասխան խոսքային միջավայրում, հարստացնել խոսքը դարձվածքներով.
- օգտվել բառարաններից, հարստացնել բառապաշարը բառարանների օգնությամբ.
- կիրառել գրավոր խոսքի տարբեր տեսակներ (էսսե, տեղեկատվական տեքստեր, գործնական գրություններ, գիտական շարադրանք և այլն) տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի կանոնները և տեքստի կառուցվածքը.
- ընտրել տեքստին համապատասխան վերնագիր, բնաբան, տեքստը բաժանել պարբերությունների, ըստ անհրաժեշտության կազմել ծանոթագրություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ, կատարել հղումներ.
- օտար լեզուներից հայերեն թարգմանել տեքստեր՝ պահպանելով ասելիքի նպատակը, խնդիրները, բառապաշարը, ոճական նկարագիրը.
- գրագետ հայերենով հաղորդակցվել ժամանակի և տարածության մեջ (էլեկտրոնային տեքստեր)՝ հետևելով մեդիագրագիտությանը.
- կետադրել տեքստեր և բացատրել կիրառվող կետադրական կանոնները.
- կազմել տարբեր ոճերի տեքստեր՝ պահպանելով ոճի հատկությունները, կազմել պատկերավորման և արտահայտչական միջոցներով հարուստ տարաբնույթ տեքստեր.

- արդյունավետորեն կիրառել ոչ բառային հաղորդակցման ձևերը, կազմել, ցուցադրել և բացատրել աղյուսակներ, գծապատկերներ, տրամագրեր, խորհրդանշաններ.
- ստեղծել նախագիծ՝ առանձնացնելով համապատասխան աղբյուրները, պլանավորելով քայլաշար, կատարելով հղումներ, ամփոփում և եզրահանգումներ՝ ապահովելով միջառարկայական կապերը, փաստարկել օրինակներով. ներկայացնել հետազոտության արդյունքը՝ ստեղծելով սահիկաշար, ֆիլմ, անիմացիա, ներկայացում, ձայնագիր և այլն:
- ելույթ ունենալ լսարանի առջև՝ վերլուծելով առաջարկվող նյութը, ընտրելով համապատասխան ոճ, փոխանցելով ասելիքի հիմնական գաղափարը, մասնակցել կամ վարել բանավեճ, արտահայտել սեփական տեսակետը և փաստարկել դիրքորոշումը, ընդհանրացնել ասելիքը:

### **Հանրակրթության միջնակարգ ծրագրի (10-12-րդ դասարաններ) ավարտին հայ գրականության դասընթացից սովորողը**

#### *պետք է իմանա՝*

- հայ դասական գրականության նշանավոր ներկայացուցիչներին և նրանց հիմնական երկերը.
- սփյուռքահայ և օտարագիր ամենանշանավոր գրողներին, նրանց ստեղծագործություններից մեկ-երկուսը.
- 20-րդ դարավերջի և արդի հայ գրականության նշանավոր դեմքերին, նրանց մեկ-երկու ստեղծագործությունները.
- գրական հիմնական ուղղությունները, սեռերը, ժանրերը, տաղաչափության տարրական սկզբունքները.
- գրական երկի կառուցվածքը, կոնֆլիկտը, դիպաշարը, դրա բաղադրատարրերը.

#### *պետք է կարողանա՝*

- վերլուծել գրողի ապրած ժամանակաշրջանը, ներկայացնել գրողի կենսագրությունը, գնահատել գրող-քաղաքացուն, նրա ծավալած գործունեությունը ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում.
- ներկայացնել գրական երկի դիպաշարը, ցույց տալ դիպաշարի և երկի բովանդակության աղերսները.
- վերլուծել գրական երկի բովանդակության հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները, ապացուցել գրական երկի արդիականությունը. գնահատել ստեղծագործության նշանակությունը և գաղափարական ազդեցությունը անհատի և հանրության կյանքում.
- համեմատել և վերլուծել գրական տարբեր երկերում արծարծվող գաղափարական ընդհանրությունները.
- ներկայացնել գրական ուղղությունները, բացատրել դրանցից յուրաքանչյուրի հիմնական առանձնահատկությունները, կերպար ստեղծելու սկզբունքները.
- հիմնավորել կերպաների կայուն և փոփոխական բնույթը, գնահատել գրողի՝ գրական կերպար կերտելու, մարդկային ապրումներ և հոգեբանություն վերարտադրելու վարպետությունը.
- բացատրել գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, լուծումները, բացատրել կերպարի արդիական բնույթը.
- ուսումնասիրել գրական տեքստի լեզուն և ոճը, գնահատել գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և մտածողության վրա.
- համեմատել, հակադրել գրական տարբեր տեքստեր, վերլուծել տարբեր հեղինակների գրելաոճերը.

- ստեղծագործաբար վերարտադրել գրական երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները.
- ձևակերպել հարց, կազմել պլան, ըստ դրանց գրել համեմատական, բնութագրական վերլուծական, ստեղծագործական շարադրանքներ, էսսե, ակնարկ, հոդված, մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց հեղինակի կամ գրական կերպարի հետ.
- ստեղծել ձայանշար (փողքասթ), մշակել գովազդի, հարցազրույցի, հեռուստատեսային հաղորդման տեքստ, բեմագիր, մշակել սահիկաշար որևէ գրողի կամ ուսումնասիրված երկի շուրջ.
- ծրագրել և իրականացնել նախագծային աշխատանք. ծավալել ինքնուրույն հետազոտական գործունեություն, աշխատել մոդուլներով, գնահատել սեփական ձեռքբերումները և բացթողումները.
- գնահատել հայ գրականության դերը ազգային արժեքների, մշակույթի, գաղափարների ստեղծման և պահպանման գործում.
- գնահատել արտասահմանյան գրականության դերը որպես տարբեր երկրների ու ժողովուրդների մշակույթին ծանոթանալու միջոց.
- դրսևորել քննադատական մտածողություն, վերլուծել հասանելի տեղեկույթը, գնահատել փաստարկները, տարբերել փաստը կարծիքից.
- արժևորել գրողին և գրական ստեղծագործությունը ժամանակի և տարածության համատեքստում, ինչպես նաև սեփական անձի զարգացման և բարեկրթման տեսանկյունից:

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**1-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ**  
**ՄԱՅՐԵՆԻ. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ	ԵՆԹԱ- ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ			
		1-ին դասարան	2-րդ դասարան	3-րդ դասարան	4-րդ դասարան
<b>ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ</b>	ՎԵՐԱԲԵՐ ՄՈՒՆՔ և ՎԱՐՔԱԳԻ Ծ	Հոգատար			
		1. Հոգ տանի իր առողջության մասին՝ պահ պանելով ֆիզիկական ակտիվություն և առողջ սննդակարգ:	1. Սիրի ինքն և շրջապատի մարդկանց (ընտանիք, բարեկամներ, ընկերներ):	1. Հարգի սեփական արժանիքները, շարունակաբար զարգացնի իր մտավոր և ֆիզիկական հնարավորությունները:	1. Խնայող և պատասխանատու վերաբերմունք դրսևորի իր ֆիզիկական և հոգեկան ներուժի նկատմամբ:
		2. Հետևի անձնական հիգիենային՝ մաքուր պահելով սեփական մարմինն ու իր կենսագործունեության տարածքները (սենյակ, սեղան, անկողին, դասարան և այլն):	2. Հոգ տանի իր, ընտանիքի անդամների և շրջապատի մարդկանց ֆիզիկական և հոգեկան առողջության մասին:	2. Հարգալից վերաբերվի շրջապատի մարդկանց գաղափարներին և նրանց մտավոր ու ֆիզիկական հնարավորությունների նկատմամբ:	2. Խնայող և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերի ընտանիքի, դպրոցի, բնակավայրի, հայրենիքի
3. Կոկիկ և	3. Ուշադիր լինի				



		<p>խնամքով վերաբերվի անձնական օգտագործման իրերի, գրքերի, գրենական պիտույքների նկատմամբ:</p> <p>4. Պահպանի խոսքի մաքրությունը՝ խուսափելով ոչ գրական ու ժարգոնային բառերից:</p>	<p>սեփական նպատակների, ուսումնառության և հանգստի նկատմամբ:</p> <p>4. Հարգանքով վերաբերվի մայրենի լեզվի նկատմամբ՝ դրսևորելով այն ճիշտ և տեղին կիրառելու պատրաստակամություն:</p>	<p>3. Հոգ տանի իր և շրջապատող մարդկանց միջև դրական փոխհարաբերությունների ձևավորման նկատմամբ:</p> <p>4. Դրսևորի իր լեզուն շարունակաբար զարգացնելու կամք և խանդավառություն:</p>	<p>նկատմամբ (ֆիզիկական ռեսուրսներ, հոգևոր և մշակութային արժեքներ):</p> <p>3. Կարևորի փոխօգնությունը, համագործակցությունը և խաղաղ կենսագործունեությունը ընտանիքում, դպրոցում, համայնքում:</p> <p>4. Արտահայտի դրական վերաբերմունք մայրենի լեզվի որպես մտքերի, զգացումների արտահայտման, ազգային արժեքների պահպանման և փոխանցման միջոցի նկատմամբ:</p>
Սկզբունքային					
		<p>1. Պարտաճանաչ հետևի ժամանակին և նոր՝ սովորողի դերին բնորոշ պարտականությունների կատարմանը:</p> <p>2. Հստակ կատարի հրահանգները:</p> <p>3. Պահպանի խմբային աշխատանքի սահմանված կանոնները:</p>	<p>1. Դրսևորի սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք և հետևողականություն:</p> <p>2. Հետևողական լինի կարգի և կանոնների պահպանման նկատմամբ:</p> <p>3. Կարևորի ազնիվ և արդար մոտեցումը ցանկացած</p>	<p>1. Լինի քաղաքավարի և անկեղծ՝ շփումների ժամանակ:</p> <p>2. Պատասխանատու լինի իր ուսումնառության, սեփական քայլերի և արարքների համար:</p> <p>3. Պատասխանատու և հետևողական լինի մայրենի</p>	<p>1. Լինի նպատակասլաց և ինքնուրույն կամ օգնությամբ հաղթահարի դժվարությունները:</p> <p>2. Կայացնի որոշումներ և հետևողական լինի դրանց կայացմանը:</p> <p>3. Դրսևորի համա-</p>

			պարագայում:	լեզվի գրագետ կիրառման հարցում:	ռուբրիկա և նվիրվածություն մայրենի լեզվի պահպանման և զարգացման գործում:
<b>Ստեղծարար</b>					
1. Խոսքային կամ ոչ խոսքային միջոցների կիրառմամբ վերաբերմունք արտահայտի ունենդրած, ընթերցած ստեղծագործության, դիտած նկարի, ֆիլմի վերաբերյալ:	1. Մասնակցի գեղարվեստական միջոցառումների, ցերեկույթների, համերգների՝ դրսևորելով ստեղծագործական որակներ:	1. Տեսնի և գնահատի բարին, գեղեցիկը, մարդկայինը՝ վերաբերմունքն արտահայտելով նաև խոսքի միջոցով:	1. Ստեղծագործ արար կիրառի ձեռք բերած գիտելիքները:	2. Առաջարկի խնդիրների, հարցերի, իրավիճակներ ի լուծման յուրօրինակ մոտեցումներ:	3. Դրսևորի հետաքրքրասիրություն նորը բացահայտելու և սովորածը նպատակային կիրառելու նկատմամբ:
2. Խոսքի իր երազանքների, ցանկությունների մասին:	2. Զարգացնի կամ ստեղծի օրինակի համաձայն՝ օգտագործելով իր երևակայությունը:	2. Ստեղծագործելու փորձեր անի՝ ներկայանալով բանավոր, գրավոր կամ ինքնարտահայտման տարբեր ձևերով:			
<b>Համարձակ</b>					
1. Դրսևորի իրեն նոր՝ սովորողի դերում՝ մասնակցելով գործունեության տարբեր ձևերի:	1. Անկաշկանդ արտահայտի մտքերը՝ պատասխանելով իրեն ուղղված հարցերին:	1. Կողմնորոշվի նոր իրավիճակներում՝ կայացնելով հարմար որոշումներ:	1. Առաջադրի նոր գաղափարներ և դրանք իրագործելու ուղիներ, վստահի իր ուժերին:		
<b>Հաղորդակցվող</b>					
1. Դրսևորի խոսակցի և ունկնդրի կարողություններ, կարևորի դրանք անընդհատ զարգացնելը:	1. Ստանձնի տարբեր դերեր խմբային աշխատանքների, քննարկումների ժամանակ:	1. Համագործակցի ընկերների, հասակակիցների հետ՝ կիրառելով խոսքի համապատասխան ձևեր:	1. Նախաձեռնի հանդիպումներ, քաննարկումներ տարբեր տարիքի և մասնագիտության տեր մարդկանց հետ:		
2. Դրսևորի բարեկիրթ վարք՝ կիրառելով ողջույնի, հրաժեշտի,	2. Կիրառի մայրենի լեզուն՝ հաղորդակց-	2. Հետևի սեփական խոսքի համա-			

		խնդրանքի համապատասխան ձևեր:	վելիս պահպանելով լեզվի ճշտությունը:	պատասխանությանը գրական հայերենի պահանջներին:	2. Կարևորի լեզվի դերը միտքը հասկանալի տեղ հասցնելու գործում:
	Ինքնակազմակերպվող				
		1. Գրսևորի աշխատասիրություն և պարտաճանաչություն ուսումնառության ընթացքում:	1. Զգա ժամանակը և ճիշտ պլանավորի իր անելիքները:	1. Կազմակերպի իր առօրյան՝ հավասարակշռելով ուսումը, հանգիստն ու հանրօգուտ աշխատանքը:	1. Վերլուծի իր ուսումնառության գործընթացը, սեփական գործողություններն ու արարքները և ինքնուրույն կամ օգնությամբ մշակի բարելավման քայլեր:  2. Բավարարի իր հետաքրքրությունները ինքնուրույն աշխատանքի՝ ընթերցելու, դիտելու, ունկնդրելու, ուսումնասիրելու միջոցով:
ԱՐԺԵՎՈՐ ՈՒՄ	1. Գնահատի իր անձը, սիրի իր ընտանիքը, ընկերներին, հայրենիքը:  2. Գնահատի գիրքը, կարևորի ընթերցանությունը որպես գործունեության մշտական ձև:	1. Սիրի սովորելը և մեկնաբանի սովորելու ազդեցությունն իր կյանքի վրա:  2. Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում:  3. Կարևորի բարությունը՝ որպես ինքնության, մարդու կեսակերպի կարևոր տարր:	1. Հարգի իր խոսքը և ուրիշների հիմնավոր կարծիքը:  2. Կարևորի իր ֆիզիկական, մտավոր և հուզական զարգացման հավասարակշռությունը:  3. Ճանաչի և արժևորի ազգային հերոսներին:	1. Գնահատի իր հնարավորությունները՝ խոսել լով իր «ուժեղ» և «թույլ» կողմերի մասին:  2. Գիտակցի պատասխանատվություն իր, իր ընտանիքի, շրջապատող մարդկանց, հայրենիքի հանդեպ:  3. Գիտակցի իր ազգային	

					պատկանելությունը, ճանաչի և պահպանի պատմամշակութային և արժեքները:
ՀԱՂՈՐ-ԴԱԿՑՈՒՄ	ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանա իրեն ուղղված խոսքը, պատասխանի հարցերին:</li> <li>2. Պատասխանի տեքստի ընդհանուր բովանդակության վերաբերյալ հարցերին:</li> <li>3. Հարցերի օգնությամբ պատմի ապրածը, դիտածը, խոսի իր ցանկությունների մասին:</li> <li>4. Անվանի առարկաներ, երևույթներ՝ դրանց վերագրելով 1 – 2 հատկանիշ:</li> <li>5. Արտասանի (արտահայտիչ կարգա) մանկական բանաստեղծություններ, չափածո հանելուկներ, պատմի փոքրիկ պատմություններ, հեքիաթներ՝ ցույց տալով հիմնական գաղափարի կամ ուղերձի ընկալումը:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանա և համապատասխան արձագանք տալսածին:</li> <li>2. Ձևակերպի հարցեր բանավոր ընթերցած կամ տեխնոլոգիական որևէ միջոցով ունկնդրած տեքստի հիմնական գաղափարի վերաբերյալ:</li> <li>3. Պատմի ապրածը, դիտածը, ընթերցածը, արտահայտի սեփական զգացումները, ցանկությունները:</li> <li>4. Նկարագրի մարդկանց, վայրեր, իրադարձություններ, առարկաներ, երևույթներ՝ պարզ արտահայտելով մտքերն ու զգացումները:</li> <li>5. Արտահայտիչ արտասանի</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանա և հարգանքով վերաբերվի այլ տեսակետներին ու գաղափարներին:</li> <li>2. Ձևակերպի հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ, պատասխանի իրեն ուղղված հարցերին:</li> <li>3. Նախընտրած ձևով և եղանակով վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը, նկարագրի տարբեր առարկաներ և երևույթներ:</li> <li>4. Արտահայտի սեփական տեսակետը, քննարկի իր ցանկությունները, խոսի իր զգացումների մասին, մասնակցի բանավեճի, ներկայացնի իր մտտեցումները:</li> <li>5. Արտահայտիչ արտասանի բանաստեղծություններ, պատմի պատմություններ,</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանա տարբեր տեսակետներ, արտահայտի իր կարծիքը կամ վերաբերմունքը դրանց վերաբերյալ:</li> <li>2. Ձևակերպի հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ ճշգրտումներ անելու նպատակով, պատասխանի իրեն ուղղված հարցերին:</li> <li>3. Տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը, նկարագրի տարաբնույթ երևույթներ, ցույց տա</li> </ol>

			<p>մանկական բանաստեղծություններ, պատմի պատմություններ, տարբեր ժողովուրդների հեքիաթներ՝ ներկայացնելով հիմնական գաղափարը կամ ուղերձը:</p>	<p>հեքիաթներ, առակներ՝ դուրս բերելով հիմնական գաղափարը կամ ուղերձը:</p>	<p>դրանց փոխկապակցվածությունը:</p> <p>4. Արտահայտի և հիմնավորի սեփական տեսակետը, մեկնաբանի սեփական զգացումները, ցանկությունները, մասնակցի բանավեճի, հանդես գալիս փատարկված խոսքով:</p> <p>5. Արտահայտի և արտասանի բանաստեղծություններ, արձակ հատվածներ, պատմի պատմություններ, հեքիաթներ, առակներ՝ դուրս բերելով հիմնական գաղափարը կամ ուղերձը և մեկնաբանի՝ ինչպես է այն փոխանցվում տեքստի միջոցով:</p>
<p>ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱ Կ ՑՈՒՄ</p> <p><b>(արտագրություն, թելադրու)</b></p>	<p>1. Տարբերակի հայերենի տպագիր և ձեռագիր տառերը, ճիշտ գրի ձեռագիր մեծատառերն ու փոքրատառերը:</p>	<p>1. Արտագրի ոչ մեծ տեքստեր՝ կատարելով տրված առաջադրանքները:</p> <p>2. Գրավոր պատասխանի</p>	<p>1. Արտագրի տեքստեր՝ կատարելով տրված առաջադրանքները:</p> <p>2. Ըստ պլանի գրա վոր շարադրի/</p>	<p>1. Արտագրի տեքստեր՝ կատարելով լեզվական և ստեղծագործական առաջադրանքներ:</p>	

	<p><b>թյուն, փոխադրություն, շարադրություն)</b></p>	<p>2. Արտագրի մի քանի նախադասություններից կազմված տեքստեր ձեռագիր և տպագիր օրինակներից:</p>	<p>կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ հարցերին:</p> <p>3. Տրված հարցերի միջոցով վարի երկխոսություն դասընկերների, ուսուցիչների, ծնողների հետ և կատարի նշումներ:</p> <p>4. Բառերով և բառակապակցություններով գրավոր արտահայտի իր հույզերը կարդացած ստեղծագործության, ունկնդրած երաժշտության, դիտած կինոնկարի կամ ներկայացման մասին, կազմի շնորհավորական բացիկ:</p>	<p>փոխադրի կարդացածի, լսածի, դիտածի մասին:</p> <p>3. Կազմի երկխոսության հարցերը, վարի երկխոսություն տարբեր մարդկանց հետ և կատարի նշումներ, ամբողջացնի դրանք:</p> <p>3. Գրի իր սիրելի զբաղմունքի, մարդկանց, խաղալիքների, մասին, բնութագրի գովազդվող առարկան, կազմի հրավիրատոմս, բացիկ:</p>	<p>2. Կազմի պլան և գրավոր շարադրի/փոխադրի կարդացածի, լսածի, դիտածի մասին՝ պահպանելով դեպքերի ժամանակագրությունը:</p> <p>3. Կազմի երկխոսության հարցերը, վարի երկխոսություն տարբեր մարդկանց հետ, կատարի նշումներ և ամբողջացնի դրանք մի քանի նախադասություններով:</p> <p>4. Մի քանի նախադասությամբ գրի իր տպավորությունները և վերաբերմունքը ընթերցածի, նկարի, երաժշտության, ներկայացման, կինոնկարի մասին, կազմի գովազդային հոլովակի պարզ տեքստ, հայտարարություն, հրավիրատոմս, բացիկ:</p>
<p>ՈՉ ԽՈՍՔԱՅԻ Ն ՀԱՂՈՐԴԱ Կ ՅՈՒՄ</p>	<p>1. Իր հույզերը արտահայտի ժեստերի և դիմախաղի միջոցով:</p>	<p>1. Իր հույզերն ու մտքերը արտահայտի ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով:</p>	<p>1. Զգա դիմացինի հույզերը և դրսևորի համապատասխան վերաբերմունք:</p>	<p>1. Հասկանա մարդուն, նրա հույզերը՝ հետևելով նրա շարժումներին, դեմքի արտահայտությանը, մարմնի դիրքին, դրսևորի համապատասխան վարքագիծ:</p>	

		<p>2. Նկարի լսածի, դիտածի վերաբերյալ իր հույզերն ու զգացումները:</p> <p>3. Մտքերն ու զգացումներն արտահայտի դիմախառնի, ժեստերի, մարմնի միջոցով՝ մասնակցելով դերային և թեմատիկ խաղերի:</p>	<p>2. Պարզ նշաններով պատկերի լսածը, տեսածը, ընթերցածը, զգացածը:</p> <p>3. Մնջախաղով ներկայացնի ընթերցածի, լսածի բովանդակությունը:</p>	<p>2. Կիրառի պատկերներ, աղյուսակներ, պայմանական նշաններ մտքերն ու զաղափարներն արտահայտելու համար:</p> <p>3. Մասնակցի ստեղծագործության դերերով ներկայացման, դերային խաղերի՝ ստանձնելով որոշակի դերեր, մտքերն ու հույզերն արտահայտի այլընտրանքային տարբերակներով (մնջախաղ, գույներ, երաժշտություն, ծեփում և այլն):</p>	<p>2. Ձեռք բերած տեղեկությունը, տեքստի բովանդակությունը ըստ հրահանգի հաղորդի գծակարգի, աղյուսակի միջոցով, անհրաժեշտությամբ՝ դեպքում ավելացնի նկարագրություններ՝ գաղափարները, մտքերն ու զգացումները ճշգրտելու համար:</p> <p>3. Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի ըստ անհրաժեշտության:</p> <p>4. Մասնակցի ստեղծագործության դերերով ներկայացմանը, դերային խաղերի՝ ստանձնելով որոշակի դերեր, մտքերն ու հույզերն արտահայտի այլընտրանքային տարբերակներով (մնջախաղ, գույներ, երաժշտություն, ծեփում և այլն):</p>
<b>ԸՆԹԵՐՑԱ-ՆՈՒԹՅՈՒՆ</b>	ՏԵՔՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ	1. Ճիշտ և հասկանալով ընթերցի արձակ և չափածո գրական պարզ տեքստեր, պատասխանի կարողացածի	1. Հասկանալով և վարժ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, ներկայացնի կարդացածի բովանդակությունը՝	1. Հասկանալով և արտահայտիչ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, պատասխանի հարցերին՝ հղում կա-	1. Հասկանալով և արտահայտիչ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, արտահայտի մտքեր ենթատեքստի,

		<p>վերաբերյալ հարցերին, ձևակերպի հարցեր ընթերցածի հիմնական բովանդակության վերաբերյալ:</p> <p>2. Առանձնացնի տեքստի այն հատված ները, որոնք արտահայտ ված են նկարագրողման մեջ:</p> <p>3. Տարբերի արձակ և չափածո տեքստերը:</p> <p>4. Լսի, կարդա և հասկանա ոչ գրական պարզ տեքստի հիմնական միտքը (ինչի մասին է):</p>	<p>պատասխանելով հարցերին, ձևակերպի հարցեր տեքստի հիմնական գաղափարի վերաբերյալ:</p> <p>2. Հասկանա տեքստի բովանդակության և նկարագրողման կապը, տեքստի բովանդակության, բառերի ու արտահայտությունների և նկարագրողման միջոցով ներկայացնի հերոսներին:</p> <p>3. Տարբերի բանաստեղծությունը և հեքիաթը:</p> <p>4. Լսի, կարդա ոչ գրական պարզ տեքստեր և առանձնացնի կարևոր մտքերը:</p>	<p>տարելով տեքստին, ձևակերպի հարցեր տեքստի և առանձին հատվածների վերաբերյալ, համեմատի ու հակադրի հերոսներին ու նրանց գործողությունները, բացատրի՝ ինչպես են դրանք ազդում տեքստի իրադարձությունների ընթացքի վրա:</p> <p>2. Առաջարկի տեքստի նկարագրողման իր տարբերակը և մեկնաբանի տեքստին հարազատ բառապաշարով ու ոճով:</p> <p>3. Տարբերի բանաստեղծությունը, հեքիաթը, առակը, մանրապատում ստեղծագործությունները:</p> <p>4. Լսի, կարդա և հասկանա ոչ գրական տեքստեր, ըստ նպատակի առանձնացնի անհրաժեշտ տեղեկությունները:</p>	<p>հերոսների ու նրանց խոսքերի, մտքերի, արարքների վերաբերյալ՝ կիրառելով տեքստի բառերն ու արտահայտությունները, մեկնաբանի դրանց ընտրությունը և գործածությունը համատեքստում:</p> <p>2. Վերլուծի հենակետային բառերի և արտահայտությունների ընտրությունը և կիրառումը տվյալ համատեքստում, բացատրի տեքստի նկարագրողման ազդեցությունը տեքստի ընկալման վրա:</p> <p>3. Տարբերի գրական և ոչ գրական տեքստերը, գրական տեքստերի տեսակները (բանաստեղծություն, հեքիաթ, առակ, պատմվածք) և մանրապատում ստեղծագործությունները, համեմատի տարբեր ստեղծագործություններ և նույն թեմայի արծարծումը տարբեր գրական տեքստերում:</p>
--	--	---	---	---	--



					4. Լսի, կարդա և հասկանա տարբեր բարդության և բովանդակության ոչ գրական տեքստեր, ըստ նպատակի դուրս բերի անհրաժեշտ տեղեկությունները:
<b>ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>ՀՆՉՅՈՒՆ ԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (հնչյուն, տառ)</b>	1. Արտասանությանը տարբերակի հնչյունները (ծայնավոր և բաղաձայն), ճանաչի և գրի դրանց համապատասխան տառերը, գործնականում տարբերի վանկը, միավանկ և բազմավանկ բառերը:	1. Խոսելիս ճիշտ արտասանի բառերը, պահպանի հայերենի ուղղախոսական պարզ կանոնները:	1. Պահպանի ծրագրային նյութերում հանդիպած բառերի ուղղագրությունը:	1. Պահպանի ծրագրային նյութերում և իր ակտիվ բառապաշարում տեղ գտած բառերի ուղղագրությունը:
	<b>ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (բառ, բառակազմություն, բառապաշար)</b>	1. Նախադասության մեջ ընկալի բառը որպես լեզվական միավոր, տեղին կիրառի այն: 2. Վերականգնի «քանդված» բառերը կամ տրված տառերով կազմի բառեր: 2. Կազմի բառակապակցություններ («առարկայի հատկանիշ + առարկա» կաղապարով)՝ առարկաների, նկարների, կիրառմամբ կամ առանց դրանց: 3. Առանձնացնի անձանոթ բառերը ընթերցած կամ ունկնդրած խոսքում:	1. Ճանաչի և կիրառի բառը որպես պատկերավորման միջոց: 2. Ճանաչի բառի հիմնական բաղադրիչները (արմատ, ածանց): 3. Տարբերի բառերի իմաստային խմբերը, խոսքում կիրառի հոմանիշ և հականիշ բառեր: 4. Բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում: 5. Խոսքում տարբերի գործողություն, առարկա, առարկայի որակական և քանակական հատկանիշ ցույց տվող	1. Հասկանա բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, բառերը կիրառի ուղիղ և փոխաբերական իմաստներով: 2. Խոսքում տարբերի պարզ, բարդ և ածանցավոր բառերը: 3. Հոմանշայի ն շարքից ընտրի և խոսքում կիրառի կոնտեքստին հարմար տարբերակը: 4. Օգտվի դպրոցական բառարաններից (բացատրական, հոմանշային): 5. Գործնականում ճիշտ	1. Կիրառի դարձվածքներ բանավոր և գրավոր խոսքում: 2. Կազմի նոր բառեր՝ կիրառելով հայերենի բառակազմական առանձնահատկությունները: 3. Խոսքում կիրառի բազմիմաստ բառեր: 4. Օգտվի բառարաններից (բացատրական, հոմանշային, դարձվածաբանական): 5. Գործնականում ճիշտ կիրառի խոսքի մասերը (գոյական, ածական, բայ,

			բառերը:	կիրառի խոսքի մասերը (գոյական, ածական, բայ, թվական):	թվական, շաղկապ, ծայնարկություն):
	ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ (նախադասություն)	1. Խոսքում ճանաչի և առանձնացնի նախադասությունը որպես լեզվական միավոր:	1. Հարցերի միջոցով ընդարձակի տրված նախադասությունը:	1. Խոսքի մեջ տարբերի նախադասություններն ըստ հաղորդակցման նպատակի, կետադրի դրանք:	1. Խոսքում կիրառի տարբեր հնչերանգի նախադասություններ:
<b>ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	ԿԱՊԱԿՑ ՎԱԾ ԽՈՍՔ: ՏԵՔՍՏ	1. Ընկալի տեքստը որպես ամբողջություն, ճանաչի տեքստի բաղադրիչները:	1. Նկարագրի տեքստի կառուցվածքը՝ ներկայացնելով ինչպես է սկսվում այն և ինչպես է ավարտվում:  2. Վերարտադրի տեքստը ստեղծագործության այս կամ այն հերոսի անունից:	1. Իմանա և կիրառի տեքստի տարբեր բաղադրիչները՝ հիմնական գաղափարը կամ անհրաժեշտ տեղեկություն դուրս բերելու նպատակով:  2. Զարգացնի տեքստը՝ ավելացնի, լրացնի, փոփոխի, նոր հերոս ավելացնի կամ ընդհակառակը՝ սեղմի, պակասեցնի:  3. Նորովի վերարտադրի լսած, ընթերցած տեքստը, սկսի, շարունակի և ավարտի պատմությունը:	1. Ուսումնասիրի տեքստը՝ կիրառելով բովանդակային, խոսքային, լեզվաոճական վերլուծում, հասկանա և բացատրի հեղինակի մտադրությունը և ասելիքը:  2. Մեկնաբանի՝ ինչպես են բառերն ու արտահայտությունները կամ տարբեր հնարները ապահովում տեքստի հանգավորումը, երաժշտական նությունը, իմաստային նրբերանգները:  3. Հորինի պատմություններ՝

				<p>4. Հորինի և շարադրի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք:</p>	<p>օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (նկարապատում, գմայլիկ, ծաղրանկար և այլն), մասնակցի խմբային խոսքի ստեղծմանը, ըստ տեքստի ստեղծի պաստառ, գրքույկ, սահիկաշար և այլն:</p> <p>4. Մշակի տեղեկությունը՝ ըստ նպատակի կիրառելով բառային նկարագրություն և մոդելներ (գծագրեր, աղյուսակներ):</p>
<p>ՀԵՏԱԶՈՏՈՒՄ. ՆԱԽԱԳԻԾ</p>	<p>1. Ձևակերպի հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ:</p> <p>2. Հասկանա դիտած ֆիլմերի, տեսանյութերի, նկարաշարերի, ունկնդրած ծայնագրությունների բովանդակությունը, քննարկի ընկերների հետ:</p>	<p>1. Ձևակերպի հետազոտական հարցեր, նկարագրի դրանց պատասխանները գտնելու հիմնական քայլերը:</p> <p>2. Ընտրի գիրք կամ այլ ռեսուրս առաջարկված ցանկից և գտնի տարբեր ուսումնական առարկաների ն վերաբերող հարցերի պատասխանները:</p>	<p>1. Ձևակերպի հետազոտական հարցեր, պլանավորի հարցերի բացահայտմանն ուղղված գործողությունների քայլաշարը:</p> <p>2. Օգտվի առաջարկված տպագիր կամ էլեկտրոնային պաշարներից և հավաքի հետազոտությանն առնչվող փաստեր, նյութեր:</p>	<p>1. Ձևակերպի հետազոտության նպատակը, հարցերը, պլանավորի ուսումնասիրության քայլերը:</p> <p>2. Ուսումնասիրի տպագիր և էլեկտրոնային պաշարներ, հավաքի հետազոտության հարցերը մեկնաբան</p>	

			<p>տասխաններ ը:</p>	<p>3. Իրեն հետաքրքրող կամ հանձնարարված թեմայով պատրաստի հաղորդում, կատարի եզրահանգումներ:</p> <p>4. Ներկայացնի հետազոտության արդյունքները՝ աշխատելով անհատապես կամ խմբում:</p>	<p>ղ նյութեր:</p> <p>3. Շարադրի հետազոտության արդյունքները՝ կատարելով դիտարկումներ, արտահայտելով կարծիք:</p> <p>4. Ներկայացնի հետազոտության արդյունքները՝ կիրառելով ներկայացման տարբեր միջոցներ:</p>
--	--	--	-------------------------	--	--

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**5-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ**  
**ՄԱՅՐԵՆԻ. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ</b>	<b>ԵՆԹԱՀԱՍԿԱՑ ՈՒԹՅՈՒՆ</b>	5-րդ դասարան	6-րդ դասարան
<b>ԻՆՔՆՈՒԹ ՅՈՒՆ</b>	<b>ՎԵՐԱԲԵՐ ՄՈՒՆՔ</b>	<p>1. Հաղորդակցվելիս հարգա լից վերաբերմունք դրսևորի մայրենի լեզվի հանդեպ, չաղավաղի, չաղճատի լեզուն օտար բառերով և արտահայ տություններով, հետևի ինչպես իր, այնպես էլ ընկերների գրագետ հայերեն խոսքին: Տարբերի և արժևորի մայրենի բարբառը, խոս վածքը որպես հայոց լեզվի ճյուղ:</p>	<p>1. Հաղորդակցվելիս հարգա լից վերաբերմունք դրսևո ռի մայրենի լեզվի հանդեպ, չաղավաղի, չաղճատի լեզուն օտար բառերով և արտահայտ ություններով: Կազմի դպրոցի հանրութ յան շրջանում առօրյա- խոսակցական լեզվում կիրառվող օտար բառերի հայերեն համարժեքների բառարան և տրամադրի ընկերներին: Լսարանի առջև ելույթ ունենալիս կիրառի գրագետ հայերեն խոսք: Տարբերի և արժևորի մայրենի բարբառը, խոսվածքը որպես հայոց լեզվի ճյուղ: Համեմատի բարբառը գրական լեզվի հետ, ցույց տա հնչյունական, արտասանական, բառա պաշարային տարբերութ յունները:</p>
		<p>2. Հայերեն բանավոր և գրավոր գրագետ խոսքով իր կարծիքը հայտնի տվյալ իրադրութ յան, կարդացած տեքստի, գրքի մասին:</p>	<p>2. Հայերեն բանավոր և գրա վոր գրագետ խոսքով իր կարծիքը հայտնի տվյալ իրադրութ յան, կարդա ցած տեքստի, գրքի, կինոն կարի, երաժշտութ յան, կտավի վերատպութ յան մասին:</p>
		<p>3. Համագործակցի ընկեր ների հետ, դրսևորի հան դուրժողականութ յուն այլակարծութ յան դեպ քում, կարողանա դիպուկ խոսքով հարթել անհա մաճայնութ յունը, կազմի բարեկիրթ ու քաղաքա վարի բառերի և արտահայտութ յունների բառարան:</p>	<p>3. Համագործակցի ընկեր ների հետ, դրսևորի հանդուրժողականութ յուն այլակարծութ յան դեպ քում, կարողանա դիպուկ խոսքով հարթել անհամա ճայնութ յունը, շարունակի լրացնել բարեկիրթ, քաղաքավարի, բառերի, արտահայտութ յունների, օրինութ յունների բառարանը:</p>
		<p>4. Հաղորդակցվելիս հարգա լից խոսքով իր վերաբերմունքը դրսևորի հասա կակիցների և մեճահասակ ների նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող, հոգատար:</p>	<p>4. Հաղորդակցվելիս հարգա լից խոսքով իր վերաբեր մունքը դրսևորի հասակակից ների և մեճահասակների նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող, հոգատար, սկզբունքային, վերլուճող:</p>
	<b>ԱՐԺԵՎՈ ՐՈՒՄ</b>	<p>1. Ըմբռնի մայրենի լեզվի դերը հայ ժողովրդի կյան քում. հայոց լեզուն ընկալի</p>	<p>1. Արժևորի մայրենի լեզվի դերը հայ ժողովրդի կյանքում. հայոց լեզուն դիտարկի որպես ազգային</p>

		որպես ազգային պատկանելիության ցուցիչ և ՀՀ պետական լեզու:	պատկանելիության ցուցիչ և ՀՀ պետական լեզու, գիտակցի նրա ազգապահպան դերը բոլոր ժամանակներում և մեր պետականության ամրա պնդման գործում:
		2. Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում, գնահատի նրա նշանակությունը իր անձի զարգացման, սովորելու կարողության ձևավոր ման գործում:	2. Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում, գնահատի նրա նշանակ ությունը ինչպես իր անձի, մարդկային որակների և հայեցի նկարագրի, այն պես էլ սովորելու կարող ության, աշխարհաճանաչո ղոթյան, աշխարհընկալ ման զարգացման գոր ծում:
		3. Կարևորի մայրենի լեզվի դերը սեփական հույզերը, ապրումները, մտքերը գրագետ և շրջապատին հասկանալի ձևակերպելու գործում:	3. Կարևորի մայրենի լեզվի դերը սեփական հույզերը, ապրումները, մտքերը, տեսակետը, գաղափար ները գրագետ և շրջա պատին հասկանալի ձևա կերպելու գործում:
		4. Մայրենի լեզվի հնչյունաբանական, գրային, բառագիտական առանձնահատկությունները համեմատի այլ լեզուների հետ, գտնի ընդհանրություններն ու տարբերությունները, ձևակերպի պարզ եզրակացություններ:	4. Մայրենի լեզվի հնչյունաբանական, գրային, բառագիտական, առանձնահատկությունները համեմատի այլ լեզուների հետ, գտնի, մատնանշի ընդհանրութ յուններն ու տարբերութ յունները, ձևակերպի եզրակացություններ՝ հիմն վելով օրինակների վրա:
		5. Օտար լեզուներից հայերեն թարգմանի պարզ տեքստեր, արժևորի մայրենի լեզվի բառի մաստային և բառակազմական հնարավորությունները թարգմանութ յուն կատարելիս:	5. Օտար լեզուներից հայերեն թարգմանի ոչ բարդ տեքստեր, արժևորի մայրենի լեզվի բառի մաստային և բառակազմական հնարավորությունները թարգմանութ յուն կատարելիս:
<b>ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ</b>	<b>ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿ ՑՈՒՄ</b>	1. Հասկանալի ձևակերպի և պատմի իր զգացումների մասին: 2. Լսած կամ կարդացած նյութի մեջ տարբերի և առանձնացնի գլխավոր մտքերը երկրորդականից, վերաշարադրի համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ մտադրության և նախօրոք կազմած պլանի:	1. Նկարագրի, պատմի իր զգացումների, հույզերի ապրումների մասին: 2. Լսած կամ կարդացած նյութի մեջ տարբերի և առանձնացնի գլխավոր մտքերը երկրորդականից, նյութը վերաշարադրի համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ մտադրության և նախօրոք կազմած պլանի, արտահայտի և փաստերով հիմնավորի սեփական տեսակետը նյութի բովանդակության շուրջ:

		<p>3. Տարբեր աղբյուրներից գտած նյութը վերաշարադրի նոր և հետաքրքիր ձևերով, ելույթ ունենալսարանի առջև՝ ներկայացնելով իր մշակումը. արտահայտի սեփական տեսակետը նյութի բովանդակության շուրջ:</p>	<p>3.Տարբեր աղբյուրներից գտած նյութը վերաձևա կերպի, վերաշարադրի սեփական բառերով, նոր և հետաքրքիր լուծումներ գտնի, նյութը լսարանին ներկայացնի՝ զուգորդելով համապատասխան բացատրություններով:</p>
		<p>4.Մասնակցի քննարկումների, լսած կամ կարդացած նյութից փաստեր մեջբերի՝ իր տեսակետը հիմնավորելու համար:</p>	<p>4.Մասնակցի քննարկումների, լսած կամ կարդացած նյութից փաստեր մեջբերի՝ իր տեսակետն ապացուցելու համար:</p>
<p>ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿ ՑՈՒՄ</p>		<p>1. Կազմի հարցեր կամ պլան լսածի և կարդա ցածի շուրջ և գրավոր վերաշարադրի դեպքերի հաջորդական ընթացքը:</p>	<p>1. Կազմի հարցեր կամ պլան լսածի և կարդա ցածի շուրջ, վերափոխի, գրավոր վերաշարադրի դեպքերի հաջորդական ընթացքը, բացատրի հերոսի (հերոսների) արարքների դրդապատ ճառները:</p>
		<p>2. Լսած կամ կարդացած նյութից համապատասխան մեջբերումներ անի՝ պահպանելով հղում տալու կանոնները:</p>	<p>2. Լսած կամ կարդացած նյութից համապատասխան մեջբերումներ անի բացատրի դրանք: Պահպանի և հետևի հղում տալու կանոններին:</p>
		<p>3. Գրի հրավիրատոմս, հայտարարություն, նամակ՝ գրագետ ձևակերպելով մտքերը, կարծիքը:</p>	<p>3. Գրի ինքնակենսագրութ յուն, բնութագիր, տարբեր ոճերի նամակներ՝ գրագետ շարադրելով սեփա կան մտքերը, կարծիքը՝ արձարծելով ազգային, պետական-հասարակ կան և տարիքին մատ չեյի խնդիրներ:</p>
		<p>4. Գրավոր նկարագրի շրջապատող միջավայրը, բնությունը, մարդկանց արտաքինը, կիրառի պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն:</p>	<p>4. Գրավոր նկարագրի շրջապատող միջավայրը, բնությունը, մարդկանց արտաքինը և բնութագրի նրանց՝ նշելով բնավորության կարևոր կողմերը, կիրառի պատկերավորման միջոցներ՝ մակ դիր, փոխաբերություն, համեմատություն:</p>
		<p>1. Կազմի համեմատության աղյուսակներ, ցույց տա երևույթների, առարկաների, կենդանիների, մարդկանց արտաքին ընդհանրությունները և տարբերությունները:</p>	<p>1. Կազմի համեմատության աղյուսակներ, ցույց տա երևույթների, առարկաների, կենդանիների, մարդկանց ընդհանրութ յունները և տարբերութ յունները: Բնութագրի մարդկանց՝ ըստ նրանց արարքների:</p>
		<p>2. Հաղորդելիք նյութի համար ընտրի համա պատասխան</p>	<p>2. Հաղորդելիք նյութի համար ընտրի համապատասխան</p>

		երաժշ տություն, կտավի վերա տպություն, քանդակ, մուլտֆիլմից հատված ներ և բացատրի ընտրության շարժա ռիթմ:	երաժշտութ յուն, կտավի վերատ պություն, քանդակ, մուլտֆիլմից, գեղկինո նկարից հատվածներ և բացատրի ընտրության շարժառիթ:
		3. Նյութի բովանդակութ յանը համապատասխան նկարազարդումներ անի (ծեփի և ձեռքի այլ աշխատանքներ անի): Մնջախաղով, ժեստերի լեզվով հաղորդի նյութի բովանդակությունը:	3. Նյութի բովանդակութ յանը համապատասխան նկարազարդումներ անի (ծեփի և ձեռքի այլ աշխատանքներ անի): Մնջախաղով, ժեստերի լեզվով հաղորդի նյութի բովանդակությունը:
		4. Պատրաստի գրքույկ, պաստառ հաղորդելիք նյութի շուրջ:	4. Պատրաստի գրքույկ, պաստառ, սահիկաշար հաղորդելիք նյութի շուրջ:
<b>ԸՆԹԵՐՑԱՆՈՒ ԹՅՈՒՆ</b>	ՏԵՔՍՏԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹ ՅՈՒՆ	1. Արտահայտիչ, վարժ կարգա գրական արձակ և չափածո տեքստերը, պահպանի հայերենին հատուկ արտասանութ յունը, շեշտադրումը, վերարտադրի դեպքերի հաջորդական ընթացքը՝ պահպանելով տեքստի տրամաբանությունը:	1. Արտահայտիչ, վարժ կարգա գրական արձակ և չափածո տեքստերը, պահպանի հայերենին հատուկ արտասանութ յունը, շեշտադրումը, ստեղծագործաբար, հավելումներով, նորովի վերարտադրի նյութի բովանդակությունը:
		2. Գրական երկ կարդալիս կանխատեսի դեպքերի զարգացման ընթացքը, տեքստից ընտրած փաստերով հիմնավորի իր կանխատեսումը:	2. Գրական երկ կարդալիս կանխատեսի դեպքերի զարգացման ընթացքը, տեքստից ընտրած փաստերով հիմնավորի իր կանխատեսումը:
		3. Տեքստում գտնի գրա կան կերպարի արտա քինի նկարագրություն ները, բնավորությունը բնութագրող հատված ները, արարքների դրդա պատճառները բացա հայտող խոսքային միջոցները, հիմնվելով դրանց վրա՝ վերլուծի տեքստը:	3. Տեքստում գտնի գրա կան կերպարի արտա քինի նկարագրություն ները, բնավորությունը բնութագրող հատված ները, արարքների դրդա պատ ճառները բացա հայտող խոսքային միջոցները, հիմնվելով դրանց վրա՝ վերլուծի տեքստը:
		4. Տեքստում գտնի, բացա տրի պատկերավորման միջոցների (մակդիր, համեմատություն) դերը տվյալ ստեղծագործութ յան մեջ:	4. Տեքստում գտնի, բացատ թի պատկերավորման միջոցների (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, չափա զանցություն) և խորհրդանիշների դերը տվյալ ստեղծագործութ յան մեջ:
		ՏԵՔՍՏԻ ՏՐԱՄԱԲԱ ՆՈՒ ԹՅՈՒՆ	1. Գրական և ոչ գրական տեքստերի շուրջ կազմի պլան, մշակի հարցեր, ըստ դրանց՝ ձևակերպի



ԵՐԿԻ ՁԵՎ	1. Ներկայացնի գրական ուղղութիւնները: Փաստերով ցույց տա դրանցից յուրաքանչյուրին բնորոշ գծերը: Բացատրի կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ գրական ուղղությունների:	1. Ներկայացնի գրական ուղղութիւնները: Փաստերով ցույց տա դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Բացատրի կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ գրական ուղղությունների: Հիմնավորի կերպաների կայուն և փոփոխական բնույթը՝ բերելով համապատասխան օրինակները: Գնահատի գրողի՝	1. Ներկայացնի գրական ուղղութիւնները: Փաստերով ցույց տա դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Բացատրի կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ գրական ուղղությունների: Հիմնավորի կերպաների կայուն և փոփոխական բնույթը՝ բերելով համապատասխան օրինակները:	1. Ներկայացնի գրական ուղղութիւնները: Փաստերով ցույց տա դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Բացատրի կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ գրական ուղղությունների: Հիմնավորի կերպաների կայուն և փոփոխական բնույթը՝ բերելով համապատասխան օրինակները:



			գրական կերպար կերտելու վարպետութ յունը և արդիական բնույթը:	Գնահատի գրողի՝ գրական կերպար կերտելու վարպետութ յունը և արդիական բնույթը:
		2. Ցույց տա և բացատրի գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտ ները, կոնֆլիկտի զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները:	2. Ցույց տա և բացատրի գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտ ները: Կոնֆլիկտի զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները:  Մեկնաբանի գրողի ընտրութ յունը, կերպարի արդիական բնույթը:	2. Ցույց տա և բացատրի գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտ ները: Կոնֆլիկտի զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները: Մեկնաբանի գրողի ընտրութ յունը, կերպարի արդիական բնույթը:
		3. Ներկայացնի գրական երկի կառուցվածքը, դրա մասերը: Հիմնավորի կառուցվածքային մասերի փոխկապակցվածությունը, զարգացումը: Վերլուծի գրական կերպարի զարգացման քայլաշարը:	3. Նկարագրի գրական երկի կառուցվածքը: Հիմնավորի կառուցվածքային մասերի փոխկապակցվածությունը, զարգացումը: Վերլուծի գրական կերպարի զարգացման քայլաշարը:  Գտնի և մատնանշի տվյալ երկում կառուցվածքի խախտման դեպքերը:	3. Նկարագրի գրական երկի կառուցվածքը: Հիմնավորի կառուցվածքային մասերի փոխկապակցվածութ յունը, զարգացումը: Վերլուծի գրական կերպարի զարգացման քայլաշարը:  Գտնի և մատնանշի տվյալ երկում կառուցվածքի խախտման դեպքերը:
		3. Ուսումնասիրի գրական տեքստի լեզուն և ոճը, օրինակներով ցույց տա գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով:	3. Ուսումնասիրի գրական տեքստի լեզուն և ոճը, օրինակներով ցույց տա գրողի վարպետութ յունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով:	Ուսումնասիրի գրական տեքստի լեզուն և ոճը, օրինակներով ցույց տա գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով:

		<p>4. Վերլուծի գրական տեքստերը՝ ըստ ժանրա յին առանձնահատկությունների: Մատնանշի այլ ժանրի տարրերի ներթա փանցումը տվյալ ստեղծագործության մեջ՝ հիմնավորելով տեսակետը:</p>	<p>4. Վերլուծի գրական տեքստերը՝ ըստ ժանրա յին առանձնահատկությունների: Մատնանշի այլ ժանրի տարրերի ներթա փանցումը տվյալ ստեղծագործության մեջ՝ հիմնավորելով տեսակետը: Բացատրի գրողի ընտրությունը և նպատակը:</p>	<p>4. Վերլուծի գրական տեքստերը՝ ըստ ժանրա յին առանձնահատկությունների: Մատնանշի այլ ժանրի տարրերի ներթափանցումը տվյալ ստեղծագործության մեջ՝ հիմնավորելով տեսակետը: Բացատրի գրողի ընտրությունը և նպատակը:</p>
<p><b>ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ</b></p>	<p>ՏԵՔՍՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ</p>	<p>Ուսումնասիրի գրական տեքստը, ցույց տա կառուցվածքը, դրամասերը, ներկայացնի՝ ով է պատմում դեպքերը: Տարբերի երկի հեղինակին և դեպքերը պատմողին:</p>	<p>Ուսումնասիրի գրական տեքստը, ցույց տա կառուցվածքը, դրամասերը, ներկայացնի՝ ով է պատմում դեպքերը: Բնութագրի երկի հեղինակին և դեպքերը պատմողին:</p>	<p>Ուսումնասիրի գրական տեքստի լեզուն և ոճը, օրինակ ներով ցույց տա գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով</p>
		<p>Ուսումնասիրի գրական երկի տեքստը, օրինակներով ներկայացնի հեղինակի լեզվի և ոճի առանձնահատկությունները: Բացատրի տվյալ երկի հեղինակի ընտրած ոճական միջոցների բազմազանությունը: Մեկնաբանի գրողի կիրառած ոճական միջոցների ընտրության ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և մտածողության վրա:</p>	<p>Ուսումնասիրի գրական երկի տեքստը, օրինակներով ներկայացնի հեղինակի լեզվի և ոճի առանձնահատկությունները: Վերլուծի տվյալ երկի հեղինակի ընտրած ոճական միջոցների բազմազանությունը: Գնահատի գրողի կիրառած ոճական միջոցների ընտրության ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և մտածողության վրա:</p>	<p>Ուսումնասիրի գրական երկի տեքստը, օրինակներով ներկայացնի հեղինակի լեզվի և ոճի առանձնահատկությունները: Վերլուծի տվյալ երկի հեղինակի ընտրած ոճական միջոցների բազմազանությունը: Գնահատի գրողի կիրառած ոճական միջոցների ընտրության ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և մտածողության վրա:</p>

		<p>Մատնանշի տարբեր ժանրերին բնորոշ լեզվաոճական առանձնահատկությունները, բացատրի գրողի՝ լեզվական հոմանիշների շարքում կատարած ընտրությունը:</p> <p>Տեքստում գտնի և բացատրի ժանրով պայմանավորված լեզվական իրողությունների կիրառումը (բառագործածություն, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքներ):</p>	<p>Մատնանշի տարբեր ժանրերին բնորոշ լեզվաոճական առանձնահատկությունները, բացատրի գրողի՝ լեզվական հոմանիշների շարքում կատարած ընտրությունը:</p> <p>Տեքստում գտնի և բացատրի ժանրով պայմանավորված լեզվական իրողությունների կիրառումը (բառագործածութ յուն, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքներ):</p>	<p>Մատնանշի տարբեր ժանրերին բնորոշ լեզվաոճական առանձնահատկությունները, բացատրի գրողի՝ լեզվական հոմանիշների շարքում կատարած ընտրությունը:</p> <p>Տեքստում գտնի և բացատրի ժանրով պայմանավորված լեզվական իրողությունների կիրառումը (բառագործածութ յուն, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքներ):</p>
		<p>Համեմատի, համադրի և հակադրի գրական տարբեր տեքստեր, մատնանշի տարբեր հեղինակների գրելաոճերը, կերպար, պատկեր կերտելու հեղինակային առանձնահատկությունները:</p>	<p>Համեմատի, համադրի և հակադրի գրական տարբեր տեքստեր, վերլուծի տարբեր հեղինակների գրելաոճերը, կերպար, պատկեր կերտելու հեղինակային առանձնահատկությունները:</p>	<p>Համեմատի, համադրի և հակադրի գրական տարբեր տեքստեր, վերլուծի տարբեր հեղինակների գրելաոճերը, կերպար, պատկեր կերտելու հեղինակային առանձնահատկությունները:</p>
	<p>ՏԵՔՍՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ</p>	<p>Ստեղծագործաբար վերարտադրի գրական երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները:</p> <p>Գրի ստեղծագործական փոխադրություն գրական երկի թեմաներով:</p>	<p>Ստեղծագործաբար վերարտադրի գրական երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները:</p> <p>Գրի ստեղծագործական փոխադրություն գրական երկի թեմաներով:</p>	<p>Ստեղծագործաբար վերարտադրի գրական երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները:</p> <p>Գրի ստեղծագործական փոխադրություն գրական երկի թեմաներով:</p>
		<p>Հորինի պատում՝ որպես վերնագիր կամ բնաբան կիրառելով գրական երկից</p>	<p>Հորինի կարճ պատում՝ մտածված կերպով խախտելով կոնֆլիկտի և դիպաշարի</p>	<p>Հորինի պատմության ժամանակի (տեքստից դուրս գտնվող</p>

		<p>վերցված որևէ բառ, բառակա պակցություն կամ նախադասութիւն՝ կիրառելով հարուստ բառա պաշար և արտահայտչամիջոցներ:</p>	<p>զարգացումն ապահովող հաջորդականությունը:</p> <p><i>Կիրառի</i> տարբեր տեքստերից վերցված տարրեր՝ վերնագիր, բնաբան, ուղղակի կամ անուղղա կի հղումներ և <i>սլոեդի</i> միջտեքստային կապեր.</p>	<p>իրադարձություններ ի ժամանա կային հերթականության) և պատումի ժամանակի (տեքստում պատկերված իրադարձությունների ժամանակային հերթական ության) անհամապատասխան ությամբ:</p> <p><i>Սլոեդի</i> միջտեքստային կապեր. <i>կիրառի</i> տարբեր տեքստերից վերցված տարրեր՝ վերնագիր, բնաբան, ուղղակի կամ անուղղա կի հղումներ և այլն:</p>
	<p><i>Ձևակերպի</i> հարց, <i>կազմի</i> պլան, ըստ դրանց <i>գրի</i> վերլուծական շարադրանք, էսսե, ակնարկ, հոդված:</p> <p>Հորինի մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց գրողի հետ:</p>	<p>Ձևակերպի հարց, <i>կազմի</i> պլան, ըստ դրանց <i>գրի</i> վերլուծական շարադրանք, էսսե, ակնարկ, հոդված:</p> <p>Հորինի մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց գրողի հետ:</p>	<p>Ձևակերպի հարց, <i>կազմի</i> պլան, ըստ դրանց <i>գրի</i> վերլուծական շարադրանք, էսսե, ակնարկ:</p> <p>Հորինի մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց գրողի հետ:</p>	<p>Ձևակերպի հարց, <i>կազմի</i> պլան, ըստ դրանց <i>գրի</i> վերլուծական շարադրանք, էսսե, ակնարկ:</p> <p>Հորինի մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց գրողի հետ:</p>
	<p>Ստեղծի ձայնաշար (փողքասթ), <i>մշակի</i> գովազդի, հարցազրույցի, հեռուստատեսային հաղորդման տեքստ ուսումնասիր ված երկի շուրջ (անհատական կամ խմբային աշխատանք):</p>	<p>Ստեղծի ձայնաշար (փողքասթ), <i>մշակի</i> գովազդի, հարցազրույցի, հեռուստատեսային հաղորդման տեքստ ուսումնասիրված երկի շուրջ (անհատական կամ խմբային աշխատանք):</p> <p>Ըստ ստեղծագործության <b>գրի</b> ներկայացման կամ կինոնկարի բեմագիր (անհատական կամ խմբային աշխատանք):</p>	<p>Ստեղծի ձայնաշար (փողքասթ), <i>մշակի</i> գովազդի, հարցազրույցի, հեռուստատեսային հաղորդման տեքստ ուսումնասիրված երկի շուրջ (անհատական կամ խմբային աշխատանք):</p> <p>Ըստ ստեղծագործության <b>գրի</b> ներկայացման կամ կինոնկարի բեմագիր (անհատական կամ խմբային</p>	<p>Ստեղծի ձայնաշար (փողքասթ), <i>մշակի</i> գովազդի, հարցազրույցի, հեռուստատեսային հաղորդման տեքստ ուսումնասիրված երկի շուրջ (անհատական կամ խմբային աշխատանք):</p> <p>Ըստ ստեղծագործության <b>գրի</b> ներկայացման կամ կինոնկարի բեմագիր (անհատական կամ խմբային</p>

				աշխատանք):
	ՆԱԽԱԳԻԾ	<p>Թեմայի շրջանակում <i>ընտանիքի վերնագիր: Ձևակերպի</i> հետազոտության հարց: <b>Պլանավորի</b> աշխատանքի ընթացքը: <i>Հավաքի</i> փաստեր, նյութեր: <i>Խմբավորի</i> նյութերը, <i>վերաշարադրի</i> որոշ նյութերի բովանդակությունը: <i>Շարադրի</i> հետազոտության արդյունքը՝ հետևելով գիտական շարադրանքի պահանջներին: Կախված նախագծի բնույթից՝ <i>գտնի</i> և <i>հիմնավորի</i> միջառարկայական կապերը, փաստարկի օրինակներ բով: <i>Ստեղծի</i> սահիկաշար, տեսաֆիլմ, ներկայացում, <i>ծայնագրի</i> ռադիոհաղորդում և այլն:</p> <p><i>Վերլուծի</i> սեփական աշխատանքի ընթացքը և արդյունքը:</p>	<p>Թեմայի շրջանակում <i>ընտանիքի վերնագիր: Ձևակերպի</i> հետազոտության հարց: <b>Պլանավորի</b> աշխատանքի ընթացքը: <i>Հավաքի</i> փաստեր, նյութեր: <i>Խմբավորի</i> նյութերը, <i>վերաշարադրի</i> որոշ նյութերի բովանդակությունը: <i>Շարադրի</i> հետազոտության արդյունքը՝ հետևելով գիտական շարադրանքի պահանջներին: Կախված նախագծի բնույթից՝ <i>գտնի</i> և <i>հիմնավորի</i> միջառարկայական կապերը, փաստարկի օրինակներով: <i>Ստեղծի</i> սահիկաշար, տեսա ֆիլմ, ներկայացում, <i>ծայնագրի</i> ռադիոհաղորդում և այլն: <i>Վերլուծի</i> սեփական աշխատանքի ընթացքը և արդյունքը: <i>Նշի</i> թեմայի զարգացման հեռա նկարները:</p>	<p>Թեմայի շրջանակում <i>ընտանիքի վերնագիր: Ձևակերպի</i> հետազոտության հարց: <b>Պլանավորի</b> աշխատանքի ընթացքը: <i>Հավաքի</i> փաստեր, նյութեր: <i>Խմբավորի</i> նյութերը, <i>վերաշարադրի</i> որոշ նյութերի բովանդակությունը: <i>Շարադրի</i> հետազոտության արդյունքը՝ հետևելով գիտական շարադրանքի պահանջներին: Կախված նախագծի բնույթից՝ <i>գտնի</i> և <i>հիմնավորի</i> միջառարկայական կապերը, փաստարկի օրինակներով: <i>Ստեղծի</i> սահիկաշար, տեսաֆիլմ, ներկայացում, <i>ծայնագրի</i> ռադիոհաղորդում և այլն: <i>Վերլուծի</i> սեփական աշխատանքի ընթացքը և արդյունքը: <i>Բացատրի</i> և <i>հիմնավորի</i> թեմայի զարգացման հեռա նկարները:</p>

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ	ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ	<p>Վստահորեն և ստեղծագործաբար <i>հաղորդակցվի և համագործակցի</i> դասընկերների, ուսուցիչների, համայնքի այլ անդամների հետ՝ ձևավորելով թիմա յին մտածողություն:</p> <p><i>Դրսևորի</i> հանդուրժողա կանություն այլ տեսա կետների, կարծիք ների դրսևորման դեպքում:</p>	<p>Վստահորեն և ստեղծագործաբար <i>հաղորդակցվի և համագործակցի</i> դասընկերների, ուսուցիչների, համայնքի այլ անդամների հետ՝ զարգացնելով թիմային մտածողություն:</p> <p><i>Դրսևորի</i> հանդուրժողա կանություն այլ տեսա կետների, կարծիքների դրսևորման դեպքում:</p>	<p>Վստահորեն և ստեղծագործաբար <i>հաղորդակցվի և համագործակցի</i> դասընկերների, ուսուցիչ ների, համայնքի այլ անդամների հետ՝ կատարելագործելով թիմային մտածողությունը:</p> <p><i>Դրսևորի</i> հանդուրժողա կանություն այլ տեսա կետների, կարծիք ների դրսևորման դեպքում:</p>
		<p><i>Լսի</i> դիմացինին մինչև վերջ՝ ուշադրություն դարձնելով բանախոսի խոսքին, մտքերի ընթաց քին:</p>	<p><i>Լսի</i> դիմացինին մինչև վերջ՝ ուշադրություն դարձնելով բանախոսի խոսքին, մտքերի ընթաց քին:</p>	<p><i>Լսի</i> դիմացինին մինչև վերջ՝ ուշադրություն դարձնելով բանախոսի խոսքին, մտքերի ընթաց քին:</p>
		<p><i>Դրսևորի</i> քննադատա կան մտածողություն: <i>Վերլուծի</i> հասա նելի տեղեկույթը, <i>գնահատի</i> փաստարկները, <i>տարբերի</i> փաստը կար ծիքից:</p>	<p><i>Դրսևորի</i> քննադատա կան մտածողություն: <i>Վերլուծի</i> հասանելի տեղեկույթը, <i>գնահատի</i> փաստ արկները, <i>տարբերի</i> փաստը կարծիքից:</p>	<p><i>Դրսևորի</i> քննադատա կան մտածողություն: <i>Վերլուծի</i> հասանելի տեղեկույթը, <i>գնահատի</i> փաստարկները, <i>տարբերի</i> փաստը կարծիքից:</p>
		<p><i>Հայտնի</i> սեփական տեսակետը՝ դրսևորելով բարեկրթություն և զսպվածություն: <i>Մասնակցի</i> քնարկումներին, բանավեճերին, <i>դրսևորի</i> բանավիճելու հմտություններ: <i>Հեղևի և կիրառի</i> բանավիճելու կանոնները:</p>	<p><i>Հայտնի</i> սեփական տեսակետը՝ դրսևորելով բարեկրթություն և զսպվածություն: <i>Մասնակցի</i> քնարկումներին, բանավեճերին, <i>դրսևորի</i> բանավիճելու հմտություններ: <i>Հեղևի և կիրառի</i> բանավիճելու կանոնները:</p>	<p><i>Հայտնի</i> սեփական տեսակետը՝ դրսևորելով բարեկրթություն և զսպվածություն: <i>Մասնակցի</i> քնարկումներին, բանավեճերին, <i>դրսևորի</i> բանավիճելու հմտություններ: <i>Հեղևի և կիրառի</i> բանավիճելու կանոնները:</p>
		<p>Դասընկերների, ուսուցիչների կամ համայնքի այլ անդամների հետ համագործակցելով կամ ինքնուրույ նաբար</p>	<p>Դասընկերների, ուսուցիչների կամ համայնքի այլ անդամների հետ համագործակցելով</p>	<p>Դասընկերների, ուսուցիչների կամ համայնքի այլ անդամների հետ համագործակցելով կամ</p>

		<p><i>մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով:</i></p>	<p>կամ ինքնուրույնաբար <i>մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով:</i></p>	<p>ինքնուրույնաբար <i>մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով:</i></p>
	ԱՐԺԵՎՈՐՈՒՄ	<p><i>Գնահատի</i> հայ և համաշխարհային գրական նույն լավագույն երկերի բովանդակության իմացությունը և գաղափարական ըմբռնումը որպես ինքնաճանաչման, սեփական անձի, աշխարհայացքի ձևավորման և ազգային մշակութային արժեքների պահպանման, հետագա զարգացման կարևոր պայման:</p>	<p><i>Գնահատի</i> հայ և համաշխարհային գրականութան լավագույն երկերի բովանդակության իմացությունը և գաղափարական ըմբռնումը որպես ինքնաճանաչման, սեփական անձի, աշխարհայացքի ձևավորման և ազգային մշակութային արժեքների պահպանման, հետագա զարգացման կարևոր պայման:</p>	<p><i>Գնահատի</i> հայ և համաշխարհային գրականութան լավագույն երկերի բովանդակության իմացությունը և գաղափարական ըմբռնումը որպես ինքնաճանաչման, սեփական անձի, աշխարհայացքի ձևավորման և ազգային մշակութային արժեքների պահպանման, հետագա զարգացման և փոխանցման կարևոր պայման:</p>
	<p>Արժևորի հայ գրականության դերը այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում: Գիտակցի, որ ինքը հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդն է, դրսևորի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման, արժևորման գործում:</p>	<p>Գնահատի հայ գրականության դերը արվեստի այլ բնագավառների համատեքստում, այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում: Գիտակցի, որ ինքը հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդն է և դրսևորի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման, հաջորդ սերունդին փոխանցելու և օտարներին</p>	<p>Գնահատի հայ գրականության դերը արվեստի այլ բնագավառների համատեքստում, այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում: Գիտակցի, որ ինքը հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդն է և դրսևորի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման, հաջորդ սերունդին փոխանցելու և</p>	

			տեղեկացնելու գործում:	օտարներին տեղեկաց նելու գործում:
		<p>Ընդլայնի սեփական ուսումնա ռության հնարավորությունները՝ ձգտելով շարունակական ինքնա զարգացման և ինքնակրթության:</p> <p>Հայ գրողների կենսագրական փաստերի, նրանց հայրենանվեր գործունեության, կերտած հայրենասեր, կամա յին հերոսների օրինակով զբաղվի ինքնադաստիարակությամբ. զարգացնի արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, հավասարակշռվածություն, համառություն, լինի ցկյանս սովորող և զարգացող անհատակա նություն:</p>	<p>Ընդլայնի սեփական ուսումնա ռության հնարավորությունները՝ ձգտելով շարունակական ինքնա զարգացման և ինքնակրթության:</p> <p>Հայ գրողների կենսագրական փաստերի, նրանց հայրենանվեր գործունեության, կերտած հայրենասեր, կամային հերոսների օրինակով զբաղվի ինքնադաստիարակությամբ. զարգացնի արդարամտություն, լայնախոհություն, համարձակութ յուն, հավասարակշռվածություն, համառություն, լինի ցկյանս սովորող և զարգացող անհատակա նություն:</p>	<p>Ընդլայնի սեփական ուսումնա ռության հնարավորությունները՝ ձգտելով շարունակական ինքնա զարգացման և ինքնակրթության:</p> <p>Հայ գրողների կենսագրական փաստերի, նրանց հայրենանվեր գործունեության, կերտած հայրենասեր, կամա յին հերոսների օրինակով զբաղվի ինքնադաստիարակությամբ. զարգացնի արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, հավասարակշռվածություն, համառություն, լինի ցկյանս սովորող և զարգացող անհատականութ յուն:</p>



#### **4.«Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների ուսումնական բովանդակության կառուցումը**

4.1. 1-6-րդ դասարաններում հայոց լեզվուն և գրականությունը միասնացած (ինտեգրված) են մեկ դասընթացում, որը 1-4-րդ դասարաններում՝ վերառարկայական, իսկ 5-6-րդ դասարաններում միջառարկայական բնույթ ունի: 1-4-րդ դասարանների ծրագրերում նշվում են հիմնական նույն վեց թեմաները, որոնք աստիճանաբար խորանում և ընդլայնվում են:

Այս դասարաններում լեզվական օրինաչափությունները ուսումնասիրվում են գերազանցապես գործնական ճանապարհով՝ ինչպես գրական, այնպես էլ ոչ գրական տեքստերի քննության միջոցով՝ ապահովելով մասի և ամբողջի հարաբերակցության ընկալումը, լեզուն դիտարկելու որպես յուրօրինակ կառույց, որը ծառայում է հաղորդակցման հիմնական նպատակին՝ բանավոր և գրավոր կապակցված խոսք կազմելուն:

4.2. «Մայրենի», ինչպես նաև հայոց լեզվի, գրականության, հայ գրականության ուսումնական բովանդակության մեջ կարևորվում են բառի և դրա իմաստի, հայերենի բառակազմական և բառաստեղծման հնարավորությունների բացահայտումը, բառի՝ խոսքի մեջ ճիշտ և տեղին կիրառությունը, քերականական կապակցելությունը, ուղիղ և փոխաբերական իմաստների ընկալումը, սովորողների բառապաշարի հարստացումը, որոնք էլ իրենց հերթին ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, զարգացնում են ճանաչողական կարողությունները:

4.3. Հանրակրթական դպրոցի հիմնական ծրագրի 7-9-րդ դասարաններում ուսումնասիրվում է հայոց լեզվի քերականությունը՝ ձևաբանություն և շարահյուսություն բաժիններով: Քերականություն ուսուցումը չի հանգեցնում կանոնների, սահմանումների անգիր իմացության, լեզվաբանական տեղեկությունները նվազագույն են, բայց շեշտադրվում է լեզվական միավորների հաղորդակցական և ոճական արժեքը: Ուսումնական գործունեությունը հայոց լեզվից հիմնականում գործնական բնույթ ունի, կապված է աշակերտի կյանքի, տրամաբանության, քննադատական մտածողության, լեզվամտածողության զարգացման հետ, կազմակերպվում է միտք շարժող հարցադրումների, իրական հաղորդակցական պայմաններում գործունեություն ծավալելու հիման վրա, այսինքն՝ սովորողը լեզվաբանության օրենքները սեփական փորձով է փաստարկում, հետևաբար նաև յուրացնում:

Ծրագրային նյութի ուսուցման ընթացքում հաջորդական քայլերով կյանքի է կոչվում հիմնական նպատակներից մեկը՝ պատրաստել գրագետ հաղորդակցվող, բանավոր ու գրավոր տրամաբանված խոսք ունեցող անհատ, որն իր սեփական ջանքերով բացահայտում է գիտելիքը:

Հայոց լեզվի ծրագրային նյութի ուսուցմանը զուգընթաց կարևորվում է հանրակրթության պետական չափորոշով նախանշված կարողունակությունների զարգացումը:

4.4. Հանրակրթության միջնակարգ ծրագրում (10-12-րդ դասարաններ) սովորողը համադրում, կշռադատում, պատճառահետևանքային կապերը հիմնավորում է հիմնական ծրագրում (5-7-րդ դասարաններ) սովորածի, ձեռք բերած կարողությունների հիման վրա:

Հիմնական դպրոցում անցած նյութի նպատակային և պարույրած կրկնություն միջոցով շեշտը հիմնականում դրվում է ոճագիտության՝ որպես խոսքի դրսևորման եղանակների ու ձևերի համակողմանի ուսումնասիրության վրա, որը սովորողին հնարավորություն է տալիս կառուցելու ամբողջական և ինքնուրույն խոսք՝ լեզվաքերականական միավորների գրագետ համադրմամբ, հայոց լեզվի ոճական առանձնահատկությունների տեղին կիրառմամբ:

4.5. Ավագ դպրոցում նախատեսվում է վերլուծական շարադրության, էսսեի, գիտական աշխատանքի, գործնական գրությունների ուսուցում, իսկ վերառարկայական հմտություններն ամրապնդելու և զարգացնելու համար նախագծային և հետազոտական աշխատանքի իրականացում, որն սկսվում է դեռևս ավելի ցածր դասարաններում, սակայն առավել համապարփակ և հետևողական է դառնում ավագ դպրոցում: Այս աստիճանում հայոց լեզվի դասավանդումը հիմնականում իրականացվում է մոդուլների միջոցով, շեշտադրվում է աշակերտի ինքնուրույն ուսումնառությունը:

4.6. 7-9-րդ դասարաններում «Գրականություն» առարկայի բովանդակությունը կազմելիս հաշվի են առնվում սովորողի՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված հետաքրքրությունները, հոգեբանությունը, ինչպես նաև կառուցվածքային, համակարգված և քննական մտածողություն ձևավորելու շարունակականության ապահովումը: Գրական երկերի ուսումնասիրությունը նպաստում է ընկալելու ազգային գեղարվեստական մտածողությունը, հայ ժողովրդի պատմական ճակատագրի, հայ մարդու կերպարի մարմնավորումը, ավանդույթների շարունակականությունը, գրողի աշխարհայացքի, նրա երկի հասարակական նշանակությունը և արդիականությունը:

Հայ և արտասահմանյան գրականության ընտրովի նմուշների ուսումնասիրության միջոցով սովորողները ծանոթանում են *գրական սեռեր, ժանրեր, երկի կառուցվածք, կոնֆլիկտ, կերպար* եզրույթներին, պատասխանում են հիմնական և առնչակից գաղափարական հարցադրումներին, բացատրում են գրական երկում կոնֆլիկտի, կերպարի զարգացումները, տարբերում են հեղինակի և պատմողի կերպարները, հասկանում են պատճառահետևանքային, միջառարկայական կապերն ու առնչությունները, կազմում են բանավոր և գրավոր խոսք՝ կիրառելով հայոց լեզվից և գրական

երկից սովորածը, ինչպես նաև, օգտագործելով ժամանակակից տեխնիկական միջոցներն ու հնարավորությունները:

4.7. Ավագ դպրոցի «Հայ գրականություն» առարկայի ուսումնական բովանդակությունը կառուցվում է հիմնականում թեմատիկ խմբավորումներով և ժամանակագրական մեթոդով՝ գրերի գյուտից և 5-րդ դարի մատենագրությունից մինչև ժամանակակից գրականություն (նաև սփյուռքահայ):

Գրականագիտական տարրական գիտելիքների իմացությունը, գրողական տեխնիկայի կիրառության բացատրությունը, պատճառահետևանքային կապերի վերլուծությունը սովորողին հնարավորություն են տալիս ապահովելու մտածողության խորություն և ծավալայնություն, առավել հստակ տեսնելու հայ գրականությունը ընդհանուր ուսումնական-առարկայական համատեքստում, կատարելու համեմատական վերլուծություններ, տեքստն ընկալելու և մեկնաբանելու համատեքստում և նրանից դուրս, բացատրելու միջառարկայական կապերը, և այս ամենն արտահայտելու թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքով՝ հիմնվելով փաստերի և սեփական դիտարկումների վրա:

## 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ

Հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում անհրաժեշտ է ստեղծել համապատասխան կրթական միջավայր, որն իր մեջ ներառում է.

1. *Հոգեբանական բարեկեցություն յուրաքանչյուր սովորողի համար*, որտեղ աշակերտն բոլոր առումներով իրեն ապահով է զգում. ապահովված են միջանձնային և ներանձնային դրական հարաբերություններ.
2. *Անվտանգության և սանտիմանիզմի պահանջներին համապատասխանող միջավայր*. որտեղ սովորողի համար ստեղծված են բոլոր պայմանները՝ տարիքային, անհատական առանձնահատկություններին համապատասխան.
3. *Նյութատեխնիկական հագեցած բազա*, որի շնորհիվ սովորողը կարող է ինքնուրույնաբար աշխատել, տեղեկություններ քաղել, օգտվել գիտական, հանրագիտարանային, բառարանային աղբյուրներից, հետազոտություններ ծրագրել և իրականացնել: Ժամանակակից սարքերի և էլեկտրոնային միջոցների (խելացի գրատախտակ, համակարգիչ,

երևակիչ, պատճենման սարք, համացանց) կիրառությունը հնարավորություն են տալիս ընդլայնելու սովորողների գիտելիքները, համապատասխան միջոցներից օգտվելու շնորհիվ տեղեկություն ձեռք բերելու, ինչպես նաև հաղորդակցական, համագործակցային, մտածողական կարողությունների և Հանրակրթության պետական չափորոշյով նախատեսված կարողունակությունների զարգացումը:

4. *Ուսումնառության կիրառվող տեխնոլոգիաներ, մեթոդներ.* հայոց լեզվի և գրականության ուսումնառության գործընթացում կիրառվում են ակտիվ ուսուցման ձևեր, համագործակցային, հետազոտական, նախագծային, մոդուլային տեխնոլոգիաներ, փոխներգործուն մեթոդներ, հնարներ, իսկ ուսումնական գործընթացի քայլերը պարզից դեպի բարդը գնալու սկզբունքի պահպանմամբ ներկայացվում է հայոց (մայրենի) լեզվի և գրականության ծրագրերի «Առաջարկվող գործունեության ձևեր» բաժնում:

Հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացը զուգակցվում է այլ առարկաների հետ կապերի և առնչությունների բացահայտումներով, որոնք ենթադրում են տարբեր առարկաներից համատեղ դասաժամեր, դաս-էքսկուրսիաներ, դաս-բեմականացումներ, հանդիպումներ տարբեր մասնագիտությունների անձանց հետ, միջառարկայական նախագծեր, հետազոտական աշխատանքներ և դրանց ամփոփումներ բանավոր և գրավոր շարադրանքներով, սահիկաշարերի ցուցադրումով, մեդիայի բազմաբնույթ հնարավորությունների կիրառումով:

Նյութատեխնիկական աջակցության գլխավոր կենտրոնը դպրոցական **գրադարանն** է, որը պիտի տրամադրի համապատասխան նորագույն գրականություն ինչպես ուսուցիչներին, այնպես էլ սովորողներին: Դպրոցական գրադարանը պետք է մատչելի նյութերով ապահովի սովորողներին առարկայական և միջառարկայական նախագծային, հետազոտական միավորներ մշակելու և իրականացնելու, տեղեկատվական գրագիտության հմտությունների զարգացումն ապահովելու համար: Գրադարանը հատկապես կարևոր է համաշխարհային գրականության ինչպես թարգմանական, այնպես էլ դպրոցում դասավանդվող տարբեր օտար լեզուներով նմուշների ապահովման գործում:

Գրադարանավարը, ուսուցիչները սովորողներին հաղորդում են էլեկտրոնային լրատվամիջոցներից քննադատաբար և անվտանգ օգտվելու հնարները, որ նրանք տեղյակ լինեն դրանց կիրառության սահմանափակումներին: Պարտադիր է նաև աշակերտներին դեռևս տարրական դպրոցից սովորեցնել ճիշտ և գրագետ ձևով հղումներ անելու, հեղինակային իրավունքները, ինչպես նաև ակադեմիական ազնվությունը պահպանելու սկզբունքները: Բացի այս

ամենից՝ գրադարանավարը և ուսուցիչները աշակերտներին ուղղորդում են օգտվելու գիտական բարձր համարում ունեցող կայքերից՝ բացառելով պատահական, ոչ ստուգված տեղեկությունները:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության ուսումնառության գործընթացում կիրառելի են գնահատման հետևյալ տեսակները.

1. Ախտորոշիչ
2. Ձևավորող կամ ուսուցանող
3. Միավորային

**Ախտորոշիչ** գնահատում կիրառվում է, երբ սովորողը մի դասարանից կամ դպրոցի աստիճանից անցնում է մյուսին կամ երբ տեղափոխվում է այլ դպրոց, որտեղ հարկ է լինում հայոց լեզվից և գրականությունից

ծեռքբերումների կամ բացթողումների իրական պատկերը տեսնել՝ սովորողի հետագա ուսումնառությունը կազմակերպելու համար:

**Ախտորոշիչ գնահատման տեսակները՝** հարցարան, թեստ, տեքստային աշխատանք, թելադրություն, փոխադրություն, ազատ թեմայով շարադրանք:

**Ձևավորող (ուսուցանող)** գնահատումն իրականացվում է սովորածը առավել ամրապնդելու, ուսուցանված թեմայի բացթողումները գրանցելու, դրանք շտկելու նպատակով: Ձևավորող գնահատումը միավորային չէ. բնութագրական է, խոսքային է: Ձևավորող գնահատումը կիրառվում է թեմայի ուսումնասիրության ընթացքում և միավորային գնահատումից առաջ:

*Ձևավորող գնահատման տեսակները՝*

ուսուցողական **թելադրության** բոլոր տեսակները.

**հարցարան.**

**թեստ** (նաև ՏՏ միջոցների կիրառությամբ).

**տեքստային աշխատանք.**

**փոխադրության** բոլոր տեսակները.

**շարադրանքներ՝** բանավոր և գրավոր՝ ազատ թեմայով, վերլուծական, բնութագրական, նկարագրական, էսսե, մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց, հոդված, ակնարկ, գովազդային հոլովակի տեքստ, բեմագիր, ծայնաշար (փոթբասդ), ելույթ լսարանի առջև.

**կարծիք-տպավորություն** երաժշտության, տեսաֆիլմի կամ կինոնկարի, կտավի, էքսկուրսիայի, կարդացած գրքի շուրջ.

**գործնական գրություններ՝** նամակ, ինքնակենսագրություն, բնութագիր, արձանագրություն, հաշվետվություն.

տարբեր **ժանրերի** ստեղծագործություններ՝ հեքիաթ, առակ, պատմվածք, պիես:

**Միավորային** գնահատումն իրականացվում է տարիքային ամեն խմբի համար սահմանված նպատակների, վերջնարդյունքների համաձայն, անպայման սանդղակներով: Միավորային գնահատում իրականացվում է կիսամյակի ընթացքում 3-4 անգամ՝ ամեն թեմայի ավարտից հետո: Միավորային գնահատման առաջադրանքի տեսակը, դրա գնահատման սանդղակը ուսուցիչը նախօրոք տրամադրում է աշակերտներին:

*Միավորային գնահատման տեսակները՝* թելադրություն, փոխադրություն, տեքստային աշխատանք, ստեղծագործական, վերլուծական շարադրանքներ, էսսե:

**Ներքին և արտաքին** գնահատում. ներքին գնահատում իրականացնում է դպրոցը, արտաքին գնահատումը՝ պետական լիազոր մարմինը:

**Ներքին գնահատման** համար կազմվում են առաջադրանքներ, որոնք ստուգում են սովորողի՝ տեքստը կարդալու և հասկանալու, վերլուծելու, ցանկացած թեմայով հանպատրաստից բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունները, այսինքն՝ հայոց լեզվի և գրականության վերջնարդյունքներով նախանշվող գործունեության բոլոր ձևերը:

**Արտաքին գնահատում.** իրականացվում է 9-րդ և 12-րդ դասարանների ավարտին: Երկու դեպքում էլ նախատեսվում են ստուգման բանավոր և գրավոր փուլեր. բանավոր փուլը չհաղթահարած սովորողը չի մասնակցում գրավոր փուլին:

9-րդ դասարանի ավարտին առաջարկվում է որպես ստուգման գրավոր ձև ընտրել ստեղծագործական փոխադրությունը կամ հանպատրաստից շարադրանքը որևէ թեմայով՝ որպես խոսք կազմելու կարողության ստուգում: Բանավոր ստուգումը կլինի ազատ թեմաներով զրույց կամ անցած գրական երկերի շուրջ կարծիքի, տպավորության բանավոր շարադրում:

12-րդ դասարանում սովորողների ձեռքբերումների գնահատումը հայոց լեզվից և հայ գրականությունից իրականացնել հետևյալ եղանակներով.

1) հումանիտար ուղղվածության առարկաներ ընտրած աշակերտները գրում են հետազոտական-վերլուծական շարադրանք, որը 2 տարվա հետազոտական աշխատանքի արդյունք է, և որը գնահատելու է պետական լիազոր մարմինը:

Մինչ գրավոր աշխատանքի փուլը սովորողը դպրոցի հանձնաժողովի առջև հանդես է գալիս բանավոր ելույթով՝ ներկայացնելով երկու տարվա հետազոտական աշխատանքի արդյունքը: Եթե սովորողը հաղթահարում է այս փուլը, նրա աշխատանքն ուղարկվում է արտաքին գնահատման, աշխատանքին կցվում է հանձնաժողովի անդամների կարծիքը սովորողի հետազոտական գործունեության ընթացքի և արդյունքի մասին:

2) բնագիտամաթեմատիկական առարկաներ ընտրած աշակերտները բանավոր ելույթ են ունենում դպրոցի հանձնաժողովի առջև, ներկայացնում են գրական որևէ ստեղծագործություն, իսկ գրավոր փուլում հանպատրաստից շարադրանք են գրում որևէ թեմայով պետականորեն սահմանված միևնույն օրը, որը դարձյալ գնահատվելու է պետական լիազոր մարմին կողմից:

**Տարրական դպրոցի ավարտին** սովորողների գիտելիքների և հմտությունների ստուգման համար առաջարկվում է կիրառել ստուգատեսը՝ 1-4-րդ դասարաններում ուսումնասիրվող 6 թեմաներից որևէ մեկի շրջանակում: Յուրաքանչյուր սովորող, անհատապես կամ փոքր խմբի կազմում իրականացնելով հետազոտական աշխատանք, դրսևորում է վերլուծական, ստեղծագործական, հաղորդակցական հմտություններ, գրավոր և բանավոր կամ նկարելով, ծեփելով և այլ միջոցներով ներկայացնում է 4-6-շաբաթյա գործունեության արդյունքը: Ստուգատեսի արդյունքները ամփոփվում են ոչ միավորային՝ բնութագրական գնահատմամբ՝ որևէ գործիքի, կիրառմամբ (սանդղակաշար, համառոտ գրառում, ստուգաթերթ և այլն):

**Գնահատման գործընթացում շեշտադրվում է ակադեմիական ազնվության պահպանումը:**

7. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԾՐԱԳՐԵՐ  
1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ  
«ՄԱՅՐԵՆԻ», «ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ

1-12-րդ դասարաններում հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության ծրագրերը ներկայացված են աղյուսակների տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Առարկան, տարեկան ժամաքանակը
2. Թեման
3. Նպատակները

4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը
6. Առաջարկվող գործունեության ձևերը
7. Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները
8. Միջառարկայական կապերը
9. Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տվյալ ծրագրի վերջնարդյունքների հետ

Նախ նշվում են *դասարանը*, տվյալ դասարանում հայոց կամ մայրենի լեզվի, գրականության, հայ գրականության ընդհանրական *ժամաքանակը (1)* ուսումնական տարվա համար, ապա՝ *թեմայի վերնագիրը (1)*: Հաջորդող հորիզոնական սյունակներում նշվում են թեմայի ուսումնասիրության *նպատակները (2)*, ակնկալվող *վերջնարդյունքները (3)*, այսինքն՝ տվյալ թեմայի ուսումնասիրության ավարտին աշակերտը ինչ պիտի իմանա, կարողանա, ինչ դիրքորոշում պիտի ունենա և արժեքային համակարգի որ բաղադրիչները պիտի զարգանան: Աղյուսակի հաջորդ հորիզոնական բաժնում ներկայացվում է տվյալ թեմայի *բովանդակությունը*, ապա երկու զուգահեռ սյունակներից մեկում առաջարկվում են տվյալ թեմայի շուրջ *գործնական առաջադրանքներ*, մյուս սյունակում ներկայացված են տվյալ թեմայի հետ առնչվող *ընդհանրական հասկացությունները*: Հաջորդ հորիզոնական երկու սյունակներից մեկում նշվում են թեմայի շրջանակում նախատեսվող *միջառարկայական կապերը*, իսկ վերջինում՝ տվյալ թեմայի կապը *Հանրակրթության պետական չափորոշչի համաապարասիան ծրագրի վերջնարդյունքների հետ*:



**ՄԱՅՐԵՆԻ**  
**(տարրական ծրագիր. 1-4-րդ դասարաններ)**  
**Առաջարկվող ժամաքանակ**

- 1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆ- 210 դասաժամ, առնվազն 30 շաբաթ, նվազագույնը՝ 7 դասաժամ
- 2-րդ ԴԱՍԱՐԱՆ- 256 դասաժամ, առնվազն 32 շաբաթ, նվազագույնը՝ 8 դասաժամ
- 3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ- 256 դասաժամ, առնվազն 32 շաբաթ, նվազագույնը՝ 8 դասաժամ
- 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ- 256 դասաժամ, առնվազն 32 շաբաթ, նվազագույնը՝ 8 դասաժամ

\* Բոլոր թեմաները կրկնվում են 1 – 4-րդ դասարաններում՝ աստիճանաբար խորանալով և ընդլայնվելով ենթաթեմաների միջոցով:<sup>1</sup>

\*\* Թեմաների ուսումնասիրման հաջորդականությունը կարող է տարբեր լինել՝ ուսուցիչների կամ դպրոցի ցանկությամբ՝ հաշվի առնելով մյուս ուսումնական առարկաների հետ հնարավոր առնչությունները, ինտեգրման հնարավորությունները:

\*\*\* Ենթաթեմաները որոշվում են՝ հարազատ մնալով թեմայի գաղափարախոսությանն ու բովանդակությանը:

\*\*\*\* Ամեն դասարանում յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունը կարող է իրականացվել նվազագույնը մեկ, առավելագույնը երեք ենթաթեմաների միջոցով:

ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ	ՈՐՏԵՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ	ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ
<p><b>1 - 4-րդ դասարաններում սովորողն ուսումնասիրում է՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ սեփական ներաշխարհը (ներկայացնել ինքն իրեն, խոսել իր ցանկությունների, հետաքրքրությունների, հույզերի, վերաբերմունքի մասին),</li> <li>➤ սեփական արժեքները (ներկայացնել և հիմնավորել՝ ինչ է սիրում, ինչին է հավատում, ինչ ցանկություններ և նպատակներ ունի),</li> <li>➤ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սոցիալական ձեռքբերումները (ներկայացնել սեփական կենսակերպը, ուսումնառությունը, վեր-</li> </ul>	<p><b>1 - 4-րդ դասարաններում սովորողն ուսումնասիրում է՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ ժամանակի և տարածության մեջ կողմնորոշումը (պատմելու, կարդալու, խոսելու միջոցով ներկայացնել ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները տարբեր ոլորտներում՝ կենցաղ, դպրոց, խաղեր, մոլորակ և այլն),</li> <li>➤ ծննդավայրը, բնակավայրը, հայրենիքը (կարդալու, տեսնելու, քննարկելու միջոցով բացահայտել իր ծննդավայրը, բնակավայրը, ավելի լավ ճանաչել սեփական հայրենիքը,</li> </ul>	<p><b>1 - 4-րդ դասարաններում սովորողն ուսումնասիրում է.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ մարդկանց փոխհարաբերությունները, դերերն ու պատասխանատվությունը (քննարկել՝ ինչպես են մարդիկ կազմակերպում իրենց կյանքը ընտանիքում, դպրոցում, համայնքում, խոսել պատկանելության (ընտանիքին, դպրոցին, համայնքին, երկրին) և պատասխանատվության մասին, վերլուծել մարդկանց հետ շփվելու, համագործակցելու, համատեղ նպատակներ իրագործելու մասին, ներկայացնել տարբեր</li> </ul>

<sup>1</sup> Մոտեցումը՝ ըստ Միջազգային բակալավրիատի (<https://www.ibo.org/>)

<p>լուծել իր որոշումների ու համապատասխան քայլերի, սովորությունների ազդեցությունը իր ինքնազգացողության, կյանքի որակի վրա, քննարկել ընտանիքի անդամների, ընկերների և առհասարակ մարդկանց հետ փոխհարաբերությունները),</p> <p>➤ <i>իր իրավունքները և պարտականությունները</i> (վերլուծել տանը, դպրոցում և դպրոցից դուրս իր դերերը, քննարկել տարբեր իրավիճակներում մարդկանց և շրջապատի նկատմամբ վերաբերմունքի և վարքագծի ընդունելի մոտեցումները, խոսել մարդկային որակների ու արժեքների մասին):</p>	<p>արտահայտել իր կարծիքն ու վերաբերմունքը, ներկայացնել իր դերն ու պատասխանատվությունը հայրենիքի պաշտպանության և զարգացման գործում),</p> <p>➤ <i>հայ և այլազգի նշանավոր մարդկանց կամ տոհմերի պատմությունը</i> (քննարկել նշանավոր մարդկանց կյանքն ու գործունեությունը, նրանց դերը մարդկության, մասնավորապես՝ հայ ժողովրդի պատմության կերտման գործում, ներկայացնել մեր ժողովրդի անցած հերոսական անցյալը),</p> <p>➤ <i>ճանապարհորդություններ, հայտնագործություններ</i> (ներկայացնել մարդկանց, մասնավորապես՝ աշխարհի տարբեր մասերում ապրող երեխաների հետաքրքրությունները, նախասիրություններն ու ձգտումները, մարդկանց տեղաշարժերը (միգրացիաներ), հարմարումը նոր միջավայրին):</p>	<p>դերեր ստանձնելու հնարավորությունները),</p> <p>➤ <i>մարդու տնտեսական գործունեությունը</i> (խոսել մարդկանց գործունեության բազմազանության մասին, քննարկել՝ ինչու և ինչպես են մարդիկ սովորում և աշխատում, ինչպես են ստեղծում բարիքներ, ինչպես են մարդկանց գործողությունները փոխում իրենց կյանքն ու աշխարհը):</p>
<p>ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ</p> <p><b>1 - 4-րդ դասարաններում սովորողն ուսումնասիրում է՝</b></p> <p>➤ <i>մտքերն ու զգացումները արտահայտելու, վերլուծելու և ստեղծագործելու եղանակները</i> (ներկայացնել՝ ինչպես են մարդիկ արտահայտում իրենց մտքերն ու զգացումները, քննարկել՝ ինչպես են ըստ</p>	<p>ԻՆՉՊԵՍ Է «ԱՇԽԱՏՈՒՄ» ԱՇԽԱՐՀԸ</p> <p><b>1 - 4-րդ դասարաններում սովորողն ուսումնասիրում է՝</b></p> <p>➤ <i>բնությունը, նրա օրենքները</i> (խոսքային տարբեր գործողությունների միջոցով ճանաչել բնական երևույթները, բացահայտել աշխարհի մասին երեխաներին հետաքրքրող և մատչելի օրենքներն ու գործընթացները,</p>	<p>ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՊՐՈՒՄ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ</p> <p><b>1 - 4-րդ դասարաններում սովորողն ուսումնասիրում է՝</b></p> <p>➤ <i>մարդկանց և մյուս կենդանի էակների համատեղ գոյությունը</i> (քննարկել մարդու և բնության փոխազդեցություններին, բնական ռեսուրսներին ու դրանց խելամիտ օգտագործման տարբերակներին, մարդու</p>

<p>իրավիճակի ընտրում իրենց մտքերն արտահայտելու արդյունավետ ձևեր, համադրում խոսքային և ոչ խոսքային ձևերը, խոսել մարդուն բնորոշ ստեղծագործելու պահանջմունքի մասին),</p> <p>➤ մշակութային արժեքները (վերլուծել մարդու կյանքում արվեստի դերն ու նշանակությունը, քննարկել՝ ինչպես են կյանքի տարբեր բնագավառները, նաև բնության բազմազանությունն արտացոլվում արվեստի տարբեր ճյուղերում, խոսել մեր՝ որպես հնագույն ժողովրդի և նրա ստեղծած մշակութային, ազգային արժեքները ճանաչելու անհրաժեշտության, դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի, տարբեր ազգերի մշակույթների նկատմամբ լայնախոհության դրսևորումների մասին):</p>	<p>տիեզերքը),</p> <p>➤ գիտական հայտնագործությունները, գիտության և տեխնիկայի ազդեցությունը մարդու և շրջակա միջավայրի վրա (ներկայացնել մարդու երևակայության, ստեղծագործական մտքի արդյունքները և դրանց կիրառումը կյանքի տարբեր ոլորտներում, վերլուծել գիտության զարգացման ազդեցությունը մարդու կյանքի և գործունեության վրա, ներկայացնել հայերի ներդրումը աշխարհի գիտական և մշակութային կյանքում):</p>	<p>տնտեսական գործունեությանն ու շրջակա միջավայրի վրա նրա ազդեցությանը, մարդկանց իրավունքներին ու պարտականություններին վերաբերող հարցերը),</p> <p>➤ կոնֆլիկտների լուծման եղանակները (խոսել միջանձնային հարաբերությունների, մարդկանց միջև ծագող անհամաձայնություններն ու կարծիքների բախումը լուծելու եղանակների մասին, քննարկել մեր հայրենիքը և առհասարակ աշխարհը ավելի խաղաղ ու ապահով դարձնելու անհրաժեշտությունն ու այդ առումով մարդկանց պատասխանատվությունը):</p>
--	--	---

1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆ, 210 ԺԱՄ

(առնվազն 30 շաբաթ, նվազագույնը 7 ժամ)

**Գրաճանաչություն**

**Հիմնական նպատակներ**

- բավարարել հաղորդակցվելու պահանջմունքը
- խթանել ինքնաարտահայտվելու ցանկությունը
- զարգացնել լսելու և խոսելու կարողությունները
- հարստացնել բառապաշարը
- զարգացնել հնչյունային լսողությունը, կարդալու և գրելու կարողությունները
- զարգացնել իմացական գործընթացները
- զարգացնել համեմատելու, հակադրելու և դասակարգելու կարողությունները

**Վերջնարդյունքներ**

- ✓ Խոսի իր, իր ցանկությունների, առանձնահատկությունների, իրեն հետաքրքրող հարցերի, իր կատարած գործողությունների մասին:
- ✓ Լսի խոսողին, համապատասխան արձագանք տա:
- ✓ Ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանի տրված հարցերին:
- ✓ Ունկնդրի գրական և ոչ գրական տեքստեր, պատասխանի բովանդակության վերաբերյալ հարցերին, վերարտադրի դրանք:
- ✓ Արտասանի փոքրիկ բանաստեղծություններ, հանելուկներ:
- ✓ Դիտի, համեմատի պատկերներ, առարկաներ, գտնի նմանություններ և տարբերություններ:
- ✓ Արտահայտի մտքերը հասկանալի՝ պահպանելով ուղղախոսական պարզ կանոնները:
- ✓ Արտասանության միջոցով տարբերակի ձայնավոր և բաղաձայն հնչյունները:
- ✓ Խոսքում տեղին և ճիշտ կիրառի նոր սովորած բառերը:
- ✓ Կարդա ոչ ծավալուն պարզ տեքստեր:
- ✓ Արտահայտի իր մտքերը կարդացածի վերաբերյալ՝ պատասխանելով տրված հարցերին:
- ✓ Ներկի, մանրագծի, ստանա պատկերներ:
- ✓ Կողմնորոշվի տողերի մեջ, գրի հայերենի ձեռագիր փոքրատառերն ու մեծատառերը:
- ✓ Գրի բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ոչ ծավալուն տեքստ՝ պահպանելով վայելչագրական պարզ կանոնները:
- ✓ Աշխատի խմբում՝ ստանձնելով որոշակի դերեր:
- ✓ Լսի հրահանգները:
- ✓ Հետևի անձնական հիգիենային:
- ✓ Կոկիկ և խնամքով վերաբերվի անձնական օգտագործման իրերին:

**Բովանդակություն**

- Պատմություններ, հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, հումորային մանրապատումներ երեխաների, նրանց հետաքրքրությունների ու զբաղմունքների, արկածների, տան և ընտանիքի, դպրոցի ու դպրոցական առօրյայի, ընկերների, ընկերության և մարդկանց փոխհարաբերությունների մասին:
- Ոչ գրական պարզ տեքստեր մարդկային զբաղմունքների, հետաքրքրությունների, մարդու ստեղծած բարիքների, ընկերության, մարդու մարմնի կառուցվածքի ու աշխատանքի, հիգիենայի մասին:
- Հայերենի հնչյունները (ձայնավոր և բաղաձայն):
- Հայերենի տառերը (տպագիր և ձեռագիր):
- Վանկ, բառ, նախադասություն, տեքստ:

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
---------------------------------------	--

<ul style="list-style-type: none"> <li>✓ Պատմել իր, իր ընտանիքի, տան, ընկերների, խաղալիքների և այն ամենի մասին, ինչ շրջապատում է իրեն, կատարած գործողությունների, տարբեր իրադարձությունների մասին՝ ցանկության դեպքում օգտվելով իր նկարած նկարներից, լուսանկարներից, տեսաձայնագրություններից կամ օգտագործելով իրեր, առարկաներ, արտահայտել վերաբերմունք:</li> <li>✓ Սովորել և արտասանել փոքրիկ բանաստեղծություններ, մանրապատում ստեղծագործություններ՝ հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ, կատարել արտասանական վարժություններ մանրապատում ստեղծագործությունների կիրառմամբ:</li> <li>✓ Հյուսել պատմություններ թեմատիկ նկարների վերաբերյալ, հորինել հեքիաթներ:</li> <li>✓ Մասնակցել խմբային աշխատանքների՝ պատմություններ հորինելու, թեմատիկ աշխատանքներ ստեղծելու, փոքրիկ ուսումնասիրություններ կատարելու նպատակով:</li> <li>✓ Ունկնդրել և վերարտադրել հեքիաթ, պատմություն, առակ և այլն:</li> <li>✓ Կատարել հնչյունային լսողությունը զարգացնող վարժություններ, բառի մեջ առանձնացնել հնչյունը/հնչյունները, որոշել հնչյունի ձայնավոր կամ բաղաձայն լինելը խաղերի, գործնական աշխատանքների</li> </ul>	<p><b>Անհատներ և հարաբերություններ.</b>          Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:</p> <p><b>Ժամանակ և տարածություն.</b>          Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմությունները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում:</p>
--	---

միջոցով:

- ✓ Կատարել վարժություններ նույն հնչյունը բառի տարբեր դիրքերում կիրառելու վերաբերյալ, թվարկել միևնույն հնչյունային կառուցվածքով տարբեր բառեր:
- ✓ Մասնակցել իմացական գործընթացների, մասնավորապես՝ ուշադրության, երևակայության, հիշողության զարգացմանը նպաստող խաղերի:
- ✓ Մասնակցել դերային, ուսումնական, շարժական, ժամանցային խաղերի՝ մտքերն ու զգացումներն արտահայտելով ինչպես բառերի, այնպես էլ դիմախաղի, շարժումների, գույների, ձայների միջոցով:
- ✓ Կազմել բառեր տառադարանի տառերով և կարդալ:
- ✓ Վերականգնել «քանդված» պատկերներ, բառեր, նախադասություններ, տեքստեր:
- ✓ Կարդալ փոքրածավալ տեքստեր, խոսել բովանդակության մասին, բացատրել նորածանոթ բառերն ու արտահայտությունները:
- ✓ Թվարկել իմաստային տարբեր խմբերի բառեր (կենդանիներ, ծաղիկներ, մրգեր, խաղալիքներ, գունանուններ և այլն):
- ✓ Նկարագրել առարկաներ, երևույթներ՝ ընտրելով համապատասխան հատկանիշ ցույց տվող բառեր:
- ✓ Նկարել, գծել նկարչական ալբոմում, նշել պատկերների չափը, գույնը, տեղադրումը:
- ✓ Գծել, ներկել, գրել աշխատանքային տետրերում՝ պահպանելով հիգիենայի և վայելչագրության կանոնները:
- ✓ Գրել տառեր, բառեր, բառակապակցություններ, նախադասություն, տեքստ՝ նախապես կատարելով վերլուծական աշխատանք:
- ✓ Արտագրել բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ոչ ծավալուն տեքստեր:
- ✓ Թելադրությամբ գրել բառեր, բառակապակցություններ, նախադասություններ (3 - 4 բառից կազմված):

### Միջառարկայական կապեր

- **Մանկական գրականություն.** բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում:
- **Կերպարվեստ.** տարբեր ոճերի և ժանրերի նկարների դիտում, դրանց շուրջ

պատմությունների հյուսում, քննարկվող թեմաներով նկարների, տարբեր նյութերով աշխատանքների ստեղծում (խճանկար, ծեփում, ապլիկացիա, կոլաժ), ինքնաշեն գրքույկների նկարազարդում:

- **Տեխնոլոգիա.** սովորած տառերը տարբեր նյութերով (սերմեր, թելեր, գործվածք, սովարաթուղթ և այլն) ստացում, խմբային աշխատանքի միջոցով բեմադրությունների դեկորացիաների ստեղծում:
- **Երաժշտություն.** քննարկվող թեմաների, տարբեր տառերի մասին երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում:
- **Մաթեմատիկա.** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում հատկանիշ ցույց տվող բառերով, դեկորացիաներ պատրաստելիս չափումների կատարում, դետալների գծագրում:
- **Ֆիզկուլտուրա.** օրվա ռեժիմի ստեղծում և հետևողականորեն պահպանում, մարմնամարզության, անձնական հիգիենայի պահպանման միջոցով սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում:
- **Թատրոն.** թատրոնի տարբեր տեսակների (սովերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների ներկայացում:

### Ընթերցանություն՝ 84 ժամ

#### Հիմնական նպատակներ

- զարգացնել հաղորդակցական հմտությունները
- զարգացնել կարդալու կարողությունը
- զարգացնել գրելու կարողությունը
- հարստացնել բառապաշարը
- զարգացնել ուղղախոսական կարողությունները
- զարգացնել հոգեկան գործընթացները
- ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները

#### Վերջնարդյունքներ

- ✓ Լսի, հասկանա իրեն ուղղված խոսքը, պատասխանի հարցերին:
- ✓ Հարցերի օգնությամբ պատմի ապրածը, դիտածը, խոսի իր ցանկությունների մասին:
- ✓ Ճիշտ, վարժ և հասկանալով ընթերցի արձակ և չափածո գրական պարզ տեքստեր, պատասխանի կարդացածի վերաբերյալ հարցերին, ձևակերպի հարցեր ընթերցածի հիմնական բովանդակության վերաբերյալ:
- ✓ Հասկանա տեքստի բովանդակության և նկարազարդման կապերը:
- ✓ Ընկալի տեքստը որպես ամբողջություն, ճանաչի տեքստի բաղադրիչները:
- ✓ Լսի, կարդա և հասկանա ոչ գրական պարզ տեքստի հիմնական մտքերը:
- ✓ Իմանա գրքի կառուցվածքը, բաժինները և դրանցից օգտվելու եղանակները, կարևորի

ընթերցանությունը որպես գործունեության մշտական ձև:

- ✓ Տարբերի արձակ և չափածո տեքստերը:
- ✓ Արտասանի մանկական բանաստեղծություններ, առաջադրի չափածո հանելուկներ:
- ✓ Պատմի ունկնդրած և ընթերցած փոքրիկ պատմությունները, հեքիաթները՝ ցույց տալով հիմնական գաղափարի ընկալումը:
- ✓ Մասնակցի ստեղծագործության դերերով ներկայացմանը, դերային խաղերի՝ ստանձնելով որոշակի դեր:
- ✓ Հասկանա նկարը, արտահայտի իր մտքերը պատկերվածի վերաբերյալ:
- ✓ Տարբերակի հնչյունները (ձայնավոր և բաղաձայն), ճանաչի և գրի դրանց համապատասխան տառերը:
- ✓ Խոսքի մեջ ճանաչի բառը և նախադասությունը որպես լեզվական միավորներ:
- ✓ Արտագրի կամ գրի մի քանի նախադասություններից կազմված տեքստեր:
- ✓ Ձևակերպի հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ:
- ✓ Համագործակցի ընկերների հետ:
- ✓ Լսի և հստակ կատարի հրահանգները:
- ✓ Ցուցաբերի հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:
- ✓ Պահպանի խոսքի մաքրությունը՝ խուսափելով ոչ գրական ու ժարգոնային բառերից, դրսևորի բարեկիրթ վարք:

**Բովանդակություն**

- Պատմություններ, հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, հումորային մանրապատումներ երեխաների, նրանց հետաքրքրությունների, արկածների, արարքների ու դրանց հետևանքների, կարիքների ու ցանկությունների, հույզերի արտահայտման ձևերի, տարվա եղանակների, բնության երևույթների, բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանության, մարդկանց ու կենդանիների կապի, մարդու և բնության փոխհարաբերությունների մասին:
- Ոչ գրական պարզ տեքստեր հույզերի, մարդկային մտքի հնարավորությունների, ինքնաարտահայտման ձևերի, բնության երևույթների, կենդանական և բուսական աշխարհի, մարդու՝ Երկիր մոլորակի վրա ունեցած ազդեցության մասին:
- Վանկ, բառ, բառակապակցություն, նախադասություն:
- Տեքստ (գրական և ոչ գրական):
- Կապակցված խոսք (բանավոր և գրավոր):

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>✓ Վարել երկխոսություններ և զրույցներ տեքստի բովանդակության շուրջ, վերարտադրել ունկնդրած և</li> </ul>	<p><b>Օրինաչափություն.</b> Որոշակի կրկնվող սկզբունքով երևույթներ</p>



<p>ընթերցած ստեղծագործությունները:</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ընթերցել արձակ և չափածո գրական պարզ տեքստեր, հարցերի միջոցով վերլուծել բովանդակությունը, հետևել շարադրանքի ընթացքին և որոշել դեպքերի հաջորդականությունը:</li> <li>✓ Վերլուծել տեքստի հերոսների վարքագիծը՝ անելով պարզագույն դատողություններ, պարզ նշանների կիրառմամբ գնահատել հերոսների զգայական վիճակը (ուրախ է, տխուր է, զարմացած է...):</li> <li>✓ Բեմադրել ընթերցած գրական տեքստերը խոսքային և ոչ խոսքային միջոցների կիրառմամբ:</li> <li>✓ Հորինել հեքիաթներ և բեմադրել թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, մատնային, տիկնիկային, երաժշտական և այլն) կիրառմամբ:</li> <li>✓ Տեքստի սեփական ընկալումը համադրել նկարագարման հետ:</li> <li>✓ Արտահայտել վերաբերմունք ունկնդրած կամ ընթերցած ստեղծագործություններում նկարագրված իրադարձությունների, հերոսների նկատմամբ «Դուր է գալիս», «Դուր չի գալիս» դատողություններով և հիմնավորել, խմբով հորինել պատմություններ որոշակի թեմաներով դրվագային նկարների շուրջ:</li> <li>✓ Թեմայի վերաբերյալ խմբով ձևակերպել հարցեր և ոչ գրական տեքստերից գտնել հարցերի պատասխանները, ներկայացնել տեսողական պարզ միջոցների (նկար, պաստառ, մնջախաղ և այլն) կիրառմամբ:</li> <li>✓ Նկարագրել առարկաներ, երևույթներ՝ ընտրելով համապատասխան հատկանիշ ցույց տվող բառեր, կազմել բառակապակցություններ:</li> <li>✓ Դիտարկել լեզվական հասկացությունները (բառը և նախադասությունը որպես լեզվական միավորներ) տեքստի շուրջ աշխատանքի և խոսքային - հաղորդակցական իրավիճակների միջոցով:</li> <li>✓ Ստեղծել և լուծել լեզվական խաղեր, գլուխկոտրուկներ, խաչբառներ:</li> </ul>	<p>բնության և հասարակության մեջ:</p> <p><b>Պատճառ և հետևանք.</b> Պատճառահետևանքային կապերը կյանքում, բնության մեջ, ուսում նասիրվող գրական և ոչ գրական տեքստերում:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ.</b> Ի՞նչ է, ինչի՞ համար է հարցերի միջոցով առարկաների, երևույթների ճանաչում և կիրառում ըստ նպատակի:</p> <p><b>Փոփոխություն և զարգացում.</b> Բնության և հասարակության մեջ բնականորեն կամ ուղղորդված փոփոխությունները, որոնք ապահովում են զարգացում:</p>
--	--

<p><b>Միջառարկայական կապեր</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Մանկական գրականություն.</b> բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների</li> </ul>
--

ընթերցում և քննարկում:

- **Կերպարվեստ.** տարբեր ոճերի և ժանրերի նկարների դիտում, դրանց շուրջ պատմությունների հյուսում, քննարկվող թեմաներով նկարների, տարբեր նյութերով աշխատանքների ստեղծում (խճանկար, ծեփում, ապլիկացիա, կոլաժ), ինքնաշեն գրքույկների նկարազարդում, պաստառների ձևավորում:
- **Տեխնոլոգիա.** խմբային աշխատանքի միջոցով տարբեր նյութերով (սերմեր, թելեր, գործվածք, սովարաթուղթ և այլն) բեմադրությունների դեկորացիաների ստեղծում:
- **Երաժշտություն.** քննարկվող թեմաների վերաբերյալ երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում:
- **Մաթեմատիկա.** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում հատկանիշ ցույց տվող բառերով, դեկորացիաներ պատրաստելիս չափումների կատարում, դետալների գծագրում:
- **Ֆիզկուլտուրա.** օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի պահպանման միջոցով սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում:
- **Թատրոն.** թատրոնի տարբեր տեսակների (սովերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների ներկայացում:
- **Բնական գիություններ.** բնության օրացույցի վարման միջոցով եղանակի փոփոխության դիտարկում և մարդկանց կյանքի ու գործողությունների համապատասխանեցում դրանց (հագուստի, սննդակարգի, զբաղմունքների փոփոխություն): Դասարանում և տանը կանաչ անկյունների ստեղծում, բույսերի խնամք և դրանց աճի ուսումնասիրում՝ համապատասխան գրառումներ՝ նշանային պարզ համակարգի կիրառմամբ:

Կապը Հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

S1, S3, S7, S8, S10, S13, S18, S21, S22, S24, S26, S27, S28, S29, S30, S32, S34

**2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ, 256 ԺԱՍ**

**(առնվազն 32 շաբաթ, նվազագույնը 8 ժամ)**

### **Հիմնական նպատակներ**

- ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները
- ձևավորել ինքնակազմակերպման հմտություններ
- զարգացնել կամային և անձնական որակներ
- հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր և գրավոր խոսքը
- զարգացնել կարդալու և գրելու կարողությունները
- զարգացնել հոգեկան գործընթացները
- ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները

## Վերջնարդյունքներ

- ✓ Մտքերն արտահայտի անկաշկանդ, պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային, ընդհանրացնի ասելիքը:
- ✓ Լսի հրահանգեր, իրեն ուղղված խոսքը և արձագանքի, լսի և հասկանա տեղեկատվությունը:
- ✓ Ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանի տրված հարցերին:
- ✓ Ունկնդրի գրական և ոչ գրական տեքստեր, պատասխանի հիմնական գաղափարի վերաբերյալ հարցերին, վերարտադրի դրանք:
- ✓ Արտահայտիչ արտասանի մանկական բանաստեղծություններ, պատմի պատմություններ, հեքիաթներ՝ ներկայացնելով հիմնական գաղափարը:
- ✓ Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում:
- ✓ Ընթերցի տեքստեր տեղեկատվություն ձեռք բերելու և ժամանցի համար, խոսի ընթերցածի բովանդակության մասին:
- ✓ Վերլուծի ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ:
- ✓ Ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը արտահայտի խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, համապատասխան վերաբերմունք դրսևորի ուրիշների հույզերի նկատմամբ:
- ✓ Ձևակերպի հետազոտական հարցեր, նկարագրի դրանց պատասխանները գտնելու հիմնական քայլերը, օգտվի առաջարկվող պաշարներից:
- ✓ Արտագրի. գրի, գրավոր փոխադրի ոչ մեծ տեքստեր, կատարի տրված առաջադրանքները:
- ✓ Գրավոր արտահայտի իր հույզերը տեսածի, լսածի, դիտածի վերաբերյալ:
- ✓ Ճանաչի բառը որպես պատկերավորման միջոց:
- ✓ Խոսքի մեջ առանձնացնի հոմանիշ և հակահիշ բառերը:
- ✓ Խոսքում տարբերի գործողություն, առարկա, առարկայի որակական և քանակական հատկանիշ ցույց տվող բառերը:
- ✓ Հարցերի միջոցով ընդարձակի տրված նախադասությունը:
- ✓ Ճանաչի բառի հիմնական բաղադրիչները (արմատ, ածանց):
- ✓ Ճանաչի կետադրական նշանները (վերջակետ, ստորակետ, բութ, չակերտներ և այլն):
- ✓ Համագործակցի ընկերների հետ՝ ստանձնելով որոշակի պատասխանատվություն, դրսևորելով համբերատար և բարեհամբույր վերաբերմունք, պահպանի սահմանված կանոնները:
- ✓ Սիրի ինքն իրեն, իր ընտանիքը, հարգի ընկերներին, ուսուցիչներին, հոգատար վերաբերմունք դրսևորի նրանց նկատմամբ:
- ✓ Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում, հաղորդակցվելիս պահպանի ուղղախոսական կանոնները:

- ✓ Ցուցաբերի հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:
- ✓ Կարևորի բարությունը, կատարի հանրագուտ աշխատանք:

### Բովանդակություն

- Գրական և ոչ գրական տեքստեր մարդկանց, նրանց առանձնահատկությունների, ստեղծած բարիքների, մշակած կանոնների, ընտանիքի ու ընտանեկան տոների, հայ նշանավոր տոհմերի, Հայաստանի և աշխարհի երեխաների հետաքրքրությունների, ցանկությունների, Երկիր մոլորակի ու նրա վրա ապրող կենդանի էակների, բնական երևույթների մասին:
- Տեքստ. բանաստեղծություն և հեքիաթ:
- Հոմանիշ և հականիշ բառեր:
- Բառի բաղադրիչներ (արմատ, ածանց):
- Գործողություն, առարկա, առարկայի որակական և քանակական հատկանիշ ցույց տվող բառեր:
- Նախադասություն, նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ:
- Կետադրական նշաններ (պարզ կիրառություններ):
- Կապակցված խոսք (բանավոր և գրավոր):

### Առաջարկվող գործունեության ձևեր

### Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ

- ✓ Պատմել իր, իր ընտանիքի կյանքի ու սովորությունների մասին, արտահայտել վերաբերմունք ընտանեկան ավանդույթների վերաբերյալ՝ ցանկության դեպքում օգտագործելով ընտանեկան ավանդույթի լուսանկարներ, տեսաձայնագրություններ:
- ✓ Ներկայացնել իր և մյուսների, ինչպես նաև տարբեր մարդկանց միջև առկա նմանություններն ու տարբերությունները, խոսել մարդկանց առանձնահատկությունների մասին:
- ✓ Նկարագրել իր բնակավայրը, վերլուծել առկա խնդիրներն ու մտածել դրանց լուծման ուղիների մասին՝ կազմակերպելով խմբային քննարկումներ:
- ✓ Քննարկել առողջության և դրա վրա ազդող գործոնների կապը, առաջարկել ուղիներ առողջության պահպանման և ամրակայման համար, պատրաստել նկարազարդ թռուցիկներ, պաստառներ, վահանակներ:
- ✓ Արտահայտել մտքերն ու զգացումները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ:

**Օրինաչափություն.**  
Որոշակի սկզբունքով կրկնվող երևույթների բնության և հասարակության մեջ:

**Պատճառ և հետևանք.**  
Պատճառահետևանքային կապերը կյանքում, բնության մեջ, ուսումնասիրվող գրական և ոչ գրական տեքստերում:

**Կառուցվածք և գործառույթ.**  
Ի՞նչ է, ինչի՞ համար է հարցերի միջոցով առարկաների, երևույթների ճանաչում և կիրառում ըստ նպատակի:

- ✓ Արտահայտիչ արտասանել բանաստեղծություններ, իմանալ մանրապատում ստեղծագործություններ՝ հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ, պատմել տարբեր ժողովուրդների հեքիաթներ:
- ✓ Հյուսել ոչ ծավալուն պատմություններ թեմատիկ նկարների, ունկնդրած երաժշտության, դիտած ֆիլմի, ներկայացման, նկարի, առաջադրված թեմաների վերաբերյալ, հորինել հեքիաթներ, պատմություններ:
- ✓ Մասնակցել խմբային աշխատանքների՝ պատմություններ հորինելու, թեմատիկ աշխատանքներ ստեղծելու, փոքրիկ ուսումնասիրություններ կատարելու նպատակով:
- ✓ Մասնակցել հոգեկան գործընթացների, մասնավորապես՝ ուշադրության, երևակայության, հիշողության զարգացմանը նպաստող, դերային, ուսումնական, շարժական, ժամանցային խաղերի՝ մտքերն ու զգացումներն արտահայտելով ինչպես բառերի, այնպես էլ դիմախաղի, շարժումների, գույների, ձայների միջոցով:
- ✓ Կարդալ գրական և ոչ գրական արձակ և չափածո տեքստեր, խոսել բովանդակության մասին:
- ✓ Բացատրել ունկնդրած և ընթերցած տեքստի նորաձանոթ բառերն ու արտահայտությունները, կիրառել դրանք խոսքում:
- ✓ Վերարտադրել գեղարվեստական ստեղծագործությունը՝ նույնությամբ կամ ստեղծագործաբար՝ հետևելով դեպքերի զարգացմանը, հերոսների փոխհարաբերություններին:
- ✓ Ստեղծել երկխոսություններ խոսքային տարբեր իրավիճակների վերաբերյալ, արտահայտել հույզերը բառերով, բառակապակցություններով և նախադասություններով՝ պատասխանելով հարցերին:
- ✓ Ընթերցած և ունկնդրած տեքստից հարցերի օգնությամբ առանձնացնել հոմանիշ և հականիշ բառերը:
- ✓ Խմբավորել բառերը ըստ կազմության՝ որոշելով բաղադրիչները (արմատ, ածանց):
- ✓ Տեքստից հարցերի միջոցով առանձնացնել գործողություն, առարկա, առարկայի որակական և քանակական հատկանիշ ցույց տվող բառերը:
- ✓ Որոշել նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, ընդարձակել նախադասությունը՝ հարցերի

**Կայունություն և փոփոխություն.**

Բնության մեջ, մարդկության պատմության մեջ մնայուն անփոփոխ և փոխվող, զարգացող երևույթները:

**Անհատներ և հարաբերություններ.**

Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:

**Ժամանակ և տարածություն.**

Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմությունները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում:

**Անհատական և մշակութային արժեհամակարգ.**

Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը:

**Փոփոխություն և զարգացում.**

Բնության և հասարակության մեջ բնականորեն կամ ուղղորդված փոփոխությունները, որոնք ապահովում են զարգացում:

<p>օգնությամբ ավելացնելով հատկանիշ ցույց տվող բառեր:</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Խաղալ լեզվական խաղեր ստեղծել և լուծել գլուխկոտրուկներ, խաչբառներ:</li> <li>✓ Կատարել ստեղագործական բնույթի արտագրություններ, փոխադրել ընթերցած և ունկնդրած փոքրածավալ տեքստեր, մի քանի նախադասությամբ գրավոր արտահայտել կարծիք, վերաբերմունք:</li> <li>✓ Ստեղծել շնորհավորական բացիկներ ընտանեկան տարբեր տոների վերաբերյալ:</li> <li>✓ Ստեղծել դասարանական գրադարան, կազմակերպել գրքերի ընթերցում, ներկայացում և համատեղ քննարկում՝ կարծիքներ և տպավորություններ փոխանակելով ընթերցածի վերաբերյալ:</li> <li>✓ Ձևավորել ստեղծագործական անկյուն («դասարանական թատրոն», «արվեստանոց», «նկարահանման հարթակ», «ձայնագրման ստուդիա», «գովազդային գործակալություն», «ցուցասրահ» և այլն)՝ աշխատանքներ իրականացնելով ունկնդրած ստեղծագործության, ընթերցած գրքի բեմադրման, նկարազարդման, ձայնագրման, գովազդման ուղղությամբ:</li> </ul>	
--	--

**Միջառարկայական կապեր**

- **Մանկական և գիտահանրամատչելի գրականություն.** բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում, աշխատանք ոչ ծավալուն գիտահանրամատչելի տեքստերի շուրջ:
- **Կերպարվեստ.** տարբեր ոճերի և ժանրերի նկարների դիտում, դրանց շուրջ պատմությունների հյուսում, քննարկվող թեմաներով նկարների, տարբեր նյութերով աշխատանքների ստեղծում (խճանկար, ծեփում, ապլիկացիա, կոլաժ), ինքնաշեն գրքույկների նկարազարդում, պաստառների ձևավորում, ինքնաարտահայտում գույների միջոցով:
- **Տեխնոլոգիա.** խմբային աշխատանքի միջոցով տարբեր նյութերով (սերմեր, թելեր, գործվածք, սովարաթուղթ և այլն) բեմադրությունների դեկորացիաների ստեղծում, ինքնաարտահայտում պատկերների միջոցով:
- **Երաժշտություն.** քննարկվող թեմաների վերաբերյալ երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում, ինքնաարտահայտում հնչյունների և ձայների միջոցով:
- **Մաթեմատիկա.** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների

պատկերում, համեմատում և նկարագրում հատկանիշ ցույց տվող բառերով, ներկայացումների համար ձևավորում ստեղծելիս չափումների կատարում, առանձին մասերի գծագրում:

- **Ֆիզկուլտուրա.** օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի պահպանման միջոցով սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում, սեփական մարմնի կառուցվածքի ճանաչում, առանձին օրգանների և օրգան – համակարգերի աշխատանքի քննարկում:
- **Թատրոն.** թատրոնի տարբեր տեսակների (սովերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների ներկայացում բեմադրությունների միջոցով:
- **Պար.** հնչյունների, շարժումների, պատկերների համադրում պարի մեջ, ինքնաարտահայտում շարժումների միջոցով:
- **Ես և շրջակա աշխարհը.** բնության երևույթների, Երկիր մոլորակի առանձնահատկությունների, կենդանական և բուսական աշխարհի ուսումնասիրում, մարդկանց կյանքի/գործողությունների և մոլորակի փոխազդեցության վերլուծում, սեփական վարքի ու վերաբերմունքի փոփոխություն՝ հանուն անվտանգ կենսագործունեության: Դասարանում և տանը կանաչ անկյունների ստեղծում, բույսերի խնամք և դրանց աճի ուսումնասիրում՝ համապատասխան գրառումներ՝ նշանային պարզ համակարգի կիրառմամբ: Ընտանի կենդանիների խնամք (ցանկության և հնարավորության դեպքում), դրանց վարքի և առանձնահատկությունների ուսումնասիրում:

Կապը Հանրակրթության չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

S1, S3, S7, S8, S10, S12, S13, S14, S16, S17, S18, S21, S22, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S31, S32, S33, S34, S35

### 3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ, 256 ԺԱՄ

(առնվազն 32 շաբաթ, նվազագույնը 8 ժամ)

#### Հիմնական նպատակներ

- զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողությունները
- ամրակայել ստեղծագործական հմտությունները
- զարգացնել վերլուծական կարողությունները
- ձևավորել ինքնակազմակերպման և ինքնադրսևորման հմտություններ
- զարգացնել բանավոր և գրավոր կապակցված խոսքը
- հասկանալով և արտահայտիչ կարդալու կարողության զարգացում
- զարգացնել հետազոտական կարողությունները
- զարգացնել իմացական գործընթացները

- ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները

## Վերջնարդյունքներ

- ✓ Արտահայտի սեփական տեսակետը, քննարկի իր ցանկությունները, խոսի իր զգացումների մասին՝ մտքերն արտահայտելով պարզ և հասկանալի ձևով, պահպանի հայերենի ուղղախոսական կանոնները:
- ✓ Մասնակցի քննարկումների, բանավեճերի, լսի և հասկանա արտահայտված մտքերը, ներկայացնի իր մոտեցումները:
- ✓ Նախընտրած ձևով ներկայացնի մտքերն ու զգացումները լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանի տրված հարցերին:
- ✓ Նկարագրի առարկաներ և երևույթներ՝ օգտագործելով հատկանիշ ցույց տվող բառեր:
- ✓ Ունկնդրի գրական և ոչ գրական տեքստեր, պատասխանի հիմնական գաղափարի վերաբերյալ հարցերին, վերարտադրի դրանք:
- ✓ Արտահայտիչ արտասանի բանաստեղծություններ, պատմի պատմություններ, հեքիաթներ, առակներ:
- ✓ Լուռ և բարձրաձայն ընթերցի գրական տեքստեր՝ պահպանելով կարդալու համապատասխան արագությունը, ընկալի գեղարվեստական ստեղծագործության տրամաբանական և զգայական միասնությունը:
- ✓ Համեմատի ու հակադրի հերոսներին ու նրանց գործողությունները, բացատրի՝ ինչպես են դրանք ազդում տեքստի իրադարձությունների ընթացքի վրա:
- ✓ Լսի, կարդա և հասկանա ոչ գրական տեքստեր, ըստ նպատակի առանձնացնի անհրաժեշտ տեղեկությունները:
- ✓ Գտնի բացատրության կարիք ունեցող բառերի իմաստը բառարաններից կամ այլ աղբյուրներից, մեկնաբանի դրանց կիրառությունը համատեքստում:
- ✓ Ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը արտահայտի խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, համապատասխան վերաբերմունք դրսևորի ուրիշների հույզերի նկատմամբ:
- ✓ Ձևակերպի հետազոտական հարցեր, պլանավորի հարցերի բացահայտմանն ուղղված գործողությունների քայլաշարը, օգտվի համապատասխան ռեսուրսներից, պատրաստի հաղորդում, ներկայացնի անհատական կամ խմբային հետազոտության արդյունքները:
- ✓ Աշխատի բանավոր և գրավոր տեքստի վրա՝ ավելացնի, փոփոխի, զարգացնի, կամ ընդահակառակը՝ սեղմի, համառոտի:
- ✓ Նորովի վերարտադրի լսած, ընթերցած տեքստը, սկսի, շարունակի և ավարտի պատմությունը:
- ✓ Հորինի և շարադրի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք:
- ✓ Գրավոր խոսքում պահպանի ծրագրային նյութերում հանդիպած բառերի ուղղագրությունը:
- ✓ Հասկանա բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, բանավոր և գրավոր խոսքում բառերը կիրառի ուղիղ և փոխաբերական իմաստներով:



- ✓ Խոսքի մեջ առանձնացնի կազմությամբ տարբեր բառերը (պարզ, բարդ, ածանցավոր) և պահպանի դրանց ուղղագրությունը:
- ✓ Բանավոր և գրավոր խոսքում կիրառի դարձվածքներ, հոմանիշ և հականիշ բառեր:
- ✓ Խոսքում ճիշտ կիրառի խոսքի մասերը (գոյական, ածական, բայ, թվական), գրավոր խոսքում պահպանի օժանդակ բայերի ուղղագրությունը:
- ✓ Կիրառի տարբեր հնչերանգի նախադասություններ, գրավոր խոսքում պահպանի ճիշտ կետադրությունը:
- ✓ Հարգի սեփական արժանիքները, շարունակաբար զարգացնի իր մտավոր և ֆիզիկական հնարավորությունները, հարգալից վերաբերվի շրջապատի մարդկանց գաղափարների և նրանց մտավոր ու ֆիզիկական հնարավորությունների նկատմամբ:
- ✓ Հոգ տանի իր և շրջապատող մարդկանց միջև դրական փոխհարաբերությունների ձևավորման մասին:
- ✓ Լինի քաղաքավարի և անկեղծ, պատասխանատվություն կրի իր ուսումնառության, սեփական քայլերի և արարքների համար:
- ✓ Դրսևորի իր լեզուն շարունակաբար զարգացնելու կամք և խանդավառություն, պատասխանատու և հետևողական լինի մայրենի լեզվի գրագետ կիրառման հարցում:
- ✓ Տեսնի և գնահատի բարին, գեղեցիկը, մարդկայինը՝ վերաբերմունքն արտահայտելով նաև խոսքի միջոցով:
- ✓ Համագործակցի ընկերների, հասակակիցների հետ, հետևի սեփական խոսքի համապատասխանությանը գրական հայերենի պահանջներին:
- ✓ Ճանաչի և արժևորի ազգային հերոսներին:

### **Բովանդակություն**

- Գրական և ոչ գրական տեքստեր հայ նշանավոր մարդկանց, տոհմերի, նրանց կատարած գործերի, ստեղծած արժեքների, աշխարհի բազմազանության, տարբեր երկրների ու մշակույթների, մարդկության կյանքի վրա մեծ ազդեցություն ունեցող հին և նոր հայտնագործությունների, անհատների և նույն նպատակի համար մարդկանց կազմակերպված խմբերի ու նրանց գործունեության, Երկիր մոլորակի ու նրա սահմանափակ պաշարների, մոլորակի վրա մարդու դերի ու անվտանգ կենսագործունեության մասին:
- Տեքստ. բանաստեղծություն, հեքիաթ, առակ, մանրապատումս ստեղծագործություններ:
- Բառի կազմությունը (արմատ, ածանց), պարզ, բարդ, ածանցավոր բառեր:
- Հոմանիշ և հականիշ բառեր:
- Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ, դարձվածքներ:
- Խոսքի մասերի գործնական կիրառություն (գոյական, ածական, բայ, թվական):
- Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի, դրանց կետադրությունը:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ  
ընդհանրական  
հասկացություններ**

- ✓ Ուսումնասիրել հայ նշանավոր տոհմերի և մարդկանց ներդրումը հայ ժողովրդի և մեր հայրենիքի զարգացման գործում, պատմել տարբեր ստեղծագործությունների հերոսների արարքների և գործերի մասին, արտահայտել վերաբերմունք:
- ✓ Մտովի, գրքերի ու ֆիլմերի միջոցով «հայտնվել» տարբեր երկրներում, ուսումնասիրել դրանց առանձնահատկությունները, տարբերություններն ու նմանությունները:
- ✓ Խոսել աշխարհի երեխաների կյանքի, նպատակների ու ցանկությունների մասին, բացահայտել աշխարհի տարբեր ազգերի ավանդույթները, դրսևորել հարգանք դրանց նկատմամբ:
- ✓ Քննարկել հաղորդակցման նպատակներն և նշանակությունը, ներկայացնել հաղորդակցման հնարավոր ձևերը (խոսքային, ոչ խոսքային, թվային հաղորդակցում):
- ✓ Մեկնաբանել սովորելու դերն ու նշանակությունը մարդու կյանքում, խոսել սովորելու ձևերի, աղբյուրների մասին, արտահայտել կարծիք և վերաբերմունք:
- ✓ Կարդալ մարդկության կողմից արված նշանավոր հայտնագործությունների մասին, քննարկել դրանց ազդեցությունը մարդկության պատմության և առօրյա կյանքի վրա, խոսել բնության օրենքների բացահայտման և աշխարհի տարբեր երևույթների մասին:
- ✓ Վեր հանել մարդկությանը հուզող հիմնական խնդիրները և ուսումնասիրել այդ խնդիրների լուծման ուղղությամբ անհատների ու տարբեր կազմակերպությունների ծավալած գործունեությունը:
- ✓ Քննարկել Երկիր մոլորակի վրա մարդու դրական և բացասական ազդեցության ձևերը, խոսել ջրի հիմնախնդրի մասին:
- ✓ Քննարկել հաղորդակցման նպատակներն ու ձևերը՝ ելնելով տարբեր մարդկանց առանձնահատկություններից, նախասիրություններից, հետաքրքրություններից, մտավոր և ֆիզիկական հնարավորություններից, տարբեր նշանների դերի բացահայտում մտքերը հաղորդելիս, ուսումնասիրել տարբեր կազմակերպությունների (օր.՝ «Գրինփիս», «ՅՈՒՆԻՍԵՖ», «Կարմիր խաչ», «Բնության

**Օրինաչափություն.**

Որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ բնության և հասարակության մեջ:

**Պատճառ և հետևանք.**

Պատճառահետևանքային կապերը կյանքում, բնության մեջ, ուսում նասիրվող գրական և ոչ գրական տեքստերում:

**Կառուցվածք և գործառույթ.**

Ի՞նչ է, ինչի՞ համար է հարցերի միջոցով առարկաների, երևույթների ճանաչում և կիրառում ըստ նպատակի:

**Կայունություն և փոփոխություն.**

Բնության մեջ, մարդկության պատմության ընթացքում մնայուն և փոփոխվող, զարգացող երևույթները:

**Անհատներ և հարաբերություններ.**

Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:

**Ժամանակ և տարածություն.**

Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմությունները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջա նում և վայրում:

համաշխարհային հիմնադրամ», «Միջազգային օլիմպիական կոմիտե», «ՄԱԿ» և այլն) լոգոները և մեկնաբանել:

- ✓ Արտահայտել մտքերն ու զգացումները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ, արտահայտիչ արտասանել բանաստեղծություններ, իմանալ մանրապատում ստեղծագործություններ՝ հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ, պատմել տարբեր ժողովուրդների հեքիաթներ:
- ✓ Վերարտադրել լսած, ընթերցած տեքստը, սկսել, շարունակել և ավարտել պատմությունը, ստեղծել կապակցված բանավոր և գրավոր խոսք՝ կիրառելով պատկերավորման միջոցներ:
- ✓ Հյուսել պատմություններ թեմատիկ նկարների, ունկնդրած երաժշտության, դիտած կինոնկարի, ներկայացման, նկարի, առաջադրված թեմաների վերաբերյալ:
- ✓ Մասնակցել հոգեկան գործընթացների, մասնավորապես՝ ուշադրության, երևակայության, հիշողության զարգացմանը նպաստող աշխատանքների, դերային, ուսումնական, շարժական, ժամանցային խաղերի՝ մտքերն ու զգացումներն արտահայտելով ինչպես բառերի, այնպես էլ դիմախաղի, շարժումների, գույների, ձայների միջոցով:
- ✓ Կարդալ գրական և ոչ գրական արձակ և չափաժող տեքստեր, խոսել հիմնական գաղափարի մասին:
- ✓ Վերլուծել հենակետային բառերի և արտահայտությունների ընտրությունը և կիրառումը տվյալ համատեքստում:
- ✓ Բացատրել տեքստի նկարագրողման ազդեցությունը տեքստի ընկալման վրա:
- ✓ Բացատրել ունկնդրած և ընթերցած տեքստի նորաձանոթ բառերն ու արտահայտությունները՝ օգտվելով բառարաններից, կիրառել դրանք խոսքում:
- ✓ Վերարտադրել գեղարվեստական ստեղծագործությունը՝ նույնությամբ կամ ստեղծագործաբար՝ հետևելով դեպքերի զարգացմանը, հերոսների փոխհարաբերություններին:
- ✓ Խմբավորել բառերը ըստ կազմության՝ կատարելով գործնական աշխատանքներ:
- ✓ Կազմել երկխոսության հարցերը, վարել երկխոսություն տարբեր մարդկանց հետ և կատարել նշումներ,

**Անհատական  
և մշակութային  
արժեհամակարգ.**

Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը:

**Փոփոխություն և զարգացում.**

Բնության և հասարակության մեջ բնականորեն կամ ուղղորդված փոփոխությունները, որոնք ապահովում են զարգացում:

ամբողջացնել գրառումները:

- ✓ Տեքստից առանձնացնել ուղիղ և փոխաբերական իմաստով գործածված բառերը, բացատրել դրանք:
- ✓ Կատարել գործնական աշխատանքներ բառերը տարբեր խմբերում դասակարգելու (հոմանիշ և հականիշ, գործողություն, առարկա, հատկանիշ ցույց տվող, պարզ, բարդ, ածանցավոր և այլն) ուղղությամբ:
- ✓ Տեքստում առանձնացնել նախադասությունների տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի, ուշադրություն դարձնել դրանց կետադրմանը:
- ✓ Ստեղծել և լուծել լեզվական խաղեր, գլուխկոտրուկներ, խաչբառներ:
- ✓ Գրել ստեղծագործական բնույթի արտագրություններ, նույնությամբ կամ փոփոխելով գրի առնել ունկնդրած խոսքը:
- ✓ Բանավոր և գրավոր փոխադրել ունկնդրած խոսքը, կատարել ստեղծագործական աշխատանք:
- ✓ Ստեղծել բացիկ, հրավիրատոմս:
- ✓ Ստեղծել դասարանական գրադարանի կամ կամ ընթերցած այլ գրքի գովազդի տեքստը, ներկայացնել դասընկերների/ունկնդիրների ուշադրությանը:
- ✓ Մասնակցել խմբային նախագծերի՝ կատարելով ուսումնասիրություններ քննարկվող հարցերի բացահայտման ուղղությամբ:
- ✓ Կազմակերպել գրքերի ընթերցում, ներկայացում և համատեղ քննարկում՝ կարծիքներ և տպավորություններ փոխանակելով ընթերցածի վերաբերյալ:
- ✓ Ձևավորել ստեղծագործական անկյուն («դասարանական թատրոն», «արվեստանոց», «նկարահանման հարթակ», «ձայնագրման ստուդիա», «գովազդային գործակալություն», «ցուցասրահ» և այլն)՝ աշխատանքներ իրականացնելով ունկնդրած ստեղծագործության, ընթերցած գրքի բեմադրման, նկարազարդման, ձայնագրման, գովազդման ուղղությամբ:

### Միջառարկայական կապեր

- **Մանկական և գիտահանրամատչելի գրականություն.** բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում, աշխատանք գիտահանրամատչելի

տեքստերի շուրջ:

- **Կերպարվեստ.** տարբեր ոճերի և ժանրերի նկարների դիտում, դրանց շուրջ պատմությունների հյուսում, քննարկվող թեմաներով նկարների, տարբեր նյութերով աշխատանքների ստեղծում (խճանկար, ծեփում, ապլիկացիա, կոլաժ), ինքնաշեն գրքույկների նկարազարդում, պաստառների ձևավորում, ինքնաարտահայտում գույների միջոցով: Տարբեր ազգերի մշակութային արժեքները ներկայացնող նկարների, տեսաֆիլմերի, նյութերի ուսումնասիրում, վերլուծում և համեմատում, դրանց առանձնահատկությունների քննարկում ստեղծման ժամանակահատվածի և տեղի հետ կապված
- **Տեխնոլոգիա.** խմբային աշխատանքի միջոցով տարբեր նյութերով (սերմեր, թելեր, գործվածք, սովարաթուղթ և այլն) բեմադրությունների ձևավորման ստեղծում, ինքնաարտահայտում պատկերների միջոցով:
- **Երաժշտություն.** քննարկվող թեմաների վերաբերյալ երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում, ինքնաարտահայտում հնչյունների և ձայների միջոցով:
- **Մաթեմատիկա.** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում հատկանիշ ցույց տվող բառերով, բեմադրությունների ձևավորում ստեղծելիս չափումների կատարում, առանձին մասերի գծագրում:
- **Ֆիզկուլտուրա.** օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի պահպանման միջոցով սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում, սեփական մարմնի կառուցվածքի ճանաչում, առանձին օրգանների և օրգան – համակարգերի աշխատանքի քննարկում:
- **Թատրոն.** թատրոնի տարբեր տեսակների (սովերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների, պատմությունների բեմադրում:
- **Պար.** հնչյունների, շարժումների, պատկերների համադրում պարի մեջ, ինքնաարտահայտում շարժումների միջոցով:
- **Ես և շրջակա աշխարհը.** բնության երևույթների, օրենքների, Երկիր մոլորակի առանձնահատկությունների ուսումնասիրում, Երկիր մոլորակի վրա մարդու ազդեցության վերլուծում, սեփական վարքը վերահսկելուն ուղղված աշխատանքների իրականացում և վերաբերմունքի փոփոխություն: Դասարանում և տանը կանաչ անկյունների ստեղծում, բույսերի խնամք և դրանց աճի ուսումնասիրում՝ համապատասխան գրառումներ՝ նշանային համակարգի կիրառմամբ: Ընտանի կենդանիների խնամք (ցանկության և հնարավորության դեպքում), դրանց վարքի և առանձնահատկությունների ուսումնասիրում: Բնագիտական փորձերի իրականացում, դրանց ընթացքի և արդյունքների բանավոր և գրավոր նկարագրություն:

S1, S3, S7, S8, S9, S10, S11, S12, S13, S14, S15, S16, S17, S18, S21, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S31, S32, S33, S34, S35

#### 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ, 256 ԺԱՄ

(առնվազն 32 շաբաթ, նվազագույնը 8 ժամ)

#### Հիմնական նպատակներ

- զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողությունները
- զարգացնել ստեղծագործական հմտությունները
- խթանել քննական մտածողության զարգացումը
- ձևավորել ինքնակազմակերպման և ինքնադրսևորման հմտություններ
- զարգացնել բանավոր և գրավոր կապակցված խոսքը
- զարգացնել հասկանալով և արտահայտիչ կարդալու կարողությունը
- զարգացնել հետազոտական կարողությունները
- զարգացնել իմացական գործընթացները
- ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները

#### Վերջնարդյունքներ

- ✓ Ունենա Հայաստանի մասին որոշակի պատմական, աշխարհագրական գիտելիքներ, ինչպես նաև պատկերացում ունենա նշանավոր հայերի, հայկական մշակույթի, ազգային արժեքների մասին, գնահատի և դրսևորի դրական վերաբերմունք:
- ✓ Արտահայտի սեփական տեսակետը, բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ:
- ✓ Քննարկի իր ցանկությունները, ճանաչի և խոսի իր զգացումների մասին՝ մտքերն արտահայտելով պարզ և հասկանալի ձևով, պահպանի հայերենի ուղղախոսական կանոնները:
- ✓ Նկարագրի տարաբնույթ երևույթներ, ցույց տա դրանց փոխկապակցվածությունը:
- ✓ Մասնակցի քննարկումների, բանավեճերի, լսի և հասկանա արտահայտած մտքերը, ներկայացնի իր մոտեցումները, հանդես գա փաստարկված խոսքով:
- ✓ Տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրի կամ ներկայացնի մտքերն ու զգացումները լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանի տրված հարցերին:
- ✓ Արտահայտիչ արտասանի բանաստեղծություններ, պատմի պատմություններ, հեքիաթներ, առակներ:
- ✓ Հասկանալով և արտահայտիչ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, արտահայտի մտքեր ենթատեքստի, հերոսների ու նրանց խոսքերի, մտքերի, արարքների վերաբերյալ՝ կիրառելով տեքստի բառերն ու արտահայտությունները, մեկնաբանի դրանց ընտրությունը և գործածությունը համատեքստում:
- ✓ Լսի, կարդա և հասկանա տարբեր բարդության և բովանդակության ոչ գրական տեքստեր, ըստ նպատակի դուրս բերի անհրաժեշտ տեղեկությունները, մշակի տեղե-

կությունը՝ ըստ նպատակի կիրառելով բառային նկարագրություններ և մոդելներ (գծագրեր, աղյուսակներ):

- ✓ Տարբերի գրական և ոչ գրական տեքստերը, գրական տեքստերի տեսակները (բանաստեղծություն, հեքիաթ, առակ, պատմվածք) և մանրապատում ստեղծագործությունները, համեմատի տարբեր ստեղծագործություններ և նույն թեմայի արծարծումը տարբեր գրական տեքստերում:
- ✓ Գտնի բացատրության կարիք ունեցող բառերի իմաստը բառարաններից կամ այլ աղբյուրներից, մեկնաբանի դրանց կիրառությունը համատեքստում:
- ✓ Հորինի պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (նկարապատում, զմայիկ, ծաղրանկար և այլն), մասնակցի խմբային խոսքի ստեղծմանը, ըստ տեքստի ստեղծի պաստառ, գրքույկ, սահիկաշար և այլն:
- ✓ Գրավոր խոսքում պահպանի ծրագրային նյութերում առկա և իր խոսքում կիրառվող բառերի ուղղագրությունը:
- ✓ Ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը արտահայտի խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, համապատասխան վերաբերմունք դրսևորի ուրիշների հույզերի նկատմամբ:
- ✓ Խոսքի մեջ առանձնացնի կազմությամբ տարբեր բառերը (պարզ, բարդ, ածանցավոր), կազմի նոր բառեր՝ գրավոր խոսքում պահպանելով դրանց ուղղագրությունը:
- ✓ Բանավոր և գրավոր խոսքում կիրառի դարձվածքներ, հոմանիշ և հականիշ, բազմիմաստ բառեր:
- ✓ Խոսքում կիրառի տարբեր կազմության նախադասություններ, հարցերի միջոցով ընդարձակի լրացումներով:
- ✓ Խոսքում ճիշտ կիրառի խոսքի մասերը (գոյական, ածական, բայ, թվական, շաղկապ, ձայնարկություն), պահպանի շաղկապին և ձայնարկությանն առնչվող կետադրական պարզ կանոնները:
- ✓ Խոսքում կիրառի տարբեր հնչերանգի նախադասություններ, գրավոր խոսքում պահպանի դրանց ճիշտ կետադրությունը:
- ✓ Խմբի կազմում կամ ինքնուրույն իրականացնի ուսումնասիրություններ, ներկայացնի ուսումնասիրության արդյունքները՝ օգտագործելով տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և ընկալելի դարձնելու համար:
- ✓ Օգտվի տպագիր և էլեկտրոնային ռեսուրսներից, համացանցից՝ տեղեկություններ ստանալու, նյութեր ստեղծելու համար:
- ✓ Շարադրի հետազոտության արդյունքները՝ կատարելով դիտարկումներ, արտահայտելով կարծիք, ներկայացնի հետազոտության արդյունքները՝ կիրառելով ներկայացման տարբեր միջոցներ:
- ✓ Խնայող և պատասխանատու վերաբերմունք դրսևորի իր ֆիզիկական և հոգեկան ներուժի, ընտանիքի, դպրոցի, բնակավայրի, հայրենիքի նկատմամբ (ֆիզիկական պաշարներ, հոգևոր և մշակութային արժեքներ):
- ✓ Կարևորի փոխօգնությունը, համագործակցությունը և խաղաղ կենսագործունեությունը

ընտանիքում, դպրոցում, համայնքում՝ ստանձնելով որոշակի պատասխանատվություն, դրսևորելով համբերատար և բարեհամբույր վերաբերմունք:

- ✓ Կայացնի որոշումներ, լինի հետևողական և նպատակասլաց, ինքնուրույն կամ օգնությամբ հաղթահարի դժվարությունները, գնահատի իր հնարավորությունները՝ խոսելով իր «ուժեղ» և «թույլ» կողմերի մասին:
- ✓ Ստեղծագործաբար կիրառի ձեռք բերած գիտելիքները, առաջարկի խնդիրների, հարցերի, իրավիճակների լուծման յուրօրինակ մոտեցումներ, դրսևորի հետաքրքրասիրություն նորը բացահայտելու և սովորածը նպատակային կիրառելու նկատմամբ:
- ✓ Արտահայտի դրական վերաբերմունք մայրենի լեզվի՝ որպես մտքերի, զգացումների արտահայտման, ազգային արժեքների պահպանման և փոխանցման միջոցի նկատմամբ, կարևորի լեզվի դերը միտքը հասկանալի տեղ հասցնելու գործում:
- ✓ Գիտակցի պատասխանատվություն իր, իր ընտանիքի, շրջապատող մարդկանց, հայրենիքի հանդեպ:
- ✓ Գիտակցի իր ազգային պատկանելությունը, ճանաչի և պահպանի պատմամշակութային արժեքները
- ✓ Ցուցաբերի հետաքրքրություն և հարգանք այլ ազգերի, նրանց ավանդույթների, արժեքների նկատմամբ:

### **Բովանդակություն**

- Գրական և ոչ գրական տեքստեր Հայաստանի, նրա պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների, հայ նշանավոր մարդկանց, նրանց գործերի, ստեղծած արժեքների, հայ նշանավոր տոհմերի, հերոսների, նրանց սխրագործությունների, աշխարհի բազմազանության, ճամփորդությունների ու գիտական հայտնագործությունների, տարբեր երկրների, մշակույթների, Երկիր մոլորակի ու նրա սահմանափակ ռեսուրսների, մոլորակի վրա մարդու դերի ու անվտանգ կենսագործունեության, էներգիայի աղբյուրների ու տեսակների, տիեզերքի, տնտեսության, արդյունավետ ծախսերի ու խնայողությունների մասին:
- Գրական և ոչ գրական տեքստ, գրական տեքստի տեսակները (բանաստեղծություն, հեքիաթ, առակ, պատմվածք), մանրապատում ստեղծագործություններ:
- Հոմանիշ և հականիշ, բազմիմաստ բառեր:
- Բառի կազմությունը (արմատ, ածանց), պարզ, բարդ, ածանցավոր բառեր, դրանց ուղղագրությունը:
- Բառի ուղիղ և փոխաբերական իմաստ, դարձվածքներ:
- Խոսքի մասերի գործնական կիրառություն (գոյական, ածական, բայ, թվական, շաղկապ, ձայնարկություն):
- Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի, դրանց կետադրությունը:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ**



	<p align="center"><b>ընդհանրական հասկացություններ</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>✓ Ուսումնասիրել Հայաստանի, հայ նշանավոր մարդկանց, տոհմերի, հայ ազգային հերոսների մասին գրական և ոչ գրական տեքստեր, արտահայտել վերաբերմունք:</li> <li>✓ Ուսումնասիրել տարբեր ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները, տարբերություններն ու նմանությունները:</li> <li>✓ Խոսել մարդու իրավունքների ու պարտականությունների մասին:</li> <li>✓ Քննարկել գրքի, ուսումնառության դերն ու նշանակությունը մարդու կյանքում, դրսևորել սովորելու կարողություն և ողջ կյանքում սովորելու պատրաստակամություն:</li> <li>✓ Վերլուծել մեդիայի տեսակները, դերը մարդու կյանքում, դրանցից գրագետ օգտվելու մոտեցումները:</li> <li>✓ Մեկնաբանել ֆինանսական գրագետ վարքի առավելությունները, ֆինանսական գրագիտության նշանակությունը մարդու անվտանգ կենսագործունեության առումով:</li> <li>✓ Քննարկել Երկիր մոլորակի վրա մարդու դրական և բացասական ազդեցության ձևերը, խոսել բնական պաշարների սահմանափակ լինելու և դրա հետ կապված խնդիրների մասին:</li> <li>✓ Քննարկել հաղորդակցման նպատակներն ու ձևերը՝ ելնելով տարբեր մարդկանց առանձնահատկություններից, նախասիրություններից, հետաքրքրություններից, մտավոր և ֆիզիկական հնարավորություններից:</li> <li>✓ Քննարկել տեղեկատվության ստացման տպագիր և ոչ տպագիր աղբյուրները, մարդկանց կյանքի և անվտանգության համար ինֆորմացիայի ունեցած դերն ու նշանակությունը:</li> <li>✓ Արտահայտել մտքերն ու զգացումները տեսածի, լսածի, ընթերցածի, դիտածի մասին՝ կիրառելով ինքնաարտահայտման խոսքային և ոչ խոսքային տարբեր ձևեր ու եղանակներ:</li> <li>✓ Նկարագրել տարաբնույթ երևույթներ, ցույց տալ դրանց փոխկապակցվածությունը:</li> </ul>	<p><b>Օրինաչափություն.</b> Որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ բնության և հասարակության մեջ:</p> <p><b>Պատճառ և հետևանք.</b> Պատճառահետևանքային կապերը կյանքում, բնության մեջ, ուսումնասիրվող գրական և ոչ գրական տեքստերում:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ.</b> Ի՞նչ է, ինչի՞ համար է հարցերի միջոցով առարկաների, երևույթների ճանաչում և կիրառում ըստ նպատակի:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն.</b> Բնության մեջ, մարդկության պատմության մեջ մնայուն անփոփոխ և փոխվող, զարգացող երևույթները:</p> <p><b>Անհատներ և հարաբերություններ.</b> Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:</p> <p><b>Ժամանակ և տարածություն.</b> Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատ-</p>

- ✓ Նորովի վերարտադրել՝ սկսել, շարունակել և ավարտել պատմությունը:
- ✓ Ստեղծել կապակցված բանավոր և գրավոր խոսք՝ կիրառելով պատկերավորման միջոցներ:
- ✓ Հյուսել պատմություններ թեմատիկ նկարների, ունկնդրած երաժշտության, դիտած ֆիլմի, ներկայացման, նկարի, առաջադրված թեմաների վերաբերյալ:
- ✓ Մասնակցել հոգեկան գործընթացների, մասնավորապես՝ ուշադրության, երևակայության, հիշողության զարգացմանը նպաստող աշխատանքների, դերային, ուսումնական, շարժական, ժամանցային խաղերի՝ մտքերն ու զգացումներն արտահայտելով ինչպես բառերի, այնպես էլ դիմախաղի, շարժումների, գույների, ձայների միջոցով:
- ✓ Ընթերցել արձակ և չափածո գրական տեքստեր՝ ուշադրություն դարձնելով հասկանալով և արտահայտիչ կարդալու որակների ձևավորմանը:
- ✓ Արտահայտել մտքեր ընթերցածի ենթատեքստի, հերոսների ու նրանց խոսքերի, մտքերի, արարքների վերաբերյալ՝ կիրառելով տեքստի բառերն ու արտահայտությունները:
- ✓ Համեմատել տարբեր ստեղծագործություններ, մասնավորապես՝ նույն թեմայով տարբեր գրական տեքստեր:
- ✓ Մեկնաբանել հենակետային բառերի և արտահայտությունների ընտրությունը և կիրառումը տվյալ համատեքստում:
- ✓ Բացատրել տեքստի նկարագրողման ազդեցությունը տեքստի ընկալման վրա, առաջարկել տեքստի նկարագրողման նոր տարբերակներ:
- ✓ Ըստ պահանջի կամ իր ընտրությամբ վերարտադրել տեքստի առանձին հատվածներ՝ հիմնավորելով հատվածի ընտրությունը:
- ✓ Բացատրել ունկնդրած և ընթերցած տեքստի նորածանոթ բառերն ու արտահայտությունները՝ օգտվելով բառարաններից, կիրառել դրանք խոսքում:
- ✓ Աշխատել ծրագրային նյութերում տեղ գտած ուղղագրական արժեք ունեցող բառերի շուրջ:
- ✓ Վերարտադրել գեղարվեստական ստեղծագործությունը՝

մությունները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում:

**Անհատական և մշակութային արժեհամակարգ.**  
 Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը:

**Փոփոխություն և զարգացում.**  
 Բնության և հասարակության մեջ բնականորեն կամ ուղղորդված փոփոխությունները, որոնք ապահովում են զարգացում:

նույնությամբ կամ ստեղծագործաբար՝ հետևելով դեպքերի զարգացմանը, հերոսների փոխհարաբերություններին:

- ✓ Տեքստից առանձնացնել ուղիղ և փոխաբերական իմաստով գործածված բառերը, բացատրել դրանք, խոսքում կիրառել դարձվածքներ:
- ✓ Կատարել գործնական աշխատանքներ բառերը տարբեր խմբերում դասակարգելու (հոմանիշ և հականիշ, գործողություն, առարկա, հատկանիշ ցույց տվող, պարզ, բարդ, ածանցավոր և այլն) ուղղությամբ:
- ✓ Կատարել գործնական աշխատանքներ խոսքի մասերի կիրառման ուղղությամբ՝ նաև աղյուսակների, լեզվական խաղերի կիրառմամբ:
- ✓ Խոսքում կիրառել տարբեր հնչերանգի նախադասություններ՝ ուշադրություն դարձնելով դրանց ճիշտ արտասանությանը, գրավոր խոսքում՝ կետադրությանը:
- ✓ Տեքստում առանձնացնել և խոսքում կիրառել տարբեր կառուցվածք ունեցող բառակապակցություններ:
- ✓ Ստեղծել և լուծել լեզվական խաղեր, գլուխկոտրուկներ, խաչբառներ:
- ✓ Արտագրել տեքստեր՝ կատարելով լեզվական և ստեղծագործական առաջադրանքներ, հորինել և գրել փոքրիկ պատմություններ, բանաստեղծություններ, հանելուկներ, բանավոր և գրավոր փոխադրել ընթերցած կամ ունկնդրած տեքստը:
- ✓ Ստեղծել գովազդային հոլովակի պարզ տեքստ, հայտարարություն, հրավիրատոմս, բացիկ:
- ✓ Ստեղծել դասարանական գրադարանի կամ կամ ընթերցած այլ գրքի գովազդի տեքստը, ներկայացնի դասընկերների/ունկնդիրների ուշադրությանը:
- ✓ Կազմակերպել գրքերի ընթերցում, ներկայացում և համատեղ քննարկում՝ կարծիքներ և տպավորություններ փոխանակելով ընթերցածի վերաբերյալ:
- ✓ Համակարգել ձեռք բերած տեղեկությունները՝ ըստ նպատակահարմարության ստեղծելով գծակարգեր, աղյուսակներ:
- ✓ Մասնակցել խմբային նախագծերի՝ կատարելով ուսումնասիրութ յուններ քննարկվող հարցերի

բացահայտման ուղղությամբ:

- ✓ Կազմել երկխոսության հարցերը, վարել երկխոսություն տարբեր մարդկանց հետ, կատարել նշումներ և ամբողջացնել դրանք մի քանի նախադասություններով:
- ✓ Հետազոտության արդյունքները ներկայացնել գրավոր շարադրանքի (ակնարկ, ռեֆերատ և այլն), գրքույկի, պաստառի կամ ստեղծագործական աշխատանքի ձևով (երգ, բանաստեղծություն, ներկայացում և այլն):
- ✓ Ձևավորել ստեղծագործական անկյուն («դասարանական թատրոն», «արվեստանոց», «նկարահանման հարթակ», «ձայնագրման ստուդիա», «գովազդային գործակալություն», «ցուցասրահ» և այլն)՝ աշխատանքներ իրականացնելով ունկնդրած ստեղծագործության, ընթերցած գրքի բեմադրման, նկարազարդման, ձայնագրման, գովազդման ուղղությամբ:

### Միջառարկայական կապեր

- **Մանկական և գիտահանրամատչելի գրականություն.** բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում, աշխատանք գիտահանրամատչելի տեքստերի շուրջ:
- **Պատմություն, ազգագրություն.** Հայաստանի և տարբեր երկրների պատմության մասին գրական և ոչ գրական տեքստերի, հոդվածների, տարբեր ազգերի մշակութային արժեքները ներկայացնող նկարների, կինոնկարների, տեսաֆիլմերի, նյութերի ուսումնասիրում, վերլուծում և համեմատում, դրանց առանձնահատկությունների ներկայացում՝ ստեղծման ժամանակահատվածի և տեղի հետ կապված:
- **Կերպարվեստ.** տարբեր ոճերի և ժանրերի նկարների դիտում, դրանց շուրջ պատմությունների հյուսում, քննարկվող թեմաներով նկարների, տարբեր նյութերով աշխատանքների ստեղծում (խճանկար, ծեփում, ապլիկացիա, կոլաժ), ինքնաշեն գրքույկների նկարազարդում, պաստառների ձևավորում, ինքնաարտահայտում գույների միջոցով:
- **Տեխնոլոգիա.** խմբային աշխատանքի միջոցով տարբեր նյութերով (սերմեր, թելեր, գործվածք, սովարաթուղթ և այլն) բեմադրությունների ձևավորման ստեղծում, ինքնաարտահայտում պատկերների միջոցով:
- **Երաժշտություն.** քննարկվող թեմաների վերաբերյալ երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում, ինքնաարտահայտում հնչյունների և ձայների միջոցով:
- **Մաթեմատիկա.** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների

պատկերում, համեմատում և նկարագրում հատկանիշ ցույց տվող բառերով, ներկայացման ձևավորում ստեղծելիս չափումների կատարում, առանձին մասերի գծագրում:

- **Ֆիզկուլտուրա.** օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի պահպանման միջոցով սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում, սեփական մարմնի կառուցվածքի և աշխատանքի ճանաչում: Սեփական մարմնի խնամքի, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնների մշակում և պահպանում, առողջ և հավասարակշռված սնվելու սովորությունների ձևավորում:
- **Թճափրոն.** թատրոնի տարբեր տեսակների (սովերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների, պատմությունների ներկայացում բեմադրությունների միջոցով:
- **Պար.** հնչյունների, շարժումների, պատկերների համադրում պարի մեջ, ինքնաարտահայտում շարժումների միջոցով:
- **Ես և շրջակա աշխարհը.** բնության երևույթների, օրենքների, Երկիր մոլորակի առանձնահատկությունների ուսումնասիրում, Երկիր մոլորակի վրա մարդու ազդեցության վերլուծում, սեփական վարքը վերահսկելուն ուղղված աշխատանքների իրականացում և վերաբերմունքի փոփոխություն: Բնական ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու ձևերի տարբերակում և կիրառում: Դասարանում և տանը կանաչ անկյունների ստեղծում, բույսերի խնամք և դրանց աճի ուսումնասիրում՝ համապատասխան գրառումներ՝ նշանային համակարգի կիրառմամբ: Ընտանի կենդանիների խնամք (ցանկության և հնարավորության դեպքում), դրանց վարքի և առանձնահատկությունների ուսումնասիրում: Բնագիտական փորձերի իրականացում, դրանց ընթացքի և արդյունքների բանավոր և գրավոր նկարագրություն:

Կապը Հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

S1, S3, S7, S8, S9, S10, S11, S12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**5-6-րդ դասարաններ**

**ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ**

**Առաջարկվող ժամաքանակ**

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ – տարեկան 236 դասաժամ, շաբաթական նվազագույնը՝ 7

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ –տարեկան 206 դասաժամ,շաբաթական նվազագույնը՝ 6

**5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Շաբաթական 7 դասաժամ, տարեկան 236 դասաժամ

**ԹԵՄԱ 1**

**ՀԵՔԻԱԹ**

**Հնչյունաբանություն.** ուղղախոսություն, ուղղագրություն, հնչյունափոխություն  
**Բառագիտություն.** բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

1. Ընթերել վարժ, արտահայտիչ և հասկանալով. ըմբռնել հեքիաթի հիմնական գաղափարը:
2. Ուսումնասիրել հեքիաթի տեքստը. ա) բացահայտել հայկական ժողովրդական հեքիաթին բնորոշ առանձնահատկությունները. բ) հեքիաթի տեքստը ուսումնասիրել ըստ լեզվական-ոճական առանձնահատկությունների:
3. Բնութագրել հեքիաթի հերոսներին:
4. Բացատրել հեքիաթի խորհրդանիշները. ցույց տալ իրականի և երևակայականի սահմանները. բարու և չարի պայքարը:
5. Ուսումնասիրել հեքիաթում հանդիպող ազգային կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների, վարքուբարքի նկարագրությունները:
6. Համեմատել տարբեր ժողովուրդների հեքիաթները. գտնել և բացատրել տարբերությունները, և նմանությունները. համեմատել հեքիաթը և դրա հիման վրա նկարահանված կինոնկարը կամ թատերական ներկայացումը:
7. Հարստացնել բառապաշարը ըստ հեքիաթից սովորած նոր բառերի:
8. Կազմել գովազդի, հաղորդագրության տեքստ ըստ հեքիաթի:
9. Արժևորել հեքիաթը որպես անձի նկարագրի դրական կողմերի զարգացման միջոց:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

1. Կազմի հեքիաթում պատմվող դեպքերի պլանը.
2. առանձնացնի հեքիաթի գլխավոր միտքը, ցույց տալ իրականի և երևակայականի սահմանները.
3. վերաշարադրի հեքիաթի բովանդակությունը.
4. փոփոխի հեքիաթի դեպքերի ընթացքը, հավելի նոր հերոսներ.
5. բնութագրի հեքիաթի հերոսներին ըստ նրանց արարքների.
6. հիմնավորի հերոսների արարքները՝ հեքիաթից ընտրված փաստերի հիման վրա.
7. համեմատի հեքիաթը և դրա հիման վրա ստեղծված գեղկինոնկարը, մուլտֆիլմը, նշի նմանությունները և տարբերությունները.
8. համեմատի տարբեր հեքիաթների տեքստեր, հերոսներին, նշի նրանց տարբերությունները, նմանությունները.

9. հորինի գովազդի (հաղորդագրության) տեքստ սիրած հեքիաթի համար.
10. մասնակցի հեքիաթի բեմադրական աշխատանքներին.
11. գրի հրավիրատոմս, հայտարարություն.
12. գնահատի հեքիաթի գաղափարը, բացառի՝ որ հերոսն է իր համար ծառայել քաջության (պատասխանատվության, բարության, հոգատարության և այլն) օրինակ:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Հեքիաթների տեսակները:
- Հայկական ժողովրդական հեքիաթներ:
- Հեղինակային հեքիաթներ:
- Հեքիաթի ժանրին բնորոշ առանձնահատկությունները:
- Հայկական ժողովրդական հեքիաթին բնորոշ լեզուն և ոճական առանձնահատկությունները:
- Հեքիաթի կառուցվածքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:
- Հեքիաթին բնորոշ խորհրդանիշները:
- Ազգային կենցաղը, մարդկային հարաբերությունները, վարքուբարքը հեքիաթում:
- Տարբեր ժողովուրդների հեքիաթներ:
- Գրական տեքստի հիման վրա ստեղծված կինոնկար, մուլտֆիլմ:
- Ուսումնաճանաչողական տեքստեր:
- Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. Լսել և հետևել ուսուցչի և ընկերների կարդացածին և պատմածին: Հարցեր ձևակերպել լսածի և կարդացածի շուրջ:
2. Կարդալ առոգանությամբ՝ պահպանելով հայերենին բնորոշ արտասանությունը. ուղղախոսությունը: Կարդալ ընտրովի հատվածներ, բացատրել ընտրությունը:
3. Ինքնուրույնաբար բացատրել անձանոթ բառերը բառարանի օգնությամբ: Բառարանի օգնությամբ գտնել տեքստում հանդիպած բառերի հոմանիշները, հականիշները: Բացատրել տրված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. կազմել նոր բառեր տրված արմատներով, ցույց տալ արտասանության և գրության տարբերությունը:
4. Կազմել տեքստի պլանը պարզ և հարցական նախադասություններով, բառակապակցություններով:
5. Գտնել տեքստի բանալի բառերը, նախադասությունները, բացատրել ընտրությունը:
6. Ցույց տալ հայկական ժողովրդական հեքիաթին բնորոշ բառերի, արտահայտությունների կիրառությունը:
7. Բանավոր և գրավոր վերաշարադրել հեքիաթը տարբեր հերոսների կենդանիների, իրերի անունից:
8. Գտնել հեքիաթի բովանդակությանը համապատասխան մեղեդի, նկարագարդումներ անել, ծեփել:
9. Կարծիք հայտնել հեքիաթի մասին:
10. Համեմատել հեքիաթի գրական տեքստը գեղկինոնկարի,

**Անհատներ և հարաբերություններ**  
 Ես-ը և մենք-ը. անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, փոխհարաբերությունները. մշակութային ընդհանրություններ և տարբերություններ. Բարություն, մեծահոգություն, հարգանք, հանդուրժողականություն:

**Ժամանակ և տարածություն**  
 Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմությունները, ձեռքբերումները, անհատի դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում:

<p>ներկայացման կամ մուլտֆիլմի հետ. նշել նմանությունները և տարբերությունները:</p> <p>11. Հորինել հեքիաթ՝ պահպանելով ժանրին բնորոշ առանձնահատկությունները:</p> <p>12. Մասնակցել հեքիաթի բեմադրության աշխատանքներին:</p> <p>13. Հեքիաթի համար գրել գովազդի տեքստ, պատրաստել հաղորդագրություն՝ սոցցանցերով տարածելու համար:</p> <p>14. Համեմատել հեքիաթի բովանդակությունը համակարգչային սիրած խաղի բովանդակության հետ. կարծիք հայտնել դիպաշարերի մասին:</p> <p>15. Կարդալ, հասկանալ և հաղորդել ուսումնաճանաչողական տեքստերի բովանդակությունը:</p> <p>16. Կատարել տարաբնույթ գործնական առաջադրանքներ ուղղագրության, հնչյունափոխության, բառակազմության շուրջ:</p>	
---	--

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Ազգային մշակույթ	հեքիաթում հանդիպող խորհրդանիշների, ազգային կենցաղի, իրերի, ազգային տոների, մարդկային հարաբերությունների ուսումնասիրություն.
Արվեստ	հեքիաթների թեմաներով նկարահանված գեղկինոնկարներ, թատերական ներկայացումներ, բալետ, երաժշտություն, գեղանկարչություն, հեքիաթների նկարագարումներ.
Օտար լեզուներ	օտար լեզուներից փոքրիկ հեքիաթների թարգմանություն, տեքստերի, բառային կազմի համեմատություն. տարբեր ժողովուրդների հեքիաթներին բնորոշ բառապաշարի, սկզբի, ավարտի համեմատություն և բացատրություն .
Աշխարհագրություն	պատմվող դեպքերի հավանական տարածքը. ապացուցել հեքիաթներից բերված օրինակներով.
Պատմություն	պատմվող դեպքերի հավանական ժամանակաշրջանը. ապացուցել հեքիաթներից օրինակներով.
Բնագիտություն	տեղեկություններ հեքիաթներում հանդիպող կենդանիների, բույսերի մասին.

Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ  
 Հ1, Հ2, Հ16, Հ33, Հ34, Հ35

**ԹԵՄԱ 2**

**ԱՌԱԿ**

**Հնչյունաբանություն.** ուղղափոխություն, ուղղագրություն, հնչյունափոխություն  
**Բառագիտություն.** բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

1. Ուսումնասիրել առակի տեքստը ըստ լեզվաոճական առանձնահատկությունների:
2. Ըմբռնել առակի ժանրին բնորոշ առանձնահատկությունները:
3. Վերլուծել առակը, նշել այլաբանության դերը որոշակի գաղափար հաղորդելու գործում:
4. Բացահայտել առակի խրատական-դաստիարակիչ դերը:
5. Թագմանել առակներ օտար լեզուներից. համեմատել մայրենի և օտար լեզվով առակների



- տեքստերը:
- Ձևակերպել կարծիք առակի մասին:
  - Հորինել առակ՝ պահպանելով ժանրային առանձնահատկությունները:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

- Վերարտադրի առակի բովանդակությունը. դեպքը պատմի այլ դիտանկյունից.
- ընդլայնի առակի տեքստը, հավելի երկխոսություններ.
- բացատրի առակի այլաբանությունը.
- առանձնացնի գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը.
- փոփոխի առակի բովանդակությունը, հավելի հերոսներ, հորինի նոր սկիզբ կամ ավարտ.
- համեմատի տարբեր առակներ, մատնանշի նմանությունները և տարբերությունները.
- բացատրի առակի նշանակությունը հաղորդակցման մեջ.
- մասնակցի առակի թեմայով դերային խաղի.
- թարգմանի առակներ օտար լեզուներից.
- համեմատի մայրենի և օտար լեզուներով առակների տեքստերը.
- գիտակցի առակի դաստիարակիչ դերը իր և այլ մարդկանց կյանքում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Հայկական առակագրություն. Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու առակները:
- Հայ գրողների չափաժողով և արձակ առակներ:
- Առակի ժանրին բնորոշ առանձնահատկությունները: Գաղափար այլաբանության մասին:
- Աստվածաշնչյան առակներ:
- Տարբեր ժողովուրդների առակներ:
- Առակի ստեղծման պատճառները. ինչո՞ւ են մարդիկ ստեղծում կամ պատմում առակներ:
- Ուղղախոսական, ուղղագրական կանոններ. հոմանիշ, հականիշ, համանուն բառերի շարքեր:
- Զվարճալի պատմություններ:
- Ուսումնաճանաչողական տեքստեր:
- Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:

<p align="center"><b>Առաջարկվող գործունեության ձևեր</b></p>	<p align="center"><b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>Կազմել առակի դեպքերի հաջորդական ընթացքը ցույց տվող աղյուսակ:</li> <li>Բառարանում ինքնուրույնաբար գտնել և բացատրել առակում հանդիպած անձանոթ բառերի բացատրությունը, կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. կազմել նոր բառեր տրված արմատներով, ցույց տալ արտասանության և գրության տարբերությունը:</li> <li>Գտնել և կազմել տվյալ ուղղագրական կանոնին վերաբերող բառերի հոմանիշների, հականիշների շարքեր:</li> <li>Բանավոր և գրավոր վերաշարադրել առակի տեքստը տարբեր հերոսների, կենդանիների, իրերի անունից:</li> <li>Առակի բովանդակության շուրջ նկարագրում, ապլիկացիա, ձեռքի աշխատանք ծեփամածուկով :</li> <li>Օտար լեզվից հայերեն թարգմանել պարզ առակներ. ցույց տալ մայրենի լեզվի բառագործածության</li> </ol>	<p align="center"><b>Անհատներ և հարաբերություններ</b></p> <p>Ես-ը և մենք-ը. անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, փոխհարաբերությունները համայնքի հետ. պարտականություն և իրավունք. ազգային մշակույթ, ընդհանրություններ և տարբերություններ այլ ազգերի հետ. հարգանք և հանդուրժողականություն:</p>

<p>առանձնահատկությունները:</p> <p>7. Համեմատել արձակ և չափածո, տարբեր ժողովուրդների, տարբեր լեզուներով գրված առակների տեքստերը, նշել նմանությունները և տարբերությունները:</p> <p>8. Կարծիք հայտնել առակի մասին, բացատրել առակի բարոյախոսությունը:</p> <p>9. Հորինել առակ՝ պահպանելով ժանրին բնորոշ առանձնահատկությունները:</p> <p>10. Կարդալ, հասկանալ և հաղորդել ուսումնաճանաչողական տեքստերի բովանդակությունը:</p> <p>11. Կատարել գործնական առաջադրանքներ ուղղագրությունից, հնչյունափոխությունից, բառակազմությունից:</p>	<p><b>Պատճառ և հետևանք</b></p> <p>Պատճառահետևանքային կապերը առակում, ուսումնաճանաչողական ստեղծագործության, լեզվական երևույթի, բնագիտական և հասարակագիտական առարկաների տիրույթում:</p>
--	---

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Ազգային մշակույթ	առակում հանդիպող խորհրդանիշների, կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների ուսումնասիրում.
Արվեստ	գեղկինոնկար, թատերական ներկայացում, երաժշտություն, գեղանկար. առակի նկարազարդում, ծեփաքանդակ, առակների գրքույկի ստեղծում և նկարազարդում՝ «Աղվեսագիրք».
Օտար լեզուներ	այլ երկրների առակների ընթերցում բնագրով, թարգմանություն հայերեն. հայերեն և օտար լեզվով տեքստերի բառային և ոճական համեմատություն.
Աշխարհագրություն	առակում ներկայացվող դեպքի հավանական տարածքը. ապացուցել առակից ընտրված փաստերով.
Պատմություն	առակում ներկայացվող դեպքի հավանական ժամանակաշրջանը. ապացուցել առակից ընտրված փաստերով.
Բնագիտություն.	տեղեկություններ առակում նշվող ծառերի, բույսերի, կենդանիների մասին.

Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ16, Հ26, Հ27, Հ28, Հ33, Հ34

**ԹԵՄԱ 3**

**ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԶՐՈՒՅՑ**

**Հնչյունաբանություն.** ուղղախոսություն, ուղղագրություն, հնչյունափոխություն  
**Բառագիտություն.** բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

1. Ընթերցել, բացատրել ավանդության հիմնական գաղափարը:
2. Ըմբռնել դեպքերի զարգացման տրամաբանական ընթացքը:
3. Ուսումնասիրել ավանդության տեքստը ըստ լեզվաոճական առանձնահատկությունների:
4. Գրել մենախոսություն, երկխոսություն ըստ ավանդության:

5. Գրել նամակ, կարծիք:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

1. Շարադրի ավանդության բովանդակությունը՝ պահպանելով դեպքերի հաջորդական ընթացքը.
2. առանձնացնի տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը, նախադասությունները.
3. ուսումնասիրի ավանդության տեքստը ըստ հրահանգների.
4. կազմի ավանդության պլանը, վերաշարադրի տեքստն ըստ պլանի.
5. փոփոխի դեպքերի զարգացման ընթացքը, հավելի նոր հերոսներ, հորինի նոր սկիզբ և ավարտ.
6. վերաշարադրի ավանդության տեքստը տարբեր հերոսների անունից.
7. համեմատի արձակ և չափածո, գրական և ոչ գրական տեքստերը, եզրահանգումներ անի.
8. գրի մենախոսություն կամ երկխոսություն ըստ ավանդության.
9. գրի նամակ ավանդության թեմայով.
10. արտահայտի կարծիք (բանավոր կամ գրավոր) ավանդության մասին.
11. արժևորի ավանդությունը որպես իր հայրենիքը (ծննդավայրը, շրջակա աշխարհը), նշանավոր ազգակիցներին ճանաչելու միջոց.
12. գնահատի ավանդությունը որպես մարդու բարոյական նկարագրի զարգացման միջոց

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Տիեզերքի, Հայաստանի աշխարհագրական վայրերի մասին հյուսված ավանդություններ:
- Նշանավոր մարդկանց մասին հյուսված ավանդություններ՝ Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Խաչատուր Աբովյան:
- Ավանդության ժանրին բնորոշ առանձնահատկությունները:
- Ավանդության գրական մշակումներ:
- Տարբեր ժողովուրդների ավանդություններ, զրույցներ:
- Ուսումնաճանաչողական տեքստեր. ավանդության մեջ հանդիպող տեղանունների, բույսերի, կենդանիների մասին տեղեկություններ:
- Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

**Փոփոխություն և զարգացում**

1. Կարդալ ընտրովի հատվածներ, բացատրել ընտրությունը:
2. Բացատրել անձանոթ բառերը բառարանի օգնությամբ, գտնել տեքստում հանդիպած բառերի հոմանիշները, հականիշները:
3. Կազմել ավանդության տեքստի պլանը պարզ նախադասություններով, հարցական նախադասություններով, բառակապակցություններով:
4. Գտնել տեքստի բանալի բառերը նախադասությունները, բացատրել ընտրությունը:
5. Բացատրել տրված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. կազմել նոր բառեր տրված արմատներով, ցույց տալ արտասանության և

Ամենատարբեր փոփոխությունները հանգեցնում են առաջընթացի և զարգացման: Մարդու իրավունքները և պարտականությունները, մարդ-համայնք-հասարակություն փոխհարաբերությունները:

<p>գրության տարբերությունը:</p> <p>6. Բանավոր վերաշարադրել ավանդության տեքստը տարբեր հերոսների, կենդանիների, իրերի անունից:</p> <p>7. Գրավոր վերաշարադրել ավանդության տեքստը՝ հավելելով նոր հերոսներ, հորինելով նոր սկիզբ և ավարտ:</p> <p>8. Վերլուծել ավանդության բովանդակությունը, մատնանշել գլխավոր ասելիքը:</p> <p>9. Գտնել ավանդության մտքին համապատասխան մեղեդի, նկարազարդումներ անել, ծեփել՝ զրույցի բովանդակության ըմբռնումը ցույց տալու համար: Հիմնավորել ընտրությունը:</p> <p>10. Համեմատել տարբեր ավանդությունների տեքստեր, ցույց տալ նմանությունները և տարբերությունները:</p> <p>11. Կարծիք հայտնել ավանդության մասին:</p> <p>12. Գրել նամակ ավանդության հերոսին կամ հերոսի անունից՝ ապագա սերունդներին:</p> <p>13. Կատարել գործնական առաջադրանքներ ուղղագրությունից, հնչյունափոխությունից, բառակազմությունից:</p>	
--	--

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Ազգային մշակույթ	ավանդության մեջ հանդիպող խորհրդանիշների, կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների ուսումնասիրություն.
Արվեստ	կինո, թատրոն, պար, երաժշտություն, գեղանկարչություն, գրքի նկարազարդում.
Աշխարհագրություն	ավանդության մեջ պատմվող դեպքերի տարածքը
Պատմություն	պատմվող դեպքերի հավանական ժամանակաշրջանը, ավանդության և իրականության կապը
Բնագիտություն	տեղեկություններ ավանդություններում հանդիպող բույսերի, կենդանիների մասին

Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ16, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ33, Հ34

**ԹԵՄԱ 4**

**ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆ**

**Հնչյունաբանություն.** ուղղախոսություն, ուղղագրություն, հնչյունափոխություն  
**Բառագիտություն.** բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

1. Ուսումնասիրել բանաստեղծության տեքստը ըստ լեզվաոճական և պատկերավորման միջոցների:
2. Ըմբռնել և բացատրել բանաստեղծական խորհրդանիշների էությունը:

3. Բանաստեղծությունից սովորած բառերը, պատկերավոր արտահայտությունները կիրառելով՝ կազմել կապակցված խոսք:
4. Գնահատել բանաստեղծությունը որպես մարդու հույզերը և զգացումներն արտահայտելու միջոց:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

1. *Կազմի* բանաստեղծության զգայական ընկալման աղյուսակ.
2. *դուրս գրի* պատկեր, ձայն, զգացողություն նշող բառերը և բառակապակցությունները.
3. *բացատրի* բանաստեղծության կառուցվածքը. հանգավորում, ռիթմ.
4. *ուսումնասիրի* բանաստեղծությունն ըստ լեզվաոճական առանձնահատկությունների.
5. *հաղորդի* բանաստեղծության հիմնական ասելիքը.
6. *բացատրի* պատկերավորման միջոցները՝ մակդիրը և համեմատություն.
7. *քննի* բանաստեղծության կառուցվածքը, հանգավորումը.
8. *համեմատի* տարբեր բանաստեղծություններ.
9. բանաստեղծությունը *շարադրի* արձակ ձևով՝ նորովի կիրառելով սովորած մակդիրները և համեմատությունները.
10. *գնահատի* բանաստեղծությունը որպես անձի հույզերի և զգացումների արտահայտման միջոց:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Դասական և ժամանակակից բանաստեղծների ստեղծագործություններ:
- Չափածո խոսքին բնորոշ առանձնահատկությունները:
- Գաղափար մակդիրի և համեմատության մասին:
- Բանաստեղծության կառուցվածքը, ռիթմը, հանգավորումը:
- Բանաստեղծություն գրելու դրդապատճառները. ինչո՞ւ են մարդիկ գրում բանաստեղծություն:
- Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. Կազմել բանաստեղծության ընկալման զգայական աղյուսակ՝ պատկեր, ձայն, զգացողություն:
2. Բանաստեղծությունից գտնել և աղյուսակով ներկայացնել պատկեր, ձայն, զգացողություն նշող բառերը, բառակապակցությունները:
3. Ուսումնասիրել և ցույց տալ բանաստեղծության հանգավորումը, ռիթմը, կառուցվածքը, տողերի քանակը քառատողում, վանկերի քանակն ամեն տողում:
4. Գտնել, դուրս գրել մակդիրները, համեմատությունները բացատրել դրանց նշանակությունը բանաստեղծության մեջ:
5. Բացատրել տրված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. կազմել նոր բառեր տրված արմատներով, ցույց տալ արտասանության և գրության տարբերությունը:
6. Գտնել և կազմել տվյալ ուղղագրական կանոնին վերաբերող բառերի հոմանիշների, հականիշների շարքեր:
7. Նկարագրողումներ անել հաղորդելու համար բանաստեղծության տրամադրությունը:

**Կառուցվածք և գործառույթ**  
 Բանաստեղծական կառուցվածքի համեմատություն լեզվական-քերականական, բնական և արհեստական համա կարգերի գործունեություն և մասերի փոխադարձ կապեր: Երաժշտական և լեզվական համակարգեր:

**Անհատական և մշակութային արժեհամակարգ**

Գաղափարներ, համոզմունքներ բացահայտելու ուղիները. եզրահանգումներ. հոգևոր արժեքների ստեղծում, հոգևոր

<p>8. Գտնել համապատասխան մեղեդի, կտավի վերատպություն, տեսաֆիլմ՝ բանաստեղծության բովանդակությունը և հույզը հաղորդելու համար: Փաստարկել և բացատրել ընտրությունը:</p> <p>9. Համեմատել տարբեր բանաստեղծությունների տեքստեր, նշել նմանությունները և տարբերությունները:</p> <p>10. Լսել բանաստեղծության տեքստի հիման վրա գրված երգերը. համեմատել տեքստը և երգը:</p> <p>11. Կարծիք հայտնել բանաստեղծության մասին:</p> <p>12. Բանաստեղծությունը շարադրել արձակ, նոր ձևով կիրառել սովորած մակդիրները և համեմատությունները:</p> <p>13. Օտար լեզուներից հայերեն թարգմանել բանաստեղծություն, ցույց տալ բնօրինակի և թարգմանության տարբերությունները և նմանությունները:</p> <p>14. Ստեղծել սիրած բանաստեղծությունների ձեռագիր կամ էլեկտրոնային նկարազարդ հավաքածու-գրքույկ:</p> <p>15. Սիրած բանաստեղծությունների համար գրել գովազդի տեքստ:</p> <p>16. Պատրաստել ռադիոհաղորդում սիրած բանաստեղծության և դրա հիման վրա գրված երգի համար:</p>	<p>հարստությունը որպես երջանիկ կյանքի գրավական:</p>
---	---

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Մշակույթ	բանաստեղծական խորհրդանիշներ. դրանց կապը ազգային մշակույթի հետ.
Արվեստ	բանաստեղծության համար մեղեդու ընտրություն, երգեր ըստ բանաստեղծությունների, ունկնդրում և կատարում, բանաստեղծության նկարազարդում, գրքույկի ստեղծում և նկարազարդում.
Օտար լեզուներ	օտար լեզվով գրված պարզ բանաստեղծությունների կամ երգերի տեքստերի հայերեն թարգմանություն. տեքստերի համեմատություն.
Աշխարհագրություն	բանաստեղծության գրության վայրը. տեղեկություն տվյալ վայրի մասին. բերել փաստեր բանաստեղծությունից.
Պատմություն	բանաստեղծության գրության հավանական կամ փաստացի ժամանակա շրջանը. պատմական ակնարկ տվյալ ժամանակաշրջանի մասին, փաստեր բանաստեղծությունից.
Բնագիտություն	բանաստեղծությունների մեջ նկարագրվող տարվա եղանակի, բույսերի, կենդանիների մասին տեղեկություններ.
Մաթեմատիկա	մաթեմատիկական համապատասխան հաշվարկներ՝ ըստ բանաստեղծության տեքստի

Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ  
 Հ1, Հ2, Հ16, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ34, Հ35

**6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Տարեկան 206 դասաժամ, շաբաթական՝ 6

<b>ԱՌԱՍՊԵԼ</b>	
<b>Հնչյունաբանություն.</b> ուղղախոսություն, ուղղագրություն, հնչյունափոխություն <b>Բառագիտություն.</b> բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն	
<b>ՆՊԱՏԱԿՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Հասկանալ և գնահատել առասպելի պատմական հիմքը:</li> <li>2. Տարբերել և բացատրել իրականի և երևակայականի սահմանները:</li> <li>3. Առասպելի տեքստն ուսումնասիրել ըստ լեզվաոճական առանձնահատկությունների:</li> <li>4. Կազմել թևավոր խոսքերի բառարան և բացատրել դրանց նշանակությունը արդի հայերենում:</li> <li>5. Հորինել պատմություններ թևավոր խոսքերի շուրջ:</li> </ol>	
<b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Մատնանշի առասպելի հիմնական գաղափարը.</li> <li>2. առանձնացնի տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը, նախադասությունները.</li> <li>2. ուսումնասիրի տեքստն ըստ լեզվաոճական առանձնահատկությունների.</li> <li>3. վերարտադրի առասպելի բովանդակությունն ըստ պլանի.</li> <li>4. փոփոխի առասպելի բովանդակությունը.</li> <li>5. համեմատի արձակ և չափածո, գրական և ոչ գրական տեքստերը.</li> <li>6. կապեր գտնի տարբեր առասպելների միջև.</li> <li>7. կազմի թևավոր խոսքերի բառարան.</li> <li>8. հորինի պատմություն՝ որպես վերնագիր ընտրելով որևէ թևավոր խոսք.</li> <li>9. կազմի երկխոսություն, մենախոսություն ըստ առասպելի բովանդակության.</li> <li>10. գնահատի առասպելների հերոսների արաքները. <i>ցույց տա</i> նրանց ուժեղ և թույլ կողմերը:</li> </ol>	
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Նմուշներ հին հայկական և հին հունական առասպելներից:</li> <li>• Առասպելների գրական մշակումներ:</li> <li>• Առասպելի ժանրին բնորոշ առանձնահատկությունները:</li> <li>• Առասպելի հերոսների բնութագիրը:</li> <li>• Թևավոր խոսքեր ըստ առասպելների:</li> <li>• Ուսումնաճանաչողական տեքստեր:</li> <li>• Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Բացատրել անձանոթ բառերը բառարանի օգնությամբ: Գտնել տեքստում հանդիպած բառերի հոմանիշները, հոմանիշները, հականիշները, համանուն բառերը, դարձվածքները:</li> <li>2. Բացատրել առասպելի հիման վրա ստեղծված թևավոր խոսքերի նշանակությունը:</li> <li>3. Կազմել առասպելի բովանդակության պլանը:</li> <li>4. Կազմել հարցեր առասպելի տեքստի շուրջ:</li> </ol>	<b>Պատճառ և հետևանք</b> Պատճառահետևանքային կապերը առասպելում, գրական, ուսումնաճանաչող կան ստեղծագործությունների, լեզվական երկույթի, բնագիտական և

<ol style="list-style-type: none"> <li>5. Գտնել տեքստի բանալի բառերը նախադասությունները, բացատրել ընտրությունը:</li> <li>6. Բացատրել տրված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. կազմել նոր բառեր տրված արմատներով, ցույց տալ արտասանության և գրության տարբերությունը:</li> <li>7. Բանավոր և գրավոր վերաշարադրել առասպելի բովանդակությունը տարբեր հերոսների անունից:</li> <li>8. Վերլուծել առասպելի բովանդակությունը. ցույց տալ իրականի և երևակայականի սահմանները:</li> <li>9. Գտնել առասպելին համապատասխան մեղեդի, նկարազարդումներ անել, ծեփել՝ բովանդակության ըմբռնումը ցույց տալու համար:</li> <li>10. Համեմատել տարբեր առասպելների տեքստեր, ցույց տալ նմանությունները և տարբերությունները:</li> <li>11. Գրել առասպելներից մեկի հերոսի մենախոսությունը:</li> <li>12. Առասպելը հարստացնել երկխոսություններով:</li> <li>13. Համեմատել առասպելի բովանդակությունը դրա հիման վրա ստեղծված գեղկինոնկարի, երաժշտական ստեղծագործության կամ մուլտֆիլմի հետ:</li> <li>14. Կարծիք հայտնել առասպելի մասին:</li> <li>15. Գրել ստեղծագործական շարադրանք՝ իբրև վերնագիր ընտրելով թևավոր խոսքերը:</li> <li>16. Կարդալ, հասկանալ և հաղորդել ուսումնաճանաչողական տեքստերի բովանդակությունը:</li> </ol>	<p>հասարակագիտական առարկաների տիրույթում:</p> <p style="text-align: center;"><b>Անհատներ և հարաբերություններ</b></p> <p>Ես-ը և մենք-ը. անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, փոխհարաբերությունները համայնքի հետ. մշակութային ընդհանրություններ և տարբերություններ. անհատի իրավունքներն ու պարտականությունները, հարգանք և հանդուրժողականություն:</p>
--	--

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Ազգային մշակույթ	առասպելի մեջ հանդիպող կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների ուսումնասիրություն և վերլուծություն.
Արվեստ	գեղկինոնկար կամ մուլտիպլիկացիոն կինոնկար ըստ վիպերգի կամ առասպելի, թատերական ներկայացում, պար/բալետ, երաժշտական ստեղծագործություն ըստ առասպելի կամ գեղանկարչական կտավ.
Աշխարհագրություն	պատմվող դեպքերի հավանական տարածքը, տվյալ երկրի աշխարհագրական դիրքը.
Պատմություն	պատմվող դեպքերի հավանական ժամանակաշրջանը, առասպելի պատմական հիմքը. պատմական ժամանակաշրջանը.
Բնագիտություն	տեղեկություններ առասպելներում հանդիպող բույսերի, կենդանիների մասին.

Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ  
 Հ1, Հ2, Հ16, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ34, Հ35, Հ42, Հ43, Հ44



**ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ,  
ՎԻՊԵՐԳԵՐ**

**Հնչյունաբանություն.** ուղղախոսություն, ուղղագրություն, հնչյունափոխություն  
**Բառագիտություն.** բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

1. Ըմբռնել մարդկության դիցաբանական պատկերացումները:
2. Հասկանալ պատմական նշանավոր անձանց մասին ստեղծված գրույցների իմաստը:
3. Իմանալ և բնորոշել դիցաբանական և պատմական գրույցի ժանրը:
4. Տարբերակել գրույցը բանաստեղծությունից:
5. Վերլուծել գրույցի տեքստը ըստ բովանդակության, ըստ լեզվաոճական առանձնահատկությունների:
6. Գրել նամակ պատմական գրույցի հերոսին:
7. Հասկանալ պատմական գրույցի դերը ազգային արժեքների պահպանման և սերունդների դաստիարակության գործում:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

1. *վերարտադրի* գրույցի բովանդակությունն ըստ պլանի.
2. *առանձնացնի* տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը, նախադասությունները.
3. *բացատրի* գրույցի հիմնական գաղափարը.
4. *ուսումնասիրի* գրույցի տեքստն ըստ լեզվաոճական առանձնահատկությունների.
5. *համեմատի* գրույցների հերոսներին.
6. *բնութագրի* հերոսներին.
7. *գրի* գրույցի հերոսի երևակայական կենսագրությունը.
8. *եզրահանգումներ ձևակերպի* արձակ և չափածո, գրական և ոչ գրական տեքստեր համեմատելուց հետո.
9. *գնահատի* պատմական գրույցների հերոսներին որպես արդարության և ազատության համար պայքարող մարտիկների:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Դիցաբանական և պատմական գրույցներ:
- Ժանրին բնորոշ առանձնահատկությունները:
- Պատմական գրույցի հերոսը որպես տվյալ ժամանակաշրջանի անհատ: Նրա դերը և նշանակությունը հայոց պատմության մեջ:
- Պատմական հերոսի գրական կերպավորումները:
- Վիպերգում հանդիպող կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների ուսումնասիրություն:
- Տարբեր ժողովուրդների պատմական գրույցներ և վիպերգեր:
- Ուսումնաճանաչողական և ոչ գրական տեքստեր:
- Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ  
ընդհանրական**

	<b>հասկացություններ</b>
1. Գտնել տեքստի բանալի բառերը նախադասությունները, բացատրել ընտրությունը: 2. Բացատրել տեքստում հանդիպող անձանոթ բառերի բացատրությունը, կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. կազմել նոր բառեր տրված արմատներով, ցույց տալ արտասանության և գրության տարբերությունը: 3. Բանավոր և գրավոր վերաշարադրել վիպերգի տեքստը տարբեր հերոսների, կենդանիների, իրերի անունից: 4. Վերլուծել վիպերգի բովանդակությունը, ցույց տալ լեզվաոճական առանձնահատկությունները: 5. Գտնել վիպերգին համապատասխան մեղեդի, նկարագարողումներ անել, ծեփել վիպերգի բովանդակության ըմբռնումը ցույց տալու համար: 6. Համեմատել տարբեր վիպերգերի տեքստեր, ցույց տալ նմանությունները և տարբերությունները: 7. Տեղեկություններ գտնել պատմական զրույցի հերոսի մասին, գրել նրա երևակայական կենսագրությունը: 8. Կարծիք հայտնել վիպերգի, նրա հերոսների մասին: 9. Կարդալ, հասկանալ և հաղորդել ուսումնաճանաչողական տեքստերի բովանդակությունը:	<b>Անհատներ և հարաբերություններ</b> Ես-ը և մենք-ը. անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, փոխհարաբերությունները. մշակութային ընդհանրություններ և տարբերություններ: Անհատի իրավունքները և պարտականությունները, հարգանք և հանդուրժողականություն: Նշանավոր անհատի դերը պատմական տվյալ ժամանակաշրջանում: Նրա դաստիարակիչ դերը հետո եկող սերունդների համար:

### **ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Ազգային մշակույթ	զրույցում, վիպերգում հանդիպող խորհրդանիշների, կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների ուսումնասիրություն.
Արվեստ	կինո, թատրոն, պար, երաժշտություն, գեղանկարչություն, գրքի նկարագարում.
Աշխարհագրություն	պատմվող դեպքերի հավանական տարածքը. ցույց տալ Հայաստանի պատմական քարտեզի վրա.
Պատմություն	պատմվող դեպքերի հավանական ժամանակաշրջանը, վիպերգի, պատմական ժամանակաժրջանի և իրականության կապը.
Բնագիտություն	վիպերգում հանդիպող բույսերի, կենդանիների, թռչունների մասին տեղեկություններ.
Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ Հ1, Հ2, Հ16, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ34, Հ35, Հ42, Հ43, Հ44	

### **ԹԵՄԱ 3**

#### **ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ**

Հայկական ժողովրդական և այլ ժողովուրդների դյուցազներգություններ

**Հնչյունաբանություն.** ուղղախոսություն, ուղղագրություն, հնչյունափոխություն  
**Բառագիտություն.** բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն

<b>ՆՊԱՏԱԿՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Ըմբռնել հայկական դյուցազներգության պատմական հիմքը և ստեղծման ժամանակաշրջանը:</li> <li>2. Բնորոշել ժանրը. հասկանալ՝ ինչ է դյուցազներգությունը:</li> <li>3. Հասկանալ՝ ով է դյուցազներգության հեղինակը: Ժողովուրդը որպես ասացող-հեղինակ:</li> <li>4. Բառարանով կարդալ համահավաք բնագրից հատվածներ, բացատրել:</li> <li>5. Համեմատել և վերլուծել համահավաք բնագրի և գրական մշակման համապատասխան հատվածները:</li> <li>6. Բնութագրել դյուցազներգության գլխավոր հերոսին՝ որպես իր հայրենիքի անկախության և ազատության համար պայքարող անհատի:</li> </ol>	
<b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>կազմի</i> պատմական փաստերի ժամանակացույց.</li> <li>2. <i>ներկայացնի</i> դյուցազներգության ժանրը բնորոշող աղյուսակ.</li> <li>3. բառարանի օգնությամբ <i>կարդա</i> դյուցազներգության համահավաք տեքստից հատվածներ.</li> <li>4. <i>կազմի</i> կարդացած տեքստի պլանը.</li> <li>5. <i>վերարտադրի</i> կարդացած հատվածների բովանդակությունը.</li> <li>6. <i>առանձնացնի</i> տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը, նախադասությունները</li> <li>7. <i>բնութագրի</i> գլխավոր հերոսին ըստ արարքների.</li> <li>8. <i>համեմատի</i> հերոսներին, ցույց տա նմանությունները և տարբերությունները.</li> <li>9. <i>արդարացնի</i> հերոսի վարքագիծը բնագրից ընտրված փաստերի օգնությամբ.</li> <li>10. <i>գնահատի</i> դյուցազներգության հերոսի քաջությունը, ազատ և անկախ ապրելու ձգտումը.</li> <li>11. <i>արժևորի</i> դյուցազներգության հերոսի նկարագրի ազդեցությունն իր վարքագծի վրա:</li> </ol>	
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Գաղափար դյուցազներգության (էպոսի) մասին:</li> <li>• Դյուցազներգության հեղինակը, պատմական հիմքը, ոճական առանձնահատկությունները:</li> <li>• «Սասունցի Դավիթ» դյուցազներգության համահավաք բնագրից հատվածներ:</li> <li>• Դյուցազներգության գրական մշակումներից հատվածներ:</li> <li>• Հունական և պարսկական դյուցազներգություններից հատվածներ:</li> <li>• Ուսումնաճանաչողական և ոչ գրական տեքստեր:</li> <li>• Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Բանավոր և գրավոր վերաշարադրել դյուցազներգության տվյալ հատվածի բովանդակությունը տարբեր հերոսների, կենդանիների, իրերի անունից:</li> <li>2. Գտնել համապատասխան մեղեդի, նկարագարդումներ անել, ծեփել դյուցազներգության տվյալ հատվածի բովանդակության ըմբռնումը ցույց տալու համար:</li> <li>3. Բնութագրել և համեմատել դյուցազներգության հերոսներին. մատնանշել, թե հերոսների բնավորության որ գծերը</li> </ol>	<p><b>Պատճառ և հետևանք:</b> Պատճառահետևանքային կապերը գրական, ուսումնաճանաչողական ստեղծագործության, լեզվական երևույթի, բնագիտական և հասարակագիտական առարկաների տիրույթում:</p>

<p>կուղեկցեն իրեն կյանքում:</p> <ol style="list-style-type: none"> <li>4. Համեմատել տարբեր ժողովուրդների դյուցազներգությունների տեքստեր, հերոսներին, ցույց տալ նմանությունները և տարբերությունները:</li> <li>5. Կարծիք հայտնել դյուցազներգության մասին. նշել դրա արդիականությունը:</li> <li>6. Դիտել դյուցազներգության նկարազարդումներ, համեմատել տեքստի հետ և եզրահանգումներ անել:</li> <li>7. Դիտել տարբեր դյուցազներգությունների հիման վրա ստեղծված գեղարվեստական և մուլտիպլիկացիոն կինոնկարները, լսել երաժշտական ստեղծագործությունները համեմատել գրական տեքստերի հետ և եզրահանգում անել:</li> <li>8. Գրել գովազդի տեքստ, հանրությանը ցույց տալ դյուցազներգության մեջ արծարծված գաղափարների հարատևությունը:</li> <li>9. Մասնակցել դյուցազներգության հատվածների բեմադրական աշխատանքներին:</li> <li>10. Գրել հայտարարություն, ձևավորել հրավիրատոմս:</li> <li>11. Որոշակի գործերով ապացուցի դյուցազներգությունից սովորած բարոյական դասերի կիրառելիությունը իր կյանքում:</li> </ol>	<p style="text-align: center;"><b>Փոփոխություն և զարգացում:</b></p> <p>Ամենատարբեր փոփոխությունները հանգեցնում են առաջընթացի և զարգացման: Մարդու իրավունքները և պարտականությունները, մարդ-համայնք-հասարակություն փոխհարաբերությունները: Քաջություն, ազատասիրություն, անկախ ապրելու ձգտում:</p>
--	--

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Ազգային մշակույթ	դյուցազներգություններում հանդիպող խորհրդանիշների, կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների ուսումնասիրություն. դրանց դերը դյուցազներգության մեջ.
Արվեստ	գեղկինոնկարներ, մուլտֆիլմեր, թատերական ներկայացումներ, օպերա, երաժշտական ստեղծագործություններ, գեղանկարչական աշխատանքներ, նկարազարդումներ դյուցազներգությունների թեմաներով,
Աշխարհագրություն	պատմվող դեպքերի հավանական տարածքը. դրա աշխարհագրական բնութագրումը, ցույց տալ Հայաստանի պատմական քարտեզի վրա.
Պատմություն	պատմվող դեպքերի հավանական ժամանակաշրջանը, դյուցազներգության և իրականության կապը.
Բնագիտություն	դյուցազներգության տվյալ հատվածներում հանդիպող բույսերի, թռչունների, կենդանիների մասին տեղեկություններ, դրանց դերը դյուցազներգության մեջ
Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ Հ1, Հ2, Հ16, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ43, Հ44	

**ԹԵՄԱ 4**

**ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆ**

**Հնչյունաբանություն. ուղղախոսություն, ուղղագրություն, հնչյունափոխություն  
Բառագիտություն. բառապաշար, իմաստաբանություն, բառակազմություն**

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

1. Ընթերցել վարժ, արտահայտիչ և հասկանալով:
2. Ուսումնասիրել բանաստեղծական տեքստն ըստ լեզվաոճական և պատկերավոր արտահայտությունների:
3. Ըմբռնել և բացատրել բանաստեղծության խորհրդանիշները:
5. Համեմատել և բնութագրել արձակ և չափածո տեքստերը:
6. Ուսումնասիրել բանաստեղծության կառուցվածքը՝ տուն, հանգ, չափ:
7. Գաղափար կազմել քնարական հերոսի մասին:
8. Հասկանալ քնարական հերոսի ապրումները և հույզերը:
9. Արժևորել բանաստեղծությունը որպես պատկերավոր մտածողության և հոգևոր զարգացման միջոց:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

1. *կարդա* բանաստեղծությունը վարժ, արտահայտիչ.
2. *ուսումնասիրի* բանաստեղծության տեքստն ըստ լեզվաոճական առանձնահատկությունների.
3. բանաստեղծությունից *ընտրի* պատկեր, ձայն, զգացողություն նշող բառեր և բառակապակցություններ.
4. *բացատրի* բանաստեղծության խորհրդանիշները.
5. *բացատրի* բանաստեղծության կառուցվածքը, հանգավորումը.
6. *համեմատի* տարբեր բանաստեղծությունների տեքստեր.
7. բանաստեղծությունը *շարադրի* արձակ ձևով՝ նորովի կիրառելով պատկերավորման միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում
8. *արժևորի* բանաստեղծությունը որպես պատկերավոր մտածողության և հոգևոր զարգացման միջոց:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Դասական և ժամանակակից բանաստեղծների ստեղծագործություններ:
- Չափածո խոսքին բնորոշ առանձնահատկությունները:
- Գաղափար մակդիրի, փոխաբերության, համեմատության, անձնավորման մասին:
- Բանաստեղծական խոսքի ոճական առանձնահատկությունները:
- Բանաստեղծության կառուցվածքը, ռիթմը, հանգավորումը:
- Ուսումնասիրվող բանաստեղծությունների հիման վրա հորինված երգեր:
- Գործնական առաջադրանքներ հայոց լեզվից:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ  
ընդհանրական  
հասկացություններ**

- |   |   |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Կազմել բանաստեղծության ընկալման զգայական աղյուսակ՝ պատկեր, ձայն, զգացողություն:</li> <li>2. Գտնել և աղյուսակով ներկայացնել բանաստեղծության մեջ պատկեր, ձայն, զգացողություն նշող բառերը և բառակապակցությունները:</li> <li>3. Ցույց տալ բանաստեղծության հանգավորումը, ռիթմը, կառուցվածքը, տողերի քանակը, վանկերի քանակն ամեն</li> </ol> | <p><b>Օրինաչափություն</b><br/>Օրինաչափությունը բոլոր ոլորտներում տեսնելու և ճանաչելու միջոցը դասակարգումն է. նմանությունների ու տարբերությունների</p> |
|---|---|

<p>տողում և դրանց կապը բովանդակության հետ:</p> <ol style="list-style-type: none"> <li>4. Գտնել, դուրս գրել մակդիրները, համեմատությունները, փոխաբերությունները, բացատրել դրանց նշանակությունը բանաստեղծության մեջ:</li> <li>5. Բանաստեղծության մեջ ցույց տալ խորհրդանիշները, բացատրել դրանք:</li> <li>6. Բացատրել տրված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. կազմել նոր բառեր տրված արմատներով, ցույց տալ արտասանության և գրության տարբերությունը:</li> <li>7. Գտնել և կազմել տվյալ ուղղագրական կանոնին վերաբերող բառերի հոմանիշների, հականիշների շարքեր, տեքստում ցույց տալ համանունները, դարձվածքները:</li> <li>8. Նկարագրողումներ անել հաղորդելու համար բանաստեղծության տրամադրությունը:</li> <li>9. Գտնել համապատասխան մեղեդի, կտավի վերատպություն, տեսաֆիլմ՝ բանաստեղծության բովանդակությունը և հույզը հաղորդելու համար: Փաստարկել և բացատրել ընտրությունը:</li> <li>10. Համեմատել տարբեր բանաստեղծությունների տեքստեր, նշել նմանությունները և տարբերությունները, նշել խորհրդանիշները:</li> <li>11. Լսել բանաստեղծության տեքստի հիման վրա գրված երգերը. համեմատել տեքստը և երգը:</li> <li>12. Կարծիք հայտնել բանաստեղծության մասին:</li> <li>13. Բանաստեղծությունը շարադրել արձակ, նոր ձևով կիրառել սովորած մակդիրները, փոխաբերությունները, համեմատությունները:</li> <li>14. Օտար լեզուներից հայերեն թարգմանել բանաստեղծություն, ցույց տալ բնօրինակի և թարգմանության տարբերությունը, խոսքի և ոճի առանձնահատկությունները:</li> <li>15. Ստեղծել սիրած բանաստեղծությունների ձեռագիր կամ էլեկտրոնային նկարագարի հավաքածու-գրքույկ:</li> <li>16. Սիրած բանաստեղծությունների համար գրել գովազդի տեքստ, ներկայացնել ընկերներին:</li> <li>17. Պատրաստել ռադիոհաղորդում (փոթքաստ) սիրած բանաստեղծության և դրա հիման վրա գրված երգի համար:</li> </ol>	<p>բացահայտում:</p> <p style="text-align: center;"><b>Կառուցվածք և գործառույթ</b></p> <p>Բանաստեղծությունը որպես համակարգված կառուցվածք: Լեզվական-քերականական, բնական և արհեստական համակարգերի գործունեությունը՝ մասերի փոխադարձ կապերով պայմանավորված:</p>
---	---

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ**

Մշակույթ	բանաստեղծական խորհրդանիշներ. ինչո՞վ են դրանք կապվում մեր ազգային մշակույթի հետ
Արվեստ	բանաստեղծության համար երաժշտության մեղեդու ընտրություն, երգեր ըստ բանաստեղծությունների, ունկնդրում և կատարում, բանաստեղծության նկարագրողում, գրքույկի ստեղծում և նկարագրողում
Օտար լեզուներ	օտար լեզվով գրված պարզ բանաստեղծությունների կամ երգերի տեքստերի հայերեն թարգմանություն. տեքստերի համեմատություն
Աշխարհագրություն	բանաստեղծության գրության վայրը. տեղեկություն տվյալ վայրի մասին. բերել փաստեր բանաստեղծությունից

Պատմություն	բանաստեղծության գրության հավանական կամ փաստացի ժամանակաշրջանը. պատմական ակնարկ տվյալ ժամանակաշրջանի մասին, փաստեր բանաստեղծությունից
Բնագիտություն	բանաստեղծությունների մեջ նկարագրվող տարվա եղանակի, բույսերի, կենդանիների մասին տեղեկություններ
Մաթեմատիկա	մաթեմատիկական հաշվարկներ՝ ըստ բանաստեղծության բովանդակության
Ինֆորմատիկա	Սահիկաշար և նկարագրողումներ համակարգչով
Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ	
Հ1, Հ2, Հ16, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ43, Հ44	

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**7-9-րդ դասարաններ**  
**ԾՐԱԳԻՐ**  
**ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ**

**Առաջարկվող ժամաքանակ**

- 7-րդ ԴԱՍԱՐԱՆ - տարեկան 102 դասաժամ, շաբաթական՝ 3  
8-րդ ԴԱՍԱՐԱՆ- տարեկան 68 դասաժամ, շաբաթական՝ 2  
9-րդ ԴԱՍԱՐԱՆ - տարեկան 68 դասաժամ, շաբաթական՝ 2

<b>ԹԵՄԱ 1</b>	
<b>ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ</b>	
<b>Հիմնական նպատակը</b>	
Ձևավորել համակարգային մտածողություն, դասակարգելու, տարբերակելու կարողություն:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Տարբերակի</i> ընդհանուր հատկանիշներ ունեցող բառերը:</li> <li>2. <i>Դասակարգի</i> բառերն ըստ գործածության հաճախականության, ըստ տրված հարցերի:</li> <li>3. <i>Ջանազանի</i> նրանց գործածության շրջանակները, <i>բերի</i> օրինակներ:</li> <li>4. <i>Փոխարինի</i> հոմանիշներով և հականիշներով:</li> <li>5. <i>Կազմի բառակապակցություններ՝ փոփոխելով</i> տրված բառերն ըստ անհրաժեշտության (վերջավորություններ):</li> <li>6. <i>Ստեղծի</i> երկխոսություն, պատմություն տրված բառաշարքով:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
Խոսքի մասեր	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>● Ստեղծել խոսքի մասերի տնակներ:</li> <li>● Տարբեր իրադրություններին և սոցիալական վիճակներին համապատասխան երկխոսություն վարել, նկարել և ցուցադրել:</li> </ul>	<b>Օրինաչափություն</b> Խոսքի մասերի դասակարգումն ըստ

<ul style="list-style-type: none"> <li>• Տրված բառերը դասակարգել ըստ ընդհանուր հատկանիշների և ըստ ոլորտների:</li> <li>• Ստեղծել իրավիճակներ, դրանց համապատասխան խոսք կազմել՝ կիրառելով առանձնացրած բառերը:</li> <li>• Գտնել տրված բառերի հոմանիշներն ու հականիշները, բառակազմական վերլուծության ենթարկել, արմատներով կազմել նոր բառեր:</li> <li>• Խոսք կազմել տրված բառերով (դերախաղ, մնջախաղ):</li> <li>• Տրված բառերով բնութագրել մարդկանց կամ իրադրությունը, դիրքորոշում արտահայտել:</li> <li>• Տրված նկարները համապատասխանեցնել բառերին և հակառակը, պատմություն ստեղծել:</li> <li>• Տեսանյութ պատրաստել:</li> </ul>	<p>օրինաչափությունների:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ</b></p> <p>Բառը՝ որպես կառուցվածք: Նրա գործառույթը խոսքում:</p>
---	---

**Միջառարկայական կապեր**

**Մաթեմատիկա, ֆիզիկա:** Գրագետ հաղորդակցում, խոսքի հարստացում մասնագիտական բառերով, մասնագիտական բառերի հասկանալով կիրառություն:

**Պատմություն:** Պատմական այս կամ այն դեպքերն ուսումնասիրելիս հարցերի առաջադրում, տրված բառերի դասակարգում՝ ըստ պատմական ժամանակաշրջանի:

**Գրականություն, արվեստ:** Տեքստերում հանդիպած բառերի առանձնացում ըստ իմաստի և ձևի: Արվեստին բնորոշ բառերի, բառ-պատկերների կիրառություն խոսքում, նկարագրադրում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

- Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46

**ԹԵՄԱ 2**

**ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ**

**Հիմնական նպատակը**

- Ձևավորել բառերն ըստ ընդհանուր հատկանիշների դասակարգելու կարողություն և խոսք կազմելու հմտություններ:
- Ընդլայնել սովորողի իմացության շրջանակը:

**Վերջնարդյունքներ**

1. *Դասակարգի* գոյականներն ըստ ոլորտների և *կիրառի* խոսքում:
2. *Տարբերակի* գոյականի ձևափոխություններն ըստ հոլովների և *ճիշտ կիրառի* հոլովումները:
3. *Ներկայացնի* գոյականի՝ հոգնակիում ստացած վերջավորությունները, *ճիշտ կիրառի* խոսքում:
4. *Կազմի* եզակի թվով դրված բառերի հոգնակի թիվը, *ճիշտ կիրառի* գրավոր և բանավոր խոսքում:
5. *Խմբավորի* հավաքական և հոգնակի թվով գոյականները, *թվարկի* նրանց տարբերությունները, *բերի* օրինակներ:
6. *Փոխարինի* հոգնակիի կազմության հոմանիշ ձևերն իրարով և *կիրառի* համապատասխան դեպքերում:
7. *Տարբերակի* հոդերը և *ճիշտ կիրառի* խոսքում:
8. *Համեմատի* տարբեր ոճերի տեքստերը՝ առանձնացնելով կիրառված գոյականները:



9. Փոխադրի պարբերություններ, հատվածներ՝ ըստ տրված պահանջի:

**Բովանդակություն**

1. Տեսակները՝ անձնանիշ, իրանիշ, հատուկ և հասարակ
2. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը
2. Գոյականի թիվը՝ եզակի և հոգնակի: Հավաքական, անեզակյան և անհոգնական գոյականներ
3. Գոյականի հոլովը
4. Հոլովում-արտաքին, ներքին, այլաձև, զուգաձև
5. Հոդեր

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

- Խաչբառներ կազմել և խաղ քարտեզով:
- Երևակայությամբ ուղևորվել տարբեր երկրներ, ստեղծած պատմությունից դուրս բերել աշխարհագրական անվանումների գրության օրինաչափությունները:
- Հաղորդել հետաքրքիր տեղեկություններ նշանավոր մարդկանց մասին, գտնել և ցույց տալ բաղադրյալ հատուկ անունների գրության օրինաչափությունները տրված տեքստում:
- Կազմել բաղադրյալ հատուկ անուններ ընդգրկող վիկտորինաներ, ցույց տալ գրության օրինաչափությունները:
- Տրված տեքստում եզակի թվով բառերը վերածել հոգնակիի և վերաշարադրել տեքստը:
- Բացահայտել անեզակյան և անհոգնական գոյականների գործածության ոլորտները, կազմել իրադրական խոսք:
- Քերականորեն վերլուծել տարբեր տեքստեր:
- Գրել երկխոսություն, պատմություն տրված կամ ինքնուրույնաբար ընտրած թեմայով:
- Ստեղծել շարադրանք՝ կիրառելով տարբեր ոլորտներ ներկայացնող գոյականներ:
- Գտնել, բացատրել հոլովական զուգաձևությունները՝ ցույց տալով դրանց կիրառության ոլորտները:
- Գտնել թեմային համապատասխան ասույթներ, առած-ասացվածքներ, դրանք կիրառել խոսքի մեջ:
- Փոխադրել տեքստեր՝ ընդգծելով գոյականները:
- Երկխոսություն վարել որևէ թեմայով, վերաբերմունք դրսևորել իրադրության, անհատի նկատմամբ:
- Դերախաղ (մնջախաղ)՝ «Խանութում գնումներ կատարելիս»:
- Կազմել խոսք՝ կիրառելով տարբեր հոլովումների ենթարկվող բառեր:

**Օրինաչափություն**  
Գոյականի վերջավորությունների օրինաչափությունները:

**Կառուցվածք և գործառույթ**  
Բառը՝ որպես կառուցվածք: Նրա գործառույթը խոսքում:

**Կայունություն և փոփոխություն**  
Հոլովական և հոգնակիակերտ վերջավորությունների կայունությունն ու ներքին փոփոխությունների հնարավորությունը:

**Միջառարկայական կապեր**

**Պատմություն, աշխարհագրություն:** Աշխարհագրական, պատմական անվանումների ճիշտ գործածում, ոլորտային բառերով խոսքի կազմում, պատմական և աշխարհագրական իրողություններն արտահայտող բառերի դուրսգրում, խաչբառների և այլ խաղերի հորինում՝

բառերի բացատրությունը յուրացնելու նպատակով <b>Գրականություն, արվեստ:</b> Գրողների, այլ նշանավոր անձանց, նրանց ստեղծագործությունների անվանումների ճանաչում և անսխալ գործածում, դրանց հոմանիշների ու հականիշների կազմում, պատմության պատկերագրում և ներկայացում <b>Հասարակագիտություն: Արվեստ:</b> Անհատի, նրա իրավունքների ու պարտականությունների, նախասիրությունների ճիշտ հոլովաձևերով և թվով ներկայացում, հարցերի առաջադրում կոնկրետ թեմաների շուրջ, հարցազրույցների վարում
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>
Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46

**ԹԵՄԱ 3  
ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ**

**Նպատակը**

- Նպաստել խոսքում հատկանիշ ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառմանը:
- Զարգացնել պատկերավոր խոսք:

**Վերջնարդյունքներ**

- Ճանաչի հիմնական հատկանիշները:
- Տարբերակի ածականի տեսակները:
- Կիրառի խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստներով:
- Կազմի պատկերավոր խոսք:

**Բովանդակություն**

- Ածական: Հատկանիշները
- Տեսակները: Համեմատության աստիճանները
- Կազմությունը
- Կիրառությունը

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>Ընդարձակել տեքստը ածականներով կամ բեռնաթափել դրանցից:</li> <li>Բացահայտել ածականի հատկանիշները, կիրառել խոսքում:</li> <li>Կազմել տարբեր ածականներ, որոշել կազմությունը:</li> <li>Քերականորեն վերլուծել տարբեր ոճերի տեքստեր:</li> <li>Կազմել երկխոսություն կամ պատմություն՝ կիրառելով ածականներ (բանավոր և գրավոր):</li> <li>Կազմել նկարագրական խոսք՝ կիրառելով համապատասխան ածականներ, դրանք փոխարինել հոմանիշներով և հականիշներով, վերաբերմունք դրսևորել:</li> <li>Ստեղծել դերախաղեր և մասնակցել դրանց:</li> <li>Ածականները ներկայացնել դիմախաղով:</li> <li>Փոխադրել տեքստեր:</li> <li>Հայտնի մարդկանց բնութագրում, իրադրության հանդեպ վերաբերմունքի դրսևորում ածականների կիրառությամբ:</li> </ul>	<p><b>Օրինաչափություն</b>  Բառերի համեմատելի հատ կանիշների համար կիրառ վող ձևերի օրինաչափութ յունը:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ</b>  Ածականի համեմատութ յան աստիճանների կառ ուցվածքը և դրսևորումը կիրառութ յան մեջ:</p> <p><b>Անհատ և հարաբերութ</b></p>

<ul style="list-style-type: none"> <li>• Տրված բառերը փոխարինել հոմանիշներով և հականիշներով, դրանցով կազմել բառակապակցություններ և կիրառել գնահատողական խոսքում:</li> </ul>	<p><b>յուններ</b> Ածականի միջոցով անհատների և հասարակությունների արժեհամա կարգերի ներկայացում, վերաբերմունքի դրսևորում:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գրականություն:</b> Ածականի տեղին և ճիշտ կիրառության արժևորում, պատկերավոր խոսքի կազմում, պատկերավորման միջոցների կիրառում գրավոր և բանավոր խոսքում:  <b>Պատմություն: Հասարակագիտություն: Արվեստ :</b>Ածականների ուղիղ և փոխաբերական կիրառությամբ խոսքի հարստացում, արժևորում, այս կամ այն իրողության վերաբերյալ վերաբերմունքի դրսևորում:</p>	
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>	
<p>Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46</p>	

<b>ԹԵՄԱ 4</b>
<b>ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ</b>
<b>Հիմնական նպատակը</b>
<p>Ձևավորել թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողություններ:      Նպաստել փաստարկված խոսք կազմելու մեջ թվականների արժևորմանը:</p>
<b>Վերջնարդյունքներ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Անսխալ գրի և արտասանի թվականները:</li> <li>2. Ճիշտ կարդա տառակապակցությունների թվային արժեքները:</li> <li>3. Տարբերակի թիվ, թվային կարգ, քանակ, թվանշան հասկացությունները:</li> <li>4. Մեկնաբանի արաբական և հռոմեական թվերի գործածության անհրաժեշտությունը:</li> <li>5. Գնահատի և հիմնավորի թվերի կիրառության հաճախականությունը տարբեր ոճերում:</li> <li>6. Համեմատի թվականի տեսակները և վեր հանի օրինաչափությունները:</li> <li>7. Գրի թվերը տառերով և հակառակը:</li> <li>8. Հասկանա թվերին դիմելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:</li> <li>9. Կառուցի խոսք, ստեղծի իրավիճակներ՝ թվականի տարբեր տեսակների ճիշտ կիրառությամբ:</li> <li>10. Հարստացնի տեքստը թվականներով:</li> <li>11. Ստեղծի տեքստ, պատմություն:</li> </ol>
<b>Բովանդակություն</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Թվականի տեսակները՝ քանակական (բացարձակ, կոտորակային, բաշխական) և դասական</li> <li>2. Թվականի կազմությունը և ուղղագրությունը: Թվականի համաձայնության և անհամաձայնության դեպքերը</li> <li>3. Թվարկման գրավոր արտահայտության ձևերը</li> <li>4. Թվականների բուն և փոխանվանական կիրառությունները</li> </ol>

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Քերականորեն վերլուծել թվականներով հարուստ տարբեր ոճերի տեքստեր:</li> <li>• Խաղեր, վիկտորինաներ կազմակերպել թվերով, լրացնել նշանավոր իրադարձությունների թվականները, քննել տարբեր բանաստեղծությունների վանկերի թիվը:</li> <li>• Տառակապակցությունները փոխարինել թվային արժեքով և հակառակը (շինությունների գրություններ, ստեղծագործությունների գլուխներ):</li> <li>• Կատարել տեղանքի մաթեմատիկական չափումներ, ամփոփել, կազմել տեղեկատվություն պարունակող խոսք և ներկայացնել լսարանին:</li> <li>• Ուսումնասիրել պատմական և աշխարհագրական թեմաներով տեքստերը, կազմել աղյուսակներ թվային տեղեկությունները կանոնակարգելու և տեսանելի դարձնելու համար:</li> <li>• Քերականորեն վերլուծել չափածո ստեղծագործություններ, ցույց տալ դրանց և արձակ կամ առօրյա-խոսակցական խոսքի նմանությունները և տարբերությունները:</li> <li>• Գնահատել և կարծիք հայտնել դասընկերոջ կազմած տեքստի մասին և քերականորեն հիմնավորել սեփական տեսակետը:</li> <li>• Ելույթ ունենալ լսարանի առջև, հաղորդել հավաստի (նաև թվեր պարունակող) տեղեկություններ:</li> <li>• Տրված տեքստերում գտնել թվականի համաձայնության և անհամաձայնության դեպքերը:</li> <li>• Ստեղծել դերային խաղերի սցենարներ, կազմակերպել և մասնակցել դրանց:</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործառույթ</b> Թվականների տեսակների կառուցվածքը և նրանց գործառ ույթը խոսքում:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b> Կայունությունն ու փոփոխությունը թվականների կազմության մեջ:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գրականություն:</b> Չափածո ստեղծագործությունների ուսուցում (բանաստեղծական դիթամբ, չափը, վանկերի, տողերի, տների քանակը), մեկնաբանություններում թվականների տեսակների ճիշտ կիրառություն:</p> <p><b>Պատմություն, Հանրահաշիվ, Բնագիտություն:</b> Թվականների ճիշտ գրություն և արտասանություն:</p>	
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>	
<p>Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46</p>	

## ԴԵՐԱՆՈՒՆ

### Նպատակը

- Ձևավորել դերանունների դերն ընկալելու, տեսակների դերը կարևորելու, ուղղակի և անուղղակի խոսքում ճիշտ կիրառելու հմտություններ:

### Վերջնարդյունքներ

1. *Ձևափոխի և կիրառի* դերանվան տարբեր տեսակներն ըստ անհրաժեշտության:
2. Դերանունների հոմանիշ և հականիշ զույգերը *ճիշտ կիրառի* գրավոր և բանավոր խոսքում:
3. *Մեկնաբանի* խոսքում դերանվան կիրառման անհրաժեշտությունը և իմաստային արժեքը:
4. *Գնահատի* դերանունների դերը խոսքում՝ հիմնավորելով տրված տեքստում հանդիպած դերանուններով:
5. *Համեմատի* դերանունների խոսքիմասային պատկանելություն ցույց տվող տեսակները:
6. *Կառուցի* խոսք՝ դերանվան տարբեր տեսակների և հոդերի ճիշտ կիրառությամբ:
7. *Ներկայացնի* տարբեր դերախաղեր:
8. Հոդերը *փոխարինի* դերանուններով և հակառակը:
9. *Փոփոխի և ստեղծի* տեքստեր՝ կիրառելով դերանուններ:

### Բովանդակություն

1. Դերանուն
2. Դերանվան տեսակները (անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական/հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական)
3. Դերանունների հոլովումը
4. Դերանունների թվի քերականական կարգը
5. Հոդեր

### Առաջարկվող գործունեության ձևեր

### Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ

- Տրված տեքստի տարբեր խոսքի մասերը փոխարինել համապատասխան դերանուններով:
- Դերանունները կիրառել տարբեր ոճի տեքստերում և բացատրել տվյալ ոճով պայմանավորված կիրառության հաճախությունը:
- Քերականորեն վերլուծել գրական և հասարակագիտական տեքստեր, ցույց տալ դերանունների կիրառությունը խոսքի մեջ:
- Տարբեր ոճերի տեքստերում լրացնել, ավարտել, փոխարինել, կիրառել համապատասխան դերանուններ:
- Տրված տեքստում հոդերի փոխարեն կիրառել դերանուններ և հակառակը:
- Տեքստում ցույց տալ եզակի և հոգնակի թվով դերանունների կիրառությունը, տեքստը վերաշարադրել՝ փոփոխելով դերանունների թիվը, դեմքը, հոլովը:
- Ուղղակի խոսքը ներկայացնել պատմողաբար:
- Կազմել մտացածին երկխոսություններ տարբեր թեմաներով, տարբեր տարիքի մարդկանց միջև:
- Լսել, ձայնագրել շրջապատողների, հեռուստահաղորդումների ժամանակ հնչող խոսքը, ցույց

#### Օրինաչափություն

Դերանունների դասակարգման օրինաչափությունը:

#### Կայունություն և փոփոխություն

Դրանց պարբերականությունը դերանունների տեսակների և հոլովառության ուսուցման մեջ:

#### Անհատ և հարաբերություններ

Դերանունների միջոցով անհատ ների և հասարակությունների արժեհամակարգերի ներկայացում,

<p>տալ դերանունների կիրառության հաճախությունը, լեզվական սայթաքումները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գրել, խմբագրել հաղորդագրություններ, նամակ:</li> <li>• Ժամանակակից թեմաներով մշակել և անցկացնել հարցազրույցներ դպրոցում և դպրոցից դուրս, անցորդների, հասակակիցների, նշանավոր մարդկանց հետ, արդյունքները ամփոփել և ներկայացնել լսարանին:</li> <li>• Գրել դերախաղերի սցենարներ, բեմադրել և ներկայացնել դասարանում:</li> <li>• Փոխադրել տեքստեր՝ երկխոսությունները վերարտադրելով պատմողաբար:</li> <li>• Ելույթ ունենալ լսարանի առջև առաջադրված թեմայով:</li> </ul>	<p>վերաբերմունքի դրսևորում:</p>
--	---------------------------------

<p><b>Միջառարկայական կապեր</b></p>
<p><b>Գրականություն:</b> Գրական ստեղծագործություններում դերանունների կիրառության օրինաչափությունների բացահայտում, դրանց համաձայնությունը բայերի հետ, օրինաչափությունների հաստատման համար օրինակների դուրսբերում գրականությունից:</p>
<p><b>Հասարակագիտական առարկաներ:</b> Դերանունների ճիշտ կիրառություն, տեսակետների հավաքագրում՝ կիրառելով համապատասխան դերանուններ (ճիշտ թվով), հասարակական թեմաներով հարցազրույցների վարում՝ կիրառելով հարցալից խոսքի կանոններ:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>
<p>Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46</p>

<p><b>ԹԵՄԱ 6</b></p>
<p><b>ԲԱՅ</b></p>
<p><b>Հիմնական նպատակը</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել տարբեր բնույթի նախադասություններում բայաձևերը ճիշտ կիրառելու, բայն իր բոլոր ձևերով խոսքի մեջ կիրառելու հմտություններ, ժամանակը ճիշտ պատկերացնելու և համապատասխան բայաձևերով արտահայտելու, ճիշտ և սխալ ձևերի տարբերակման կարողություն:</li> <li>• Զարգացնել հաղորդակցական հմտությունները:</li> </ul>
<p><b>Վերջնարդյունքներ</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Տարբեր խոսքի մասերից կազմի բայեր, փարբերակի դիմավոր և անդեմ ձևերը, որոշի լծորդությունը և կիրառի խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստներով:</li> <li>2. Տարբերակի բայաձանցները, պարզ և ածանցավոր բայերը, ճիշտ կիրառի խոսքում:</li> <li>3. Համեմատի տարբեր կազմության բայերն իրար հետ՝ նշելով ընդհանրություններն ու տարբերությունները:</li> </ol>

4. Անդեմ և դիմավոր բայերը *ճիշտ կիրառի* խոսքում:
5. Տարբեր ոճի տեքստերում *գտնի* անդեմ և դիմավոր բայերը:
6. *խոնարհի* դիմավոր բայերը, *որոշի* դեմքը, թիվը, ժամանակը և *կիրառի* խոսքում:
7. Տեքստում *գտնի* տարբեր եղանակաձևերը, դրանք *ճիշտ կիրառի* խոսքում:
8. Անկանոն և պակասավոր բայերը *ճիշտ կիրառի* խոսքում:

**Բովանդակություն**

1. Բայը՝ որպես խոսքի մաս, լծորդությունը
2. Բայի կազմությունը – պարզ և ածանցավոր բայեր
3. Ածանցավոր բայերի տեսակները (սուկաձանցավոր, պատճառական, բազմապատկական, կրավորական)
4. Բայի սեռը (ներգործական, կրավորական, չեզոք)
5. Բայի անդեմ ձևեր՝ անկախ դերբայներ և ձևաբայեր (կախյալ դերբայներ), կազմությունը
6. Բայի դիմավոր ձևեր: Դեմք, թիվ, ժամանակ, եղանակ: Բայի եղանակները: Կազմությունն ու խոնարհումը (դրական և ժխտական)
7. Անկանոն և պակասավոր բայեր

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
---------------------------------------	--

<ul style="list-style-type: none"> <li>• Տեքստում տեղադրել համապատասխան բայերը:</li> <li>• Տեքստում գտնել պարզ և ածանցավոր բայերը, բացատրել դրանց լծորդությունը:</li> <li>• Տրված բայերից կազմել բայական տարբեր ածանցներով բայեր, ցույց տալ լծորդությունը:</li> <li>• Չափաձո ստեղծագործություններում գտնել անկանոն և պակասավոր բայերը:</li> <li>• Գեղարվեստական և գիտական տեքստերում գտնել բայերը և բացատրել դրանց կիրառությունը:</li> <li>• Գտնել և ուղղել տեքստում սպրդած սխալ տարբերակները:</li> <li>• Հորինել դերախաղեր՝ ճիշտ կիրառելով բայերը, դիրքորոշում դրսևորել:</li> <li>• Ներկա, անցյալ և ապառնի ժամանակների համապատասխան բայաձևեր կիրառել խոսքում:</li> <li>• Կազմել տարբեր ոճերի գրավոր խոսք, ցույց տալ, բացատրել բայերի կիրառությունը:</li> <li>• Մշակել, վարել հարցազրույցներ տարբեր մարդկանց հետ՝ կիրառելով տարբեր ժամանակաձևերի բայեր:</li> <li>• Կազմել ընդունելի և մերժելի գործողությունների ցանկ՝ կիրառելով տարբեր բայաձևեր, ցույց տալ խոնարհումը, կիրառել խոսքում:</li> <li>• Ստեղծել բայի քերականական հատկանիշներն ամբողջացնող, ճիշտ և սխալ կիրառությունները լուսաբանող սահիկաշար, պաստառ, տեսաֆիլմ, դրանք ցուցադրել լսարանին:</li> <li>• Ստեղծել պաստառ, զովագր, հայտարարություն՝ դրանց</li> </ul>	<p><b>Օրինաչափություն</b> Օրինաչափություն ամենինչում, ամենուր, դասակարգում, բայի կազմության օրինաչափություններ:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b> Կայունությունը՝ համեմատաբար անփոփոխ լեզվական համակարգ, փոփոխությունները բայի քերականական կարգերում:</p> <p><b>Ժամանակ և տարածություն</b> Ժամանակի դրսևորումները բայի խոնարհման հարացույցում, գործողության և վիճակի հարաբերությունը տարածության մեջ:</p>
---	--

<p>տեքստերում կիրառելով տարբեր բայաձևեր:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ստեղծել տեսադաս:</li> <li>• Փոխադրել տեքստը՝ փոխելով ժամանակաձևերը:</li> </ul>	
--	--

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գրական ստեղծագործություններում բայերի գործածության ձևերի անհրաժեշտության ընկալում, լեզվական օրինաչափությունների հիմնավորում գրական երկերով, պատումների ստեղծում:

**Բնագիտական և հասարակագիտական առարկաներ:** Բայաձևերի ճիշտ կիրառություն, տարբեր եղանակների բայերի տեղին գործածում այդ ոլորտներին վերաբերող տեքստերի քննության ժամանակ, հետևողականություն անկանոն բայերի ճիշտ կազմության հարցում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

- Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46

**Ց-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Տարեկան 68 դասաժամ, շաբաթական՝ 2

**ԹԵՄԱ 1**

**ՄԱԿԲԱՅ**

**Հիմնական նպատակը**

Ձևավորել մակբայի տեսակները տարբերակելու, նրանց դերը արժևորելու, ճիշտ խոսք կառուցելու, ածականից տարբերելու կարողություններ:

**Վերջնարդյունքներ**

1. *Ճանաչի և փարբերակի* մակբայի տարբեր տեսակներն ըստ անհրաժեշտության:
2. Մակբայների հոմանիշ և հականիշ զույգերը *ճիշտ կիրառի* գրավոր և բանավոր խոսքում:
3. *Գնահատի* մակբայների դերը խոսքում՝ հիմնավելով տրված տեքստի վրա:
4. *Համեմատի* մակբայներն ու ածականները, *դուրս բերի* ընդհանրություններն ու տարբերությունները:



5. Կառուցի խոսք՝ մակբայների տարբեր տեսակների կիրառությամբ:
6. Փոփոխի և ստեղծի տեքստեր՝ կիրառելով մակբայներ:
7. Ներկայացնի տարբեր դերախաղեր:
8. Գոյականի հոլովածներով պարագաներն ու բառակապակցությունները փոխարինի մակբայներով և հակառակը:
9. Ստեղծի խոսք՝ կիրառելով մակբայներ:

**Բովանդակություն**

1. Մակբայ: Մակբայի տեսակները (ժամանակի, ձևի, տեղի, չափ ու քանակի, ընդհանրական)
2. Մակբայների կազմությունն ու ուղղագրությունը
3. Խոսքիմասային փոխանցումներ

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող և ընդհանրական հասկացություններ**

- Կատարել խոսքային փոխակերպումներ (բառակապակցությունները՝ մակբայներով և հակառակը:
- Տեքստը հագեցնել գործողության հատկանիշ ցույց տվող բառերով:
- Մակբայները կիրառել տարբեր ոճի տեքստերում և բացատրել հաճախությունը՝ կախված ոճից:
- Քերականորեն վերլուծել գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերը, ցույց տալ մակբայների գործածության հաճախությունը տարբեր տեքստերում:
- Կազմել, լրացնել, ավարտել տարբեր ոճերի տեքստեր:
- Ստեղծել պաստառ՝ ցույց տալով մակբայների ուղղագրության ճիշտ և սխալ դեպքերը, ներկայացնել լսարանին:
- Մշակել և անցկացնել երկխոսություններ տարբեր մասնագիտությունների, տարբեր տարիքի անձանց հետ, ձայնագրել նրանց խոսքը, նրանց խոսքում ցույց տալ մակբայների կիրառության հաճախությունը, համապատասխանությունը ձևաբանական օրինաչափություններին, հանդես գալ ամփոփիչ խոսքով:
- Հորինել ժամանակակից թեմաներով դերախաղերի բեմագրեր (սցենարներ), դրանք բեմադրել դասընկերների հետ:
- Գրել, խմբագրել, ձայնագրել հաղորդագրություններ, նամակ:
- Փոխադրել տեքստը՝ կիրառելով և ընդգծելով մակբայները:

**Կայունություն և փոփոխություն**  
 Մակբայների՝ գործողության հատկանիշ դրսևորելու կայուն հատկանիշը և ներքին փոփոխություններ կրելու առանձնահատկությունը:

**Ժամանակ և տարածություն**  
 Մակբայների՝ ժամանակ, տեղ և գործողության այլ հատկանիշներ դրսևորելու առանձնահատկությունը:

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գրական ստեղծագործություններում մակբայների հայտնաբերում, նրանց իմաստաբանական դերի գնահատում, լեզվական գիտելիքների ընկալման համար գրականությունից օրինակների դուրսբերում:

**Հասարակագիտական առարկաներ:** Մտքերը ձևակերպելիս մակբայների ճիշտ կիրառում, ոլորտին վերաբերող քննարկումներում տեսակների տեղին գործածում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46

**ԹԵՄԱ 2**

**ԿԱՊ**

**Հիմնական նպատակը**

Ձևավորել կապերի տեսակները տարբերակելու, հոլովառության, անձնանիշ և իրանիշ գոյականների հետ գործածության հմտություններ, նպաստել ճիշտ խոսքի կազմմանը:

**Վերջնարդյունքներ**

1. *Տարբերակի* կապերն ու կապական բառերը, նրանց հոլովառական առանձնահատկությունները:
2. *Դասակարգի* հոմանիշ և հականիշ, նույն հոլովաձև պահանջող կապերը:
3. *Կառուցի* խոսք կապական կառույցների կիրառությամբ:
4. *Փոփոխի և ստեղծի* տեքստեր՝ կիրառելով կապեր և կապական բառեր:
5. *Աշխատի* գեղարվեստական և գիտական տեքստերի հետ, *մեկնաբանի* կապերի կիրառությունը:
6. *Ստեղծի* գովազդ՝ կիրառելով կապական կառույցներ:

**Բովանդակություն**

1. Կապ, իմաստային տեսակները: Կապերի տեսակներն ըստ կապի խնդրի նկատմամբ ունեցած դիրքի
2. Կապերի հոլովառությունը

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական նասկացություններ**

- Տրված տեքստում գտնել կապերը, կապվող բառերը կիրառել ճիշտ հոլովաձևով:
- Քերականորեն վերլուծել գրական և ոչ գրական տեքստերը, ցույց տալ կապերի կիրառության հաճախությունը:
- Տրված տեքստերում ցույց տալ (վերլուծել, լրացնել, փոփոխել) կապերի կիրառությունը անձնանիշ և իրանիշ գոյականների, առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի դերանունների հետ:
- Ստեղծել պաստառ, սահիկաշար կամ տեսանյութ կապերի կիրառության ճիշտ և սխալ ձևերի համադրությամբ, ներկայացնել լսարանին:
- Տարբեր տեքստերի վերլուծությամբ ցույց տալ կապերի համանունների, հոմանիշների և հականիշների առանձնահատկությունները:
- Հորինել քառատողեր՝ կիրառելով կապային կառույցներ:
- Գրել, մշակել, խմբագրել հաղորդագրություններ, նամակ, տեսակապի տեքստեր:
- Մշակել, անցկացնել և ձայնագրել հարցազրույցներ տարբեր տարիքի և մասնագիտության անձանց շրջանում, ցույց տալ կապերի կիրառության

**Կայունություն և փոփոխություն**  
 Կապերի՝ դիրքային կայունություն ունենալու առանձնահատկությունը, բայց և փոփոխությունների ենթակա լինելը:

**Պատճառ և հետևանք**  
 Պատճառահետևանքային կապերի քննություն կապի և կապվող բառի հարաբերություններում:

<p>հաճախությունը նրանց խոսքում, ամփոփիչ խոսքով հանդես գալ լսարանի առջև:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գրել կարծիք, գնահատել դիտած ներկայացումը, կինոնկարը:</li> <li>• Մշակել տարբեր դերախաղերի բեմագրեր (սցենարներ), դրանք բեմադրել դասընկերների հետ:</li> <li>• Ստեղծել գովազդ՝ կիրառելով միայն կապական կառույցներ:</li> <li>• Փոխադրել տեքստը ստեղծագործաբար (հորինել սկիզբ, շարունակություն):</li> </ul>	
--	--

<b>Միջառարկայական կապեր</b>	
<b>Գրականություն:</b> Գրական ստեղծագործություններում կապերի դերի վերհանում, գրական վերլուծություններում դրանց ճիշտ կիրառում:	
<b>Հասարակագիտական առարկաներ:</b> Խոսք կազմելիս անձնանիշ և իրանիշ գոյականների հետ կապերի ճիշտ կիրառություն:	
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>	
Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46	

<b>ԹԵՄԱ 3</b>	
<b>ՇԱՂԿԱՊ</b>	
<b>Հիմնական նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել շաղկապի տեսակները տարբերակելու, ճիշտ կետադրելու, բառեր և նախադասություններ կապելու դերը հասկանալու և խոսքում ճիշտ կիրառելու հմտություններ:</li> </ul>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Դասակարգի շաղկապներն ըստ տեսակների և կիրառի խոսքում:</li> <li>2. Փոխարինի շաղկապները նույն կամ մոտ իմաստ արտահայտող շաղկապներով:</li> <li>3. Խմբավորի նույն տեսակին պատկանող շաղկապները:</li> <li>4. Տարբերակի համադասական և ստորադասական շաղկապները:</li> <li>5. Շաղկապները տեղին կիրառի խոսքում:</li> <li>6. Տարբերակի շաղկապները և նրանց առնչակից խոսքի մասերը:</li> <li>7. Կազմի խոսք՝ կիրառելով շաղկապներ:</li> <li>8. Համեմատի տարբեր ոճերի տեքստերը՝ բացահայտելով շաղկապների կիրառության առանձնահատկությունները:</li> <li>9. Կեղտադրի նախադասությունները:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Շաղկապ: Տեսակները</li> <li>2. Կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>

<ul style="list-style-type: none"> <li>● Լրացնել բաց թողած շաղկապը և նշել տեսակը:</li> <li>● Կապակցել գեղարվեստական և գիտական ոճի նախադասությունները համապատասխան շաղկապներով:</li> <li>● Գտնել և ցույց տալ շաղկապների տարբեր տեսակների դերը տվյալ տեքստում (կրկնադիր շաղկապների դերը նախադասությունների կապակցության մեջ):</li> <li>● Կազմել վիկտորինաներ:</li> <li>● Ավարտել միտքը՝ շարունակելով համադասական և ստորադասական շաղկապների կիրառմամբ:</li> <li>● Կետադրել համը բնագրերը՝ տալով համապատասխան բացատրություններ:</li> <li>● Ձևաբանորեն վերլուծել տարբեր տեքստեր:</li> <li>● Մշակել, կազմել, ձայնագրել երկխոսություն, ցույց տալ շաղկապների կիրառության հաճախությունը:</li> <li>● Գտնել համապատասխան ասույթներ, առած-ասացվածքներ, ցույց տալ և բացատրել շաղկապների կիրառության դեպքերը, ոճական նշանակությունը:</li> <li>● Համեմատել արձակ և չափածո տեքստեր, դրանցում ցույց տալ շաղկապների կիրառության հաճախությունը, ոճական արժեքը:</li> <li>● Գործածել ոչ բառային հաղորդակցման միջոցներ:</li> <li>● Գրել շարադրություն կամ փոխադրել տեքստը:</li> <li>● Ստեղծել երկխոսություն:</li> </ul>	<p><b>Կայունություն և փոփոխություն</b> Կապերի՝ դիրքային կայունություն ունենալու առանձնահատկությունը, բայց և փոփոխությունների ենթակա լինելը:</p> <p><b>Պատճառ և հետևանք</b> Պատճառահետևանքային կապերի քննություն կապի և կապվող բառի հարաբերություններում:</p>
---	--

<p><b>Միջառարկայական կապեր</b></p>
<p><b>Պատմություն, աշխարհագրություն:</b> Գիտական տեքստերում շաղկապների ճիշտ գործածություն, պատճառահետևանքային կապերով հիմնավորում, լեզվական գիտելիքների յուրացումը հաստատելու համար այդ ոլորտին վերաբերող տեքստերից օրինակներ:</p>
<p><b>Գրականություն, արվեստ:</b> Շաղկապների ճանաչում և մեկնաբանություններում անսխալ գործածում, պատճառահետևանքային կապերը ներկայացնելիս համապատասխան շաղկապների կիրառում, նախադասությունների գծապատկերների ստեղծում</p>
<p><b>Հասարակագիտություն: Արվեստ:</b> Անհատի և նրա իրավունքների ու պարտականությունների, նախասիրությունների ճիշտ ներկայացում՝ շաղկապների ճիշտ կիրառությամբ:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>
<p>Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46</p>

<p><b>ԹԵՄԱ 4</b></p>
<p><b>ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԱՅԻՆ ԻՄԱՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ: ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ: ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ</b></p>
<p><b>Հիմնական նպատակը</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>● Ձևավորել դատողական և զգացական վերաբերմունք արտահայտելու հմտություններ վերաբերականների և ձայնարկությունների կիրառմամբ, զարգացնել հաղորդակցական հմտություններ:</li> </ul>
<p><b>Վերջնարդյունքներ</b></p>

1. *Տարբերակի* վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը:
2. Վերաբերականների և ձայնարկությունների հոմանիշ և հականիշ զույգերը *ճիշտ կիրառի* գրավոր և բանավոր խոսքում:
3. *Մեկնաբանի* ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքում նրանց կիրառման անհրաժեշտությունը և իմաստի փոփոխությունները:
4. *Գնահատի* վերաբերականների և ձայնարկությունների դերը խոսքում:
5. *Համեմատի* դատողական իմաստ արտահայտող բառերի տեսակները:
6. *Կառուցի* խոսք՝ վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի կիրառությամբ:
7. *Փոփոխի և սրեղծի* տեքստեր՝ կիրառելով վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը:
8. *Սրեղծի* խոսք՝ կիրառելով կոչական և բնաձայնական ձայնարկություններ:
9. *Ներկայացնի* տարբեր դերախաղեր:
10. *Աշխատի* գրական տեքստերի հետ:

**Բովանդակություն**

1. Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր՝ վերաբերական և ձայնարկություն
2. Վերաբերականների և ձայնարկությունների տեսակները, ուղղագրությունն ու կետադրությունը

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
---------------------------------------	--

<ul style="list-style-type: none"> <li>• Երկխոսությունը ներկայացնել պատմողաբար:</li> <li>• Տեքստը հազեցնել վերաբերականների և ձայնարկությունների հոմանիշներով և հականիշներով:</li> <li>• Ձևաբանորեն վերլուծել գեղարվեստական և գիտական տեքստեր:</li> <li>• Համապատասխան խոսքի մասերով հուզականորեն արձագանքել տեսածին կամ լսածին:</li> <li>• Վերաբերմունքային իմաստ արտահայտող բառերը կիրառել որպես նախադասություններ:</li> <li>• Նմանաձայնական ձայնարկություններով ներկայացնել իրերի, կենդանիների և թռչունների ձայները:</li> <li>• Մշակել և կազմել երկխոսություններ՝ ներկայացնելով դատողական և հուզական խառնվածք ունեցող անձանց:</li> <li>• Մշակել, գրել բեմագրեր (սցենարներ) և ներկայացնել դասարանում:</li> <li>• Կազմել հաղորդագրություններ, գրել նամակ:</li> <li>• Մշակել և կազմել հարցազրույցներ, անցկացնել տարբեր տարիքի անձանց հետ, նրանց խոսքում նշել վերաբերականների, ձայնարկությունների առկայությունը:</li> <li>• Հորինել տարբեր զգացողություններ ներկայացնող պատումներ:</li> <li>• Նախագծել, մշակել և ստեղծել տեսանյութեր, անիմացիաներ՝ կիրառելով վերաբերմունքային իմաստ արտահայտող բառեր:</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործ առույթ</b>          Լեզվական-քերականական, կայուն առանձնահատկությունների բացահայտում կիրառության մեջ:</p> <p><b>Անհատ և հարաբերություններ</b>          Տարբեր իրավիճակներ, մարդկային և հասարակական հարաբերություններ ներկայացնելիս յուրատեսակ վերաբերմունքի դրսևորում:</p>
--	---

<ul style="list-style-type: none"> <li>• Գրել տպավորություն թանգարան կամ ցուցահանդես այցելելուց հետո:</li> <li>• Դերախաղ պատկերասրահում, ներկայացնել արվեստի գործեր:</li> <li>• Արվեստի գործերը ներկայացնել մնջախաղով:</li> <li>• Գործածել ոչ բառային հաղորդակցման միջոցներ:</li> <li>• Գրել շարադրություն կամ փոխադրություն:</li> </ul>	
--	--

<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գրականություն:</b> Գրական ստեղծագործություններում կերպարների, հեղինակի դիրքորոշման ներկայացում՝ տեսակետը հիմնավորելով վերաբերմունքային իմաստ արտահայտող բառերի միջոցով:</p> <p><b>Հասարակագիտական առարկաներ:</b> Դիրքորոշման արտահայտում վերաբերականների կիրառմամբ, կարդացածի և լսածի մասին տեսակետի արտահայտում վերաբերականներով և ձայնարկություններով:</p> <p><b>Արվեստ:</b> Ուղեկցորդի դերի ստանձնում կտավի, քանդակի շուրջ:</p>	
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>	
<p>Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46</p>	

<b>ԹԵՄԱ 5</b>	
<b>ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ: ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ: ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ</b>	
<b>Հիմնական նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել             <ul style="list-style-type: none"> <li>ա) նախադասությունը բառակապակցությունից տարբերակելու,</li> <li>բ) ըստ անհրաժեշտության և հաղորդակցման նպատակի համառոտ և ընդարձակ նախադասություններ կազմելու</li> <li>գ) նրանց միջև տրամաբանական կապեր գտնելու և ստեղծելու կարողություններ:</li> </ul> </li> </ul>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կազմի</i> տարբեր տեսակի բառակապակցություններ, որոշի գերադաս անդամը:</li> <li>2. Բառակապակցությունները <i>վերածի</i> նախադասության և հակառակը:</li> <li>3. <i>Տարբերակի</i> բառակապակցություններն ու նախադասությունները:</li> <li>4. <i>Ճանաչի</i> դերբայական դարձվածը և <i>կերպարի</i>:</li> <li>5. <i>Համառոտի</i> և <i>ընդարձակի</i> նախադասությունները:</li> <li>6. <i>Դասակարգի</i> նախադասություններն ըստ հաղորդակցման նպատակի և ըստ կազմության:</li> <li>7. <i>Շարունակի, ավարտի, ամբողջացնի</i> նախադասությունները:</li> <li>8. <i>Կազմի</i> խոսք՝ կիրառելով պահանջվող տեսակի նախադասությունները:</li> <li>9. Նախադասության մեջ <i>տանձնացնի</i> բառակապակցությունները:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Շարահյուսություն: Բառակապակցություն: Դերբայական դարձված</li> <li>2. Նախադասություն: Տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի</li> <li>3. Նախադասության տեսակներն ըստ կազմության</li> </ol>	

<p align="center"><b>Առաջարկվող գործունեության ձևեր</b></p>	<p align="center"><b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>● Բառակապակցությունները վերածել նախադասության և հակառակը:</li> <li>● Տեքստում գտնել դերբայական դարձվածները, որոշել գերադաս անդամը:</li> <li>● Ավարտել միտքը՝ շարունակելով բառակապակցությամբ, ապա նախադասությամբ:</li> <li>● Ըստ իրադրության՝ համառոտ նախադասությունը ընդարձակել և հակառակը:</li> <li>● Վերլուծել տարբեր տեքստեր՝ առանձնացնելով բառակապակցությունները:</li> <li>● Փոխադրել տեքստը պահանջվող տեսակի նախադասություններով, հորինել սկիզբ կամ ավարտ:</li> <li>● Արտահայտել վերաբերմունք որևէ իրողության կամ դեպքի հանդեպ՝ կիրառելով տարբեր բնույթի նախադասություններ:</li> <li>● Գտնել տարբեր ասույթներ, առած-ասացվածքներ, ցույց տալ դրանց դերը և ոճական արժեքը խոսքի մեջ:</li> <li>● Համեմատել արձակ և չափածո տեքստեր, ցույց տալ դրանց նմանությունները և տարբերությունները:</li> <li>● Կազմել երկխոսություն՝ առանձնացնելով պարզ կամ բարդ նախադասությունները:</li> <li>● Ուշադիր լսել, համաձայնության դեպքում ձայնագրել խոսքը, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների կիրառության հաճախականությունը:</li> <li>● Ուսումնասիրության արդյունքները ամփոփիչ խոսքով և սահիկաշարով ներկայացնել լսարանին:</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործառույթ</b>  Բառակապակցություններն ու նախադասություններն իբրև կառուցվածք և դրա դրսևո թույլը գրավոր կամ բանավոր խոսքում:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b>  Կայուն բառակապակցություններ և նրանց հնարավոր փոփոխությունները:</p> <p><b>Պատճառ և հետևանք</b>  Նախադասությունների միջև եղած պատճառահետևանքային</p>

	իմաստակի ր կապերը:
<b>Միջառարկայական կապեր</b>	
<b>Պատմություն, աշխարհագրություն:</b> Գիտական տեքստերի վերարտադրում պարզ և բարդ նախադասություններով:	
<b>Գրականություն, արվեստ:</b> Խոսքի վերարտադրում կամ վերլուծում համառոտ կամ ընդարձակ նախադասություններով:	
<b>Հասարակագիտություն: Արվեստ:</b> Անհատի և նրա իրավունքների ու պարտականությունների, նախասիրությունների ներկայացում համապատասխան ընթացադրումներով և նախադասություններով:	
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>	
Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46	

<b>ԹԵՄԱ 6</b>	
<b>ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ</b>	
<b>Հիմնական նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել <ul style="list-style-type: none"> <li>ա) նախադասության անդամները տարբերակելու</li> <li>բ) ըստ անհրաժեշտության և հաղորդակցման նպատակի համառոտ և ընդարձակ նախադասություններ կազմելու</li> <li>գ) նրանց միջև տրամաբանական և պատճառահետևանքային կապեր գտնելու և ստեղծելու կարողություններ:</li> </ul> </li> </ul>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Գտնի</i> նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, որոշի տեսակը:</li> <li>2. Նախադասությունն <i>ընդարձակի</i>՝ ներմուծելով երկրորդական անդամներ:</li> <li>3. <i>Բացադրի</i> ենթակայի և ստորոգյալի արտահայտությունը և <i>կիրառի</i> գրավոր և բանավոր խոսքում:</li> <li>4. <i>Կերտարի</i> համր նախադասություններ, տեքստ:</li> <li>5. Լրացումներն <i>արտահայտի</i> տարբեր խոսքի մասերով:</li> <li>6. Լրացումներն <i>արտահայտի</i> հոլովաձևով և կապական կառույցներով:</li> <li>7. <i>Փոփոխի և սրեղծի</i> տեքստեր՝ կիրառելով լրացումներ:</li> <li>8. <i>Վերականգնի</i> զեղչված անդամները:</li> <li>9. Ճիշտ <i>կապակցի</i> նախադասության անդամները:</li> <li>10. <i>Մշակի</i> գեղարվեստական և գիտական տեքստեր (<i>գտնի, դասակարգի, փոփոխի, լրացնի, կանխադեսի, վերլուծի, խմբագրի</i>):</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Նախադասության գլխավոր անդամներ: Ենթակա և ստորոգյալ: Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: Ենթակայի արտահայտությունը: Ստորոգյալի տեսակները, նրա արտահայտությունը</li> <li>2. Գոյականական անդամի լրացումներ (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ)</li> <li>3. Բայական անդամի լրացումներ (խնդիրներ և պարագաներ): Խնդրառություն և</li> </ol>	



շարահասություն	
<p align="center"><b>Առաջարկվող գործունեության ձևեր</b></p>	<p align="center"><b>Խաչվող կամ ընդհանրապես հասկացություններ</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Տրված բառերը առանձին-առանձին կիրառել նախադասությունների մեջ և՛ որպես ենթակա, և՛ որպես ստորոգյալ, և՛ որպես լրացում:</li> <li>• Տեքստը հագեցնել լրացումներով, ցույց տալ դրանց դերը, ոճական նշանակությունը:</li> <li>• Քերականորեն վերլուծել գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերը, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների համամասնությունը:</li> <li>• Գրել կարծիք կարդացած գրքի մասին, դասակարգել պարզ և բարդ նախադասությունները:</li> <li>• Դեպքի, իրողության մասին գրել հուզական արձագանք, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների կիրառության հաճախությունը:</li> <li>• Կազմել երկխոսություններ, հարցազրույցներ տարբեր թեմաներով, տարբեր մասնագիտության անձանց հետ: Ձայնագրել հարցազրույցները, վերլուծել հնչած խոսքը, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների առկայությունը և դերը խոսքում:</li> <li>• Գրել ելույթ որևէ տոնական օրվա, հարազատի, ընկերոջ ծննդյան առիթով, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների կիրառության հաճախությունը, ոճական արժեքը:</li> <li>• Փոխադրել տեքստը կամ գրել շարահյուսություն (տրված բառերով, տրված վերնագրով, սովորողի հայեցողությամբ):</li> </ul>	<p align="center"><b>Կառուցվածք և գործառույթ</b></p> <p>Նախադասությունը որպես կառուցվածք:</p> <p>Կառուցվածքի գործառական դրսևորումները:</p> <p align="center"><b>Պատճառ և հետևանք</b></p> <p>Նախադասությունների միջև եղած պատճ</p>

	առահ ետ ևանք ային իմաս տակի ր կապե րը:
--	--

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գրական ստեղծագործությունների վերլուծում, նախադասությունների կապակցման եղանակների առանձնացում, քննություն, վերլուծություն, մեկնաբանում գրագետ կազմված նախադասություններով:  
**Հասարակագիտական առարկաներ:** Դիրքորոշման արտահայտում գրագետ նախադասությունների կիրառմամբ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46

**9-րդ ԴԱՍԱՐԱՆ**  
(շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 68 )

**ԹԵՄԱ 1**

**ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ**

**Հիմնական նպատակը**

Ձևավորել տարբեր իրադրություններում համադասական և ստորադասական նախադասությունների կիրառման, սահմանված ժամանակի մեջ ավարտուն միտք արտահայտելու կարողություններ:

**Վերջնարդյունքներ**

1. Կազմի բարդ նախադասություններ, որոշի տեսակը:
2. Կետադրի բարդ նախադասությունները:
3. Տարբերակի համադասական և ստորադասական նախադասությունները:
4. Համառոտի և ընդարձակի նախադասությունները:
5. Շարունակի, ավարտի, լրացնի նախադասությունները:
6. Կազմի խոսք՝ կիրառելով համադասական և ստորադասական նախադասություններ:
7. Տեքստերում առանձնացնի համադասական և ստորադասական շաղկապները:
8. Կարծիք հայտնի կամ ակնարկ գրի որևէ մեկի կամ իրադարձության մասին:
9. Ելույթ ունենա լսարանի առաջ սահմանված ժամանակում:

**Բովանդակություն**

1. Բարդ նախադասություն: Բարդ համադասական նախադասություն: Կապակցման միջոցներն ու կետադրությունը: Ձեռնումը
2. Բարդ ստորադասական նախադասություն: Գերադաս և ստորադաս նախադասություններ
3. Կապակցումն ու կետադրությունը: Ձեռնումը
4. Ստորադաս նախադասության շարադասությունն ու կետադրությունը

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<ul style="list-style-type: none"> <li>● Տրված պարզ նախադասությունը դարձնել բարդ և հակառակը:</li> <li>● Փոփոխել համադասական նախադասության կապակցման միջոցները:</li> <li>● Կազմել խոսք համադասական կամ ստորադասական նախադասություններով:</li> <li>● Փոփոխել բարդ ստորադասական նախադասության կապակցման միջոցները և շարադասությունը:</li> <li>● Ավարտել միտքը՝ շարունակելով նախադասությամբ:</li> <li>● Քերականորեն վերլուծել տարբեր տեքստեր՝ առանձնացնելով նախադասություններն ըստ տեսակի:</li> <li>● Կազմել տարբեր ոլորտներին առնչվող խոսք՝ կիրառելով բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ:</li> <li>● Կազմել երկխոսություն, մենախոսություն, ցույց տալ բարդ նախադասությունները:</li> <li>● Փոխադրել, վերաշարադրել տեքստը նախադասությունների պահանջվող տեսակներով, փոփոխելով ժանրերը:</li> <li>● Արտահայտել վերաբերմունք՝ կիրառելով տարբեր բնույթի նախադասություններ:</li> <li>● Տարբեր աղբյուրներից գտնել ասույթներ, առած-ասացվածքներ, ցույց տալ դրանցում կիրառված նախադասությունների տեսակները:</li> <li>● Համեմատել արձակ և չափածո տեքստերը, ցույց տալ նախադասությունների տեսակները, դրանց ոճական արժեքը:</li> <li>● Գրել կարծիք, ելույթ, հորինել տարբեր թեմաներով պատումներ:</li> <li>● Հարցազրույց վարել տարբեր բնագավառների անձանց հետ:</li> <li>● Բանավեճ վարել առաջադրված կամ ընտրած թեմայով:</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործառույթ</b> Նախադասությունը՝ որպես կառուցվածք: Կառուցվածքի գործառական դրսևորումները:</p> <p><b>Պատճառ և հետևանք</b> Նախադասությունների միջև եղած պատճառահետևանքային իմաստակիր կապերը:</p>
<p><b>Միջառարկայական կապեր</b></p>	
<p><b>Պատմություն, աշխարհագրություն:</b> Գիտական տեքստերի վերարտադրում բարդ նախադասություններով, գիտական ոճի տեքստերի կազմում և ներկայացում:</p> <p><b>Գրականություն, արվեստ:</b> Բարդ նախադասություններով մտքի վերարտադրում կամ վերլուծում, գծապատկերների ստեղծում, գրական ստեղծագործություններում դրանց քննություն:</p> <p><b>Հասարակագիտություն: Արվեստ:</b> Անհատի և նրա իրավունքների ու պարտականությունների, նախասիրությունների ներկայացում համապատասխան բնութագրումներով և նախադասություններով:</p>	
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>	
<p>Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46</p>	

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԾՐԱԳԻՐ**  
**10-12-րդ դասարաններ**  
**ԾՐԱԳԻՐ**  
**ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ**

Առաջարկվող ժամաքանակ  
 10-րդ դասարան - շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68  
 11-րդ դասարան- շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68  
 12-րդ դասարան - շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 34

**10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

(շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68)

<b>ԹԵՄԱ 1</b>	
<b>ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ</b>	
<b>Հիմնական նպատակները</b>	
<p><i>Ձևավորել</i> գիտելիք լեզուների ցեղակցության, հայերենի զարգացման փուլերի մասին:  <i>Նպաստել</i> հայոց լեզվի զարգացման գործում գրաբարի դերի գիտակցմանը և արժևորմանը:</p>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li><i>Պատկերացում կազմի</i> լեզուների ցեղակցության մասին, <i>հիմնավորի</i> հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում:</li> <li><i>Իմանա և համեմատի</i> հայոց լեզվի զարգացման երեք փուլերը (հին հայերեն, միջին հայերեն, նոր հայերեն (աշխարհաբար)՝ նշելով որոշ առանձնահատկություններ:</li> <li><i>Պատկերացում կազմի</i> գրաբարի գրության և արտասանության մասին, <i>նշի գրաբարի</i> բառապաշարի որոշ առանձնահատկություններ:</li> <li><i>Կարդա և սովորի</i> գրաբարյան երկերի հայտնի հատվածներ:</li> <li><i>Կատարի</i> գրաբարյան հայտնի տեքստերից փոխադրումներ:</li> <li><i>Կատարի</i> միջինհայերենյան հայտնի տեքստերից փոխադրումներ:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Լեզուների ցեղակցությունը</li> <li>Հայերենի զարգացման փուլերը</li> <li>Մերոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը</li> <li>Գրաբարյան շրջան. գրաբարի առանձնահատկությունները</li> <li>Միջին հայերենի ընդհանուր նկարագիրը</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Իսաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>Գրատախտակին <i>գծել</i> հնդեվրոպական լեզվաընտանիքի տոհմաձառը, <i>ներկայացնել</i> գծագիրը:</li> <li>Համացանցից <i>գտնել</i> հետաքրքիր տեղեկություններ լեզուների</li> </ol>	<p><b>Օրինաչափություն</b>          Լեզվական օրինաչափությունների դրսևորումը</p>

<p>ցեղակցության մասին, <i>ներկայացնել</i> սահիկաշարով:</p> <p>3. Երեք սյունակից բաղկացած աղյուսակով <i>ներկայացնել</i> հայերենի զարգացման երեք փուլերի առանձնահատկությունները:</p> <p>4. Համացանցից, պատմության և գրականության դասագրքերից <i>գտնել</i> տեղեկություններ Մեսրոպ Մաշտոցի և հայ գրերի գյուտի մասին, <i>ներկայացնել</i> լսարանին:</p> <p>5. <i>Կազմել</i> երկխոսություն կամ մենախոսություն գրերի գյուտի մասին՝ ներկայացնելով սեփական վերաբերմունքը:</p> <p>6. Գրաբարյան փոքրիկ տեքստերի միջոցով <i>ներկայացնել</i> գրաբարի գրության որոշ առանձնահատկություններ, <i>կազմել</i> ուղեցույց:</p> <p>7. Տրված բառերը <i>գրել</i> գրաբարյան ուղղագրությամբ և <i>կարդալ</i> ավանդական արտասանությամբ:</p> <p>8. Լսարանի առջև <i>արդասանել</i> կամ <i>կարդալ</i> գրաբարյան տեքստերից հատվածներ, ուսուցչի օգնությամբ <i>փոխադրել</i> աշխարհաբար:</p> <p>9. Ուսուցչի օգնությամբ <i>գրել</i> գրաբարից մեզ հասած և իմաստափոխված բառեր, <i>բացատրել</i> նախկին և ներկա իմաստները:</p> <p>10. <i>Նախապատրաստել</i> ելույթ պատմական որևէ իրադարձության մասին՝ խոսքում կիրառելով գրաբարյան հայտնի ասույթներ: <i>Հանդես գալ</i> լսարանի առջև:</p> <p>11. <i>Կարդալ</i> միջին հայերենով գրված գրական փոքրիկ ստեղծագործություններ, <i>փոխադրել</i> աշխարհաբար, <i>նշել</i> առանձնահատկությունները:</p>	<p>գրաբա րում:</p> <p><b>Ժամանակ և տարածույթ յուն</b></p> <p>Հայոց գրերը և հայերենը՝ ժամանակի և տարածության համատեքստում:</p>
---	---

<p><b>Միջառարկայական կապեր</b></p>
<p><b>Գրականություն:</b> Գրաբարյան հայտնի տեքստերի ուսումնասիրում, փոխադրում:</p> <p><b>Պատմություն:</b> 5-րդ դարի պատմության ուսումնասիրում, գրերի գյուտի կարևորության վերհանում, հասարակական-քաղաքական նշանակության ընդգծում:</p> <p><b>Արվեստ:</b> Արվեստի տարբեր գործերում անդրադարձը հայ գրերին և Մեսրոպ Մաշտոցին:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>
<p>Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42, Մ43</p>

<p><b>ԹԵՄԱ 2</b></p>
<p><b>ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b> <b>ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ</b></p>
<p><b>Հիմնական նպատակները</b></p>

*Ձարգացնել* ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ:  
*Նպաստել* գրավոր և բանավոր գրագետ խոսքի զարգացմանը:

### **Վերջնարդյունքներ**

1. *Գրի* գրագետ, առանց ուղղագրական սխալների:
2. *Խոսի* գրագետ՝ պահպանելով ուղղախոսության կանոնները:
3. Տեքստում *գտնի և ուղղի* ուղղագրական սխալները:
4. *Սրբագրի* տարաբնույթ տեքստեր:
5. *Կազմի* տեքստ ուղղագրական դժվարություն ունեցող բառերով:
6. *Հիմնավորի* գրագետ գրելու անհրաժեշտությունը խոսքում:

### **Բովանդակություն**

- Ձայնավորների արտասանությունը և ուղղագրությունը
- Երկհնչյունների և յ ձայնակապի արտասանությունը և ուղղագրությունը
- Եվ-ի արտասանությունը և ուղղագրությունը
- Բաղաձայնների արտասանությունը և ուղղագրությունը
- Կրկնակ բաղաձայնների արտասանությունը և ուղղագրությունը
- Բաղադրյալ բառերի ուղղագրությունը
- Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը
- Հնչյունափոխությունը՝ որպես ուղղագրության և ուղղախոսության գործոն

### **Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ  
ընդհանրական  
հասկացություններ**

1. *Լրացնել* բաց թողած ձայնավորները և երկհնչյունները տրված տեքստում, *բացատրել* տվյալ հնչյունային միջավայրում միևնույն ձայնավորի կամ երկհնչյունի արտասանության առանձնահատկությունները:
2. *Լրացնել* բաց թողած բաղաձայնները տրված տեքստում, ընդգծված բառերը *փոխարինել* հոմանիշներով, *գտնել* և *գրել* դրանց հականիշները:
3. *Հարստացնել* տեքստը ուղղագրական արժեք ներկայացնող բառերով: Ստուգաբանական և բառակազմական բառարաններով *բացատրել* դրանց կազմությունը, *ներկայացնել* լսարանին:
4. *Կազմել* և *ձևավորել* ուղղագրական քարտեր, *կազմակերպել* մրցույթներ և խաղեր:
5. Էլեկտրոնային միջոցներով *կազմել* ուղղագրական և ուղղախոսական առաջադրանքներ կրտսեր դասընկերների գործածության համար:
6. Տրված հատուկ անունների զույգերով *կազմել* նախադասություններ կամ զվարճալի տեքստեր (Ասիա-Ասյա, Վիկտորիա-Վիկտորյա և այլն):
7. *Գտնել* տեքստում առկա ուղղագրական սխալները, *ուղղել* և *բացատրել* համապատասխան ուղղագրական օրինաչափությունը:
8. *Կազմել* ուղղագրական արժեք ունեցող բառերով երկխոսություն, մենախոսություն:
9. *Կազմել* գովազդային տեքստ՝ օգտագործելով ուղղագրական արժեք ունեցող բառեր: Տեքստի հիման վրա *նկարահանել* գովազդային տեսահոլովակ:
10. Փակագծերը բացելով՝ բառերի բաղադրիչները *գրել* միասին, անջատ կամ գծիկով:
11. Տրված բառաշարքերում *նշել* այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով:
12. Տրված բառաշարքերում *նշել* այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:
13. Բաղադրյալ հատուկ անուններով *շարադրել* պատմական ակնարկ, դրա հիման վրա *կազմել* երկխոսություն և *ներկայացնել* լսարանին:
14. *Բառաբարդել* և *բառաձանցել* տրված արմատները, *ցույց տալ* կատարված հնչյունափոխությունը:

**Օրինաչափություն**  
 Օրինաչափությունների դրսևորումը բառերի գրության և արտասանության ժամանակ:

**Կառուցվածք և գործառույթ**  
 Բառերի կազմության ազդեցությունը դրանց ուղղագրության վրա:

**Միջառարկայական կապեր**

<p><b>Գրականություն:</b> Գեղարվեստական ստեղծագործություններում ուղղագրական և ուղղախոսական դժվարություն ունեցող բառերի կիրառում:</p> <p><b>Բնագիտամաթեմատիկական և հասարակագիտական առարկաներ:</b> Մասնագիտական տեքստերում ուղղագրական և ուղղախոսական դժվարություն ունեցող բառերի կիրառում, աշխարհագրությանը և պատմությանը վերաբերող օտար անունների և անվանումների տառադարձում:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p> <p>Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42, Մ43</p>

<b>Թեմա 3</b>
<b>ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b>
<b>1. ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b>
<b>Հիմնական նպատակները</b>
<p><i>Ձարգացնել</i> գիտելիք մենիմաստ և բազմիմաստ բառերի մասին, դրանք խոսքում կիրառելու հմտություններ:</p> <p><i>Նպաստել</i> բառապաշարի հարստացման գործում բառերի ձևիմաստային խմբերի կարևորության գիտակցմանը:</p>
<b>Վերջնարդյունքներ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Ճանաչի և կիրառի</i> մենիմաստ և բազմիմաստ, ուղիղ և փոխաբերական իմաստներով բառերը խոսքում:</li> <li>2. <i>Տարբերակի</i> բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի հարաբերության:</li> <li>3. <i>Առանձնացնի</i> բառերի տեսակներն ըստ իմաստի հարաբերության (հոմանիշներ, հականիշներ, հարանուններ):</li> <li>4. <i>Առանձնացնի</i> բառերի տեսակներն ըստ ձևի հարաբերության (համանուններ):</li> <li>5. <i>Ճիշտ կիրառի</i> հարանուն բառերը համապատասխան տեքստում:</li> <li>6. <i>Կիրառի</i> համանունները խոսքային համապատասխան միջավայրում:</li> <li>7. <i>Կազմի</i> կապակցված խոսք տրված բառերի հոմանիշներով և հականիշներով:</li> <li>8. <i>Մեկնաբանի</i> ճիշտ բառընտրության կարևորությունը խոսք կառուցելիս:</li> </ol>
<b>Բովանդակություն</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Բառերի տեսակներն ըստ իմաստի. մենիմաստ և բազմիմաստ բառեր</li> <li>• Բառերի ուղիղ և փոխաբերական իմաստներ</li> <li>• Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի հարաբերության. հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ</li> </ul>



Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. Տեքստում <i>գտնել</i> մենիմաստ և բազմիմաստ բառերը, բառարանների օգնությամբ <i>բացատրել</i>:</li> <li>2. Բառի տարբեր իմաստներով <i>կազմել</i> շուտասելուկներ, զվարճալի տեքստեր: Դրանց հիման վրա <i>ստեղծել</i> հերոսների ծաղրանկարներ:</li> <li>3. Տեքստում <i>գտնել</i> ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածված բառերը, <i>բացատրել</i>:</li> <li>4. Միևնույն բառը <i>կիրառել</i> ուղիղ և փոխաբերական իմաստներով:</li> <li>5. Օգտվելով հոմանիշների բառարանից՝ տեքստի նշված բառերը <i>փոխարինել</i> հոմանիշներով:</li> <li>6. <i>Ստեղծել</i> տրված բառերի հոմանիշների և հականիշների բառացանկեր:</li> <li>7. Օգտվելով <i>անցանց</i> բառարաններից՝ <i>ստեղծել</i> իմաստային խմբավորումներ ունեցող հոմանիշների շարքեր:</li> <li>8. <i>Կազմել</i> գովազդային տեքստ՝ կիրառելով տրված բառերի հոմանիշները և հականիշները:</li> <li>9. Տրված բառերի հոմանիշներով և հականիշներով <i>կազմել</i> արձակ և չափածո տեքստեր:</li> <li>10. <i>Ներկայացնել</i> արվեստի նախընտրելի ստեղծագործությունը՝ կտավը, քանդակը, կառույցը՝ կիրառելով ածականների և մակբայների հոմանշային շարքեր:</li> <li>11. Փակագծերում տրված հարանուններից <i>ընտրել</i> նախադասությանը համապատասխանող բառը:</li> <li>12. Տրված հարանունների զույգերով <i>կազմել</i> վարչական բովանդակության տեքստ:</li> <li>13. Տրված համանունների տարբեր իմաստներով <i>կազմել</i> նախադասություններ:</li> <li>14. <i>Կազմել</i> համանուններով և հարանուններով շուտասելուկներ, հանելուկներ:</li> <li>15. <i>Վերարտադրել</i> գեղարվեստական ստեղծագործությունը համապատասխան նկարների, մեղեդու միջոցով՝ բառերը փոխարինելով գույներով, նոտաներով:</li> </ol>	<p><b>Օրինաչափություն</b> Բառերի ձևիմաստային խմբերի դասակարգման օրինաչափությունները:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b> Բառերի ձևիմաստային խմբերի համեմատական կայունութ յունը և ժամանակի ընթաց քում կրած փոփոխություն ները:</p>
<p><b>Միջառարկայական կապեր</b></p>	

<p><b>Գրականություն:</b> Բառերի ձևիմաստային խմբերի կիրառում պատկերավոր խոսքում: Չափածո և արձակ ստեղծագործություններում ուղիղ և փոխաբերական իմաստներով բառերի ուսումնասիրում:</p> <p><b>Բնագիտամաթեմատիկական և հասարակագիտական առարկաներ:</b> Մենիմաստ բառերի կիրառությունը գիտական տեքստերում: Հարանունների կիրառությունը իրավաբանության մեջ. դրանց առկայությունը գործնական գրություններում:</p> <p><b>Օտար լեզուներ:</b> Հոմանիշ և հականիշ բառաշարքերի թարգմանում. տեքստերում թարգմանության օրինաչափությունների պահպանում:</p> <p><b>Արվեստ:</b> Արվեստի տարբեր գործերի (կտավ, քանդակ, ճարտարապետական կառույց) նկարագրումը հոմանիշ և հականիշ բառերի օգնությամբ:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>
<p>Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42</p>

<p><b>Թեմա 4</b></p>
<p><b>2. ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ</b></p>
<p><b>Հիմնական նպատակները</b></p>
<p><i>Նպաստել բառապաշարի շերտերի բազմազանության կիրառմանն ու արժևորմանը խոսքում: Զարգացնել պատկերավոր խոսք կազմելու հմտություններ:</i></p>
<p><b>Վերջնարդյունքներ</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Տարբերի բառապաշարի շերտերն ըստ կիրառության առանձնահատկությունների:</i></li> <li>2. <i>Կիրառի բառապաշարի շերտերն ըստ գործուն և ոչ գործուն հատկանիշների:</i></li> <li>3. <i>Կիրառի հայերենի բառապաշարի շերտերն ըստ ծագման:</i></li> <li>4. <i>Կիրառի հայերենի բառապաշարի շերտերն ըստ գործածության ոլորտների:</i></li> <li>5. <i>Կազմի տարբեր ոճերի տեքստեր՝ կիրառելով համապատասխան բառապաշար:</i></li> <li>6. <i>Թարգմանի տարաբնույթ տեքստեր՝ կիրառելով համապատասխան բառապաշար:</i></li> <li>7. <i>Մեկնաբանի ճիշտ բառընտրության կարևորությունը խոսք կառուցելիս:</i></li> </ol>
<p><b>Բովանդակություն</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Հայերենի բառապաշարն ըստ գործուն և ոչ գործուն հատկանիշների</li> <li>• Հայերենի բառապաշարն ըստ հայերենի զարգացման տարբեր փուլերի</li> <li>• Հայերենի բառապաշարն ըստ գործածության ոլորտների</li> <li>• Հայերենի բառապաշարն ըստ ծագման</li> <li>• Փոխառությունների և օտարաբանությունների ընդհանրություններն ու տարբերությունները:</li> </ul>

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. Տրված տեքստից <i>դուրս գրել</i> հնաբանություններն ու նորաբանությունները, <i>բացատրել</i> տարբերությունները:</li> <li>2. Օգտվելով բացատրական բառարաններից՝ <i>գրել</i> պատմական ակնարկ՝ կիրառելով հնաբանություններ:</li> <li>3. <i>Շարադրել</i> ոչ ծավալուն տեքստ ժամանակակից գյուտարարների մասին՝ կիրառելով նորաբանություններ:</li> <li>4. Տրված տեքստից <i>դուրս գրել</i> գրաբարից և միջին հայերենից ժամանակակից հայերենին փոխանցված բառերը՝ լրացնելով աղյուսակի համապատասխան հատվածում:</li> <li>5. Տրված տեքստից <i>դուրս գրել</i> փոխառությունները, բառարանի օգնությամբ <i>ցույց տալ</i> փոխատու լեզուն, <i>բացատրել</i> իմաստը:</li> <li>6. <i>Կազմել</i> գովազդային տեքստ՝ կիրառելով փոխառություններ:</li> <li>7. Խոսքում կիրառված օտարաբանությունները <i>փոխարինել</i> հայերեն համարժեքներով:</li> <li>8. <i>Նախապատրաստել և վարել</i> զրույց փոխառությունների նշանակության վերաբերյալ, զրույցի ավարտից հետո <i>կատարել</i> եզրահանգումներ և ընդհանրացումներ:</li> <li>9. Տրված տեքստից <i>դուրս գրել</i> տերմինները, բառարանի օգնությամբ <i>բացատրել</i> դրանց նշանակությունը:</li> <li>10. Տրված բառերը <i>կիրառել</i> խոսքում որպես տերմիններ և որպես համագործածական բառեր:</li> <li>11. <i>Ստեղծել</i> գրական-երաժշտական միջոցառման բեմագիր (սցենար)՝ կիրառելով նորաբանություններ և հնաբանություններ:</li> <li>12. <i>Գրել</i> հետազոտական աշխատանք հնաբանությունների կամ նորաբանությունների վերաբերյալ:</li> </ol>	<p><b>Օրինաչափություն</b> Բառապաշարի շերտերում գոյություն ունեցող օրինաչափությունները:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b> Բառապաշարի հարստացման համեմատաբար կայուն միջոցները և ուղիները, ժամանակի ընթացքում նոր բառերի առաջացումը:</p>
<p><b>Միջառարկայական կապեր</b></p>	
<p><b>Բնագիտամաթեմատիկական և հասարակագիտական առարկաներ:</b> Մասնագիտական բառա պաշարի կիրառում համապատասխան տեքստեր շարադրելիս:</p> <p><b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ:</b> Փոխառությունների և օտարաբանությունների կիրառում տեխնոլոգիական բովանդակությամբ տեքստերում: Նորաբանությունների կիրառությունը տնտեսագիտական բնագրերում:</p> <p><b>Պատմություն:</b> Հնաբանությունների կիրառումը պատմական դեպքերը նկարագրելիս, պատմական տեքստերի կազմում հնաբանությունների կիրառմամբ:</p> <p><b>Օտար լեզուներ:</b> Օտարաբանությունների թարգմանության առանձնահատկությունների</p>	

<p>ուսումնասիրում:</p> <p><b>Գրականություն:</b> Պատմավեպերում առկա հնաբանությունների ուսումնասիրում, դրանց դերի և նշանակության բացահայտում:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>
<p>Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42</p>

<b>Թեմա 5</b>	
<b>3.ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ</b>	
<b>Հիմնական նպատակները</b>	
<p>Նպաստել դարձվածքների կիրառմանն ու արժևորմանը խոսքում:</p> <p>Զարգացնել պատկերավոր խոսք կազմելու հմտություններ:</p>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կիրառի</i> դարձվածքները համապատասխան խոսքային միջավայրում:</li> <li>2. <i>Հարստացնի</i> տեքստը դարձվածքներով:</li> <li>3. <i>Կառուցի</i> դարձվածքներով հարուստ խոսք:</li> <li>4. <i>Մեկնաբանի</i> դարձվածքների ոճական նշանակությունը խոսքում:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Դարձվածքների կառուցվածքային առանձնահատկությունները</li> <li>• Դարձվածքների ոճական արժեքը</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Համեմատել</i> դարձվածքները և ոչ կայուն բառակապակցությունները Վենի տրամագրի օգնությամբ. <i>ցույց տալ</i> նմանություններն ու տարբերությունները:</li> <li>2. <i>Կազմել</i> նախադասություններ տրված հոմանիշ կամ հականիշ դարձվածքներով:</li> <li>3. Գեղարվեստական որևէ երկից <i>առանձնացնել</i> դարձվածքներով հարուստ հատված, դարձվածքները <i>փոխարինել</i> ոչ կայուն բառակապակցություններով կամ բառերով, <i>մեկնաբանել</i> տեքստի կրած ոճական</li> </ol>	<p><b>Օրինաչափություն</b></p> <p>Դարձվածքների կառուցվածքային օրինաչափությունները:</p> <p><b>Անհատական մշակութաարտահայտում</b></p> <p>Դարձվածքների ոճական առանձնահատկությունները և ժողովրդի լեզվամտածողությունը:</p>

<p>փոփոխությունները, <i>կատարել</i> եզրակացություն:</p> <p>4. Ուսուցչի օգնությամբ <i>գտնել</i> և <i>համեմատել</i> օտար լեզուներում և հայերենում կիրառվող և նույն իմաստն ունեցող դարձվածքները: <i>Բացահայտել</i> ժողովուրդների լեզվամտածողության առանձնահատկությունները:</p> <p>5. <i>Գրել</i> հանրային որևէ խնդրի վերաբերյալ ելույթ՝ կիրառելով թևավոր խոսքեր:</p> <p>6. Օգտվելով համացանցից՝ <i>դուրս գրել</i> մարդկային հարաբերություններ, բնավորության գծեր, վարքագիծը բնութագրող թևավոր խոսքեր և աֆորիզմներ:</p> <p>7. <i>Կազմել</i> շուտասելուկներ դարձվածքներով, դրանք <i>փոխարինել</i> ոչ կայուն բառակապակցություններով կամ բառերով:</p> <p>8. Տրված դարձվածքներով <i>շարադրել</i> գեղարվեստական ոչ ծավալուն տեքստ, <i>վերնագրել</i> դարձվածքով:</p>	
--	--

**Միջառարկայական կապեր**

**Պատմություն:** Հին Հունաստանի և Հին Հռոմի առասպելների ու լեգենդների՝ որպես դարձվածքների առաջացման աղբյուրների ուսումնասիրում:

**Օտար լեզուներ:** Օտար լեզուներում գործածվող դարձվածքների և հայերեն համարժեքների համեմատում:

**Գրականություն:** Դարձվածքների միջոցով գրական երկերում ոճական երանգավորման ապահովում և պատկերավոր մտածողության զարգացում:

**Արվեստ:** Թևավոր խոսքերին և արտահայտություններին առնչվող պատմությունների, դիցաբանական գրույցների արտացոլումը արվեստի տարբեր բնագավառներում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

II-10-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42, Մ43

**Թեմա 6**

**4. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ**

**Հիմնական նպատակները**

*Ջարգացնել* գիտելիք բառերի կազմության, բառակազմության եղանակների՝ որպես բառապաշարի հարստացման կարևոր միջոցի մասին:  
*Նպաստել* բառապաշարի հարստացման գործում բառակազմության դերի արժևորմանը:

**Վերջնարդյունքներ**

1. *Տարբերի* բառերի տեսակներն ըստ կազմության:
2. *Տարբերի* բառակազմության եղանակները:
3. Օգտվելով բառակազմության եղանակներից՝ *կազմի* նոր բառեր:
4. Տեքստում *գտնի* տարբեր կազմություններ ունեցող բառեր, *մատնանշի* բառակազմության եղանակները:
5. *Հասկանա* հապավումները և *ներկայացնի* դրանց ամբողջական համարժեքները:
6. *Թարգմանի* օտարաբանությունները՝ օգտագործելով բառակազմական եղանակները:
7. Անսխալ *գրի* բարդ բառերը և հապավումները:
8. *Հիմնավորի* բառակազմության կարևորությունը բառաստեղծման գործընթացում:

### Բովանդակություն

- Բառերի տեսակներն ըստ կազմության. պարզ և բաղադրյալ բառեր
- Ածանցում
- Բառաբարդում. վերլուծական, համադրական, հապավական բարդություններ
- Հապավում և համառոտագրություն. առանձնահատկությունները

### Առաջարկվող գործունեության ձևեր

### Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ

1. Տրված բառաշարքից *առանձնացնել* պարզ բառերը, դրանցով *կազմել* ածանցավոր բառեր:
2. *Գտնել* տեքստում ածանցավոր բառերը, *որոշել* ածանցների տեսակը (նախաածանցներ և վերջածանցներ):
3. *Կազմել* ածանցավոր բառեր՝ ըստ խոսքիմասային պատկանելության:
4. Տրված բառաշարքերով *կազմել* բարդ բառեր, *որոշել* դրանց տեսակը:
5. Բառաբարդել և բառածանցել տրված արմատները, *ցույց տալ* կատարված հնչյունափոխությունը:
6. *Կազմել* հոմանիշներ՝ գործածելով մի դեպքում՝ ածանցման, մյուս դեպքում՝ բառաբարդման եղանակները:
7. Օգտվելով բառարաններից՝ տեքստը *հարստացնել* բաղադրյալ բառերով:
8. Տրված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության. ուսուցչի օգնությամբ *մատնանշել* գրաբարյան իրողությունները և դրանց ազդեցությունը այդ բառերի կազմության վրա:
9. *Կազմել* կապակցված խոսք դպրոցական անցուդարձի մասին՝ կիրառելով ածանցավոր և բարդ բառեր:
10. Փակագծերը բացելով՝ բառերի բաղադրիչները *գրել* միասին, անջատ կամ գծիկով:
11. *Գրել* համադրական և վերլուծական բարդություններով հարուստ թելադրություն:
12. *Թվարկել* փոխառյալ հապավումներ, *բացատրել*

**Օրինաչափություն**  
Օրինաչափությունների առկա յությունը բառակազմության բոլոր եղանակներում:

**Կայունություն և փոփոխություն**  
Բառակազմական եղանակների համեմատական կայունությունը և փոփոխությունները ժամանակի ընթացքում:

<p>նշանակությունը, <i>կիրառել</i> խոսքում:</p> <p>13. Կատարելով փոքրիկ ուսումնասիրություն՝ <i>գտնել</i> առավել տարածված հապավումները, <i>բացատրել</i> դրանց նշանակությունը, <i>կիրառել</i> խոսքում:</p> <p>14. Տրված տեքստի բառակապակցությունները (հնարավորության դեպքում) <i>փոխարինել</i> հապավումներով:</p> <p>15. Համառոտագրել տվյալ բառերը՝ հետևելով համառոտագրության սկզբունքներին:</p> <p>16. Կազմակերպել խաղ-վիկտորինա բառակազմության շուրջ ուսուցչի և աշակերտների կողմից մշակված հարցերով:</p>	
---	--

**Միջառարկայական կապեր**

**Հասարակագիտություն:** Հապավումների կիրառումը գործնական գրություններում:  
**Օտար լեզուներ:** Բառակազմությունը օտար լեզուներում, բառակազմական օրինաչափություններին համապատասխան բաղադրյալ բառերի թարգմանություն (բառապատճենում): Փոխառյալ հապավումների համեմատումը հայերեն համարժեքների հետ:  
**Բնագիտամաթեմատիկական և հասարակագիտական առարկաներ:** Բաղադրյալ բառերի կիրառությունը մասնագիտական տեքստերում:  
**Գրականություն:** Չափաժո խոսքում կրկնավոր բարդությունների կիրառում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42, Մ43

**Թեմա 7**

**5. ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Հիմնական նպատակները**

*Ձևավորել* բառարաններից օգտվելու հմտություններ:  
*Նպաստել* բառապաշարի հարստացման գործում բառարանների դերի արժևորմանը:

**Վերջնարդյունքներ**

1. *Իմանա և տարբերակի* բառարանների տեսակները:
2. Հասկանա բառարան կազմելու հիմնական սկզբունքները:
3. Ըստ անհրաժեշտության *կիրառի* բառարանների տարբեր տեսակներ:
4. *Կիրառի* առցանց բառարաններ:
5. Տեքստեր թարգմանելիս *կիրառի* թարգմանական բառարաններ:
6. Հիմնավորի բառարանների նշանակությունը բառապաշարի հարստացման գործում:

<b>Բովանդակություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Բառարանագրություն. բառարանների տեսակները</li> <li>• Բառարանների կառուցվածքը և նրանցից օգտվելու կանոնները</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Օգտվելով բացատրական բառարաններից՝ <i>դուրս գրել</i> տրված բառերի բացատրությունները: Բառերը <i>փոխարինել</i> հոմանիշներով, <i>կիրառել</i> խոսքում:</li> <li>2. Տրված բառերը դասավորելով այբբենական հերթականությամբ՝ <i>կազմել</i> բառացանկեր:</li> <li>3. <i>Հարստացնել</i> տեքստը հոմանիշների բառարաններից դուրս գրված բառերով:</li> <li>4. Դարձվածաբանական բառարաններից <i>դուրս գրել</i> տրված դարձվածքների բացատրությունները, <i>նշել</i> առաջացման աղբյուրները:</li> <li>5. Տրված տեքստը <i>հարստացնել</i> բառարաններից դուրս գրված դարձվածքներով:</li> <li>6. <i>Կատարել</i> տեքստից դուրս գրված բառերի ստուգաբանական վերլուծություն՝ օգտվելով ստուգաբանական բառարաններից:</li> <li>7. <i>Թարգմանել</i> հատված օտարալեզու բնագրից՝ օգտվելով թարգմանական բառարաններից:</li> <li>8. <i>Կազմել</i> գեղարվեստական ստեղծագործություններից դուրս գրված հոմանիշների բառացանկեր:</li> <li>9. Տեքստից <i>դուրս գրել</i> մասնագիտական բառերը. <i>բացատրել</i> իմաստները՝ օգտվելով մասնագիտական բառարաններից:</li> <li>10. <i>Կազմել</i> մասնագիտական տերմինների բառացանկեր՝ ըստ դպրոցում ուսումնասիրվող առարկաների, <i>բացատրել</i> կիրառության ոլորտները:</li> <li>11. Անձնանունների բառարանից <i>դուրս գրել</i> նախընտրելի անունների բացատրությունները:</li> <li>12. Տեղանունների բառարանից <i>դուրս գրել</i> որևէ համայնքի աշխարհագրական անունների բացատրությունները: <i>Գտնել և ներկայացնել</i> հետաքրքիր պատմություններ, ավանդազրույցներ տեղանունների առաջացման մասին:</li> </ol>	<p><b>Օրինաչափություն</b>  Բառարաններ կազմելու կանոններ. բառացանկերի ստեղծում ըստ այբբենական կարգի. բառարաններ օգտագործելու կանոնների կարևորությունը:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b>  Բառիմաստի կայունությունը որոշակի ժամանակահատվածում և փոփոխությունների ենթարկվելու հնարավորությունները:</p>



<b>Միջառարկայական կապեր</b>
<p><b>Քննադատամաթեմատիկական և հասարակագիտական առարկաներ:</b> Մասնագիտական բառապաշարի համար նախատեսված բառարանների կիրառում:</p> <p><b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ:</b> Օտար տերմինների թարգմանություն բառարանների օգնությամբ:</p> <p><b>Օտար լեզուներ:</b> Օտարալեզու տեքստերից հատվածների թարգմանություն: Թարգմանական բառարանների կիրառում:</p> <p><b>Գրականություն:</b> Բառարանների կարևորությունը գեղարվեստական երկեր շարադրելու գործընթացում: Հոմանիշների և հականիշների, դարձվածաբանական բառարանների կիրառումը պատկերավոր խոսք կազմելիս:</p>
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</b>
II-10-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42, Մ43

<b>Թեմա 8</b>
<b>ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ</b>
<b>Հիմնական նպատակները</b>
<p><i>Ամրապնդել</i> տարաբնույթ տեքստեր կազմելու հմտություններ:</p> <p><i>Նպաստել</i> տարբեր ոճերի տեքստեր կազմելու կարևորության արժևորմանը:</p>
<b>Վերջնարդյունքներ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Քննադատի</i> տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները:</li> <li>2. <i>Կազմի</i> ծավալուն և ոչ ծավալուն տեքստեր. էսսե, տեղեկատվական տեքստեր:</li> <li>3. <i>Կազմի</i> տեքստ՝ ըստ նախօրոք տրված պլանի:</li> <li>4. <i>Ընտրի</i> տեքստին համապատասխան վերնագիր, բնաբան:</li> <li>5. Տեքստը <i>բաժանի</i> պարբերությունների:</li> <li>6. Ըստ անհրաժեշտության <i>կազմի</i> ծանոթագրություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ, <i>կարգի</i> հղումներ:</li> <li>7. <i>Թարգմանի</i> տեքստեր՝ պահպանելով ասելիքի նպատակը, խնդիրները, բառապաշարը, ոճական նկարագիրը:</li> </ol>
<b>Բովանդակություն</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Տեքստը՝ որպես լեզվական միավոր</li> <li>• Տեքստի մասերը՝ սկզբնամաս, հիմնամաս, ավարտամաս</li> <li>• Պարբերությունը՝ որպես տեքստի նվազագույն միավոր</li> <li>• Տեքստի վերնագիր, ծանոթություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ</li> </ul>

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. Պարբերությունները դասավորելով տրամաբանական ճիշտ հաջորդականությամբ՝ ստանալ ամբողջական տեքստ:</li> <li>2. Առանձնացնել տրված տեքստի պարբերությունները:</li> <li>3. Շարունակել պատմությունը՝ վերնագրելով այն:</li> <li>4. Նշել տրված շարադրանքի սկզբնամասը, հիմնամասն ու ավարտամասը՝ հիմնավորելով տարբերակումը:</li> <li>5. Գրել նախօրոք տրված վերնագրով կամ հանձնարարված թեմայով շարադրանք:</li> <li>6. Գրել նկարագրական-բնութագրական շարադրանք հայ հասարակական որևէ գործչի մասին:</li> <li>7. Կազմել տեղեկատվական նյութ՝ կիրառելով տրված բառերն ու արտահայտությունները:</li> <li>8. Գրել էսսե՝ ըստ տրված պլանի: <i>Բացադրել</i> կառուցվածքը:</li> <li>9. Գրել ազատ էսսե երիտասարդությանը հուզող հարցերի շուրջ:</li> <li>10. Շարադրել էսսե՝ դրույթները (պնդումներ) հիմնավորելով գեղարվեստական գրականությունից վերցված համապատասխան օրինակներով:</li> <li>11. Վերնագրել տեքստը՝ օգտագործելով դարձվածքներ, շրջասույթներ:</li> <li>12. Կազմել գովազդային տեքստ, դրա հիման վրա նկարահանել տեսահոլովակ՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:</li> <li>13. Գրել նամակ ճանապարհորդությունից ստացած տպավորությունների մասին:</li> <li>14. Գրել ժողովրդին ուղղված կոչ, ուղերձ որևէ նշանակալից իրադարձության առիթով, այն ներկայացնել լսարանին:</li> <li>15. Գրել բնապահպանական կամ սոցիալական թեմայով փոքրիկ զեկուցում:</li> <li>16. Գրել ակնարկ որևէ հասարակական գործչի մասին:</li> </ol>	<p><b>Կառուցվածք և գործառույթ</b> Տարբեր տեքստերի կառուցված քային առանձնահատկություն ները և դրանցով պայմանավորված տեսակները:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում</b> Տեքստերի միջոցով գաղափար ներ, համոզմունքներ բացահայտելու ուղիները:</p>

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գեղարվեստական տեքստերի կազմում, կառուցվածքային ամբողջականության ապահովում, վերնագրի ընտրություն:

**Բնագիտամաթեմատիկական և հասարակագիտական առարկաներ:** Մասնագիտական տեքստերի վերլուծություն, դրանցում կիրառված բառերի իմաստների մեկնաբանություն: Մասնագիտական տեքստերի ստեղծում, պահանջվող կառուցվածքի, տրամաբանական կապի պահպանում և կարևորում:

**Օտար լեզուներ:** Համապատասխան բառապաշարի և քերականական կառույցների կիրառությամբ օտարալեզու տեքստերի թարգմանություն:

**Արվեստ:** Արվեստի գործերի նկարագրում, հույզերի փոխանցում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

**Թեմա 9**

**ԳՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

(10-րդ դասարան, 11-րդ դասարան, 12-րդ դասարան)

**Հիմնական նպատակ**

*Ձևավորել* գործնական գրություններ գրելու հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. *Տարբերակի* գործնական գրությունների տեսակները, *նշի* առանձնահատկությունները:
2. *Կազմի* տարաբնույթ գործնական գրություններ:
3. *Կազմի* գործնական գրություններ՝ պահպանելով դրանք կազմելու սկզբունքները:
4. *Կիրառի* համապատասխան բառապաշար և քերականական միջոցներ գործնական գրություններ կազմելիս:
5. *Կազմի* դիմում, տեղեկանք, լիազորագիր:
6. *Գրի* ինքնակենսագրություն, կենսագրական ամփոփագիր (CV-անձի կրթության և աշխատանքի փորձի մանրամասների ամփոփագիր):
7. *Գրի* պաշտոնական, հիմնավորող (հետաքրքրության) նամակներ:
8. *Գրի* բացատրագիր, զեկուցագիր:
9. *Կազմի* արձանագրություն, քաղվածք:
10. *Հիմնավորի* գործնական գրությունների անհրաժեշտությունը հասարակական հարաբերություններում:

**Բովանդակություն**

*10-րդ դասարան*

- Դիմում
- Ինքնակենսագրություն
- Բացատրագիր

*11-րդ դասարան*

- Տեղեկանք, ստացական, լիազորագիր
- Երաշխավորագիր

*12-րդ դասարան*

- Արձանագրություն, քաղվածք
- Կենսագրական ամփոփագիր (CV)
- Պաշտոնական, հիմնավորող (հետաքրքրության) նամակներ

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական**

	հասկացություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Գրել</i> դիմում ուսուցչի ներկայացրած օրինակով:</li> <li>2. <i>Գրել</i> դիմում դպրոցի տնօրենին առաջարկվող խնդրով:</li> <li>3. <i>Գրել</i> դիմում սպորտային կամ այլ կարգի մրցումների մեկնելու թույլտվության համար:</li> <li>4. <i>Գրել</i> ինքնակենսագրություն:</li> <li>5. <i>Գրել</i> բացատրագիր դասերին չմասնակցելու մասին:</li> <li>6. <i>Գրել</i> էլեկտրոնային նամակ ուսուցչին, <i>որոշել</i> նամակի առարկան (վերնագիրը):</li> <li>7. <i>Մասնակցել</i> էլեկտրոնային փոխադարձ նամակագրությանը:</li> <li>8. <i>Գրել</i> տեղեկանք որևէ վայրում աշխատելու կամ սովորելու վերաբերյալ, <i>բացատրել</i> կառուցվածքը:</li> <li>9. <i>Կազմել</i> ստացական որևէ հաստատությունից իրեր կամ գումար ստանալու մասին:</li> <li>10. <i>Գրել</i> լիազորագիր որոշակի իրավական գործողություններ կատարելու թույլտվության մասին:</li> <li>11. <i>Գրել</i> երաշխավորագիր ենթադրյալ աշխատողի կամ ուսանողի մասին:</li> <li>12. <i>Կազմել</i> սեփական կենսագրական ամփոփագիրը (CV):</li> <li>13. Տրված ինքնակենսագրությունը <i>դարձնել</i> կենսագրական ամփոփագիր (CV):</li> <li>14. <i>Կազմել</i> կենսագրական ամփոփագիր (CV) արտասահմանում ուսումնառելու, նոր աշխատանք գտնելու կամ որևէ մրցույթի մասնակցելու համար:</li> <li>15. <i>Գրել</i> պաշտոնական և հիմնավորող (հետաքրքրության) նամակներ ըստ պահանջի:</li> <li>16. <i>Կազմել</i> աշակերտական խորհրդի ժողովի արձանագրություն և այդ արձանագրության քաղվածքը:</li> </ol>	<p><b>Կայունություն և փոփոխություն</b> Պաշտոնական գրություն ներ կազմելու սկզբունքների կայունություն:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ</b> Խոսքային կաղապարներով ձևավորված տեքստերում կառուցվածքի պահպանման անհրաժեշտությունը:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Օտար լեզուներ:</b> Հիմնավորող (հետաքրքրության) նամակներ կազմելիս օտար աղբյուրների օգտագործում: Պաշտոնական նամակների գրության մոտեցումների համեմատում:</p> <p><b>Հասարակագիտություն.</b> Գործնական գրությունների ուսումնասիրումը իրավաբանության մեջ, բանկային գործում:</p> <p><b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ:</b> Էլեկտրոնային նամակների ուսումնասիրում: Համապատասխան կանոնների իմացությունը և պահպանումը էլեկտրոնային նամակներ գրելիս:</p>	
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</b>	
Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42	

**ԹԵՄԱ 1**

**ԲԱՐԲԱՌՆԵՐ: ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՐԻ ՃՅՈՒՂԵՐԸ**

**Հիմնական նպատակները**

Նպաստել լեզվի հարստացման գործում գրական հայերենի երկու ճյուղերի և բարբառների դերակատարության արժևորմանը:

**Վերջնարդյունքներ**

1. Պատկերացում կազմի հայերենի բարբառների մասին:
2. Նկարագրի հայերենի բարբառների որոշ լեզվական իրողություններ:
3. Համեմատի գրական հայերենի երկու ճյուղերը:
4. Վեր հանի արևմտահայերենի լեզվական հիմնական առանձնահատկությունները:
5. Կարարի փոխադրումներ արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը:

**Բովանդակություն**

1. Հայերենի բարբառները, նրանց դասակարգումը
2. Աշխարհաբարի զարգացման ընթացքը
3. Գրական հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերեն և արևմտահայերեն
4. Արևմտահայերենի հնչյունաբանությունը, բառապաշարը և քերականական առանձնահատկությունները

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. Ընտրել որևէ բարբառ, բերել այդ բարբառին բնորոշ բառերի և արտահայտությունների օրինակներ:
2. Կարդալ որևէ բարբառով շարադրված ստեղծագործություն, դուրս գրել բարբառային բառերն ու քերականական ձևերը, փոխարինել գրական հայերեն համարժեքներով:
3. Մշակել և վարել հարցազրույցներ բարբառախոս անձանց հետ: Համաձայնության դեպքում ծայնագրել հարցազրույցները, վերլուծել հնչած խոսքը, ցույց տալ բարբառների որոշ առանձնահատկություններ:
4. Համացանցից գտնել հետաքրքիր տեղեկություններ հայերենի բարբառների մասին, գրել ոչ ծավալուն զեկուցում:
5. Օգտվելով համացանցից և այլ աղբյուրներից՝ հետազոտել

**Օրինաչափություն**  
Լեզվական օրինաչափությունների դրսևորումը գրական հայերենի երկու ճյուղերում:

**Կայունություն և փոփոխություն** Լեզվական իրողությունների բնականոն փոփոխությունները և դրանց կայունացումը որոշակի ժամանակահատվածում:

<p>և գրել զեկուցում աշխարհաբարի ձևավորման և զարգացման վերաբերյալ, ներկայացնել սահիկաշարով:</p> <p>6. Անդրադառնալ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանին», կազմակերպել քննարկում:</p> <p>7. Կարդալ ՀՀ օրենքը լեզվի մասին, անդրադառնալ հիմնական դրույթներին, կազմակերպել քննարկում:</p> <p>8. Տրված տեքստից դուրս գրել այն բառերը, որոնք կիրառվում են միայն արևմտահայերենում, դրանք փոխարինել արևելահայերեն համարժեքներով:</p> <p>9. Ուսուցչի օգնությամբ գրել արևմտահայերեն նախադասությունների արևելահայերեն համարժեքները՝ ուշադրություն դարձնելով քերականական առանձնահատկություններին:</p> <p>10. Առոգանությամբ կարդալ ուսուցչի կողմից ընտրված արևմտահայերեն տեքստը՝ պահպանելով արևմտահայերենի արտասանական կանոնները:</p> <p>11. Արտասանել արևմտահայ բանաստեղծների ստեղծագործություններից որևէ հատված, փոխադրել արևելահայերեն:</p> <p>12. Կարդալ արևմտահայերեն գրական ստեղծագործություններ, դիտել արևմտահայերենով կինոնկարներ («Տժվժիկ», «Կտոր մը երկինք», «Ճերմակ անուրջներ» և այլն), դրանք ներկայացնել արևելահայերեն: Հրուցել դիտած ֆիլմերի մասին՝ ներկայացնելով արևմտահայերենի առանձնահատկությունները:</p>	
--	--

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Արևմտահայերենով և բարբառներով շարադրված բնագրերի ուսումնասիրում, բառապաշարի և քերականական առանձնահատկությունների դուրսբերում:

**Պատմություն:** Աշխարհաբարի ձևավորման և զարգացման օբյեկտիվ պատճառների վերհանում:

**Արվեստ:** Կինոյում և թատրոնում բարբառների և արևմտահայերենի գործածության ուսումնասիրում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

**Հիմնական նպատակները**

*Ձևավորել* բառերն ըստ ընդհանուր հատկանիշների դասակարգելու կարողություն և խոսք կազմելու հմտություններ:  
*Ձարգացնել* բառերի խոսքիմասային կիրառությունների հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. *Տարբերակի* խոսքի մասերն ըստ իրենց արտահայտած քերականական իմաստների:
2. Բառերը *ենթարկի* ձևաբանական փոփոխությունների և ճիշտ *կիրառի* խոսքում:
3. *Իմանա* գրական ձևերից շեղվող քերականական փոփոխությունները և ճիշտ *կիրառի* խոսքում:
4. Տարբեր ծավալի և բովանդակության տեքստերում *կիրառի* նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր:
5. Տարբեր ծավալի և բովանդակության տեքստերում *կիրառի* քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր:
6. Տարբեր ծավալի և բովանդակության տեքստերում *կիրառի* վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր:
7. *Հիմնավորի* բառերի ձևաբանական փոփոխությունների անհրաժեշտությունը խոսքում կիրառելիս:

**Բովանդակություն**

- Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ
- Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր՝ կապ, շաղկապ
- Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր՝ վերաբերական, ձայնարկություն

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. Տրված բառերը <i>դասավորել</i> ըստ նրանց արտահայտած նյութական, քերականական և վերաբերմունքային իմաստների:</li> <li>2. Տրված տեքստում <i>գտնել</i> և <i>դասակարգել</i> նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը, <i>գտնել</i> բայերի խոնարհման անկանոնության դեպքերը:</li> <li>3. Եզակի թվով գոյականները <i>դարձնել</i> հոգնակի, <i>կիրառել</i> նախադասությունների մեջ, <i>բացատրել</i> գոյականի հոգնակի թվի կազմության առանձնահատկությունները:</li> <li>4. Փակագծերում տրված դերանունների հոլովածներից <i>ընտրել</i> տվյալ նախադասությանը համապատասխանող տարբերակը:</li> <li>5. Տրված բառերն ըստ անհրաժեշտության ենթարկելով ձևաբանական փոփոխությունների՝ <i>տեղադրել</i></li> </ol>	<p><b>Օրինաչափություն</b>                      Խոսքի մասերի դասակարգումը իմաստային որոշակի օրինաչափությունների հիման վրա:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ</b>                      Տարբեր խոսքի մասերի կազմության առանձնա հատկությունները:</p>

նախադասությունների մեջ:

6. *Վերաշարադրել* ակնարկը՝ փոփոխելով կիրառված բայերի ժամանակաձևերը:
7. *Վերլուծել* արվեստի որևէ գործ՝ կիրառելով ածականներ, բայեր (դերբայներ), մակբայներ:
8. *Գրել* ակնարկ, նովել, պատմվածք տրված նյութական խոսքի մասերով:
9. *Կազմել* պատմական դեպքերով և ժամանակագրությամբ հարուստ տեքստ՝ կիրառելով նյութական խոսքի մասեր, մասնավորապես՝ թվականներ:
10. *Կազմել* գեղարվեստական տեքստ՝ կիրառելով ածականներ և մակբայներ:
11. *Կազմել* կապակցված խոսք՝ ընդգծելով նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը:
12. *Գրել* պատմական ակնարկ՝ կիրառելով քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր:
13. Փակագծերում տրված կապական զույգերից (հանձին-հանձինս, փոխարեն-փոխանակ և այլն) *ընդգծել* տվյալ նախադասությանը համապատասխանող տարբերակը:
14. *Շարունակել* նախադասության միտքը՝ կիրառելով համադասական և ստորադասական շաղկապներ:
15. *Կազմել* ոչ ծավալուն էսսե երիտասարդությանը հետաքրքրող թեմայով՝ կիրառելով շաղկապներ:
16. *Կազմել* վարչական տեքստեր՝ տեղեկանք, դիմում, լիազորագիր և այլն՝ կիրառելով կապեր, շաղկապներ:
17. *Կազմել* տեղեկատվական նյութ համայնքում տեղի ունեցած հետաքրքիր միջոցառման մասին՝ կիրառելով վերաբերականներ:
18. *Գրել* գովազդային տեքստ՝ կիրառելով ձայնարկություններ, դրա հիման վրա *նկարահանել* գովազդային տեսահոլովակ:
19. *Կազմել և վարել* հարցազրույց տարբեր տարիքի մարդկանց հետ՝ նշելով նրանց խոսքում կիրառված վերաբերականների, ձայնարկությունների կիրառման հաճախականությունը:
20. *Նախագծել, մշակել և սրել* զվարճալի տեսաֆիլմ դպրոցական առօրյայի մասին՝ կիրառելով վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր:
21. *Կազմել* երկխոսություն՝ կիրառելով վերաբերականներ և ձայնարկություններ, այն *ներկայացնել* լսարանին:
22. *Թարգմանել* վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերով հարուստ փոքրածավալ տեքստեր:
23. Հարստացնել տեքստը վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերով՝ վերաբերականներով և ձայնարկություններով, *բացատրել* կետադրությունը:
24. *Գրել* ձայնարկություններով հարուստ փոքրիկ բանաստեղծություն հայրենի բնաշխարհի մասին:

**Ժամանակ և տարածություն**

Ժամանակի, տեղի դրսևորումները տարբեր խոսքի մասերի հարացույցում, ժամանակի և տարածության ներգործությունը խոսքի ձևավորման վրա:



25. Նախադասությունները վերլուծել ձևաբանորեն:

### Միջառարկայական կապեր

**Գրականություն:** Գեղարվեստական տեքստերում տարբեր խոսքի մասերի կիրառության հաճախականության վերհանում: Գրական չափաժողովներում ածականների և մակբայների կիրառում:

**Հասարակագիտություն:** Վարչական տեքստերում քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի կիրառում:

**Արվեստ:** Ածականների, բայերի (դերբայների), մակբայների կիրառումը արվեստի ստեղծագործությունները վերլուծելիս:

**Օտար լեզուներ:** Թարգմանությունների ժամանակ խոսքի մասերի և դրանց կրած փոփոխությունների ուսումնասիրում:

**Պատմություն:** Պատմական դեպքերի նկարագրություններում թվականների կիրառության հաճախականության ուսումնասիրում:

### Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

## Թեմա 3

### ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

#### Հիմնական նպատակները

*Ձարգացնել* շարահյուսական հոմանիշների՝ խոսքում կիրառելու հմտություններ:

*Նպաստել* շարահյուսական հոմանիշների կիրառության առանձնահատկությունների կարևորմանը խոսքում:

*Ձարգացնել* հաղորդակցական հմտություններ:

#### Վերջնարդյունքներ

- Ճանաչի և համեմատի շարահյուսական հոմանիշները:
- Խոսքում կիրառի շարահյուսական հոմանիշներ:
- Տրված բառակապակցությունն արտահայտի մեկ բարդ բառով:
- Բարդ ստորադասական նախադասությունը փոխակերպի պարզ նախադասության՝ որոշելով ստորադաս նախադասության պաշտոնը:
- Ներգործական կառուցվածքով նախադասությունը դարձնի կրավորական կառուցվածքի և հակառակը:
- Մեջբերվող ուղղակի խոսքը վերածի անուղղակի խոսքի և հակառակը:
- Կազմի երկխոսություն:
- Կազմի կապակցված խոսք՝ օգտագործելով դերբայական դարձվածներ:

- 9. Կերպարի տեքստը՝ առանձնացնելով դերբայական դարձվածները:
- 10. Կերպարի տեքստը՝ բացատրելով ուղղակի խոսքի կետադրությունը:

**Բովանդակություն**

- Շարահյուսական հոմանիշներ
- Բարդ բառ և բառակապակցություն
- Հոլովածև և կապական կառույց
- Բարդ ստորադասական նախադասություն և դերբայական դարձվածով պարզ նախադասություն. նրանց փոխակերպումը և կետադրական օրինաչափությունները
- Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք. նրանց փոխակերպումը և կետադրական օրինաչափությունները
- Ներգործական և կրավորական կառույցներ. նրանց փոխակերպումը

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. *Տրված* նախադասությունների կապական կառույցները *փոխարինել* հոլովածևներով:
2. *Կազմել* նախադասություններ՝ բարդ բառերը փոխարինելով բառակապակցություններով:
3. Տրված նախադասություններից *ընտրել* պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը:
4. Տրված բարդ ստորադասական նախադասությունները *փոխակերպել* դերբայական դարձվածով պարզ նախադասությունների՝ ընդգծելով դերբայական դարձվածները:
5. Տրված բարդ ստորադասական նախադասությունները *փոխակերպել* պարզ նախադասությունների՝ որոշելով ստորադաս նախադասությունների պաշտոնը:
6. *Ստեղծել* տեղեկատվական տեքստ՝ կիրառելով դերբայական դարձվածներ:
7. *Գտնել և ներկայացնել* բարդ ստորադասական նախադասություններով հարուստ պատմական տեքստ:
8. Ներգործական կառուցվածքով նախադասությունները *փոխակերպել* կրավորականի և հակառակը:
9. *Կազմել* կրավորական կառուցվածքով նախադասություններով հարուստ գործնական գրություններ:
10. Տեքստի մեջբերվող ուղղակի խոսքերը *դարձնել* անուղղակի, *նշել* կատարած փոփոխությունները:
11. *Առանձնացնել և վերլուծել* արձակ և չափածո տեքստերում հանդիպած երկխոսություններն ու մենախոսությունները:

**Կայունություն և փոփոխություն**

Նախադասության անդամների շարահյուսության հնարավոր փոփոխությունները խոսքում:

**Ժամանակ և տարածություն**  
 Ժամանակի և տարածության ներգործությունը խոսքի ձևավորման վրա:

12. Շարադրել և վերարտադրել երկխոսություններով հագեցած փոքրիկ պատմվածք:
13. Վերապատմել վերջերս դիտած գեղարվեստական կինոնկարը՝ կիրառելով անուղղակի խոսք:
14. Գրական որևէ երկից ընտրել և ներկայացնել երկխոսություններ:
15. Կազմակերպել այց որևէ թանգարան, հանդես գալ որպես էքսկուրսավար՝ խոսքում կիրառելով մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք:
16. Մշակել և վարել հարցազրույցներ տարբեր տարիքի անձանց հետ: Ձայնագրել հարցազրույցները, վերլուծել հնչած խոսքը, ցույց տալ կիրառված պարզ և բարդ նախադասությունների կիրառման հաճախականությունը:
17. Թարգմանել փոքրածավալ տեքստեր՝ կիրառելով մեջբերվող ուղղակի խոսք:
18. Կազմել երկխոսություն վերջերս տեղի ունեցած մշակութային կամ սպորտային միջոցառման մասին, կետադրել, ներկայացնել:
19. Նախադասությունները վերլուծել շարահյուսորեն:

### Միջառարկայական կապեր

**Հասարակագիտություն:** Վարչական տեքստերում, գործնական գրություններում բառակապակցությունների կիրառում:

**Բնագիտամաթեմատիկական առարկաներ:** Ներգործական և կրավորական կառուցվածքով նախադասությունների կիրառումը մասնագիտական տեքստերում:

**Պատմություն:** Պատմական տեքստերում բարդ նախադասությունների կիրառում:

**Օտար լեզուներ:** Մեջբերվող ուղղակի խոսքի, կրավորական կառուցվածքով նախադասությունների և դերբայական դարձվածով պարզ նախադասությունների թարգմանում:

**Գրականություն:** Գրական ստեղծագործություններում բառերի ու բառակապակցությունների, մեջբերվող ուղղակի խոսքի կիրառում:

**Արվեստ:** Բեմական արվեստում մեջբերվող ուղղակի խոսքի կիրառության հաճախականության մեկնաբանում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

II-10-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42, Մ43

**ԹԵՄԱ 4**

**ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

<b>Հիմնական նպատակ</b>	
Ձևավորել գիտելիք կետադրության վերաբերյալ և դրանք կիրառելու հմտություններ:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կեդրադրի</i> տեքստեր և <i>մեկնաբանի</i> կիրառվող կետադրական կանոնները:</li> <li>2. <i>Ձևավորիչ</i> տեքստը՝ ավելացնելով կամ պակասեցնելով կետադրական նշանները:</li> <li>3. <i>Կեդրադրի</i> տրված համր բնագրերը:</li> <li>4. <i>Կազմի</i> կետադրական տարբեր կանոններ պարունակող տեքստեր:</li> <li>5. <i>Մեկնաբանի</i> կետադրական նշանների կիրառության անհրաժեշտությունը խոսքում:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Կետադրության տեսակները. նախադասության բազմակի անդամների կետադրությունը</li> <li>• Գոյականական անդամի տրոհվող լրացումների կետադրությունը</li> <li>• Բայական անդամի տրոհվող լրացումների կետադրությունը</li> <li>• Տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը</li> <li>• Զեղչված ստորոգյալի կետադրությունը</li> <li>• Բարդ նախադասության կետադրությունը</li> <li>• Ուղղակի խոսքի տեսակները և նրանց կետադրությունը</li> <li>• Նախադասության ներդրյալ և միջանկյալ միավորների կետադրությունը</li> <li>• Կետադրական կանոնների հանդիպադրում</li> <li>• Կետադրական նշանների գործածության այլ դեպքեր</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Ինքնուրույն <i>աշխատել</i> մոդուլներով, <i>յուրացնել</i> և <i>կիրառել</i> կետադրական նշանները գրավոր խոսքում:</li> <li>2. <i>Հարստացնել</i> տեքստը գոյականական անդամի լրացումներով, բազմակի անդամներով և <i>կեդրադրել</i>:</li> <li>3. <i>Հարստացնել</i> տեքստը դերբայական դարձվածներով և կետադրել, <i>փոխել</i> դերբայական դարձվածի դիրքը նախադասության մեջ, <i>կեդրադրել</i>:</li> <li>4. Պարզ նախադասություններով տեքստը <i>դարձնել</i> բարդ նախադասություններով տեքստ և <i>կեդրադրել</i>:</li> <li>5. <i>Զեղչել</i> բարդ նախադասությունների ստորոգյալները, ըստ անհրաժեշտության <i>կեդրադրել</i>:</li> </ol>	<b>Օրինաչափություն</b> Նախադասությունները կետադրելու օրինաչափություն ները: <b>Պատճառ և հետևանք</b> Պատճառահետևանքային կապերի արտահայտումը կետադրության միջոցով:

6. Հարստացնել տեքստը ներդրյալ և միջանկյալ միավորներով, կետադրել:
7. Կետադրել տեքստը՝ պահպանելով և բացատրելով կետադրական նշանների հանդիպադրման կանոնները:
8. Կարդալ գեղարվեստական երկից հատված համապատասխան առոգանությամբ՝ առաջնորդվելով կետադրությամբ:
9. Կետադրել համը բնագրերը, բացատրել յուրաքանչյուր կետադրական նշանի քերականական և իմաստաբանական արժեքը:
10. Սրբագրել տրված տեքստը, բացատրել սխալներն ըստ քերականական կանոնների:
11. Կազմակերպել և ներկայացնել «Կետադրական նշանների դերը խոսքում» թեմայով դերախաղ:
12. Գրել շնորհավորական ելույթ, կետադրել և համապատասխան առոգանությամբ ներկայացնել լսարանին:
13. Գրել հետազոտական աշխատանք կետադրության շուրջ:

### Միջառարկայական կապեր

**Գրականություն:** Կետադրության դերի կարևորումը գրական ստեղծագործության ստեղծման, ընթերցման, ընկալման, վերարտադրության գործում:

**Բնագիտամաթեմատիկական առարկաներ:** Կետադրության առանձնահատկությունների վերհանումը գիտական տեքստերի մեկնաբանության ժամանակ: Տեքստերի բովանդակության փոխանցումը ճիշտ կետադրության միջոցով:

**Հասարակագիտություն:** Գործնական գրություններում կետադրության կարևորում և կիրառում:

**Օտար լեզուներ:** Օտար լեզուներում կիրառվող կետադրություն. նմանությունների և տարբերությունների վերհանում:

**Արվեստ:** Բեմական արտահայտիչ խոսքի ձևավորում առոգանության նշանների միջոցով:

**Ֆիզիկական կուլտուրա:** Ճիշտ և կանոնավոր շնչառության դերի ընդգծումը կետադրությամբ հարուստ տեքստերի ընթերցանության ժամանակ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

**Թեմա 5. Գործնական գրություններ** (տե՛ս 10-րդ դասարանի ծրագրում ընդգրկված «Գործնական գրություններ» բաժինը)

**12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

(շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 34)

**Թեմա 1**

**ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՈՃԵՐ**

**Հիմնական նպատակները**

Ձևավորել գիտելիք ոճերի առանձնահատկությունների մասին, զարգացնել դրանք կիրառելու հմտություններ:

Նպաստել ոճերի բազմազանության կարևորության արժևորմանը խոսք կառուցելիս:

Զարգացնել հաղորդակցական հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. Ճանաչի, համադրի և տարբերակի ոճերի տեսակները:
2. Տարբերի գործառական ոճերի տեսակները, կիրառի համապատասխան խոսքային միջավայրում:
3. Կիրառի առօրյա-խոսակցական ոճը ոչ պաշտոնական միջավայրում:
4. Ելույթ ունենա՝ կիրառելով հրապարակախոսական ոճին բնորոշ լեզվական միջոցներ:
5. Կառուցի առօրյա-խոսակցական և հրապարակախոսական ոճերի կիրառմամբ ոչ ծավալուն խոսք:
6. Կազմի գեղարվեստական տեքստ՝ օգտագործելով գեղարվեստական ոճին բնորոշ առանձնահատկություններ:
7. Կազմի վարչական տեքստեր՝ պահպանելով կառուցվածքային առանձնահատկությունները:
8. Կազմի գիտական տեքստեր՝ կիրառելով համապատասխան լեզվական իրողություններ և պահպանելով կառուցվածքային առանձնահատկությունները:
9. Կազմի կապակցված խոսք խառը ոճերով:
10. Հիմնավորի ոճերի բազմազանության անհրաժեշտությունը խոսք կառուցելիս:

**Բովանդակություն**

- Ոճի տեսակները (գործառական, անհատական և իրադրական)
- Գործառական ոճեր, դրանց տեսակները
- Առօրյա-խոսակցական ոճ
- Հրապարակախոսական ոճ
- Գեղարվեստական ոճ
- Վարչական ոճ
- Գիտական ոճ

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. Ներկայացնել խոսքի ոճերի առանձնահատկությունները՝ նշելով նմանություններն ու տարբերությունները:
2. Կազմել տվյալ իրադրությանը համապատասխան երկխոսություն, ներկայացնել լսարանին:

**Կառուցվածք և գործառույթ**  
Խոսքի տրամաբանական կառուցվածքի ապահովումը միտքը ճիշտ փոխանցելու նպատակով:

3. Գեղարվեստական գրականությունից դուրս գրված հաստատվածներում *ընդգծել* գրողների լեզվին և ոճին բնորոշ առանձնահատկությունները:
4. *Կազմել* երկխոսություն՝ ընդգծելով զրուցակիցների խոսքի ոճական առանձնահատկությունները:
5. Տրված տեքստում *ցույց տալ* առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառային, դարձվածային և քերականական իրողություններ:
6. Կարդացած գրականությունից *բերել* առօրյա-խոսակցական ոճին բնորոշ օրինակներ, դրանք *ներկայացնել* երկխոսությամբ:
7. *Կազմել* երկխոսություններ դպրոցի անցուդարձի մասին՝ կիրառելով առօրյա-խոսակցական ոճին բնորոշ լեզվական միջոցներ:
8. *Գրել* առօրյա-խոսակցական ոճով գովազդային տեքստ, *նկարահանել* տեսահոլովակ:
9. Տրված տեքստում *գտնել* հրապարակախոսական ոճին բնորոշ բառային, դարձվածային և քերականական իրողություններ:
10. *Թվարկել և բացատրել* հրապարակախոսական ոճի առանձնահատկությունները:
11. *Կազմել* հրապարակախոսական ոճին բնորոշ խոսք հանրային հնչեղություն ունեցող թեմայի շուրջ:
12. *Գրել* որևէ մրցույթում հաղթող մասնակցի ելույթը և *ներկայացնել*:
13. *Կազմակերպել* երիտասարդությանը հուզող թեմայով բանավեճ՝ կիրառելով հրապարակախոսական ոճին բնորոշ լեզվական միջոցներ:
14. *Համեմատել* հրապարակախոսական և գեղարվեստական ոճերը, Վենի տրամագրի միջոցով *ցույց տալ* նմանություններն ու տարբերությունները:
15. *Գրել* փոքրիկ պատմվածք մեր կողքին ապրող հերոսների մասին՝ կիրառելով գեղարվեստական ոճին բնորոշ առանձնահատկություններ:
16. *Գրել* ոչ ծավալուն պատմվածք, նովել, ակնարկ՝ կիրառելով տրված բառերը և արտահայտությունները:
17. Տրված տեքստում *գտնել* վարչական ոճին բնորոշ բառային և քերականական իրողություններ:
18. *Գրել* հանձնարարված թեմայով զեկուցում:
19. *Կազմակերպել* դերախաղ՝ «Դատական նիստ»՝ կիրառելով վարչական ոճին բնորոշ լեզվական միջոցներ:
20. *Գրել* կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ զեկույց:
21. Տրված տեքստում *գտնել* գիտական ոճին բնորոշ բառային և քերականական իրողություններ:

**Պատճառ և հետևանք**  
 Խոսքում անհրաժեշտ պատճառա՝ տևանքային կապերի ստեղծում:

**Անհատ և հարաբերություններ**  
 Խոսքի միջոցով վերաբերմունքի դրսևորում տարբեր իրավիճակներ, մարդկային և հասարակական հարաբերություններ ներկայացնելիս:

<p>22. <i>Կազմել</i> գիտական ոճի տեքստ՝ ընտրելով բնագիտական որևէ թեմա:</p> <p>23. <i>Համեմատել</i> տրված գիտական և գեղարվեստական ոճերով տեքստերը, նշել տարբերությունները:</p> <p>24. Տրված բառերը <i>կիրառել</i> խոսքում որպես տերմիններ և որպես համագործածական բառեր:</p> <p>25. <i>Որոշել</i> նշված տեքստերում գործածված գործառական ոճի տեսակները:</p> <p>26. <i>Կազմել</i> աղյուսակ՝ յուրաքանչյուր սյունակում գրելով ուսումնասիրած ոճին բնորոշ առանձնահատկություններ, <i>կատարել</i> համեմատական վերլուծություն:</p> <p>27. Տրված նյութը վերաշարադրել տարբեր ոճերով, <i>ցույց տալ</i> տարբերությունները:</p>	
---	--

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գրական ստեղծագործություններում կիրառվող առօրյա-խոսակցական և հրապարակախոսական ոճերին բնորոշ լեզվական իրողությունների ուսումնասիրում:

**Օտար լեզուներ:** Մասնագիտական տեքստերի թարգմանություն: Թարգմանական առանձնահատկությունների վերհանում:

**Հասարակագիտություն:** Հրապարակախոսական ոճի կիրառում դատական նիստերում: Վարչական ոճի կիրառում գործնական գրություններում:

**Բնագիտամաթեմատիկական առարկաներ:** Գիտական ոճի առանձնահատկությունների վերհանում մասնագիտական տեքստերում, տերմինների կիրառություն:

**Արվեստ:** Բեմական արվեստում տարբեր ոճերի ընտրություն և կիրառում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

**Թեմա 2**

**ՈՃԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հիմնական նպատակները**

*Նպաստել* լեզվի ոճի հատկությունների պահպանմանը խոսք կառուցելիս:  
*Զարգացնել* հաղորդակցական հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. *Համադրի* ոճի հատկությունները՝ նշելով տարբերությունները:
2. *Կազմի* տեքստ՝ պահպանելով ոճի հատկությունները:



3. *Փոխանցի* տեքստի բովանդակությունը՝ պահպանելով ոճական առանձնահատկությունները:
4. Տեքստը *ենթարկի* փոփոխությունների (սեղմել, ընդարձակել, պարզեցնել, հարստացնել բառերով և արտահայտություններով):
5. *Թարգմանի* տեքստեր՝ պահպանելով ոճի հատկությունները:
6. *Հիմնավորի* ոճի հատկությունների պահպանումը խոսքում:

**Բովանդակություն**

- Գաղափար ոճի հատկությունների մասին
- Ոճի հատկությունների տեսակները

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. *Ներկայացնել* տրված տեքստի ոճի հատկությունները:
2. Տրված տեքստը *ենթարկել* փոփոխությունների. սեղմել կամ ընդարձակել:
3. *Կազմել* տեղեկատվական տեքստ՝ պահպանելով ոճի համապատասխան հատկություններ՝ պարզություն, ճշգրտություն և այլն:
4. *Ստեղծել* գիտական ոչ ծավալուն տեքստ՝ պահպանելով ոճի համապատասխան հատկություններ՝ ճշգրտություն, բովանդակայնություն, կանոնավորություն և այլն:
5. *Գրել* ելույթ՝ պահպանելով տվյալ ոճին համապատասխան հատկություններ՝ բազմազանություն, պատկերավորություն, հուզականություն և այլն:
6. *Գրել* գեղարվեստական ոչ ծավալուն ստեղծագործություն՝ պահպանելով ոճի համապատասխան հատկություններ՝ հուզականություն, պատկերավորություն և այլն:
7. *Նախապատրաստել և վարել* հարցազրույց հասակակիցների հետ՝ պահպանելով ոճի համապատասխան հատկություններ՝ բովանդակայնություն, հուզականություն և այլն:
8. *Ստեղծել* ժամանակակից թեմաներով բեմագիր (սցենար)՝ պահպանելով ոճի համապատասխան հատկություններ՝ արտահայտչականություն, հուզականություն և այլն:
9. *Գրել* ոճի՝ տրված տեքստում տեղ գտած բացասական հատկանիշները (ձգձգվածություն, անկանոնություն, բառապաշարի աղքատություն և այլն), *խմբագրել* տեքստը՝ ուղղելով դրանք:

**Պատճառ և հետևանք**  
 Խոսքում անհրաժեշտ պատճառահետևանքային կապերի ստեղծումը:

**Անհատ և հարաբերություններ**  
 Ոճի հատկությունների պահպանումը տարբեր իրավիճակներ, մարդկային և հասարակական հարաբերություններ ներկայացնելիս:

**Անհատական և մշակութային արտահայտում**  
 Խոսքի ոճական առանձնահատկությունների կարևորությունը գաղափարներ, համոզմունքներ փոխանցելիս, եզրահանգումներ կատարելիս:

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գեղարվեստական երկերում ոճի հատկությունների պահպանման հիմնավորում:  
**Բնագիտամաթեմատիկական և հասարակագիտական առարկաներ:** Մասնագիտական տեքստերում ոճի համապատասխան հատկությունների կիրառում:  
**Օտար լեզուներ:** Օտարալեզու տեքստերի թարգմանություններ ոճի հատկությունների

<p>պահպանմամբ:</p> <p><b>Արվեստ:</b> Արվեստի ստեղծագործությունների վերլուծություն ոճի հատկությունների պահպանմամբ:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>
<p>Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42</p>

**Թեմա 3**

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

**Հիմնական նպատակները**

*Ձարգացնել* խոսքում պատկերավորման և արտահայտչական միջոցներ կիրառելու հմտություններ: *Նպաստել* պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառման անհրաժեշտության գնահատմանը խոսքում: *Ձևավորել* պատկերավոր խոսք կազմելու կարողություն:

**Վերջնարդյունքներ**

1. *Ճանաչի* պատկերավորման և արտահայտչական միջոցները, *տարբերակի* խոսքում:
2. *Հարստացնի* տեքստը պատկերավորման և արտահայտչական միջոցներով:
3. *Վերլուծի* տեքստը՝ վեր հանելով պատկերավորման և արտահայտչական միջոցները:
4. *Կազմի* պատկերավորման և արտահայտչական միջոցներով հարուստ գեղարվեստական տեքստ:
5. Պատկերավորման միջոցներով խոսք ձևավորելիս *կիրառի* բառի ուղիղ և փոխաբերական իմաստները:

**Բովանդակություն**

- Պատկերավորման միջոցներ (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, խորհրդանիշ և այլն)
- Արտահայտչական միջոցներ (կրկնություն, աստիճանավորում, հակադրություն և այլն )

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Տրված տեքստը <i>հարստացնել</i> մակդիրներով, <i>ցույց տալ</i> նրանց ոճական դերը:</li> <li>2. Տրված տեքստը <i>հարստացնել</i> համեմատություններով և փոխաբերություններով, <i>նշել</i> նրանց ոճական նշանակությունը:</li> </ol>	<p><b>Կառուցվածք և գործառույթ</b> Տարաբնույթ տեքստերի բովանդակության հաղորդումը պատկերավորման և արտահայտչական միջոցների օգնությամբ:</p>

3. *Գրել* մակդիրներով հարուստ փոքրիկ բանաստեղծություն:
4. Տրված տեքստում *առանձնացնել* պատկերավորման միջոցները, նույն տեքստը *հարստացնել* այլ պատկերավորման միջոցներով:
5. Տրված տեքստում *առանձնացնել* արտահայտչական միջոցները, *հարստացնել* այլ արտահայտչական միջոցներով:
6. *Գրել* գեղարվեստական ոչ ծավալուն ստեղծագործություն (պատմվածք, ակնարկ, նովել)՝ կիրառելով պատկերավորման և արտահայտչական միջոցներ:
7. *Շարադրել* միջազգային հետաքրքրության ներկայացնող թեմայով ոչ ծավալուն էսսե՝ կիրառելով պատկերավորման և արտահայտչական միջոցներ:
8. *Գրել* ելույթ (որևէ միջոցառման բացման խոսք)՝ կիրառելով պատկերավորման և արտահայտչական տարբեր միջոցներ, *ներկայացնել* լսարանին:
9. *Նկարագրել* արվեստի նախընտրելի գործը՝ օգտագործելով պատկերավորման և արտահայտչական միջոցներ:
10. Պատկերասրահում *հանդես գալ* որպես էքսկուրսավար և պատկերավորման միջոցների կիրառմամբ *ներկայացնել* հայտնի նկարիչների կտավները:
11. *Թարգմանել* տրված տեքստը՝ փորձելով պահպանել և փոխանցել պատկերավորման և արտահայտչական միջոցները, խոսքի գեղագիտական կողմը:
12. *Սրտեղծել* պատկերավորման և արտահայտչական միջոցներով հարուստ փոքրիկ բեմադրություն:

**Անհատական և մշակութային արտահայտում**  
 Պատկերավորման և արտահայտչական միջոցների օգնությամբ խոսք կառուցելու, տեսակետներ հայտնելու և քննարկելու հնարավորությունները:

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գեղարվեստական խոսքում պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառման հաճախականության ուսումնասիրում:  
**Հասարակագիտական առարկաներ:** Մասնագիտական տեքստերում արտահայտչական միջոցների կիրառում:  
**Օտար լեզուներ:** Պատկերավորման և արտահայտչական միջոցներով հարուստ օտարալեզու գեղարվեստական տեքստերի թարգմանություն:  
**Արվեստ:** Բեմական արվեստում պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառման վերլուծություն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

<b>Թեմա 4</b>	
<b>ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔ</b>	
<b>Հիմնական նպատակները</b>	
<p><i>Ձևավորել</i> գիտական շարադրանք կազմելու հմտություններ:  <i>Կարևորել</i> գիտական տեքստերի դերը գիտության զարգացման գործում:</p>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Նշի գիտական տեքստի առանձնահատկությունները, <i>նկարագրի</i> կառուցվածքը:</li> <li>2. <i>Կազմի</i> ծավալուն և ոչ ծավալուն գիտական տեքստեր:</li> <li>3. <i>Կազմի</i> գիտական տեքստ՝ ըստ նախօրոք տրված պլանի:</li> <li>4. <i>Կառուցի</i> գիտական տեքստ՝ ըստ տեքստի մասերի ճիշտ և հաջորդական դասավորության:</li> <li>5. <i>Կիրառի</i> բառապաշարի համապատասխան շերտերը գիտության տարբեր բնագավառներին առնչվող տեքստեր կազմելիս:</li> <li>6. <i>Թարգմանի</i> ոչ ծավալուն գիտական տեքստեր՝ պահպանելով ասելիքի նպատակը, խնդիրները, բառապաշարը, ոճական նկարագիրը:</li> <li>7. <i>Տարբերակի և կազմի</i> ծանոթագրությունները, ցանկերը, հավելվածները, ամփոփումները:</li> <li>8. <i>Կարգարի</i> անհրաժեշտ հղումներ:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Գիտական շարադրանք</li> <li>• Գիտական շարադրանք գրելու սկզբունքները</li> <li>• Գիտական շարադրանքի լեզուն</li> <li>• Հղումներ կատարելու ձևաչափերը</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Տրված գիտական տեքստում <i>առանձնացնել</i> առաջաբանը (ներածություն), հիմնամասը (վերլուծական մաս) և ամփոփիչ մասը (եզրակացություն):</li> <li>2. Տրված պարբերություններն այնպես <i>դասավորել</i>, որ ստացվի տրամաբանական հաջորդականություն ունեցող տեքստ:</li> <li>3. <i>Համեմատել</i> գիտական և գեղարվեստական փոքրածավալ տեքստերը, <i>նշել</i> տարբերությունները աղյուսակի առանձին հատվածներում:</li> <li>4. Համացանցից <i>գտնել</i> բնապահպանական թեմայով</li> </ol>	<p><b>Կառուցվածք և գործառույթ</b> Կառուցվածքի պահպանումը գիտական տեքստերում:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում</b> Գիտական տեքստերի միջոցով գաղափարներ, համոզմունքներ բացահայտելու ուղիները.</p>

<p>գիտահանրամատչելի տեքստ, համեմատել գիտական տեքստի հետ, նշել տարբերությունները:</p> <p>5. Կազմել գիտական տեքստ նախօրոք տրված քայլաշարով:</p> <p>6. Առաջ քաշել դրույթ, հիմնավորել փաստարկներով, մատնանշել աղբյուրները:</p> <p>7. Գրել գիտական տեքստ համապատասխան հետազոտական հարցի շուրջ՝ հենվելով առաջադրված աղբյուրների վրա, կատարել հղումներ:</p> <p>8. Նախօրոք ձեռք բերած փաստական նյութի, եղած կարծիքների ուսումնասիրության հիման վրա ստեղծել գիտական տեքստ հրատապ լուծում պահանջող խնդրի շուրջ:</p> <p>9. Կազմել բնագիտական որևէ թեմայով գիտական ոչ ծավալուն տեքստ՝ պահպանելով տեքստի կառուցվածքը:</p> <p>10. Գրել գիտական փոքրածավալ տեքստ տեխնոլոգիական որևէ նորարարության մասին:</p> <p>11. Տրված տերմիններով կազմել փոքրածավալ գիտական տեքստ՝ պատճառաբանելով դրանց կիրառությունը:</p> <p>12. Պատրաստել և ներկայացնել նախօրոք գրված գիտական փոքրիկ աշխատանքի վերաբերյալ բանավոր զեկուցում:</p> <p>13. Կազմակերպել բանավեճ որևէ հիմնախնդրի շուրջ՝ կիրառելով համապատասխան տերմիններ:</p> <p>14. Կազմել գիտական տեքստը լրացնող հավելվածներ, ցանկեր, ծանոթագրություններ:</p>	<p>մարդկության ստեղծած նյութական և հոգևոր արժեքների փոխանցումը:</p> <p><b>Պատճառ և հետևանք</b>  Գիտական խոսքին անհրաժեշտ պատճառահետևանքա յին կապերի ապահովումը տեքստում:</p>
---	--

**Թեմա 5. Գործնական գրություններ** (տե՛ս 10-րդ դասարանի ծրագրում ընդգրկված «Գործնական գրություններ» բաժինը):

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
7-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԾՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող ժամաքանակ

7-րդ դասարան- տարեկան՝ 102, շաբաթական 3 դասաժամ  
8-րդ դասարան- տարեկան՝ 102, շաբաթական 3 դասաժամ

**Գրականություն 7-րդ դասարան  
Տարեկան՝ 102, շաբաթական 3 դասաժամ**

**Թեմա 1**

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ**

**Նպատակներ**

- Տեքստի **ընկալում**. ամրապնդել պատկերացումը տեքստում պատկերված հայրենիքի, հայրենի բնության, մարդկային ապրումի և հույզի, գեղեցիկի մասին:
- Տեքստի **ուսումնասիրում**. ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության, տեքստի բառապաշարի, ոճի, կառուցվածքի, ժանրային առանձնահատկությունների, ժամանակի ընթացքում ժանրի որոշակի ձևափոխությունների մասին:
- Տեքստի **ստեղծում**. նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով և ստեղծագործաբար, բանավոր/գրավոր կերպով վերարտադրելուն, խաղի, հնարավորության դեպքում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մեկնաբանելուն: Համեմատել տարբեր տեքստեր, ընդհանրացումներ անել, ձևակերպել եզրակացություն, գրել կարծիք, համեմատական, վերլուծական շարադրանքներ:

**Վերջնարդյունքներ**

- **Վերարտադրի** գրողի կենսագրությունը, **ներկայացնի** ապրած ժամանակաշրջանը:
- **Բացատրի**՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:
- **Ներկայացնի** տեքստի կառուցվածքի առանձնահատկությունները, ասելիքը:
- **Ցույց տա** գրական սեռերի և ժանրերի տարբերությունը (ընդհանրական պատկերացում):
- **Բացահայտի** տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը:
- **Վեր հանի**՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում հույզը, զգացմունքը, ապրումը:
- **Ուսումնասիրի** տեքստի բառապաշարը, պատկերավոր արտահայտությունները, բացատրի դրանց դերը պատկեր ստեղծելու գործում:
- **Ստեղծագործաբար** վերաշարադիր տեքստի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները:
- **Համեմատի** տարբեր տեքստեր, ներկայացնի նմանությունները և տարբերությունները, **ընդհանրացումներ անի, ձևակերպի** եզրակացություն:
- Չափաժող երկի բովանդակությունը **շարադրի** արձակ ձևով:
- **Գրի** կարծիք գեղարվեստական երկի շուրջ:

**Բովանդակություն**

1. **Եղիշե Չարենց**, Ես իմ անուշ Հայաստանի, Հայրենիքում, Տաղ անձնական
2. **Նաիրի Չարյան**, Հայրենի տուն
3. **Հովհաննես . Շիրազ**, Թագադրում, Հայ ժողովրդի երգը
4. **Համո Սահյան**, Անտառում, Անունդ տալիս, Մասրենի
5. **Սիլվա Կապուտիկյան**, Քելե՛, լառ
6. **Պարույր Սևակ**, Քիչ ենք, բայց հայ ենք, Հայաստան, Ծնվել եմ
7. Թեմայի նպատակներին և աշակերտի տարիքային առանձնահատկություններին համապատասխանող հայ կամ արտասահմանյան դասական/ժամանակակից հեղինակի ստեղծագործություն ուսուցչի և աշակերտի ընտրությամբ:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

- **Կազմել** ցուցակ/սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության, ապրած դարաշրջանի ուշագրավ փաստերը:
- **Դուրս գրել** անձանոթ բառը/բառերը, իմաստը ճշտելով՝ ներկայացնել դասարանին, **ընդգծել** գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները:
- **Ընդգծել** տեքստի գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը/բանալի միտքը, **մեկնաբանել**:
- Կարդացած տեքստերի համար **ընտրել** միանման հույզ, ապրում առաջացնող խորհրդանիշներ (երաժշտություն, գույն և այլն):
- Մեկ նախադասությամբ **բնութագրել** կարդացած տեքստը:
- Բանաստեղծական տեքստը **վերածել** արձակի՝ կիրառելով հեղինակի գործածած խոսքի պատկերավորման միջոցները:
- **Համեմատել** կարդացած տեքստերը, **ցույց տալ** նմանությունները և տարբերությունները:
- **Գրել** կարծիք բանաստեղծության մասին:
- Բանաստեղծությունը **գովազդել** թուուցիկներով, բացիկներով, ստեղծել ձայնագիր (փողքասթ):

- **Օրինաչափություն** – բանաստեղծական ռիթմը:
- **Կառուցվածք և գործառույթ** – տաղաչափությունը:
- **Անհատական և մշակութային արժեհամակարգ** – գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները, ստեղծագործության գաղափարը:
- **Ժամանակ և տարածություն** – տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:
- **Անհատներ և հարաբերություններ** – տեքստում արտահայտված հույզը, զգացմունքը:
- **Կայունություն և փոփոխություն** – անցյալի և ժամանակակից գրողների տեքստերի համեմատությունը:

**Միջառարկայական կապեր**

**Պատմություն:** Պատմական ակնարկ գրողի կենսագրությանն ու տեղծագործությանն առնչվող ժամանակաշրջանի մասին:

**Հայոց լեզու:** Բառապաշար, խոսքի կաղապար և մտածողություն:

**Հասարակագիտություն:** Հույզեր, հոգեկան վիճակներ, որոնք դառնում են գրականության նյութ:

**Արվեստ:** Ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարազարդումներ, մեղեդիներ և այլն:

### Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ11, Հ23, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46, Հ52

## Թեմա 2

### ՊԱՏՄՎԱԾՔ

#### Նպատակներ

- Տեքստի **ընկալում**. ամրապնդել պատկերացումը տեքստում պատկերված մարդ-հասարակություն-բնություն փոխհարաբերությունների մասին:
- Տեքստի **ուսումնասիրում**. ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության, տեքստի բառապաշարի, ոճի, կառուցվածքի, ժանրային առանձնահատկությունների, ժամանակի ընթացքում ժանրի որոշակի ձևափոխությունների, դիպաշարի, կերպարի, կոնֆլիկտի մասին:
- Տեքստի **ստեղծում**. նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով բանավոր/գրավոր կերպով վերարտադրելուն, խաղի, հնարավորության դեպքում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մեկնաբանելուն:

#### Վերջնարդյունքներ

- **Վերարտադրի** գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը:
- **Բացատրի՝** ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, տեքստի կամ տեքստերի ասելիքի, ոճի, բառապաշարի, կառուցվածքի առանձնահատկությունները:
- **Ցույց տա** գրական սեռերի և ժանրերի տարբերությունը (ընդհանրական պատկերացում):
- **Բացահայտի** տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը:
- **Վեր հանի** գրական-գեղարվեստական կերպարի դերը տեքստում:
- **Վերլուծի** դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները (ընդհանրական պատկերացում նախադրության, հանգույցի, գործողության զարգացման, գագաթնակետի, գործողության անկման, լուծման մասին):
- **Մեկնաբանի** գրական կոնֆլիկտը (բախումը):
- Կյանքից և գրականությունից **առանձնացնի** կոնֆլիկտի տարբեր ձևեր:



- Ստեղծագործաբար **վերաշարադրի** երկի բովանդակությունը:
- **Գրի** մենանախոսություն գրական հերոսների մեկի անունից:
- **Շարադրի** կարծիք գրական երկի մասին:

**Բովանդակություն**

1. **Դերենիկ Դեմիրճյան**, Ավելորդը
2. **Ակսել Բակունց**, Սպիտակ ձին
3. **Մուշեղ Գալշոյան**, Մամփրե արքան
4. **Հրանտ Մաթևոսյան**, Կանաչ դաշտը
5. **Ուիլյամ Սարոյան**, Նռնենիները
6. Թեմայի նպատակներին և աշակերտի տարիքային առանձնահատկություններին համապատասխանող (հայ կամ արտասահմանյան դասական/ժամանակակից հեղինակի) ստեղծագործություն ուսուցչի ընտրությամբ

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

- **Կազմել** ցուցակ/սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության, ապրած դարաշրջանի ուշագրավ փաստերը:
- **Դուրս գրել** անձանոթ բառը/բառերը, իմաստը ճշտելով՝ ներկայացնել դասարանին, **ընդգծել** գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները:
- **Ընդգծել** գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը/բանալի միտքը, **մեկնաբանել**:
- **Դուրս գրել** յուրաքանչյուր կերպարին բնութագրող հատվածները:
- Կարդացած ստեղծագործություններից **ընտրել** հերոսներ /կերպարներ և **հորինել** վերջիններիս բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ (կենդանի, իր, գույն և այլն):
- **Համեմատել** կարդացած տեքստերը, **ցույց տալ** նմանությունները և տարբերությունները:
- **Գրել** ստեղծագործական փոխադրություն:
- Բանավոր և գրավոր **հաղորդել** դեպքերի ընթացքը որպես ականատես, մասնակից կամ կերպարներից մեկի անունից:
- Ըստ պատմվածքի **գրել բեմագիր** (սցենար). ընկերների հետ **բեմադրել** պատմվածքը:

- **Պատճառ և հետևանք** – դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները:
- **Կառուցվածք** և **գործառույթ** – գրական սեռերը և ժանրերը:
- **Անհատական** և **մշակութային** **արժեհամակարգ** – գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները, ստեղծագործության գաղափարը:
- **Ժամանակ և տարածություն** – գրողի կենսագրությունը, տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:
- **Անհատներ և հարաբերություններ** – գրական-գեղարվեստական կերպարը, տեքստում արտահայտված

	<p>կոնֆլիկտը:</p> <ul style="list-style-type: none"> <li>● <b>Կայունություն</b> և <b>փոփոխություն</b> – անցյալի և ժամանակակից գրողների տեքստերի համեմատություն:</li> </ul>
--	--

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու:** Բառապաշար, խոսքի կաղապար և մտածողություն:  
**Պատմություն:** Պատմական ակնարկ գրողի կենսագրությանն ու տեղծագործությանն առնչվող ժամանակաշրջանի մասին:  
**Հասարակագիտություն:** «Կոնֆլիկտ» հասկացությունը կյանքում և գրականության մեջ:  
**Արվեստ:** Ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարազարդումներ, մեղեդիներ և այլն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ1, Հ2, Հ11, Հ23, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ41, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46, Հ52

**Թեմա 3**

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊ**

**Նպատակներ**

- Տեքստի **ընկալում**. պատկերացում տալ տեքստում պատկերված ինքնակենսագրական պատումի, հուշի, գրողի և իր կյանքի անմիջական պատկերման մասին:
- Տեքստի **ուսումնասիրում**. ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության, տեքստի բառապաշարի, ոճի, կառուցվածքի, ժանրային առանձնահատկությունների, ժամանակի ընթացքում ժանրի որոշակի ձևափոխությունների, կերպարի, կոնֆլիկտի մասին:
- Տեքստի **ստեղծում**. նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով բանավոր/գրավոր կերպով վերարտադրելուն, խաղի, հնարավորության դեպքում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մեկնաբանելուն:

**Վերջնարդյունքներ**

- **Վերարտադրի** գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը:
- **Բացատրի՝** ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, տեքստի կամ տեքստերի ասելիքի, ոճի, բառապաշարի, կառուցվածքի

առանձնահատկությունները:

- **Ցույց տա** գրական սեռերի և ժանրերի տարբերությունը (ընդհանրական պատկերացում):
- **Բացահայտի** տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը:
- **Մատնանշի** գրական-գեղարվեստական կերպարի դերը, կերպարակերտման առանձնահատկությունները տեքստում:
- **Բացատրի** գրական կոնֆլիկտը (բախումը):
- Կյանքից և գրականությունից **առանձնացնի** կոնֆլիկտի տարբեր ձևեր:
<ul style="list-style-type: none"> <li>• Ստեղծել դիպաշարի զարգացման քարտեզ:</li> <li>• Պատկերել ստեղծագործության կառուցվածքային քարտեզը՝ յուրաքանչյուր կետի դիմաց նշելով տեքստից օրինակները:</li> <li>• Ձևակերպել բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր:</li> <li>• Հորինել ստեղծագործության կոնֆլիտից բխող այլ վերջաբան, քննարկել այլընտրանքային վերջաբանի թույլ և ուժեղ կողմերը:</li> <li>• Ստեղծել հարցաշարեր՝ համեմատելու համար նույն կամ տարբեր ստեղծագործությունների կերպաները, զարգացման փուլերը, ընդհանրություններն ու տարբերությունները:</li> <li>• Ձեռք բերած հմտությունները կիրառել անձանոթ տեքստեր վերլուծելու նպատակով:</li> <li>• Բեմադրել ստեղծագործության առանձին հատվածներ՝ շեշտադրելով թեմայից բխող հիմնախնդիրը:</li> <li>• Բեմադրել ստեղծագործության առանձին հատվածներ՝ առաջարկելով համապատասխան դերակատարներ, երաժշտություն, բեմական հանդերձանք, ձևավորում և այլն. հիմնավորել ընտրությունը:</li> <li>• Ստեղծագործությունների առանձին հատվածներին համահունչ ընտրել համապատասխան երաժշտություն կամ կատարել նկարազարդումներ՝ մեկնաբանելով ընտրությունը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>● <b>Պատճառ և հետևանք:</b> Դիպաշարի, գրական կերպարի զարգացումը:</li> <li>● <b>Կառուցվածք և գործառույթ:</b> Գրական սեռերը և ժանրերը:</li> <li>● <b>Անհատական և մշակութային արժեհամակարգ:</b> Գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական պատկերավոր ման միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության գաղափարը:</li> <li>● <b>Ժամանակ և տարածություն:</b> Գրական երկում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:</li> <li>● <b>Անհատներ և հարաբերություններ:</b> Տեքստում արտահայտված հույզը,</li> </ul>

	<p>զգացմունքը, գրական-գեղարվեստական կերպարը, կոնֆլիկտը:</p> <ul style="list-style-type: none"> <li>● <b>Օրինաչափություն:</b> Բանաստեղծական ռիթմ, հանգ:</li> <li>● <b>Կայունություն և փոփոխություն:</b> Կայուն և փոփոխական կերպարներ: Տեքստի ժամանակագրական հաջորդականություն և դրա խախտում:</li> <li>● <b>Փոփոխություն և զարգացում:</b> Ստեղծագործության դիպաշարի զարգացում, հարաբերությունների փոփոխություն և զարգացում:</li> </ul>
--	--

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու:** Լեզվի դրսևորումը կինոյում և թատրոնում (բանավոր խոսք, դիմախառ, հնչերանգ):

**Արվեստ** (կինո, թատրոն, երաժշտություն): Ցույց տալ գրական երկի դիպաշարի փոփոխությունները, կերպարի զարգացումները, էկրանավորման, բեմադրության ժամանակ: Համեմատել գրական երկը և արվեստի ստեղծագործությունը: Ի՞նչ է կորչում և ի՞նչ է ավելա նում բեմադրության կամ էկրանավորման ժամանակ: Ի՞նչ դեր ունի երաժշտությունը: **Գրական երկի թեմաներով ստեղծված արվեստի գործերի առանձնահատկությունները:** Ցույց տալ արվեստի մյուս ճյուղերին բնորոշ լեզվի (հնչյուն, գույն, նյութ) դերը կերպար, միջավայր, գաղափար կերտելու գործում: Ստեղծագործության, գրական կերպարի արտացոլումը արվեստում:

**Հասարակագիտություն:** Սոցիալական հարաբերությունները տարբեր միջավայրում և ժամանակներում, անհատների կենցաղը:

**Պատմություն:** Պատմական ժամանակաշրջանի բնութագիր:

**Աշխարհագրություն:** Գրական երկերում ի հայտ եկող բնակավայրերի մասին տեղեկություններ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ7, Մ11, Մ18, Մ21, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ37, Մ38, Մ39, Մ40, Մ41

## 1. Թեմա 2: Արժեքային համակարգ, աշխարհայացք

*Թեմայի նկարագրություն:* Գրական երկերի ուսումնասիրության ընթացքում քննվում են այն հարցերը, թե ինչպես են հասարակության կամ անհատի արժեքային համակարգը, անհատի գաղափարախոսությունը, աշխարհայացքը, կրթությունը, հավատը ազդում այլ անհատների, հասարակական և սոցիալական տարբեր խմբավորումների փոխհարաբերությունների, կոնֆլիկտների և դրանց լուծման վրա, որ արժեքների շնորհիվ են կայանում գաղափարական և ձևավորված աշխարհայացք ունեցող մարդիկ, և ինչպես են դաստիարակվում խաղաղասեր, բայց անհրաժեշտության դեպքում արդարացի պայքար մղող, անաչառ, առաքինի, գիտակից անհատներ:

### Նպատակներ

- Ուսումնասիրել ստեղծագործություններում գաղափարական հարցադրումները, դրանք դիտարկել նաև կոնֆլիկտների և լուծումների տեսանկյունից:
- Ուսումնասիրվող գրական երկերում կրթության, հավատի և արժեհամակարգի բաղադրիչները դիտարկել գրողի կենսագրության, ապրած ժամանակահատվածի և տարածության համատեքստում, ինչպես նաև դրանցից դուրս՝ հիմնավորելով կապը արդի խնդիրների հետ:
- Ձևավորել և զարգացնել արդարացի հանդուրժողականություն կրթության, հավատի, արժեքային համակարգի, աշխարհայացքի տարբերություններ ունեցող մարդկանց կամ սոցիալական խմբերի նկատմամբ:
- Բանավոր և գրավոր խոսքով արտահայտել հիմնավորված տեսակետներ:
- Ուսումնասիրել գրական երկերի տեքստերում կիրառված ոճական հնարները և դրանց ազդեցությունը ընթերցողի վրա:

### Վերջնարդյունքներ

1. **Ստեղծի** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական փաստերի և հուշագրության:
2. **Ուսումնասիրի և ցույց տա** պատմական ժամանակաշրջանի և գրողի կենսագրական փաստերի, նրա աշխարհայացքի կապերը:
3. **Վերաշարադրի** գրական երկերի բովանդակությունը:

4. **Մեկնաբանի** տեքստի հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները, **բացատրի** կապերը ընդհանուր թեմայի հետ:
5. **Ցույց տա** և **բացատրի** գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, կոնֆլիկտի զարգացումը և լուծման տարբերակները:
6. **Հիմնավորի** և **ներկայացնի** կերպարների կայուն և փոփոխական բնույթը՝ բերելով համապատասխան օրինակներ:
7. **Ցույց տա** կապը գրողի կենսագրության և ստեղծագործության միջև: **Արժևորի** գրող-մարդու և քաղաքացու գործունեությունը:
8. **Բացատրի՝** ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը, ինչպես է կերտում գրական կերպար:
9. **Ուսումնասիրի** գրական տեքստերի լեզուն, **ցույց տա** լեզվի դերը պատկեր, կերպար, միջավայր ստեղծելու, հույզեր փոխանցելու հարցում:
10. **Մեկնաբանի** գրողի վարպետությունը (միջտեքստայնություն, մտքի հոսք, ժամանակի հաջորդականության խախտում, բազմաձայնություն և այլն) գաղափար արտահայտելու և զգացմունքներ փոխանցելու առումներով:
11. **Վերլուծի** գրական կերպարի հոգեբանությունը, **մատնանշի** հեղինակի տրամադրվածության արտահայտությունը կերպարի հանդեպ:
12. **Հորինի** կարճ պատում՝ մտածված կերպով խախտելով կոնֆլիկտի և դիպաշարի զարգացումն ապահովող հաջորդականությունը::
13. Համագործակցությամբ կամ ինքնուրույնաբար **պլանավորի, մշակի և իրականացնի** նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով, **վերլուծի** սեփական աշխատանքի ընթացքը և արդյունքը:
14. **Գնահատի** հայ (նաև համաշխարհային) գրականության իմացությունը որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման, ազգային մշակութային արժեքների գնահատման կարևոր պայման:

Բովանդակություն

1. **Ավետիք Իսահակյան**, «Աբու-Լալա Մահարի պոեմը», «Համբերանքի չիբուխը» պատմվածքը
2. **Լևոն Շանթ**, «Հին աստվածներ» դրաման
3. **Դանիել Վարուժան**, «Հարճը» պոեմը, «Հեթանոս երգեր» ժողովածուից ընտրովի բանաստեղծություններ, «Հացին երգը» շարքը

Լրացուցիչ

1. **Վիկտոր Հյուգո**, «Փարիզի աստվածամոր տաճարը» վեպը
2. **Հենրիկ Սենկևիչ**, «Յո՞ երթաս» վեպը

Առաջարկվող գործունեության ձևեր

Խաչվող կամ



	<p align="center"><b>ընդհանրական հասկացություններ</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>● Կազմել դիպաշարի զարգացման քարտեզներ, կերպարների վերլուծության, համեմատական վերլուծության աղյուսակներ:</li> <li>● Ստեղծագործություններից վերցված առանձին հատվածների շուրջ կատարել գրական մեկնաբանություններ՝ թեմայի ընդհանրական գաղափարից ելնելով:</li> <li>● Գրել հետազոտական աշխատանքներ՝ ձևակերպելով հետազոտական հարցեր, ընտրելով թեմայից բխող վերնագրեր:</li> <li>● Կազմել վերլուծական, նախագծային աշխատանքի պլան:</li> <li>● Ստեղծել դիագրամներ՝ համեմատելով տարբեր հեղինակների ստեղծագործությունները միևնույն հարցի շուրջ: Կատարել գրավոր վերլուծություն:</li> <li>● Կազմել տարբեր կերպարներին բնորոշ լեզվական առանձնահատուկ կիրառությունների աղյուսակ: Մեկնաբանել հեղինակի լեզվական ընտրությունը կերպարները կերտելու հարցում:</li> <li>● Գրել նկարագրական, վերլուծական շարադրանքներ:</li> <li>● Ձևակերպել բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր:</li> <li>● Կազմակերպել բանավեճեր տարբեր ձևաչափերով:</li> <li>● Ստեղծել տեքստեր, գովազդեր, փոթբաստեր ևն. սահիկաշարեր:</li> <li>● Բեմադրել ստեղծագործության առանձին հատվածներ՝ առաջարկելով համապատասխան դերասանների, երաժշտություն, բեմական հանդերձանք, ձևավորում և այլն. հիմնավորել ընտրությունը:</li> <li>● Ստեղծագործությունների առանձին հատվածներին համահունչ ընտրել համապատասխան երաժշտություն կամ կատարել նկարագրողումներ՝ մեկնաբանելով ընտրությունը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>● <b>Պատճառ և հետևանք:</b> Դիպաշարի, գրական կերպարի զարգացումը:</li> <li>● <b>Անհատական և մշակութային արժեհամակարգ:</b> Գրողի կիրառած բառապաշարը, հերոսների խոսքը, գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության գաղափարը:</li> <li>● <b>Ժամանակ և տարածություն:</b> Տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: Հեղինակի ապրած ժամանակաշրջանը, պատմական, սոցիալական միջավայրը:</li> <li>● <b>Անհատներ և հարաբերություններ:</b> Տեքստում արտահայտված հույզը,</li> </ul>

	<p>զգացմունքը, գրական-գեղարվեստական կերպարի զարգացման ընթացքը տվյալ դիպաշարում, տեքստում արտահայտված կոնֆլիկտը:</p> <ul style="list-style-type: none"> <li>● <b>Կայունություն և փոփոխություն:</b> Կայուն և փոփոխական կերպարներ: Տեքստի ժամանակագրական հաջորդականություն և դրա միտումնավոր խախտում:</li> </ul>
--	---

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու:** Դիտարկել մայրենի (նաև օտար) լեզուն որպես համակարգ և կառուցվածք, ցույց տալ օրինաչափությունները: Ցույց տալ լեզվի դերը կերպար կերտելիս, միջավայր, գաղափար արտահայտելիս: Ինչպե՞ս է դրսևորվում լեզուն կինոյում և թատրոնում (բանավոր խոսք, դիմախաղ, հնչերանգ):

**Բնագիտություն, մաթեմատիկա:** Գրական սեռերը, ժանրերը դիտարկել օրինաչափությունների, համակարգի և կառուցվածքի տեսանկյունից: Զուգահեռներ տանել մաթեմատիկական, բնագիտության համակարգերի, դրանց կառուցվածքային առանձնահատկություն ների հետ:

**Հասարակագիտություն:** Կառավարման համակարգը՝ իբրև համակարգ և կառուցվածք: Սոցիալական և անձնային հարաբերությունները և դրանց փոփոխությունները՝ պայմանավորված որոշակի ժամանակաշրջանով և մշակութային առանձնահատկություններով:

**Արվեստ. գեղանկարչություն, երաժշտություն:** Համակարգը և կառուցվածքը ցույց տալ արվեստում: Ցույց տալ ստեղծագործության և կերպարի զարգացումները, էկրանավորման, բեմադրության յուրահատկությունները. ի՞նչ է կորչում և ի՞նչ է ավելանում բեմադրության կամ էկրանավորման մեջ: Ի՞նչ դեր ունի երաժշտությունը, տրամադրության, հույզերի արտահայտությունը երաժշտության, նկարչության, քանդակագործության մեջ, արվեստի մյուս ճյուղերին բնորոշ լեզվի (հնչյուն, գույն, նյութ) դերը կերպար, միջավայր, գաղափար

ստեղծելու գործում:

**Պատմություն:** Պատմական ժամանակաշրջանի, երևույթների անդրադարձ՝ կապված գրական երկում ներկայացվող ժամանակաշրջանի, պատմական իրադարձությունների հետ:

**Աշխարհագրություն:** Գրական երկերում արծարծվող աշխարհագրական վայրերի ճշգրտում քարտեզով և տեղեկատուներով:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ7, Մ11, Մ18, Մ21, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ37, Մ38, Մ39, Մ40, Մ41

**Թեմա 3: Արվեստ, գեղագիտություն, երևակայություն**

*Թեմայի նկարագիրը:* Այս թեմայի շրջանակում ուսումնասիրվում է, թե արվեստի մյուս տեսակների համեմատությամբ գրականությունը ինչպես է ազդում մարդու հույզերի և մտածողության վրա, փոխում կյանքի ու երևույթների մասին ընկալումները, գրական ստեղծագործություն ներն ինչպես են արտահայտում անհատի ոգեշնչումը, մարդու, կյանքի և բնության գեղագիտությունը, ստեղծարարությունը: Ինչ գործառույթ, արժեք և ազդեցություն ունի գրականությունը որպես արվեստ, ինչպես է տեքստի միջոցով փոխանցվում զգացմունքը: Ինչպես է ընթերցողն իր երևակայությամբ օգնում հեղինակին՝ հասկանալու, պատկերացնելու միջավայրը, ժամանակաշրջանը, կերպարի ապրումները: Որքանով են օգնում (կամ խանգարում) գրական երկերի թեմաներով ստեղծված արվեստի ստեղծագործությունները ընթերցողի գեղագիտական ընկալմանը:

**Նպատակներ**

- Մեկնաբանել գրականության միջոցով ընթերցողին փոխանցվող հույզերը, կյանքի և բնության գեղագիտությունը:
- Դիտարկել գեղեցիկի ընկալումը ժամանակի և տարածության մեջ՝ հիմնավորելով ուսումնասիրվող ստեղծագործություններից ընտրված հատվածներով:
- Արժևորել նկարագրությունների դերը գրական երկում որպես գաղափարի փոխանցման միջոց:
- Ըմբռնել գրականությունը որպես արվեստ, արժևորել երևակայության և ստեղծարարության դերը գրական երկերի ստեղծման, ընթերցողի աշխարհայացք, արժեհամակարգ և գեղագիտական ճաշակ ձևավորելու գործում:
- Ըմբռնել լեզվի դերը գրականության և արվեստի ոլորտներում գաղափար փոխանցելու հարցում:

- Ուսումնասիրել գրական երկերում կիրառված ոճական հնարների բազմազանությունը և դրա ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և բանականության վրա:

### Վերջնարդյունքներ

1. **Վերաշարադրի** գրական երկերի բովանդակությունը:
2. **Տեքստում գտնի և բացատրի** լեզվական իրողությունների կիրառումը (բառագործածություն, ձևաբանական և շարահյուսական կառուցվածներ)՝ տվյալ ժանրով պայմանավորված:
3. **Բացատրի**՝ ինչ դեր ունի լեզուն պատկեր, կերպար, միջավայր ստեղծելու, հույզեր փոխանցելու հարցում:
4. **Մեկնաբանի** ստեղծագործությունները՝ ելնելով ժանրային առանձնահատկություններից, **ցույց տա** տարբեր ժանրերին բնորոշ լեզվաոճական առանձնահատկությունները:
5. **Բացատրի** գրողի ընտրած ոճական միջոցների բազմազանությունը: **Գնահատի** դրանց ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և բանականության վրա:
6. **Մեկնաբանի** գրողի վարպետությունը (մտքի հոսք, ժամանակի հաջորդականության խախտում, միջտեքստայնություն և այլն) գաղափար արտահայտելու և զգացմունքներ փոխանցելու առումներով:
7. **Վերլուծի** գրական կերպարի հոգեբանական առանձնահատկությունները:
8. **Համեմատի, համադրի և հակադրի** տարբեր գրողների խոսքի ոճական առանձնահատկությունները, **ցույց տա** ամեն հեղինակի՝ գաղափար, հույզ փոխանցելու վարպետությունը և ինքնօրինակությունը:
9. **Ստեղծի** պատկերավոր և հուզական խոսք՝ նորովի կիրառելով սովորած պատկերավոր արտահայտությունները:
10. Համագործակցությամբ կամ ինքնուրույնաբար **պլանավորի, մշակի և իրականացնի** նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր տեխնիկական միջոցներով, **վերլուծի** սեփական աշխատանքը:
11. Գրական երկերի ուսումնասիրության միջոցով **հասկանա և արժևորի** ինչպես սեփական, այնպես էլ այլ ազգերի հոգեբանությունը, մշակույթը:

### Բովանդակություն

1. **Միսաք Մեծարենց**, սիրո և բնության երգեր
2. **Վահան Տերյան**, ընտրովի բնաստեղծություններ տարբեր շարքերից:
3. **Վահան Թեքեյան**, սիրային, հայրենասիրական և խոհական բանաստեղծություններ
4. **Ակսել Բակունց**, «Ալպիական մանուշակ», «Միրհավ», «Մթնածոր» պատմվածքները

Լրացուցիչ

1. **Ալեքսանդր Պուշկին**, Բանաստեղծություններ

- 2. Ալեքսանդր Բլոկ, Բանաստեղծություններ
- 3. Վասիլի Շուկչին, Պատմվածքներ
- 4. Ստեֆան Ցվայգ, Պատմվածքներ

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
--------------------------------	---

<ol style="list-style-type: none"> <li>1. Կազմել հեղինակների կիրառած լեզվաոճական առանձնահատկությունները ներկայացնող աղյուսակ: Մեկնաբանել հեղինակի լեզվի և ոճի ընտրությունը պատկերներ ստեղծելու, զգացմունքներ արտահայտելու հարցում:</li> <li>2. Համեմատել տարբեր հեղինակների կիրառած լեզվաոճական միջոցները, բացատրել գրող- ընթերցող կապը:</li> <li>3. Ձևակերպել բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր:</li> <li>4. Գրել նկարագրական, վերլուծական շարադրանքներ:</li> <li>5. Գրել հետազոտական աշխատանքներ՝ ձևակերպելով հետազոտական հարցեր, ընտրելով թեմայից բխող վերնագրեր:</li> <li>6. Ստեղծել սահիկաշարեր, գովազդերի տեքստեր, ռադիոհաղորդումներ:</li> <li>7. Գրական երկերին կամ դրանց առանձին հատվածներին համահունչ ընտրել համապատասխան երաժշտություն կամ կատարել նկարագրա դրամեր՝ մեկնաբանելով ընտրությունը:</li> <li>8. Հորինել խոսք՝ որպես վերնագիր կիրառելով ստեղծագործությունից ընտրված տող կամ բառակապակցություն:</li> <li>9. Ռուսերենից հայերեն թարգմանել նշվող հեղինակների ստեղծագործություն ներից որևէ մեկը:</li> </ol>	<ul style="list-style-type: none"> <li>● <b>Օրինաչափություն:</b> Բանաստեղծական ոճի, հանգ:</li> <li>● <b>Փոփոխություն և զարգացում:</b> Ստեղծագործության ներքին և արտաքին կոնֆլիկտ, կոնֆլիկտի զարգացում:</li> <li>● <b>Կառուցվածք և գործառույթ:</b> Գրական սեռերը և ժանրերը: Ստեղծագործության կառուցվածք:</li> <li>● <b>Անհատներ և հարաբերություններ:</b> Ստեղծագործության քնարական հերոսը իր զգացողություններով, հույզերով, գրական-գեղարվեստական կերպարը տարբեր հարաբերություններում , կոնֆլիկտի լուծումները:</li> </ul>
--	---

**Միջառարկայական կապեր**

**Հայոց և օտար լեզուներ:** Դիտարկել լեզուն որպես համակարգ և կառուցվածք, ցույց տալ օրինաչափությունները: Ցույց տալ լեզվի դերը կերպար, միջավայր, գաղափար ստեղծելու գործում: Բացատրել լեզվի գործառույթը առանձին կերպարների, հույզերի, միջավայրի

ժամանակաշրջանի պատկերման նպատակով: Ինչպե՞ս է դրսևորվում լեզուն քնարերգության մեջ և արձակում: Թարգմանություններ օտար լեզուներից:

**Բնագիտություն, մաթեմատիկա:** Քանաստեղծական չափը, ռիթմը, հանգը դիտարկել օրինաչափությունների, համակարգի և կառուցվածքի տեսանկյունից: Զուգահեռներ տանել մաթեմատիկական, բնագիտության համակարգերի, կառուցվածքների հետ:

**Հասարակագիտություն:** Սոցիալական և անձնային հարաբերությունները և դրանց փոփոխությունները՝ պայմանավորված որոշակի ժամանակաշրջանով և մշակութային առանձնահատկություններով:

**Արվեստ (գեղանկարչություն, երաժշտություն):** Համակարգը և կառուցվածքը ցույց տալ արվեստում: Ինչպե՞ս է պատկեր-զգացմունքը փոխանցվում երաժշտության, նկարչության, քանդակագործության մեջ, արվեստի մյուս ճյուղերին բնորոշ լեզվի ( հնչյուն, գույն, նյութ) միջոցով:

**Պատմություն:** Պատմական ժամանակաշրջանի, երևույթների անդրադարձ՝ կապված գրական երկում ներկայացվող ժամանակաշրջանի, պատմական իրադարձությունների հետ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ7, Մ11, , Մ18, Մ21, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ37, Մ38, Մ39, Մ40, Մ41

**Թեմա 4: Քաղաքականություն, ուժ, արդարություն**

*Թեմայի նկարագրություն:* Գրական երկերի ուսումնասիրության միջոցով քննարկվում են մարդու իրավունքների և պարտականությունների, երկրի կառավարման համակարգի, ուժի և օրենքի գերիշխանության, հարստության և նյութական միջոցների բաշխման, արդարության սահմանափակումների, հանուն արդարության մղվող պայքարի, հավասարության և անհավասարության, մարդու իրավունքների, խաղաղության և հակամարտությունների արդարացի հաղթահարման հարցերը: Քննարկվում են քաղաքական պայքարում կորսված հայրենիքի և օտար ափերում ապրող անհատի խեղված ճակատագրի կապը, իր ազգային արմատներից կտրված անհատի ողբերգությունը, առանձին անհատների ինքնազոհողության պատրաստակամությունը հանուն ազգի և հայրենիքի հարատևման:

**Նպատակներ**

- Քննարկել մարդու՝ որպես իր երկրի քաղաքացու իրավունքների ու պարտականությունների խնդիրը, պետության դերը անհատի կենսագործունեության հարցում:
- Բացահայտել պատմական ժամանակաշրջանի, երկրի քաղաքական իրավիճակի և անհատի ճակատագրի կապը. ցույց տալ դրանց պատկերումը գրական երկերում:
- Դիտարկել ուժի (հոգևոր, ֆիզիկական, մտքի, կամքի և այլն) և իշխանության բազմազան ձևերի ազդեցությունը անհատի կյանքի և հոգեբանության վրա և դրանց արձարծումը գրականության մեջ, տարբերի ժանրերի երկերում:
- Դիտարկել երկրի և ժողովրդի գոյության մարտահրավերները և հանուն արդարության մղվող պայքարը ուժի գերիշխանության պայմաններում:
- Դիտարկել արդարության սահմանափակումների, հավասարության և անհավասարության, խաղաղության և հակամարտությունների հիմնահարցերի լուծումները տեղական և համաշխարհային իրավիճակներում և դրանց արտացոլումը գրական ստեղծագործություն ներում:
- Քննարկել մարդու, ազգի ապրելու իրավունքների պաշտպանության խնդիրը և դրա արտացոլումը գրական երկերում:

### **Վերջնարդյունքները**

1. **Ներկայացնի** գրողների կենսագրական փաստերը, **ստեղծի** հեղինակի գրական դիմանկարը:
2. Ընդհանրական գծերով **ներկայացնի** գրողի ապրած ժամանակաշրջանը, ցույց տա ժամանակաշրջանի և գրական երկի ստեղծման առնչությունները:
3. **Վերաշարադրի** գրական երկի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարները:
4. **Կազմի** երկի դիպաշարի քարտեզը, ցույց տա դիպաշարի տարրերի առկայությունը ստեղծագործության մեջ:
5. **Համեմատի** սկզբնաղբյուր հանդիսացող և գրական երկի տեքստերը (բանահյուսություն և Քաջ Նազար, Եղիշեի երկը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», Խորենացու վիպերգը և Նաիրի Զարյանի դիցապատմական ողբերգությունը), մատնանշի ընդհանրությունները և տարբերությունները:
6. **Ուսումնասիրի** գրական երկի լեզուն և ոճը, **համեմատի** տարբեր ստեղծագործություններ, նշի դրանց լեզվաոճական ընդհանրությունները և տարբերությունները:
7. **Կազմի խոսք՝** կիրառելով գրական երկից սովորած բառերը, պատկերավոր արտահայտությունները:
8. **Գրի** վերլուծական-դատողական շարադրանք՝ նախապես ձևակերպելով հարց, մշակելով գրելիքի պլան:
9. **Արժևորի** գրական երկերի գաղափարական բովանդակության և հեղինակի ասելիքի

ազդեցությունը սեփական աշխարհայացքի ձևավորման վրա, ինչպես նաև ինքնազարգացման, ինքնադաստիարակության առումներով:

**Բովանդակություն**

1. **Դերենիկ Դեմիրճյան**, «Վարդանանք» պատմավեպը, «Քաջ Նազար» կատակերգությունը
2. **Եղիշե Չարենց**, «Հարդագողի ճամփորդները» բալլադը, «Դանթեական առասպել», «Վահագն», «Պատմության քառուղիներով» պոեմները, «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը
3. **Շահան Շահնուր**, «Նահանջը առանց երգի» վեպը
4. **Նաիրի Ջարյան**, «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը
5. **Հովհաննես Շիրազ**, «Բիբլիական» պոեմը, հայրենասիրական բանաստեղծություններ ընտրությամբ
6. **Կոստան Ջարյան**, «Նավը լեռան վրա» վեպը
7. **Գուրգեն Մահարի**, «Ծաղկած փշալարեր» ինքնակենսագրական վիպակը
8. **Պարույր Սևակ**, «Անլուելի զանգակատուն» պոեմը, բանաստեղծություններ «Եղիցի լույս» շարքից

Լրացուցիչ

1. **Հոֆման**, «Գաճաճ Ցախեսը» վիպակը
2. **Ալեքսանդր Սոլժենիցին**, «Գուլագ Արշիպեյլագ» վեպը
3. **Ֆրանց Վերֆել**, «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը

**Առաջարկվող գործունության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

- Կազմել հեղինակների կիրառած լեզվաոճական առանձնահատկությունները ցույց տվող աղյուսակ: Մեկնաբանել հեղինակի լեզվական ընտրությունը պատկերներ ստեղծելու, հույզեր արտահայտելու հարցում:
- Համեմատել տարբեր հեղինակների կիրառած լեզվաոճական միջոցները, բացատրել գրող- ընթերցող կապը:
- Ձևակերպել բովանդակային, գաղափարական և

- **Փոփոխություն և զարգացում:** Ստեղծագործության ներքին և արտաքին կոնֆլիկտ, կոնֆլիկտի զարգացում:
- **Կառուցվածք և գործառույթ:** Ստեղծագործության



<p>բանավիճային հարցեր:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Կատարել գրական հետազոտություններ՝ ուղղորդվելով առաջադրված հարցերով:</li> <li>• Ստեղծել սահիկաշարեր, գովազդերի տեքստեր, ռադիոհաղորդումներ և այլն:</li> <li>• Գրական երկի բովանդակությանը համահունչ ընտրել համապատասխան երաժշտություն կամ նկարազարդումներ անել՝ մեկնաբանելով ընտրությունը:</li> <li>• Գրել նկարագրական, վերլուծական շարադրանքներ:</li> <li>• Հետազոտական աշխատանք կատարել՝ ձևակերպելով հարց, ընտրելով թեմայից բխող վերնագրեր:</li> <li>• Հորինել պատկերավոր և հույզարտահայտող խոսք՝ որպես վերնագիր կամ բնաբան կիրառելով տվյալ ստեղծագործությանից ընտրված տող կամ բառակապակցություն:</li> <li>• Օտար լեզուներից հայերեն թարգմանել հայ ժողովրդի, հայրենի, Հայաստանի մասին բանաստեղծություններ, ակնարկներ:</li> </ul>	<p>կառուցվածք:</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Անհատներ և հարաբերություններ:</b> Ստեղծագործության քնարական հերոսը իր զգացողություններով, հույզերով, աշխարհայացքով, կերպարը և հասարակությունը. հարաբերությունները, կոնֆլիկտը, դրա լուծումները:</li> <li>• <b>Ժամանակ և տարածություն:</b> Ստեղծագործության մեջ պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:</li> <li>• <b>Պատճառ և հետևանք:</b> Դիպաշարի, գրական կերպարի փոփոխության պատճառները և հետևանքների տրամաբանությունը:</li> </ul>
--	--

**Միջառարկայական կապեր**

**Հայոց լեզու:** Դիտարկել լեզուն (նաև օտար լեզուները) որպես համակարգ և կառուցվածք, ցույց տալ օրինաչափությունները: Ցույց տալ լեզվի դերը կերպար կերտելու, միջավայր ստեղծելու, գաղափար հաղորդելու գործում: Թարգմանություններ օտար լեզուներից: Հայերենի և օտար լեզուների բառապաշարի, քերականական կառուցվածքի համեմատություն:

**Արվեստ (գեղանկարչություն, երաժշտություն):** Համակարգը և կառուցվածքը ցույց տալ արվեստում: Ստեղծագործության և կերպարի զարգացումները, էկրանավորման, բեմադրության յուրահատկությունները. ի՞նչ է կորչում և ի՞նչ է ավելանում բեմադրության կամ էկրանավորման մեջ: Ի՞նչ դեր ունի երաժշտությունը (գեղանկարչությունը,

քանդակագործությունը) գրական երկի բովանդակության, գաղափարի վերարտադրամն մեջ:

**Հասարակագիտություն:** Կառավարման համակարգը. համակարգ և կառուցվածք: Սոցիալական հարաբերությունները՝ պայմանավորված որոշակի ժամանակաշրջանով և մշակութային առանձնահատկություններով:

**Պատմություն:** Պատմական ժամանակաշրջանի, երևույթների անդրադարձ՝ կապված գրական երկում ներկայացվող ժամանակաշրջանի, պատմական իրադարձությունների հետ:

**Աշխարհագրություն:** Գրական երկերում, գրողների կենսագրության մեջ հանդիպող տեղանունների ճշգրտում քարտեզով և տեղեկատուներով:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ7, Մ11, Մ21, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ37, Մ38, Մ39, Մ40, Մ41

**12- ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**  
**Տարեկան 34 դասաժամ**

**Թեմա 1: Մարդ, բնություն, տեխնոլոգիա**

*Թեմայի նկարագրություն:* Հիմնախնդրի շրջանակում քննարկվում է, թե ինչպես է գրականությունն արտացոլում մարդու և բնության փոխհարաբերությունները: Գիտության, տեխնոլոգիայի զարգացումն ու մեդիան ինչպես են ազդում հասարակության և անհատի հոգեբանության վրա, ինչպես է գրականությունը արտացոլում գիտության զարգացման և առաջընթացի գաղափարները: Ինչ փոփոխություններ են կատարվում անհատի մտածողության մեջ, արժեքային համակարգում, նրա կենցաղում գիտության և տեխնոլոգիայի զարգացմանը զուգընթաց:

**Նպատակներ**

- Ցույց տալ մարդու և բնության փոխհարաբերությունների ներդաշնակությունը և դրա կարևորությունը անհատի կյանքում:
- Դիտարկել գրականության դերը տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում մարդ-բնություն փոխհարաբերությունների ներդաշնակ զարգացման ուղղությամբ:
- Ելնելով մշակութային առանձնահատկություններից՝ քննարկել գրականության դերը գիտության զարգացման և տեխնոլոգիական առաջընթացի, նոր գաղափարներ առաջադրելու գործում:
- Ուսումնասիրել գրական երկերում անհատի (հեղինակի) հոգեբանության դրսևորումները: Կերպարին բնորոշ բնավորության գծերի, նկարագրի վերլուծության միջոցով հասկանալ և արժևորել մարդուն, ինչպես նաև սեփական անձը:

- Ուսումնասիրել գրական տեքստերը, համեմատել, ցույց տալ լեզվաոճական ընդհանրությունները և տարբերությունները:

### Վերջնարդյունքներ

1. **Ստեղծի** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական փաստերի և հուշագրության:
2. **Ուսումնասիրի** գրողի ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, **ցույց տա** գրողի, նրա ստեղծագործության և ժամանակաշրջանի, միջավայրի, բնության աղերսները:
3. **Վերաշարադրի** գրական երկի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը:
4. **Ուսումնասիրի** գրական արձակ երկի տեքստի բովանդակային շրջանակը՝ *ժամանակ-վայր-խնդիր-լուծման ուղի-լուծում առաջարկող անձ-գործողություն-արդյունք* հերթագայությամբ:
5. **Ուսումնասիրի** քնարական երկերի տեքստերը, **կազմի** մոդալության (զգացական) աղյուսակներ:
6. **Ուսումնասիրի** գրական տեքստերի լեզուն և ոճը. **ցույց տա** բնության պատկերների և մարդու հոգեբանության համադրությունները:
7. **Վերլուծի** հեղինակի՝ պատկեր, կերպար կերտելու, հույզ, զգացում փոխանցելու առանձնահատկությունները:
8. **Վերլուծի** գրական կերպարի հոգեբանական առանձնահատկությունները:
9. **Համեմատի** տարբեր ոճերի, տարբեր ժանրերի ստեղծագործությունների տեքստեր, ընդհանրացնի և ներկայացնի իր եզրակացությունը բանավոր և գրավոր խոսքով:
10. Սեփական ուսումնասիրության արդյունքները **ներկայացնի** բանավոր և գրավոր խոսքով՝ զուգակցելով սահիկաշարով, տեսաֆիլմով, ռադիոհաղորդումով:
11. **Արժևորի** գրական երկերի վերլուծությունը որպես սեփական անձի զարգացման, ինքնաճանաչման և ինքնադաստիարակության միջոց:

### Բովանդակություն

1. **Համո Սահյան**, բանաստեղծություններ ընտրությամբ
2. **Ջահրատ**, «Մեծ քաղաքը» ժողովածուից բանաստեղծություններ ընտրությամբ
3. **Վահագն Դավթյան**, բանաստեղծություններ ընտրությամբ
4. **Հրանտ Մաթևոսյան**, «Մենք ենք, մեր սարերը» կամ «Աշնան արև» վիպակները
5. **Աղասի Այվազյան**, «Եռանկյունի» վիպակը
6. **Լևոն Խեչոյան**, պատմվածքներ

Առաջարկվող գործունեության ձևեր

Խաչվող կամ ընդհանրական հասկացություն

	ներ
<ul style="list-style-type: none"> <li>● Գրել հետազոտական աշխատանքներ՝ ձևակերպելով հետազոտական հարցեր, ընտրելով թեմայից բխող վերնագրեր:</li> <li>● Ստեղծել բանավոր կամ գրավոր ելույթներ՝ պահպանելով ակադեմիական ազնվության կանոնները (համապատասխան հղումներ, մեջբերումներ, գիտական աղբյուրների ուսումնասիրություններ և այլ):</li> <li>● Լսարանի առաջ հանդես գալ բանավոր ելույթով՝ ներկայացնելով սահիկաշար, պաստառ:</li> <li>● Համեմատել տարբեր ստեղծագործություններ կերպարների ստեղծման, կառուցվածքային տարրերի փոխկապակցվածության, ոճական միջոցների օգտագործման կամ այլ տեսանկյունից:</li> <li>● Մշակել բանավիճային հարցեր: Կազմակերպել և վարել բանավեճ:</li> <li>● Վարել հարցազրույցներ, կազմակերպել հարցումներ վերլուծել արդյունքները:</li> <li>● Օտար լեզուներից թարգմանել բանաստեղծություններ, պատմվածքներ, ներկայացնել լսարանին:</li> </ul>	<p><b>Օրինաչափություն:</b> Գրականության մեջ թափառող թեմաների կրկնությունները տարբեր ժամանակաշրջաններում :</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Գրական երկի, խոսքի կառուցվածքը, տաղաչափությունը:</p> <p><b>Անհատական և մշակութային արժեհամակարգ:</b> <b>Ստեղծագործության</b> մեջ արծարծվող մշակույթը, գրողի կիրառած բառապաշարը, գեղարվեստական պատկերավոր ման միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության գաղափարը:</p> <p><b>Անհատներ և հարաբերություններ:</b> Տեքստում արտահայտված հույզը, զգացմունքը, գրական կերպարը, կերպարների հարաբերությունները, կոնֆլիկտը:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	

**Հայոց լեզու:** Դիտարկել լեզուն (նաև օտար լեզուները) որպես համակարգ և կառուցվածք, ցույց տալ օրինաչափությունները: Ցույց տալ լեզվի դերը պատկեր, կերպար, միջավայր, գաղափար ստեղծելու գործում: Ինչպե՞ս է դրսևորվում լեզուն կինոյում և թատրոնում (բանավոր խոսք, դիմախաղ, հնչերանգ):

**Բնագիտություն, մաթեմատիկա:** Գրական սեռերը, ժանրերը, բանաստեղծական չափը, ռիթմը, հանգը դիտարկել օրինաչափությունների, համակարգի և կառուցվածքի տեսանկյունից: Զուգահեռներ տանել մաթեմատիկական, բնագիտության համակարգերի, կառուցվածքի հետ:

**Հասարակագիտություն:** Սոցիալական և անձնային հարաբերությունները՝ պայմանավորված պատմական ժամանակաշրջանով և մշակութային առանձնահատկություններով: Թափառող թեմաների արդիականությունը՝ պայմանավորված հասարակության խնդիրներով և սոցիալական հարաբերություններով:

**Արվեստ. գեղանկարչություն, երաժշտություն:** Համակարգը և կառուցվածքը ցույց տալ արվեստում: Ցույց տալ ստեղծագործության և կերպարի զարգացումները, էկրանավորման, բեմադրության յուրահատկությունները. Ի՞նչ փոփոխությունների է ենթարկվում գրական երկի բովանդակությունը բեմադրության կամ էկրանավորման ժամանակ: Ի՞նչ դեր ունի երաժշտությունը ներկայացման մեջ: գրական թեմաների արտահայտությունը գեղանկարչության, քանդակագործության մեջ:

**Պատմություն:** Պատմական ժամանակաշրջանի, երևույթների անդրադարձ՝ կապված գրական երկում ներկայացվող ժամանակաշրջանի, պատմական իրադարձությունների հետ: Քաղաքակրթությունը և նոր մարտահրավերների արձարծումը գրականության մեջ և պատմության դասագրքերում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ1, Մ7, Մ11, Մ18, Մ21, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ37, Մ38, Մ39, Մ40, Մ41

**Թեմա 2: Ժամանակակից և սփյուռքահայ գրականություն**

*Թեմայի նկարագրություն:* Քննարկման նյութը ժամանակակից գրականության մեջ համընդհանուր հիմնախնդիրների արձարծումն է. ինչպես է ժամանակակից և սփյուռքահայ գրականությունը շարունակում հայ գրականության ավանդույթները և անդրադառնում ժամանակի մարտահրավերներին, տեղական խնդիրները ինչպես են արտացոլվում համաշխարհային հիմնախնդիրների շրջանակում:

Ժամանակակից հայ և արտասահմանյան գրականության նմուշների ուսումնասիրությամբ ցույց է տրվում դասական և արդի գրականությունների ընդհանրությունները և տարբերությունները:

**Նպատակներ**

- Արժևորել հայ ժամանակակից և սփյուռքահայ գրականությունը:
- Ըմբռնել կապը հայ բազմադարյան գրականության թեմաների, ուղղությունների միջև, արժևորել մտածողության և ներկայացման ձևերի փոփոխություններն ու զարգացումները:
- Ժամանակակից և սփյուռքահայ գրականությունը դիտարկել համաշխարհային գրականության համապատկերում՝ ըմբռնելով մշակույթի, ժամանակի, տարածության, տեխնոլոգիական զարգացման գործոնները հայ գրականության զարգացման հեռանկարներում:

### Բովանդակություն

**Ժամանակակից և սփյուռքահայ** գրականություն. ընտրովի նմուշներ:

### Վերջնադրույնքներ

1. **Ստեղծի** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական փաստերի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի:
2. **Ուսումնասիրի և ցույց տա** գրողի, նրա ստեղծագործության և միջավայրի աղբյուրները:
3. **Վերաշարադրի** գրական երկի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարները:
4. **Ուսումնասիրի** քնարական երկերի տեքստերը, **կազմի** մոդալության (զգացական) աղյուսակներ:
5. **Ուսումնասիրի** գրական տեքստերի լեզուն և ոճը. **ցույց տա** արդի դարաշրջանի մարդու հոգեբանության առանձնահատկությունները:
6. **Վերլուծի** հեղինակի՝ պատկեր, կերպար կերտելու, հույզ, զգացում փոխանցելու առանձնահատկությունները:
7. **Վերլուծի** գրական կերպարի հոգեբանական առանձնահատկությունները թվային դարաշրջանում:
8. **Համեմատի** տարբեր ոճերի, տարբեր ժանրերի ստեղծագործությունների տեքստեր, ընդհանրացնի և ներկայացնի իր եզրակացությունը բանավոր և գրավոր խոսքով:
9. Սեփական ուսումնասիրության արդյունքները **ներկայացնի** բանավոր և գրավոր խոսքով՝ զուգակցելով սահիկաշարով, տեսաֆիլմով, ռադիոհաղորդումով:
10. Ժամանակակից կամ սփյուռքահայ գրողի ստեղծագործության համար **պատրաստի** տեսաֆիլմ, **մշակի** գովազդի տեքստ, տարածի սոցցանցերում:
11. **Կազմակերպի** հանդիպում ժամանակակից գրողի հետ՝ նախօրոք մշակելով հանդիպման բեմագիր (սցենար), հարցեր:
12. **Արժևորի** գրական երկերի վերլուծությունը որպես սեփական անձի զարգացման, ինքնաճանաչման և ինքնադաստիարակության միջոց:

## Միջառարկայական կապեր

**Հայոց լեզու:** Դիտարկել հայոց լեզուն որպես համակարգ և կառուցվածք, ցույց տալ օրինաչափությունները: Ցույց տալ լեզվի դերը կերպար, միջավայր, գաղափար ստեղծելու գործում: Ինչպե՞ս է դրսևորվում լեզուն ժամանակից և սիյուքահայ գրականության մեջ մտածողությունն ու արժեհամակարգը արտահայտելու գործում:

**Բնագիտություն, մաթեմատիկա:** Գրական երկը դիտարկել օրինաչափությունների, համակարգի և կառուցվածքի տեսանկյունից: Զուգահեռներ տանել մաթեմատիկական, բնագիտության համակարգերի, կառուցվածքի հետ:

**Հասարակագիտություն:** Գրականությունը որպես հասարակության կառուցվածքի, մտածողության, բարքերի, քաղաքական և սոցիալական հարաբերությունների արտահայտման միջոց: Նմանությունները և տարբերությունները հասարակագիտության դասագրքերից և գրականությունից ստացված տեղեկատվությունների միջև:

**Արվեստ. գեղանկարչություն, երաժշտություն:** Համակարգը և կառուցվածքը ցույց տալ արվեստում: Ցույց տալ ստեղծագործության և կերպարի զարգացումները, էկրանավորման, բեմադրության յուրահատկությունները. ի՞նչ է կորչում և ի՞նչ է ավելանում բեմադրության կամ էկրանավորման մեջ: Ի՞նչ դեր ունի երաժշտությունը, զգացողությունների արտահայտությունը երաժշտության, նկարչության, քանդակագործության մեջ, արվեստի մյուս ճյուղերին բնորոշ լեզվի ( հնչյուն, գույն, նյութ) դերը կերպար, միջավայր, գաղափար ստեղծելու գործում: ուսումնասիրել, թե գրական սյուժեները և կերպարները ինչ արտահայտություն են գտել արվեստում:

**Պատմություն:** Ժամանակակից կյանքի և իրադարձությունների արտացոլումը գրականության մեջ և ժամանակշրջանի ընկալման նմանություններն ու տարբերությունները լրագրերից, հեռուստատեսությունից ստացվող տեղեկատվության հետ զուգորդումների տեսանկյունից:

### Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ1, Մ7, Մ11, Մ18, Մ21, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ37, Մ38, Մ39, Մ40, Մ41

### Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. **Աբրահամյան Ս.**, Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., «Լույս», 2004:
2. **Աղայան Էդ.**, Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՀ, 1987:
3. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ, 2002:
4. **Ավետիսյան Զ.**, Գրական ստեղծագործության հոգեբանություն, ԵՊՀ, 2011
5. **Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.**, Հայոց լեզու, Եր., «Զանգակ», 2012:
6. **Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.**, Հնչյունաբանություն, Եր., «Զանգակ», 2008:

7. **Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.,** Ձևաբանություն, Եր., «Զանգակ», 2008:
8. **Ավետիսյան Յու. և ուրիշներ,** Հայոց լեզվի ուղեցույց, ԵՊՀ, 2017:
9. **Բախտին Մ.,** Ժամանակի և քրոնոտոպի ձևերը վեպում, Եր., «Անտարես», 2017:
10. **Գաբրիելյան Յու.,** Լեզվական հաղորդակցության տեսություն, ԵՊՀ, 2018:
11. **Գաբրիելյան Վ.,** Գրավոր խոսք, ԵՊՀ, 2004:
12. **Գասպարյան Ս., Մաթևոսյան Ա.,** Տեքստ, փոխաբերություն, մեկնաբանություն, ԵՊՀ, 2018:
13. **Գրականության տեսություն,** Հեղինակային խումբ, ԵՊՀ, Եր., 2016:
14. **Գրականության տեսության** արդի խնդիրներ, Եր., 2016:
15. **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.,** Շարահյուսություն, Եր., «Զանգակ», 2009:
16. **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.,** Բառագիտություն, Եր., «Զանգակ», 2007:
17. **Հայոց լեզու, գրականություն.** Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագրեր (1 –9-րդ դասարաններ), 2011:
18. **Հայոց լեզու, գրականություն.** Հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագրեր, ԿԳՆ ԾԻԳ, 2009:
19. **ՀՀ օրենքը լեզվի մասին,** 1993, մարտի 30, Հ.Ն-0773-Ի
20. **Հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների** կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, Եր., OSF – Armenia, CFOA, 2015:
21. Հանրակրթության պետական չափորոշիչ
22. **Մարգարյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն, Երևան, ԵՊՀ հրատ. , 1990:
23. **Մարգարյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Եր., ԵՊՀ, 1993:
24. **Ջրբաշյան Էդ.,** Գրականության տեսություն, Եր., ԵՊՀ, 1980:
25. **Սուրբիսյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, Եր., ԵՊՀ, 1982:
26. **Քալանթարյան Ժ.,** Դիտանկյուն, Եր., 2015:
27. **Вайншенк С.,** Законы влияния, «Манн, Иванов и Фербер», 2014:
28. **Гадамер Г.,Г.,** Актуальность прекрасного, М., "ИСКУССТВО“. 1991.
29. **Гальперин И.,Р.,**Текст как объект лингвистического исследования. М: КомКнига, 2006.
30. **Женетт Ж.,** Фигуры, Работы по поэтике, В 2-х томах, Том 2, М., Изд.-во им. Сабашниковых, 1998:
31. **Западное литературоведение 20-го века,** Энциклопедия, М., 2004:



32. **Зарубежная эстетика и теория литературы XIX - XX вв.** Трактаты, статьи, эссе, МГУ, 1987:
33. **Леонтьев А.А.**, Язык, речь, речевая деятельность. М., Просвещение», 1969.
34. **Леонтьев А.А.**, Основы психолингвистики, М., 1997.
35. **Лотман Ю. М.**, Семиосфера, СПб., 2000:
36. **Рэнд А.**, Искусство беллетристики, М., Астрель, АСТ, 2011.
37. **Тодоров Ц**, Поэтика, Структурализм: "за" и "против", Сб. статей, М., 1975:
38. **Тороп П. Х.**, Проблема интекста, Труды по знаковым системам XIV, Текст в тексте, Тарту 1981:
39. **Фатеева Н. А.**, Интертекст в мире текстов: Контрапункт интертекстуальности, М., КомКнига, 2007:
40. **Федеральные государственные образовательные стандарты.** <https://www.ibo.org/>.
41. **Шмид В.**, Нарратология, М., Языки славянской культуры, 2003:
42. **Approaches to learning** <https://xmltwo.ibo.org/publications/>
43. **Bal M.**, Narratology: Introduction to the Theory of Narrative, 2nd ed., Toronto/Buffalo/London, University of Toronto Press, 1997, reprinted 1999:
44. **Bordwell D., Thompson K.**, Film Art: An introduction, 8th ed., NY, 2008:
45. **English Language Arts and Literacy.** Grades Pre – Kindergarten to 12. Massachusetts Curriculum Framework 2017
46. **Gérard G.**, Palimpsests: Literature in the Second Degree, trans. by C. Newman and C. Doubinsky, Lincoln and London University of Nebraska Press, 1997:
47. **Gérard G.**, Paratexts: Thresholds of Interpretation, trans. by J. E. Lewin, Cambridge: Cambridge University Press, 1997:
48. **Gérard G.**, The Architext: An Introduction, trans. by Jane E. Lewin, Berkeley and Los Angeles: University of California Press, 1992:
49. **Cuddon J. A.**, The Penguin Dictionary of Literary Terms and Literary Theory, 4th ed., London, Penguin Books, 1999:
50. **Herrell L. A., Jordan M.**, 50 Strategies for Teaching English Language Learners, Fourth Edition, Boston, Pearson, 2012.
51. **Language scope and sequence.** International Baccalaureate, Peterson House.
52. **Language and literature guide** For use from September 2014/January 2015
53. **Language A: language and literature guide First assessment 2021**/<https://tinyurl.com/y9snw53s/>

54. **Language A:** literature guide First examinations 2015 <https://resources.ibo.org/data/d>
55. **Language A.** Teachers support material (First exam 2013) <https://resources.ibo.org/dp/subject-group/>
56. **Massachusetts Curriculum** framework for English language, arts, and literacy  
[https://drive.google.com/drive/folders/1tKWSGFPA5\\_38rO50sYI2YPfr5L09qIRN](https://drive.google.com/drive/folders/1tKWSGFPA5_38rO50sYI2YPfr5L09qIRN) 2014.
57. **MYP:From principles** into practice For use from September 2014/January 2015  
<https://resources.ibo.org>
58. **National Core Curriculum** for preparatory education for General upper secondary education 2014, Finnish National Board of Education.  
[https://drive.google.com/drive/folders/159n\\_ZPg5mschjGG](https://drive.google.com/drive/folders/159n_ZPg5mschjGG)
59. **Pavis P.**, Dictionary of the Theatre: Terms, Concepts, and Analysis, Toronto and Buffalo, University of Toronto Press, 1998:
60. **Pouillon J.**, Temps et roman, Paris, 1946:
61. **Programme standards** and practices For use from 1 January 2014./<https://resources.ibo.org/data/>
62. **Teach, Make a difference**, <https://teach.com/what/teachers-teach/teaching-methods/>, USC Rossier, 2019
63. **Todorov T.**, Les catégories du récit littéraire, Communications 8, 1966:  
<https://www.educatorstechnology.com/2014/>.

#### ՄԵԹՈԴԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալեքսանյան Թ.**, Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, Եր., Էդիտ Պրինտ, 2012:
2. **Արնաուդյան Ա. և ուրիշներ**, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., unisef, 2004:
3. **Թորոսյան Կ., Չիբուխյան Կ., Բալայան Ա.**, Ինչպես պլանավորել մայրենիի դասը (2-րդ, 3-րդ, 4-րդ դաս.), Եր., «Ձանգակ», 2017 – 2018:
4. **Խաչատրյան Մ., Դավթյան Մ.**, Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ, Եր., «Ձանգակ», 2019:
5. **Խաչատրյան Ս.**, Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր., ՖԷՀ, 2020:
6. **Մկրտչյան Գ., Թովմասյան Թ.**, Հայոց լեզու (ձեռնարկ ուս. համար), Ե., «Աստղիկ գրատուն», 2015:

7. **Մկրտչյան Գ., Թովմասյան Թ.**, Հայոց լեզու (ծեռնարկ ուս.համար), Եր., «Կոունկ տպագրատուն», 2016:
8. **Մկրտչյան Գ., Տողանյան Ն.**, Մայրենի (ծեռնարկ ուս. համար), Եր., «Զանգակ», 2009:
9. **Նազարյան Ռ, Ալեքսանյան Թ.**, Փոխադրության նյութերի ժողովածու, Եր., «Զանգակ», 2016:
10. **Նազարյան Ռ. և ուրիշներ**, Թելադրության նյութերի ժողովածու, Եր., «Զանգակ», 2016:
11. **Վարդանյան Գ.**, Հին ու նոր մեթոդները դասավանդման արդի փուլում, Եր., «Մեկնարկ», 2019:
12. **Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն**, ԱՅՐԵՔՍ, Եր., 2002:
13. **101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար**, Microsoft Հունգարիա, JEDLIK OKTATÁSI STÚDIÓ, Բուդապեշտ, 2006:
14. **Казиник М.**, Зачем нам нужна новая школа? <https://www.youtube.com/watch?v=bKSAjEqD9T0>
15. **Казиник М.**, Об образовании. <https://www.youtube.com/watch?v=HiwYDk66MLM>
16. **East M.**, ...Language & Literature, A practical guide, student book, IB, 2014.
17. **East M.**, .... Language & Literature, A practical guide, teacher book, IB, 2014.
18. **Six thinking hats of the Bono-** <https://www.toolshero.com/decision-making/six-thinking-hats-de-bono/>

#### ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. **Բախչինյան Հ, Սարինյան Ս**, Հայ գրականություն, 10-րդ դաս. դասագիրք, Եր., «Արևիկ», 2009:
2. **Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ.**, Հայոց լեզու, հանրակրթական դպրոցի 7-րդ, 8-րդ, 9-րդ դաս. համար
3. **Գասպարյան Դ.**, Գրականություն, 7-րդ դաս., դասագիրք, 2-րդ լրացված հրատ., Եր., «Տիգրան Մեծ», 2016:
4. **Գասպարյան Դ.**, Գրականություն, 8-րդ դաս. դասագիրք, 2-րդ բարեփոխված հրատ., Եր., «Տիգրան Մեծ», 2017:
5. **Գասպարյան Դ.**, Գրականություն, 9-րդ դաս. դասագիրք, 2-րդ բարեփոխված հրատ., Եր., «Տիգրան Մեծ», 2018:
6. **Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ.**, Հայ գրականություն, 11-րդ դաս. դասագիրք, Եր., «Արևիկ», 2010:

7. **Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ.,** Հայ գրականություն, 12-րդ դաս. դասագիրք, Եր., «Արևիկ», 2011:
8. **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.,** Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-րդ դասարանի համար, Եր., «Մակմիլան-Արմենիա», 2009:
9. **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.,** Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի համար, Եր., «Մանմար», 2019:
10. **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.,** Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 12-րդ դասարանի համար, Եր., «Մանմար», 2011:
11. **Եզեկյան Լ.,** Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2003:
12. **Եղիազարյան Ա.,** Հայ գրականություն 12-րդ դասարանի դասագիրք, Երևան, Մանմար, 2011:
13. **Կիրակոսյան Վ, Ավետիսյան Զ.,** Հայ գրականություն 11-րդ դասարանի դասագիրք, Երևան, Մանմար 2010:
14. **Ներսիսյան Վ., Մնացականյան Լ.,** Հայ գրականություն 10-րդ դասարանի դասագիրք, Երևան, Մանմար 2014:
15. **Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ.,** Հայոց լեզու, Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար, Եր., «Լույս», 1994: